Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

IN WIEN
128450-A
ALT-

127. E. 43.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ԱՌՕՐԱՑԵԼՈՅ

Լոր

ԱՇԽԱՐՀԱՑՈՒՄ

Ամենայն Հայոց

Պատրիարք

ՏՊԳ.

Ի Վենետիկ

Տ. Ս. Ղազար

1838

128450-A

Digitized by Google

Digitized by Google

ԲԱՆ ԱՌ ՎԵՐԾԱՆՈՂՍ.

Մարմին ցաւագնեալ՝ հոգին վըշ-
տացեալ ոչ գտանէ յայսմ աշխարհի
միխիթարութիւն, զատնայ յԱստուած
չտանել զիւր միխիթարութիւն. և զի
աղօթքն է՝ որ յայսմ աշխարհի կե-
նակցիլ տայ մարդոյ ընդ Աստուծոյ,
միապագելով դիմել յաղօթսն ապա-
ւինի գտանել զիւր միխիթարութիւն։

Այսպէս ահա դէպ եղև և այնմ
բարեյիշատակ անձին, որոյ հարեալ
'ի ժանտախտէ և զերծեալ, բայց 'ի
վերստին ժանտախտին՝ եթող 'ի
մարմնի նորա այլ խոթութիւն անդու-
ժելի. ուստի բազում գեղոցեիւք և
բժշկաց ստստարութեամբ ոչ կարա-
ցեալ զերծանել մինչև ցմահ իւր. վա-
րեր հանապազօր կեանս վշտագինս,

Digitized by Google

և ոչ կարէր գտանել ուստեք մխիթա-
րութիւն, բայց եթէ քաղցրանալով
յաղօթս մշտամուտնչս։ Յետ զամս
քսան այսպէս սառապելոյ 'ի հիւան-
դութեան իւրում, այն ինչ մերձենայր
օրհաս մահուն իւրոյ, կտակաւ պա-
տուիրէր ձեռնտուս լինել 'ի ծախս
թաղմանն այսր մատենի աղօ-
թագրոց, առ 'ի նոյն փութացուցա-
նել յաղօթասիրութիւն և զայլս։

Արդ՝ ոչ կամեցեալ 'ի թագաստեան
յանծանօթս ինն թողուլ զիշատակ
գեղեցիկ երախտեաց, աղերս ար-
կեալ աղաչէմք զընթերցողդ, 'ի
քաղցրանալն եռանդեամբք թևակո-
խելով 'ի մաղթանս աղօթիցս այսր փոք-
րիկ մատենիս, յիշել և զհանգուցեալ
հոգի սորա, ընդ նմին և զաշխատա-
կիրսդ աղօթիցս։

Digitized by Google

ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹԻՑ

Աղօթքը ընելու շատ սէր պէտք է որ ունենանք, մանաւանդ աս իրեք պատճառի համար։ Մէյմը որ՝ ինչ որ պէտք է մեզի թէ հոգևոր և թէ մարմնաւոր, աղօթքով միայն կրնանք առնել Աստուծմէ, ինչպէս կըխրատէ սուրբ գիրքը. Խնդրեցէք և առնուցուք։ Ուստի աղօթքը ընելը՝ է մեր շահիլը և մեր վաստակիլը։

Երկրորդ՝ աղօթք ընելով կը դոմենք կրփառաբանենք զԱստուած աս աշխարհիս մէջ, որով Աստուածալ իբր թէ պարտական կըլլայ մեզի անդիի աշխարհը վարձք հատուցանել իր արքայութիւնը։ Ինչպէս որ մէկ մենծ իշ-

Digitized by Google

խանի մը գովասանք զուրցելու
ըլլանք, ան իշխաննալ հարկաւո-
րապէս մէկ վարձք մը կուտայ.
եւ առաւել Աստուած որ մեզ
ասոր համար ստեղծեր է՝ որ զինքը
սիրենք, զինքը պաշտենք, որ ինքնալ
մեր մեռնելէն ետև մեզի վարձք
տայ իր արքայութիւնը, ինչպէս
պղտիկուց կըսորվեցընէ ամմէ-
նուն սուրբ եկեղեցին քրիստո-
նէական խրատովը։ Արդ՝ զԱս-
տուած պաշտել կըլլայ, մէյմը
իրեն համար խաչ ու նեղութիւն
քաշելով, մէյմնալ աղօթքով փա-
ռաբանելով։ Ասանկ ահա Քրիս-
տոս տէրն մեր գիշերնէրը ինչվան
լոյս միշտ աղօթքի հետ կըլլար,
միայն զԱստուած փառաբանե-
լով. անով զինքը օրինակ տալով
մեզի սորվեցընել ուզեց. ասկէց
'ի զատ շատ հեղ պատուէրքալ
դրաւ որ աղօթքի հետ ըլլանք։

Երբորդ՝ թէև մէկ շահ մը չու-
նենայինք աղօթքէն, ան ատենն-
ալպէտք էր որ սիրով աղօթքի
վազէինք. վասն զի աղօթք ընել

Digitized by Google

ըսելը՝ Աստուծոյ առջին ելլել, Աստուծոյ հետ խօսաթել ըսել է. արդ՝ աս միայն հերիք փառք պարծանք է մարդուս. ինչպէս կըսէ Խոսրով վարդապետը։

Աս է ահա որ սատանան մեր մէկ բանին անանկ չինախանձիր ինչպէս աղօթքի. ուրիշ ինչ աղէկ գործք ընենք, մենք մեղի ենք, ու իբր թէ Աստուծմէ հեռու. բայց աղօթք ընելու ատենը մարդըս շիտակ Աստուծոյ առջին կըկենայ, իրեն հետը կըխօսաթէ կըխօսի։ Սատանան կըտեսնայ զինքը՝ որ թէ պէտ մենք շատ գործազանց ստեղծուած մընք, բայց չիկրնար Աստուծոյ առջին համարձակ ելլալ, չիկըրնար բարեկամի կամ զաւակի մը պէս Աստուծոյ հետ ընտանեբար խօսաթել. սատը դէմ մեզ կըտեսնայ խեղճ հողեղէն ստեղծուած մը, բայց սրտէրնիս համարձակ կըբանանք Աստուծոյ դէմ՝ ինչպէս մէկ զաւակ մը իր հօրը կըբանայ. թէ որ մեղքի մէջ ենք՝ զղջումով աղօթք

ընելով թողութիւն կառնենք մեղքէրնուս. թէ որ արդար ենք՝ աւելի շնորհք կառնենք Աստուծոյ։

Աս բանիս ջիկրնալով դիմանալ սատանան, կերպ կերպ հնարքնէր կրփնտրուէ արգելք դնելու. երբեմն մէկ չուզելութիւն մը կբերէ սրտին մէջը, մարդուս ծանր բան մը կերևցընէ աղօթքը. երբեմն իրաւցընէ սիրտը բռնել կուտայ կրգոցվի, շունչ չի կրնար առնել. շատ հեղ մարդս աղօթքի նստելու ըլլայ, ան ատենը քուն մը կբերէ սատանան որ առաջ չունէր։ Եւ թէ որ մէկ քրիստոնէ մը աս բանէրուս մտիկ չիդնելով աղօթքի նստի, ան ատենը շատ հեղ մէկ ձանձրութիւն մը՝ մէկ անհանգստութիւն մը կբերէ որ՝ մարդս կըջանայ աղօթքը շուտ լմնցընել՝ ան նեղութենէն խալըսելու։ Երբեմնալ մարդուս ընելու բանէրը գործքէրը աղօթքի ատեն պայծառ խտակ միտքը բերել կուտայ. ոմանց այնչափ

սաստիկ կըլլայ աս փորձու-
թիւնս որ իրենց աղօթք ընելու
ատենը՝ կըլլայ աղէկ ատեն իրենց
դրսի ընելու բանէրը մտածել։
Շատ մարդուալ միտքը կըտար-
տըղնէ կըցնդէ, անանկ որ՝ ինքն-
ալ չգիտէ որ աղօթքի ատեն ուր
կըքալէ իր միտքը։

Անանկով շատ պատերազմ
կըքաշէին սուրբերը աղօթքի ա-
տեն, բայց իրենք Քրիստոսի օ-
րինակին հետևելով անդադար
աղօթքի հետ կըլլային, Աստուծ-
մէ օգնութիւն կըխնդրէին. ա-
նանկ որ՝ ոմանք բոլորովին խալը-
սեցանան փորձութիւններէ. ա-
ղօթքի ատեն պայծառ իստակ աս-
տուածային բանէրը մտածելով
կըզմայլէին կըվերանային։ Ոմանք
միշտ չանալով պատերազմելով
մտվընին ժողվելու համար՝ մեծ
վարձք առին Աստուծմէ։

Ասոնց, և մանաւանդ Քրիս-
տոսի օրինակին դուռնալ հետևե-
լով՝ նայէ որ աղօթքի փոյթ ու-
նենաս. որչափ որ միտքդ ցնդի

Digitized by Google

ջիթուինաս. միտքդ վրայ ժողվես, Աստուծոյ տանիս, ջերմեռանդութեամբ ընես առ գլխիս մէջի գրած աղօթքնէրը, որ աշխարհաբառ ըլլալով քեզի հեշտ է հասկընալը։ Երբոր ասանկ ջերմեռանդութեամբ աղօթքի հետ ըլլաս, յիշէ՛ ան ատենը ան հոգինալ որ պատճառ եղաւ աս աղօթքնէրս տպել տալու, և ան հոգինալ որ աշխատեցաւ շինելու։

Digitized by Google

ԱՌԱՒՕՏԵԱՆ

ԱՂՕԹՔ

ի յառնէն յանիրաւոյ.

ՅՄԵՆԱՍՈՒՐԲ Եկեղեցոյ Աստուածութիւն և մի Աստուածութիւն, անքաւ գոհութիւն ու շնորհակալութիւն մատուցանեմ, որ իս անարժանս՝ ողջառողջ հասուցիր ինչքան աս առաւու, ուշադրէն կեանք տալիր։ Այսօրուայս հէ իս ամէն փորձանքներէ, երևելի ու աներևոյթ թշնամիներէ։ Շնորհէ որ՝ այսօր առանց մեղաց քու ծառայութեանդ մէջը անցընեմ, քեզ փառաւորեմ, իմ ամէն խօսքս և գործքս մարմնաւոր ու հոգևոր՝ ի փառս քո ընեմ։

Digitized by Google

Աղօթք առաւօտեան.

Տէր եթէ զբրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Դու տէր իմ, թէ որ իմ շրթունքս բանաս, ան առնեն իմ բերանսալ կրցայ զքեզ։ քու օրհնութիւնդ կրկարդայ։ Դու տէր իմ, բերանս բաց, լեզուս շարժէ, սիրտս փղձկեցու, որ քու առջիդ աղօթք ընեմ։ Ճշմարիտ լոյսդ Քրիստոս, առաջվան լուսուն հետ լուսաւորէ իս, որ միտքս բացվի, սիրտս շարժի քեզ օրհնել, քեզ փառաւորելու հետ ըլլալ, որ եսալ սաղմոսերգուին հետ կարենամ զուրցել Պատրաստ է սիրտս իմ Աստուած, պատրաստ է սիրտս իմ, օրհնել և սաղմոս ասել քեզ փառաք իմովք։ Վասն զի քեզ օրհնել մարդուս փառք է, քեզի աղօթք ընել մարդուս շահն է։ Լուսաւորէ իս տէր իմ, մեղքին գէշութիւնը ճանչնալ, մեղքէն ետ կենալ առաքինութիւնով բարեգործութիւնով զարդարվիլ, աղօթք ընելու աղէկութիւնը ճանչնալ։

Digitized by Google

Աղօթք ընդհանրական.

Գոհութիւն և փառաւորութիւն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ անքննաւ բարերարութեամբ իս լցուց։ Եւ ոչինչ էի, դու ամենասուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն՝ իս մարդ ստեղծեցիր, սա աշխարհս ամենն բարեաւք զարդարեցիր, երկինքը աստղներով, գետինը դունդգուն ծաղկներով, օդը զանազան թռչուններով, ջուրը ձկներով։ Այս ամենն բանը ըրիր, ինձիսալ հինգ զգայարանք տուիր որ վայելեմ. աչքս կը վայելէ զանազան աղվոր գունեներով ծաղկունները, անկաճառ կրլսէ թռչունների անուշ ձանները, բերանս կառնէ անուշ ուտուներուն համերը։ Այսոնք ինձի համար ստեղծեցիր, իսալ ամենն ապարատոց վրայ թագաւոր դրիր։ Մինչ մը տուիր որ քանի նայիմ քու ստեղծուածներուդ վրայ, միսայ մանամասարարատոց գեղեցիկ համաձայնութիւնը, մեկը զմեկն գերազանցութիւնը, որ անասունները չեն կրնար իմանալ.

Digitized by Google

անկէց կիմանամ քու աղէկութիւնդ, իմանաւութիւնդ, ու ամենակարողութիւնդ։

Հիմա աս ամենն քարոզիչներու վայ չկրնալով զածիս պէս գոհութիւն մատուցանել քեզի տէր իմ, ան ամենն արարածներդ մեկիկ մեկիկ կրկանչեմ աղաղմասերդուին հետ, որ քենէ գոհանան, քեզ օրհնեն։ Օրհնեցէք զԱստուած արեգակն և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս։ Օրհնեցէք զԱստուած երկինք երկնից, և ջուրք։ Օրհնեցէք զԱստուած լերինք, ծառք պտղաբերք, աղբիւրք, ծովք և դետք։ Օրհնեցէք զԱստուած գազանք, և ամենայն անասունք, սողունք, և ամենայն թռչունք։ Օրհնեցեն զնա երկինք և երկիր, ծով, և ամենայն որ զեռայ ի նոսա։ Օրհնեցի և փառաւորեցի ամենասուրբ Երրորդութիւնն այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Սաղմոս Բ. Ա Ը.

Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն զքո զարմանալիսն քո։

Ուրախ եղէց և յնծացայց 'ի քեզ. սաղմոս ասացից անուան քում բարձրեալ։

Ո՞վ է մարդ, զի յիշես զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես զնա։

Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառաւք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա 'ի վերայ ամենայն ձեռագործոց քոց։

Զամենայն ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառս և զամենայն ինչ։

Ցեղս ցորեան զի՞ զի զքանչելի է անուն քո զամենայն երկրի։

[illegible]

Ամենք ամենեքին մարմնաւորք բարեբանեսցեն զանուն սրբոյ քում, որպէս զի վայելիցի քեզ սիրեմ, քեզ օրհնեմ, փառ-

Digitized by Google

ուստրեմ, ու քու պատուիրանքներդ
պահեմ։ Հապա հոգևոր բարիքներուդ
որ մեկը հանեմ, որ մեկը յիշեմ, որ
ամենենին աւելի ինծի պարգևեցիր։ Ես
չունէի լոյս հաւատոյ, դու տուր՝ իս
տուրբ ուղղափառ հաւատքիս մեջ ամրաց
ծեցիր, բարի ծնողաց մեջ մնուցիր, պա-
հապան հրեշտակի յանձնեցիր, տուրբ
աւազանին մկրտութեան հաստատեցիր,
հոգոյն սրբոյ շնորհացը ապրմանացու-
ցիր։ Եղբը ես ապերախտա՝ երբոր կորս-
ընցուցի մեղքով իմ անմեղութեան
շնորհքս, դու Բանդ Աստուած մար-
մնացար, մարդ եղար, իմ քաշերու տան
ջանքներս դուն քաշեցիր, անդին ապրիս-
նրդ խաչին վրայ թափեցրով ինծի համար
մեռար որ ես չիմեռնիմ չիգտաստատ-
ուրվիմ յաւիտենական տանջանքներ։ Իմ
մեղաւոր քնութիւնս գիտնալով, խոր
հուրդ խոստովանութեան ու ապաշ-
խարութեան դրիր, որ թէ որ մեղան-
չեմ, նորէն ապաշխարելով քիչ մը
աշխատելով խոստովանելով մեղացս
թողութիւն ու արձակում գտնեմ։
Ա՜հ երիք չեղաւ, գիտէիր որ՝ հոգիս

սիրոյ է, կերպակուր կուզէ, քու սուրբ մարմինդ ու արիւնդ, զքեզ ինքդ կերակուր կենդանարար տալիր ինծի. այնով հոգիս կը զօրանայ, երկրաւոր բաներէն ոչինչ կերուայ, երկնայիններէն անուշ կուգայ։

Այս ամէն լրած բարիքներուդ ինչ շնորհակալութիւն մատուցանեմ քեզ տէր իմ, կամ ինչ խօսքերով գոհանամ. միայն սուրբ հրեշտակաց բերանը քեզ կրնայ օրհնել. ան երկնային զօրութիւնց օրհնեցէք դուք ասանքը քեզ մատուցանեմ. անով քեզ մեծացուցանեմ, լաւով։ Օրհնեցէք դուք ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք դուք ամենայն զօրութիւնք նորա։

Այլ աղօթք.

Թագաւոր թագաւորաց, տէր և աստուածք ամենայնի, ասա՛ր ինձ ժամուս նոր կեանք կուտաս, նոր օրն ես որչափ անարժան եմ, զուն անչափ բարերարութիւնդ վաստակաշատանես. ուրմեկին շնորհակալ ըլլամ տէր իմ։ Երեսս հողը դնելով, գետինը ցնելով անանկ կաղաչ

չեմ ում տէր իմ և Թագաւոր. ապքան
ըրած բարերարութիւնդ յիշելով մի
յիշեր իմ ապերախտութիւնս, որ ը-
ներեմ քեզի դէմ մեղանչելով. մի յի-
շեր իմ ծուլութիւնս, իմ զանցառու-
թիւնս, որ ինծի ըրած աղէկութիւնդ
չեմ յիշած, չեմ շնորհակալ եղած,
վայ ինծի պէս մեղաւորիս՝ իբր Թէբա-
նի տեղալ չեմ սեպած: Կապաչեմ ում
տէր իմ, իս երեսէ չիձգես, այլ նորէն
շնորհք տաս, որ քեզ աղէկ ճանչնամ,
քեզ ամենն բանէն վեր սիրեմ. հա-
ւատքս լուսաւոր ըլլայ մոգքիս մէջը,
քու բարերարութիւնդ աղէկ ու պայ-
ծառ ճանչնամ, և այսօր ամենն մեղքէ
հեռընալով հաւատքիս կէսօրէ գործք
ալ ունենամ, քու պատուիրանքներդ
պահեմ, ու ինչ որ քեզի հաճոյ է՝ մի-
այն ան ընեմ: Այսօր տէր իմ, ինչ մեղ-
քի առիթ գայ, գու պահէ որ չըյնիմ,
ինչ մարմնաւոր փորձանք գայ՝ գու
պահէ որ խաբըսիմ: Այլ պահես
ամենն չար նայվածքէն, անկանաս մեղք
լսելէն, բերանս մեղք զուրցելէն, սիր-
տս միտքս մեղք մտածելէն: Այսպէս

Digitized by Google

սազմոս ասացիր քեզ յաւիտեանս յաւիտենից, և տայ քեզ զաղօթս իմ օր ըստօրէ ։

Ակնէց եղբը առաջադրէ ան մեզքէն ըզգուշանալ՝ որուն մէջը որ շատ հեզ կեցնաս։ Առաջադրէ որ այսօր մէկ յաւուրէ բարեգործութիւն մը ընես։ Առաջադրէ նաև ասօրս մէկ բանի մը մէջ քու կամքդ կոտրես, ու քու աչքդ և լեզուդ զսպես, զրկելով զքեզ նաև ան մեղ բաներէ ապաշխարանքի համար։

Digitized by Google

ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱՂՕԹՔ

Զ՝ՈՀԱՆԱՄ զքէն տէր ամենակալ, որ այսօր քուկին գթութեամբդ ողջ առողջ պահեցիր, հոգւոր և մարմնաւոր վտանգներէ խալասցուցիր, քուկին բարերարութեամբդ ամէն բարիքդ պարգևեցիր։ Ես որ մեղաւոր եմ, անարժան եմ քուկին բարերարութիւնդ վայելելու, քուկին ծառաներուդ պէս վայելցուցիր, հոգացիր մարմնաւոր ու հոգւոր բարեաց։ Ես ուրիշ բան չունիմ առ քանիս փոխարէն հատուցանել, բայց եթէ գովեստը քնելով երկրպագութիւն տալով անանկ շնորհակալ կըլլամ քու առատ ողորմութեանդ տէր իմ։ և որչափ քուկին ծառաներդ՝

Digitized by Google

սուրբերդ՝ գոհութիւն կուտան, ա-
նոնքաշ իմ գոհութեանս հետ մեկ-
տեղ խառնելով կրմնատուցանեմ ամե-
նատուրբ Երրորդութեանդ։

Կրցաւ իմ կրզջամ՝ի բոլոր սրտէս՝
որ այսօր փոխանակ քեզի ծառայու-
թիւն ընելու, կամքդ կատարելու, մե-
զանչէցի, քու կամացդ դէմ գործեցի,
պատուիրանքներդ կոտրեցի, քանի
բարի գործքէր կրնայի ընելու զանց ըրի՝
չըրի։ Դու տէր իմ, լուսաւորէ միտքս
աս գիշերվան խաւարին մէջ, որ այս
օրվան ըրած մեղքերս միտքս բերեմ,
զղջամ, և հաստատուն սրտով առա-
ջադեմ վաղը չխմեղանչելու։ Կաղա-
չեմ որ՝ ապահով իս յանկարծական մա-
հուանէ, պահես իս գիշերային դիւա-
կան փորձութենէ, աստանդական ցը-
նորքներէն։ Ո՛վ պահապան հրեշտակ,
հեռացու ինծմէ աստանդական խա-
բեութիւնը ու բռնութիւնը. աստա-
նդական տեղը՝ ձեր սուրբ հրեշտակ-
ներդ ընկերութիւնը բնակի աս տե-
ղէս, որ խազաղութեամբ մեզ պահեն
յայսմ գիշերի և յամենայն ժամանա-

Digitized by Google

կի։ Ո՛վ պաշտպան սուրբեր, պահեցէք զանազան փորձանքներէ, կրակէ, ժանտախտէ, թշնամիներէ, հոգեւոր և մարմնաւոր չար պատահմունքներէ, որ կը նայ աս գիշերս պատահիլ։ Տէր՝ ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, ՝ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Ինչպէս որ Ադամին միածին խաչին վրայ զուրցեց, անոր խօսքին հետ իմ խաչքսալ բնգունելով պահէս իմ հոգիս՝ թէ որ կեանքդս ընծնալու ըլլայ աս գիշեր. վասն զի ես որ հիմա մահճիս մէջ եմ թէ գերեզմանի մը մէջ կիջնամ, կրնայ ըլլալ որ կեանքդս ընծնայ, մեռնիլ հասնի։ Բարեխօսութեամբ պահպան հրեշտակիս և պաշտպան սուրբերդուս պահեսուտեր իմ հոգիս յաւիտենական կորստենէ։

Հայր երկնաւոր խնայեա՛ յիս. քարի Յիսուս ողորմեա՛ ինձ. Հոգիդ սուրբ Աստուած զօրացո՛ զիս։ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն արդոյ եղիցի՝ ի վերայ իմ յայսմ գիշերի և յամենայն ժամանակի։ Ընկալ, տեր զինեալդ Աստուած իմ որպէս զիւնկ առաջի քո, պատա-

բաց. երեկոյին խաղաղութեան յայտ
արար՝ի սոյն ննջեցուցք և զարթիցուք,
զի դու տէր միայն առանձին յուսով
քով բնակեցուցեր զմեզ։ Ամենաշնորհ
Ներա Կոյս Մարիամ, որ յոյսդ ես մե-
զաւորաց, բժիշկ հիւանդաց, սիրոփիլ
կարօտեալոց, նաւահանգիստ ալեկոծե-
լոց, բժշկեա, սիրոփեա, ապահեա, ապահ-
ապանեա զիս յայսմ գիշերի և յաւիտեան
ժամանակի. Ամէն։

Աղօթք դիշերային ծառայութեան.

Երբոր կայնիշեմ տէր իմ՝ ապաստանիս ամ-
ուրած իմ մեղքերս, ու զանցառութիւն-
ներս, մինչ ազէկութիւնները կրնայի ընել
իմ կենդանի մէջը, և ասկայն չբրի։ Եր-
բոր կայնիշեմ իմասպե բախտութիւնները՝
որ քուկինդ ուրած ազէկութիւններդ չեն
ընդ, բանի մը տեղ չդրի, շնորհակա-
լութիւն չբրի։ Երբոր կը յիշեմ մինակ
քու առջի սուրբ ապառաւիրանքդ, որ
քեզ սիրեցը էր սիրել լաւագոյն սրտով ու
մտքով, ամենեն ուժով, ես քեզ չէ
թէ միայն չսիրեցի, հապա անոր դէմ
քեզի թշնամութիւն ըրի. մանաւանդ

թէ քու թշնամիդ հետ մէկ եղայ, ա-
նոր հետ մէկտեղ քեզ անարգեցի։
Ամենաասոր նման ուրիշ մեղքերսէ ը-
բոր կրկիշեմ տէր իմ, ամենն դիացէն
յուսահատութեան ծովի մէջ կինամ։
Հիմայ ասչափ տարման եմ եղեր,
տարիներս՝ օրերս՝ կանցնեմ, կուզեմ
զղջում ընել, աղօթքի ապաշխարու-
թեան հետ ըլլալ, չեմ կրնար ընել,
կրծուլանամ, վազան կրձգեմ։ Ես
որ ջիղեմ, ինչվան վազը կրնամ ոզջ
մնալ։ Ես որ սորված պիտոր ըլլայի,
ջիսորվածի պէս կրշիրոթիմ, ինչ ընեալ
ջիղեմ։ Բայց հիմա աղթշնալով իմ
թմրութեանէս, վախնալով իմ կանքէն,
չըլլայ թէ մահը գայ՝ յանկարծակի իս
քունիս մէջը գանայ, ինչպէս որ գուն
զգուշացուցիր տէր իմ, կրզղջամ, կը-
ցաւիմ իմ ամենն ըրած մեղքերուս վրայ
որ ալարկուց ինչվան հիմա գործեցի։
Դաւ անոնց վրայ որ այսօր գործեցի
կամայ և ակամայ, դիտութեամբ և ան-
գիտութեամբ, շիտակ քեզի դէմ, հինգ
զգայարանքովս, սրտովս, ու մտքովս։

Այս մեղքերուս թողութիւն առնե-

լու հաւատոյ ուրիշ ճանապարհ չունիմ որ՝ մի-
նակ քու մարդասիրութեանդ տարէդ
բռնելով կասպասեմ. Տէր մի մատ-
ներ՝ ի դատաստան ընդ ծառայի քումմ,
զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն
կենդանի. Թեչկէս որ քումէնն սիրելի
ծառան Դաւիթ կասպասակէր։ Տէր,
քումէնն լսեր ղծուածդ եմ, քու ձե-
ռագործդ եմ, իմ գէշութեանս հա-
մար քումէնն սահեղծուածդ մի կորան-
ցանէր։ Քու տարաշէսական սէրդ յիշէ որ՝
իս յաւիտենից գիտէիր, ու սահեղծեցիր։
Քու վրէժխնդրական սէրդ յիշէ որ՝ իմ սի-
բոյս համար ասդարի չարչարանքդ քաշե-
ցիր, ու ըզարթունդ թափեցիր։ Մրչափ որ
իմ ամենէն օրվան գործքերս իս կրցուսա-
հատցնեն, այն չափաւ Լեսմիշտ ասիս խօսաս
պիտորքանմ ինչչանեն տարի շունչս։ Տէր,
մեծ են, ծանր են իմ մեղքերս, բայց
աւելի մեծ են քումէնն ըրած ընտրեալ-
նէրդ, անոնք պարտապ էրթան։ Թէ
որ ասա աշխարհս թագաւոր մը՝ իշխան
մը՝ երդոր կուզէ՝ կընկերէ, քանի՞ աւե-
լի դու թագաւոր թագաւորաց, որ
սեր ես բացարձակ, երդոր կուզես՝

Digitized by Google

կընեռես, մեկը քու կամքիդ դէմ չի կրնար դնել։ Աւազակին մեկ խօսքով ներեցիր. Զաքէոսը մեկ նայելով փրկեցիր. ես անոնցմէ աւելի վայելելը եմ քու շնորհքներդ. այսօրուան ինծի լսեցո՛ւ ան ձայնը՝ ըսելով Այսօր եղաւ փրկութիւն տանս այսմիկ։ Ցո՛ւր ինծի սա իրիկվան ատենս մեկ շնորհք մը զրկելման, որ իմ մեղքերս լամ. տո՛ւր մեկ շնորհքմինալ յապատանութեան, որ ալ չմեղանչեմ. բարեգործութեան հետ ըլլամ. անանկով մեռնելուս ատենը արդար գտնըվելով։ քու տեսոյդ արժանի ըլլամ։ Ցօղեա՛ յիս աշխատ և սուրբ եղէց, լուսա՛ և քան զձիւն սպի՛տակ եղէց։ Նո՛յն տուր տէր աչաց իմոց, զի մի՛ երբեք ննջեցից ՝ի մահ։ Դու ես պաշտպանն իմ տէր, և՝ ի՛ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ՎԱՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐ ԵՕԹՆԵԿԻ

Ի ԿԻՒՐԱԿԷ

Ի ՀՈՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲԱՍԱՐԱԿ ԱԲԱԲԼԱԳՈՐԾՈՒԹԻԱՆ, Ե ՅԱՐՈՒԹԻԱՆ ՔՆԻ: ՎԱՆ ԶԳԱՍՊՈՒԹԻԱՆ, Ե ԵՐԱԽՍԱԳԻՊՈՒԹԻԱՆ:

Հայր մեր, որ յերկինս ես.

( )ՐՀՆԵԱԼ ԵՍ ԱՍՏՈՒԱԾ, ՀԱՅՐ ՍԵՌԱՆԼՈՒՄԵՐՈՅ ՔԱՏՈՒԱԾԱԿԻՐԵՐԻՍՏՈՍԻ, ՀԱՅՐ ԳԼԽՈՒՐԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՄԷԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ: ԱՆԲԱՒԵՆՔՈՒ ԲԱՐԵԲԱՐՈՒԹԻՒՆՔԴ՝ ՈՐ ԸՐԵՐԵՍ ԼԻՆԷԻ ՏԵՐԻՄ. ՀԼԵՔԻՆԱՍ ՄԷԿԻԿ ՄԷԿԻԿ ԻՒՐԵԼՈՎ. ԱՅՆՔԱՓ ԱՆՀԱՄԱՐ ԱՐԱՐԱԾՆԷՐ ՍՏԵՂԾԵՑԻՐ, ԲԱՅՑ ԱՅՆՔԱՓ ՍՏԵՂԾՈՒԱԾՈՅ ՄԷՋ ԻՍ ԸՆԹԵՌԼՈՎ ՅԱՍՏՈՒԿ ԲԱՆԱԿԱՆ

Digitized by Google

մարդ ստեղծելիս, քու պատկերիդ նը-
ման։ Զերոք տալիս որով կրքանիմ կը-
գործեմ. ոչք տալիս որով ժուռ կու-
գամ. աչք՝ նայելու, անկամ՝ լսելու
հոտառութիւն՝ անուշ ծաղկունեբուն
հոտերը առնելու, բերան՝ համ առնե-
լու։ Ներսի կարողութիւններայ տալիս,
երևակայութիւն՝ պատկերպակերպելու,
յիշողութիւն՝ միտք առնելու, բան ի
մտացական՝ դատաստան կարդելու, բա-
րին չարէն զատելու, ազիկը գիշէն ըն-
տրելու։ Այս մեծ աշխարհքս ալ ինծի
բնակարան տալիս վայելելու, վասն վեց
օր աշխատեցար գործեցիկ զարդարե-
լով. ամէն կենդանիները ինծի համար
ըրիր, զանազան կանանչներ, պտուղ-
ներ, գեղանի ելած անդաս բարիքներ
ինծի կերակուր պատրաստեցիր։ Արե-
ւուն լուսը ինծի կենդանութիւն տա-
լիս, օգը շունչ առնելու, զանազան
տեղեր, աղվոր լեռներ, դաշտեր, քա-
ղելու հանար տալիս։ Աչքովս զուարը
ճալի բաներ ստեղծելով, ինծի ալ քու
խօսքովդ հասկրցուցիր որ՝ աս տեղս
իմ պանդխտութեան տեղս է, ժամա-

Digitized by Google

նախկին տունս է. թէ որ քու պատուիրանքդ պահեմ, քիչ մը տեսնէն ինծի յաւտուկ տուն մը ապիտոր տաս, քու տէրդ ապրելու թիւնդ ապիտոր տանիս, որ յաւիտեան հոն նստիմ, կատարեալ երանութիւնը վայելեմ։

Ո՛ր մէկ գանձին չնորհակալ ըլլամ հայր նախանձաւոր. թէ որ գէտնին կոխեմ, դուն ես ստեղծեր. թէ որ երկինքը նայիմ ոգեր տեսնելու, դուն ոգերերս են լոյսը՝ ոգով կլսես ամեն. թէ որ ուզես քալելու կատնեմ, դուն իս կոշտիժ ես. թէ որ չուզես կատնեմ, դուն ես որ ասենն օր ինծի չուզէ կուտաս։ Ո՛ր բանի փափաքիմ, ամենը քու կինդ են, քէնէ եմ առեր. ես մէկ բան ընեմ չեմ, ան կենդանիները որ գործ կածեմ, քու կինդ են. ան պտուղները որ կուտեմ՝ քու կինդ են, եասալ քու կինդ եմ. մէկ հայր մը չեմ ճանչ նար քեզի նման։ Բայց իմ չարութիւնս է որ՝ ամանակ կասպրիմ, որպէս թէ իմն են, որպէս թէ դուն չես տրված. ամանակ կեցնելեմ, իբր թէ ես իմն եմ. վասն զի ես իս քեզի չեմ տրված, մէկ

Digitized by Google

երախտագիտութիւն մը շնորհակալութիւն մը չեմ ըրած, չեմ պաշտած, չեմ ծառայած։ Եա ինծի տէր եմ դրէր պտիս մէջը, չեմ մոռանար որ՝ այսօր ձեռքդ ինծմէն քաշես, կընեմ կրմեռնիմ։

Բայց դու Հայր յաւիտենական բարեգութ, աս իմ ապերախտութիւնս տղայական անպիտանով, մի բարկանար. հապա խղճա, ողորմէ, ներէ, շնորհք տուր, որ ասկէց ետքը աղէկ ճանչնալով քու տէրութիւնդ իմ վրայ, և քու բարերարութիւնդ, քեզ պաշտեմ, քեզ սիրեմ, քեզ ծառայեմ ամէն օր, մանաւանդ աս տուրը կիրակի օրս՝ ինչ որ պարտականն եմ ընէլու, աղօթքով և շնորհակալ ըլլալով պարտաւորութիւնս ընդունեմ, որ Յիսուսին հետ յարութիւն առնելու պիտանի ըլլամ։ Ան եղաւ այսօր մեզի առաջին պտուղ, և յոյս յարութեան, որ մեռելներուն մէջէն նոր ծաղիկ մը կենդանութեան բուսաւ, և կենդանութեան յոյս բերեց բոլոր աշխարհի։ Անոր կենդանութիւնը՝ տուրը արեան զօրութիւնը՝

Digitized by Google

իւն մեռեալներուն մէջէն հանէ, որ-
քայլուԹեան փառաց ապրանքի ընէ.
Ամէն։

Այլ աղօԹիւ.

Ամենակալ ապարԹիչ նախախնամող
ամենայնի հոգոյ ստեղծ, որ չէ ԹԷ մի-
նակ յոյսն չէ կրաստեղծես, հապա կը-
պահես, կը հոգաս, կը նախախնամես.
ոչչոգի փոխանակներդ իս պահեր ես
պղտիկուց ինչվան այսօր, քանի հի-
ւանդուԹիւնէ, քանի մահուան փոխ-
անակներդ իս խաղըսերդ պահման
հրեշտակին ձեռքով։ Եսոր իմ մեղքե-
րովս քեզի դէմ Թշնամի եմ եղեր, դա-
խարդ չեսաներ լոմ ապրանաստ ծառա-
նեդ ոչ ես հոգացերդ ոչ ի բարկուԹիւն ես,
հօր ոչ ես իս նայեր ես, ու ինչվան սա
օրս հաստատցերես։ Պատուիրանք դրեր
ես որ՝ կիրակի օրը ստորը բռնեմ,
բանս գործքս ձգեմ, մինակ քու ստեղ-
ծագործուԹիւնդ յիշելով շնորհակալ
ըլլամ, բարիք ընեմ։ Ամանց քու պա-
տուիրանքդ լսերես՝ ես ինծմէն պէտք
էր որ յիշէի քու ըրածներդ, ու շնոր-

հակառ ըլլայի. բայց անցեալի է եղեր իմ դէշութիւնս որ՝ պատուելեաց չեմ բռնած, կիրակի օրերս պարապ անցուցերեմ, ակամայ քիչ մը աղօթք եմ ըրեր. ամենևին չեմ յիշած քու ըրած աղէկութիւններդ, որ անչափ յօժարութիւնով ինծի համար աս աշխարհս ստեղծեցիր, որ իրրև թէ քու աշխատելդ ինծի ցցունելու համար, կամաց կամաց վեց օրվան մէջ ստեղծեցիր։ Ինչ ըսեմ հապա՝ որ հնարհակարութիւնն տեղը՝ կիրակի օրերը մոռնանչերեմ, քու պատուիրանքներդ ոտքի տակ առերեմ, քեզ բարկացուցերեմ։

Եղբոր քու սաչափ ըրած բարերարութիւններդ մէկ գիտցէն կարդչեմ տեր իմ, խիստ կամենամ. մեկալ գիտցէնալ երբոր իմ ապերախտութիւններս կարդչեմ, խիստ կրդոդամ կրսարասափիմ. ինչ պատասխան պիտոր տամ դատաստանին օրը, երբոր սաչափ ըրած աղէկութիւնդ ու իմ ըրած ապերախտութիւնս առջևս դնես։ Հիմա լալով կաղաչեմ Հայր բարերգութ, աս

զրվան սուրբ կիրակի օրս զգաստաս-
թեան շնորհք տաս, որ ամենայն ետքը
ես քա շակեմ, երանեալ էս ըլլամ.
կիրակի օրերը չմոռնանիմ, սուրբ ապա-
հեմ, մանաւանդ բարեգործութիւն
ընելու հետ ըլլամ:

ՑԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ցիլոփանա արաբլգործութեան և
բաբէիսոսութեան հրէշտակաց:
Վասն Աղօթասիրութեան:

Սուրբ Եղիշի անուն քո.

Ա՛ՆԵՆԱԿԱՐՕՂ Հայոց բարեգութ,
սուրբ ես, և սուրբ է անուն քո. և միշտ
փառաբանիմ որ սուրբ և փառաւորեալ
ըլլայ անուն քո: Որ այսօր արարչա-
գործութեամբ աս աշխարհիս Լուսերը
բաժնելով կարգաւորիցիր. երկինքը
դաս դաս հրեշտակաց ստեղծիցիր.
մարդս որ աշխարհիս վրայ դրիր, որով
հետև կերպ կերպ մեղքերու մէջ ինկ-
լով հոգւոր հիւանդութեամբ, կուրու-

թեամբ, կաղալով, գոսանալով հիւ-
ընացաւ, գթալով մարգուս վասն՝ մեկ
խնամալի աւազան մը դրին Պրոբա-
տիկէ աւազանին նմանութեամբ, քու-
հրեշտակներուդ յանձնեցին, որպէս
զի անոնց գալովը օգնելովը՝ ան հի-
ւանդութիւններէ խաղաղի։ Եղբարք քու-
կին միածին Որդիդ աշխարհ իրկեցիր,
որ ան իմ հինցած շատ տարիներն հիւան-
դութիւնս՝ որ հրեշտակները չկրը-
ցան բռնուցանել, նոր աւազան մարդ-
ութեան սահմանելով, մեկ խօսքով
ըմբնացուց միածին Որդին, ոտք հա-
նեց շնորհաբ, պատուիրելով ինծի, Ա-
հաւադիկ ողջացար, մի ևս մեղանչեր,
զի մի չար ևս ինչ լինիցի քեզ։ (Յ։Հ։
Ե։) Իսկ ես իր խօսքին մոկիկ չիգնե-
լով, նորէն հիւանդութեանց մէջ ձգե-
ցի իս։ Նորէն կարօտ եղայ խորհրդոյ
ապաշխարութեան, կարօտ եղայ քա-
րեխօսութեան և օգնութեան արբոց
հրեշտակաց։

Հիմա ծունր դնեմ առ Հայրդ ահեաւն
մերոյ Յիսուսի Քրիստոսի։ ուստի ա-
մենայն նահապետութիւն յերկինս և

յերկրի, Աթոռք, Տերութիւնք, Պե-
տութիւնք, Իշխանութիւնք, Սերոբէք,
և Քէրոբէք. ազաչէլով որ անոնց բա-
րեխօսութիւնը ինծի համար ընդու-
նիս, որ բարեկամ են ազգի մարդկան,
միշտ որդ մահու և յարութեան. մանա-
ւանդ սրբոյն Միքայէլի հրեշտակապե-
տի, և Գաբրիէլի, և Ռափայէլի բարե-
խօսութիւնը քեզ մատուցանելով կա-
ղաչեմ շնորհք ասս որ՝ ինչպէս հրեշ-
տակները երկինքը քուկին անուանդ կը-
փառաւորեն միշտ երգելով Սուրբ,
Սուրբ, Սուրբ, Տեր զօրութեց, և որչափ
երգելով փառաբանեն, այնչափ աւե-
լի կրգմայլին, եւսալ երկրիս վրայ սուրբ
պահեմ քուկին անուանդ՝ փառաբա-
նութիւն երգելով և աղօթելով։ Սուրբ
պահեմ քուկին անուանդ նաև բարի
գործելով. որպէս զի իմ բարի գործ-
քերս տեսնալով՝ ուրիշներնալ փա-
ռաւորեն զքեզ Հայր մեր՝ որ երկինս
ես. որպէս զի օր մը նալ արժանի ըլլամ
հրեշտակաց հետ միկտեղ երկինքը
զքեզ փառաւորելու յաւիտեան. Ա-
մէն։

Digitized by Google

ՑԵՐԵՔՀԱՍԱԹԻ

Յիշատակաւ արարչագործութեան, և
Բարեխօսութեան Յոհաննու մկրտչի։
Վասն Ապաշխարութեան։

Եկեսցէ ալքայութիւն քո.

ԻՍԿԶԲ երկնաւոր յաւիտենական, որ այսօր բանիւդ այնչափ ծառէր, ծաղիկներ, կանանչներ ստեղծեցիր, և զանազան գեղեցկութեամբ զարդարեցիր առ աշխարհս. իսալ դիմիր աչիւրդ հիս մէջ վայելելու, և քեզ փառաւորելու։ Իսկ ես նմանեցայ մէկ ճամբ փոքրիկ մը՝ որ աւազակներու հանդիպելով, ինչ որ ունէր առին թալանեցին, և զինքեան վիրաւորելով կիսամեռ թողուցին ճամբու մէջ։ Այսանկալ սատանայն ինծմէն անմեղութեան շորհքը առին կողոպտեցին. իմ հոգիս զանազան մեղքերով խոցելովմահուան դուռը հասուցին իմ կենացս ճամբուն մէջ։ Կազդարակէր իմ հոգիս մեկին մը կալին՝ մարգարէներուն, ղևտացիներ

Digitized by Google

ռուն, մեկ փրկիչ մը կրմնառէր, մեկը
չիկար որ՝ ինծի օգնէր։ Իսկ դու հայր
բարե դութ, գթալով իմ վրայ, հաճե-
ցար խրկեալ քու միածին Որդիդ Բանն
Աստուած փրկիչ և բժիշկ ինծի. որ երկ-
նային թագաւորական աթոռէն աշ-
խարհս եկաւ, Դաւթի աթոռը նստաւ.
Հնամարմնոյ թագաւորն հրեից և մեզ հա-
ւատացեալս. ոչ թէ իւր փրկիչ և բժշկե-
լով երկնային արքայութիւն չօրհ հաս-
ցնէ։ Բայց աշխարհս անիկայ չիճանչ-
ցաւ, սատանայի տեղ դրաւ. և որպէս
թէ ճանչնայ աշխարհս՝ առաջ կարա-
ղիւս և աւետաւոր արքայութեան և
գալստեան Յիսուսի խրկեցիր զառաքն
Յոհաննէս մկրտիչ, որ եկաւ ճանչնայ
ապաշխարութեան փրկչին, որ թագաւո-
րութիւն սատանային հալածելով,
արքայութիւնն Աստուծոյ պիտոր բե-
րէր. ցոյց Յիսուսին գալուստը, խիստ
վարուք և ճգնութեամբ ապաշխարու-
թիւն և խոստովանութիւն մեղաց քա-
րոզեց. օրինակ տալաս որ՝ մարդիկ
պատրաստ ըլլան արքայութիւնն Ա-
ստուծոյ ընդունելու, մեր ապրինալ

Digitized by Google

Եղաւ յաստուկ բարեխօս և պաշտ-
պան։

Հիմա աղաչեմ Յոհաննու մկրտչի բա-
րեխօսութեամբը կաղաչեմ Հայր երկ-
նաւոր, որ իմ մեղքերուս խոցելը բժշկ-
կես, իրեն ճշնութեան և ապաշխա-
րութեան օրինակը աչքիս մէջը ապաւ-
րես, որ ապաշխարելով թողութիւն
գտնամ իմ մեղքերուս, առջի կորսն-
ցուցած ընդհանրէրը նորէն վաստկիմ.
բժշկելի իմ կիսամեռ հոգիս՝ որ չարա-
չար վիրաւորեցաւ աս աշխարհիս ճամ-
բուն մէջ։ Եւ որ դուրս ընկած էն որ-
քայութենէն Աստուծոյ, և հիմա Յի-
սուսին շնորհաց աղքայութեան մէջ
մնայ, որ զմեզ ժառանգակից բրա-
ղքայութեան քոց փառաց, ասկէց
ետքը Յիսուս թագաւորէ իմ սրտիս
մէջ, որուն թագաւորութեան վախ-
ճան պիտոր չըլլայ։ Զըլլայ որ՝ հրէից
պէս չիճանչնամ զԹագաւորն Քրիս-
տոս, այլ անմեղ մանկանց պէս ողոմ-
նա երգելով ընդունիմ զաղքային խա-
ղաղարար զՔրիստոս։ Տէր մեր աղքայ՝
թագաւորէ իմ վրայ, որպէս զի եսալ

թագաւորեմ ընդ քեզ յերկինս։ Հայր բարեգութ, ասկէց ետքը չի թագաւորեն իմ մեղքերս վասն մեղքերը, այլ միայն արքայութիւն քո Որդւոյդ փրկչուոյ. վասն զի ես տառապեալս և վիրաւորեալս աս երկան Ճամփորդութեան և պանդխտութեան մէջ ինչ բանի կրնամ ցանկալ, բայց եթէ արքայութեան քոց փառաց։ Երանի թէ՝ օր մը առաջ գայ հասնի արքայութիւն քո արքայութիւն յաւիտենից՝ որ է տուն երկնաւոր հօրդ՝ ուր օթևանք բազումք. ուր լաւ է նստիլ մէկ օրն քան հազար օր աշխարհիս թագաւորութեանը մէջ։

Digitized by Google

Ի ՀՈՐԵՔՐԱՀԱՏԹԻ

Յիշատակաց արարչագործութեան և մարդեղութեան Բանին 'ի սրբոյ հոգւոյն։ Վասն հնազանդութեան և խոնարհութեան։

Եղեցին կամք ոք որպէս յերկինս և յերկրի։

Դիտ ես ամենակարող ամենաբարի Հայր բարեգութ, որ միշտ իմ ալէկոութեանս համար աշխատելով, առաջ աշխարհիս ըստեղծման ատենը՝ այսօրամենի բուսոց մէջ սերմունք սերմանեցիր, որ միշտ պտղաբեր ըլլան, ինծի համար պտուղ տան։ Եղբը քուս միածին Որդիդ աշխարհ խրկեցիր, որ եկաւ մարդկային կերպարանքով մեկ երկնային սերմանացան մը եղաւ. իրեն խօսքերը եղան մէյմեկ շնորհաց սերմունք, որպէս զի իմ հոգիս ընդունելով ան սերմունքը, քեզի պտուղ տայ բարեգործութեամբ, երկնաւոր հօրդ կամքը կատարելով։ Բայց ան

Digitized by Google

սերմն՝ որ Ճամփու վրայ ընկաւ, կոխ-
վեցաւ, թռչունները կերակուր ե-
ղաւ. ան որ ապառաժ քարի վրայ ըն-
կաւ, առջի բերանը կամանչցաւ, ետքը
չորցաւ. ան որ փուշերուն մէջ ընկաւ,
փուշերն խղդուեցաւ. սատանով ամ-
մենալ անպտուղ եղան. միայն ան որ-
վաւ պտուղ, որ աղէկ կակուղ գետնի
վրայ ընկաւ:

Սատանէ իմ սրտիս մէջնալ շատ հո-
գիւոր սերմունք սերմանեց Բրդին միա-
ծին առաքեալին խօսքերով, ներսէն
միտքս արթնցնելով, և քարոզաց խօս-
քեր լսեցնելով: Բայց իմ սիրտս եր-
բեմն Ճամփու վրայ ընկածին նմանե-
ցաւ, որ սատանան փրցուց, անպտուղ
եղաւ. երբեմն ապառաժ քարի նը-
մանեցաւ, որ առջի բերանը իր խօսքին
մարիկ դրաւ, ետքը ձգեց թողաւ. եր-
բեմն փուշերու մէջ ընկածին նմանե-
ցաւ, որ աշխարհիս զբաղմանց մէջ ընե-
լով պտուղ չտրվաւ. սատանայով բոլոր
իմ կեանքս անպտուղ անցաւ գնաց:

Հիմա կաղաչեմ Հայր երկնաւոր,
կակղացուր իմ սրտիս կարծրութիւնը,

Digitized by Google

որ ասկէց եղեալ աղէկ կակուղ գէտնէն նման ըլլալով, հարիւրապատիկ բարի պտուղ բերեմ առաքինութիւններով, քուվին կամքդ կատարելով, ինչպէս որ երկնքը հրեշտակներդ կրկատարեն: Դու ես այն մարդասէր Հայր երկնաւոր՝ որ աշխարհիս ըստեղծման ատենը առաջ լոյս ստեղծեցիր, արեգակն ու լուսին հաստատեցիր, անով իմ խաւարած աչքս կրտեսնայ կրվայելէ ամէն բան. եղեալ Բանն Աստուած աշխարհ իրկեցիր, որ մարմնանալով 'ի սրբոյ կուսէն Մարիամայ, եղաւ իմ հոգւոյս լման արեգակն արդարութեան՝ լուսաւորելով իմ հոգիս. իսկ ամենօրհնեալ սուրբ կոյսն լման լուսին մխիթարութեան գիշերվան մէջ, որ մեղքերով խաւարած հոգիս կրլուսաւորէ:

Օրհնեալ ըլլայ կամք երկնաւոր Հօրդ՝ որ ասանկ բարի կամեցաւ մեզի. օրհնեալ ըլլայ և քուվին կամքդ ով Բանդ Աստուած՝ Յն Քրիստոս, միածին Որդի Աստուծոյ, որ կամեցար երկինքը թողուլ երկիրս իջնալ Աստուած

ըլլալով՝ հողէդէն ըլլալ, մարմնոնալ
'ի զրոյց կուսէն Մարիամայ, երկնա-
ւոր Հօրդ կամքը կատարելու համար։
Ահա ինչ սէր է տէր իմ, ինչ սէր է ար
կրաքշանա իմ վրայ. իսկ սիրելիդ հա-
մարը մուցար քու փառքդ, քու Ա-
ստուածութիւնդ։ Ցիշէ տէր իմ աս
քու անձառելի խոնարհութիւնդ. ա-
ռաջնորդէ ինծի քու հնազանդութիւնդ
ճանաչման հեռաւել, ու խոնարհութիւն
տնեմնալ, որ քու ձայնդ լսելով երկ-
նաւոր Հօրդ կամքը եղալ կատարեմ,
և քու փրխանորդներուդ կամքը՝ որ
գրեր են աշխարհիս վրայ։ Զատն զի գուն
եղար մեզի առաջին ծնող, իսկապէս
նախահայր Ադամ, ոչ անհնազանդ որ
պէս առաջին Ադամ, այլ հնազանդե-
լով կամաց Հօրն երկնաւորի ծնար զմեզ
յարքայութիւնք արքայութեան։ Եւ քու
կին ծնողդ ալ Ամենասրբուհի կոյսն Մա
րիամ եղաւ իսկապէս նոր Եւա, բնա-
կարան ամենասնքուր Բանիդ Աստու-
ծոյ, ծնող Ողջոյդ միածնի, և մայր
կենդանութեան. յորոյ մնաքուր ար-
գանդի փրկութիւն աշխարհի սկզբ-

Digitized by Google

նաւորեցաւ, զորձ նախասահմանու-
թեան մերոյ անօրինեցաւ, իբրեւ յանձ-
նելոցդ զմեզ մահուանդ առեալք մասա-
նաւոր յանձնարարութեամբ։

Աւրի մեր նախամեղքն եւս մեզի
անէծք բերաւ, հիմա մեզի նորն եւս
կենաց փրկութեան բերաւ, տալով
զքեզ միածին Որդիդ՝ պատուղ կենաբար,
պատուղ անմահական, որով վերցուե-
ցան հին անէծքը, ուրախացան ամենեն
մեղաւորք։ Դու նորդ Ադամ, Բանդ
Աստուած մարմնացեալ՝ եղար միջնորդ
'ի մէջ հօր Աստուծոյ և մարդոյ, խան-
նորն եւս եղաւ միջնորդ և բարեխօս
'ի մէջ մեր և քո, և հարսն հոգւոյն արդ-
բոյ ընծայեալ յերկրէ յերկինս։ Եղբարք
արդարք դատաւորդ նոսին արդարու-
թեան զատաստանքը, այս հզօր բարե-
խօսն է մեր յոյսը, որ քուկին արդարդ
բարկութիւնդ անցանէ, և ողորմու-
թիւնդ շարժէ մեր վրայ գթալ և նեղեալ։

Digitized by Google

Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Յիշատակաց արարչագործութեան, և
հաղորդութեան սուրբ խորհրդոյ, և
բարեխօսութեան առաքելոյ:
Վասն Աղաւնութեան յԱստուծոյ:

Զ հաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր:

Զ.ԱՌ ամենեցուն 'ի քեզ յուսան
հայրք ամենատուտ, որ տաս կերակուր
նոցա 'ի ժամուն. քանաս զձեռն քո,
և լցուցանես զամենեսեան քաղցրու-
թեամբ կամաց քոյ: Քուն ինն առաստ-
պատուութեամբդ հերիք չիսեպեցիր աշ-
խարհիս ստեղծման ստեղծը այնչափ
պատուականերդ մարդու հատոյ կերա-
կուր ըստեղծել, այլ նաև ձիներ, կեն-
դանիներ, թռչունքներ ստեղծեցիր,
մարդուս կերակուր տալիր՝ որ ուզա-
ծին ակն վայելէ: Եղանալ երբեմն մար-
դոյս անտապատի մէջ կարօտ եղաւ կերա-
կուրի, դու երկինքէն մանանայ ինքն
ցնեալով կերակրեցիր այնչափ ատեն.

Digitized by Google

բայց մարդս անոնք 'ի փառս քո ձեվայ-
ելեց, այլ որկրամոլութեամբ, շուայ-
տութեամբ շատ անգամ մեղանչեց։
Եղբը աս բանիս դէմ՝ քուքին միածին
Որդիդ աշխարհ իրկեցիր. ան տրվե-
ցուց իրեն սպաքովը՝ օրինակովը և քարո-
զութեամբը՝ որկրամոլութիւնը զըս-
պել, և կերակուրը միայն պիտանաւո-
րութեան համար 'ի փառս Աստուծոյ
վայելել։ Երբոր հինգ հազար մարդ
անապատի մէջ կարօտ եղան հացի,
առաքեալները բարեխօս եղան իրեն
ազաչելոցին. ինքը տրվեցուց հացը օրհ-
նել, և հինգ հացը օրհնելով՝ հինգ հա-
զար մարդ կերակրել. տրվեցուց հոգ
չիքաշել մարմնաւոր հացի համար.
վասն զի Աստուած է՝ որ մարդուս
մարմնոյն համար հաց կրպատրաստէ,
քիչովը շատ մարդ կրկերակրէ, և մար-
դուս հոգւոյն համար հաց հոգևոր
բանին Աստուծոյ կրպատրաստէ։

Պարդապէնէրը՝ առաքեալները՝ եղան
մարմնաւոր հոգիս և ձկնորս ան մար-
մնաւոր ոչխարներուն ու ձկներուն որ
դուն սաեղծեցիր այսօր. իսկ Որդին

Digitized by Google

միածին խորհեցիր հոգիս՝ որ ան մարմնաւոր հոգիներդ և ձիներդ ընդ հոգիս հոգեւոր, և ձիներս հոգեւոր, որ ձիներուն տեղը մարդիկ որոյային հոգեւոր կերակրով քարոզելոնք բանիւն Աստուծոյ։ Անոնք աստուածիցն որ մարդս մարմնաւոր հացի համար շատ չի հոգայ. երբոր աղօթիւք Աստուծոյ գիտի՝ կրկնոյ, թէկ անասնոցի պէս տեղ մնալով բոլորովին կարօտ ըլլայ հացի. վասն զի լուութիւն հացի և գինւոյ քուկին ձեռքդ է տէր իմ՝ զաշխարհ ընիս խրով դու հաստատեցեր։

Բայց փառք մարդասիրութեանդ՝ հոգիս երկնային Յիսուս միածին, որ փոխանակ ոչխարներուն կամին ու միայր ճարակելու տեղը՝ դուն կուտաս անոնց թէ մարմնաւոր կերակուր՝ և թէ հոգեւոր կերակուր՝ քու անասնայանն մարդիկդ և արիւնդ։ Առաքեալներդ ըսդալ կուտաս զորութիւն, որ մեկ երկնային հացով հազարաւոր մարդիկ հոգեւորապէս կրկերակրեն ինչպէս աշխարհս եւաքը. ապանիկով ինչպէս որ մարդիկը համապարզդեան կերակրոյ

կարօտ ըլլալով, կրդանայ ամենին առեղ, ասանկալ հոգին ամենին օր իր կերպանի թոյն կարօտ ըլլալով ամենի առեղ կրդանայ ան հայն կենդանի, ան հայն հրեշ ասակայ, որ թէպէտ բնութիւնհէմ բուսաս անբանից մարուն մէջ, բայց աշխարհ ամենին կրվայելէ սա արքայական ազնիւ կերպարդրը, որ մենք չենք առրմաներ, չենք ժողովեր. այլ դու տեր չարչարանքովդ առրմանեցիր, և քու մահդ անդ մանդալովը հնձեցիր, և կերպեցնայ շտեմարանին մէջ ժողովեցիր, որով աշխարհ ամենին կրկերակրդվի առաքանէրուն ձեռքովը։

Ապաչեմ առր իմ բարեխօսութիւնդ նոյն սուրբ առաքելոց, չխպակին իմ մարմնաւորս հայր՝ որուն իմ կենացս ճանապարհին մէջ կարօտ եմ։ Զիպակին նաև հոգևոր հայր երկնային, որուն աս պանդխտութիւնս ճանապարհին մէջ կարօտ եմ. վասն զի հանապազաղօր կը մեղանչեմ, հանապազաղօր ալ կարօտ կրլլամ երկնային հայրին բժշկութիւնս։ Ցուր նաև շնորհք որ՝ մարմնաւորս կերակրիչ և սարքուստի հանարդ շատ

ի հոգամ, և չափաւորապէս վայելեմ. զի զլաց որ մարմնոյն ծանրանալով վար քաշէ իմ հոգիս շուայտութեանն և ապրեցութեանն. և որչափ որ ինչվան հիմա անկարգաբար վայելերեմ՝ նեղութիւն տաս : Իմ ըրած անկարգութեանցս քաւութիւն գտնալու համար քեզ կընուիրեմ Ցիսուսին պաքը, ծարաւը, ժուժկալութիւնը, որ գտնալով քեզ հօր երկնաւորի կընծայէր. անոնք ընդունելով քաւեսիմ որկրամոլութիւնս կամ աւելորդ հոգս որ իմ կեանքիս մէջ ըրեր եմ ապրուստի ու կերակրոյ համար: Ընորհք ապաւինութեան տաս 'ի քեզ յԱստուած, որ նաև ձագէրուն՝ ճնճղուկներուն՝ կերակուր կուտաս ամէն օր :

Ի ՅՈՒՐԱԹԻ

Յիշատակս արարչագործութեան, և
պահոց, և լուրջ բանաց Քրիստոսի:
Վասն մեծութեան, և շգնութեան:

Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և
մեք թողուք մեր ոց պարտապանաց:

ԱՐԳԻՒՐԳ ԱՓԱՆՍԻ քեզ Հայրերդ, Նամիս, որուն յաւուրս Հայրութեան անունը, յաւուրս Եղերել և թողուլ մեր պարտքը, և պատժելոյ տեղ միշտ բարերարութիւն ընել: Որ աշխարհս սկզբնաւորուն ասոնքը այսօր նախատատեղծ մարդն Ադամ ստեղծ եցիր նման քու պատկերիդ, դրախտին մէջը դրիր վայելել ամէն բարիք. մարդս ապերախտ գանըվելով քեզի դէմ ելաւ. սատանայի խօսքին մտիկ դնելով որկրամոլութեան մեղքով մեղանչեց, քեզի թշնամի դարձաւ: Ամէնէց եւսքը իր կենանքը դարձաւ եղաւ նման խուլ ու հաստ գիւաղարի, որ ուր որ կը լսեր՝ հանդիստութիւն չէր ունենար, մէկ

Digitized by Google

մեղքէ մեկալ մեղքը կենար. երբեմն
ցանկութեան կրակին մէջ, երբեմն
դաղջութեան ջուրին մէջ կը ձգէր սա-
տանան որ կորնչցնէ։ Սարդը կը-
փրփրոտ, ակուանէրը կրկին ճրատար, ճար
մը չէր գտնար խաբելու. մարդարէք
կատաղակէին, գեղ մը չէին կրնար գրա-
նալ, առաքեալները կը ջանային՝ չէին
կրնար խաբեցնել։

Իսկ գու Յիսուս միածին, երկնաւոր
Հօրդ հրամանովը իջար բարձր լեռ-
նէն երկնքէն՝ բժշկել աս անբժշկելի
ցաւը մարդուս. աղբիւրութենէդ հե-
ռացար, աշխարհ եկար. սատանան-
ը հալածեցիր, մարդը ողջունցիր, և
սորվեցուցիր որ սատանի սատանան՝ որ
շատանցնէնք պզտիկուց տիրեր հո-
գիին վրայ, երեն ունակութիւն դար-
ձուցիրէ մեզը, սատանը միայն պաքով
և աղօթքով կրնայ ելլալ։ Առաջ քու-
կին կենանքդ օրինակ տրիր, որ մենք
ալ անանկ ընելով փրկութիւն գտ-
նանք։ Սատանան նախանձելով քու
երկնային վարքիդ, ու չնչանչնալով
Աստուած ըլլալդ, Աղամայ պէս քու-

Digitized by Google

կին քովդալեկաւ փորձելու, մեղքի մէջ խօթելու. դուն որ անկարօտ էիր օգնութիւն դանալու, իբր կարօտ անոր ձեռքէն խալըսելու համար՝ երկու բան ըրիր օրինակ տալու համար մարդուս. մէկմը պաք պահել, մէկմեալ անդադար աղօթք ընել. քառասուն օր սատանան չի հեռըցաւ՝ քեզ փորձելուզեց, քառասուն օրալ դուն պահեցիր ու աղօթքի հետ եղար մեզի սորվեցնելու համար: Աս հերիք չեղաւ, եռաքը դու քովինն կեանքդ մարդուս համար տրվիր. աս ուրբաթվան օրը՝ երբոր մարդս սատեղծեցաւ, աս օրս դունալ զանազան չարչարանքներով խաչին վրայ դամեվելով՝ քեզ պատարագ մատուցիր Հօրն երկնաւորի, որ մարդուս մեղքերուն թողութիւն քառութիւն ըլլայ, և Հայր Աստուած հաշտվի մարդուս հետ, աներր հաշտվելովը՝ մարդուս անարժէքելի ցաւը բժշկութիւն դանայ:

Հիմա Հայր բարեդութ, երբոս անկեալ կրխոստովանինք որ՝ անհամար բիւր մեղքերու պարտքիանութիւնունինք, բայց մեզի բարեխօս ահա քու

միածին Որդիդ է, որ այսօր խաչին վրայ կախված ըլլալով իր Թշնամիներուն և խաչ հանողներուն համար թողութիւն կը խնդրէ. Հայր, թող զոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն. (Ղ. ՝Ի. 54:) Վայ ինծի, ես անոնցմէ մեկն եմ՝ որ Ցիսուս միածինը խաչ հանեցի: Վայ ինծի, քանի քանի ծանր մեղքեր ունիմ՝, անոնց պատճառին տակը ընկած եմ. բայց ահա տէր, քու ողորմութիւնդ քու միածինն է. մեզի փրկութիւն քու միածինն է, որ մեր վրայ դրեցաւով մեզի տալիր: Քու Որդիդ միածինն է՝ որ անմեղ անարատ այսօր խաչին վրայ խոցվելով՝ մեր պատուհէրը կատարեալ վճարեց. ոչ ապականացու արծաթով, այլ իրեն պատուական արիւնովը. և ինչ Թշնամութիւն որ նախատեցին Աստուծոյ Բարերէր գիտութեան ծառին տակը, այսօր միածինն Ցիսուս աս սուրբ ծառին խաչափայտին վրայ կախվելով վերցուց, և զմեզ երկնաւոր Հօրդ հետ հաշտեցուց, իրեն սուրբ արիւնը մեզի գանձ թողութեան առանգեց:

Digitized by Google

Հիմա սա գանձը ահա քեզի կրմա-
տուցանենք Հայր տուրը, որչափ որ
պատրաստ ունինք՝ սա անհուն գանձէն
առնելով մեր պատրաստը ընելս։ Թող
մեզ զպատրաստ մեր՝ որոնց համար այս-
չափ բարերարութիւն ըրիր, այսչափ
հոգ տարիր։ Թող մեզ զպատրաստ մեր.
զի թէ գու զանօրէնութիւնս մեր քն-
նես, ո՞վ կրնայ քու առջեւդ երևնալ,
ո՞վ կրնայ Թողուլ մեր մեղքը. ոչ ե՛ղ-
բայր, և ոչ հայր. չեկայ մէյմը որ փրկէ
ու ապրեցնէ, միայն քեզնէ է ո՞վ Հայր
լուսոյ՝ ողորմութիւն և առատ առա-
ջի քո փրկութիւն։ Պրտեսնաս գիտես
որ մեր միտքը՝ կամքը՝ պզտիկուց չա-
րիք ընելու կրվազէ, պզտիկուց մեղքը
ունակութիւն ըրեր է, գու ոտպէս Հայր
մի բարկանար, այլ ներէ, անտես ըրէ։

Ընորհք տուր, այսօրվան պատը որ
տուրը եկեղեցին գրեր է, եասալ ապաշ-
խարութեամբ պահեմ, չէթէ մինակ
բերանս, հապա ամէն զգայարանք-
նէրս, ամէն մեղքէրէ տուրը պահեմ
հոգիսալ մարմինսալ։ Եւ ինչպէս որ
տուրքէրը իրենց թշնամիներուն՝ հա-

լածիչներուն կրնեռեին, բարիք կը-
նեին, եւալ իմ մտիկներուս՝ իմ թշ-
նամիներուս՝ ինծի չարարներուն՝
լեզուագարներուն՝ բամբասողներուն՝
ամենեսնալ թողում իրենց պարտքերը
նին, որ գունալ իմ մեղաց պարտքերը
թողուս. ինչպէս որ սորվեցուց մեզի
Յիսուս քրիստոս Ողորմիութիւն։ Թող-
ուր կաղաչեմ Հայր սուրբ՝ Յիսուսի
արդեանցը համար՝ իմ ամենն կերպ
մեղքերուս, թէ որ իմ թշնամիներուս
չինեռեցի, ինծի դէմ եղողները չի-
սիրեցի, և ուրիշ ինչ մեղք որ գործե-
ցի 'ի մանկութենէ ինչպան հիմա։

Digitized by Google

Ի ՀԱՅԱԳՈՒ

Ցիլապատաս արարչագործութեան, և
բարեխօսութեան ամենայն արքոց։
Վասն Աբիսութեան։

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ ի չարէ։

Յերեսս անկեալ աղաղակեմք առ
քեզ ո՛վ Հայր մեր, ո՛վ դատաւոր մեր,
ո՛վ փրկիչ մեր, փրկէ զմեզ ամենեն փոր-
ձութենէ. մի թողուր որ չարիք մեր
վրայ իշխեսն։ Դու որ վեց օրվան ամենեն
արարչագործութիւնը լրմնցուցեր էն
ետու՝ եօթներորդ օրը հանգիստ ա-
ռիր. և պատուիրեր դրիր որ՝ մարդնալ
ան օրը հանգչի իր ամենեն գործքերուն,
հանգչեցո՛ մեզ աւելի սատանայական
փորձութենէ, և աշխարհիս փորձանք-
ներէ, որ ալէկոծութեան պէս վրա-
նիս կրժողվելին։ Դու Հայր ողորմու-
թեան, որ տեսնալով մարդկային ա-
լէկոծեալ կեանքը աս աշխարհիս մէջ,
խրոշնալով խրկեցիր երկինքէն Որդիդ

միածին, որ եկաւ մէկ վարպետ նա-
ւասարդի մը պէս մնաս եկեղեցեայ
նաւուն մէջ, անպնեալով մեզ աս աշ-
խարհիս ապաստարանի փորձանքներով
ալէկոծեալ ծովուն մէջէն. ուսկից
չի կրցան մեզ փրկել ոչ մարգարէք, ոչ
առաքեալք, այլ աղաղակեցին աս երկ-
նային նաւապետին ու փրկեցին, ՁԷր
փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք ասացեալ։

Իսկ դու Ցիսուս միածին, եւ լար ար-
թնցար անոնց աղաղակելովը, անոնց
քարտեղեսութեամբը, մէկ սաստելով
մը խաղաղացուցիր աշխարհիս ալէկո-
ծութիւնը. սորվեցուցիր ինչպէսք է
ընելը՝ մեղաց ալէկոծութիւնը դադ-
րի. ցրցուցիր որ մէկ հատիկ ՀԱՐ՝ հա-
ւատքով դիմելն է Աստուծոյ՝ որ սահմն
մեկ քրիստոնէն և եկեղեցեայ նաւը սա-
տանայի որոգայթէն և մեղքի մէջ ըն-
կղմելէն կրնայ ազատիլ։ Քանի՞ վարդ-
ապետ օրինակ տալիր, ցրցուցիր ինչպէս
ալէքը է հաւատքով, յուսով, պատ-
ասխանատուութեամբ, փորձութենէ խաղսիլ. ա-
ռաջ ներդութիւնքաշել, եղբը հանդ-
ցիլ։

Digitized by Google

Հիմա եթէ մեզ աշխարհիս ծովուն մէջ ընկեր կերթամ, կրվախնամ որ՝ ինչպէս օձը խաբեց նախնաստեղծ մարդը փորձութեամբ, սատանայ իրեն խորամանկութեամբը իս խաբէ՝ Աստուծմէ հեռացընէ. վասն զի ամէն փորձութեան տակը ընկած է մարդ գուս կերանքը. մանաւանդ թէ ինքը ինքիրեն փորձութիւն է։ Բայց գուս գիտես որ ինչ է իմ զօրութիւնս. թէ որ կուզես որ փորձութիւն ու նեղութիւն վնշտ գայ վրաս, եղբիցն կամք քո օրհնեալ. որովհետև ոչ գուս ցնտուս, և ոչ մայր քո սիրելի, ազատ գոնաս դառնակսկիծ չարչարանքներէն և նեղութիւններէ. այլ հաստատիմ ես Աստուած, որ զմեզ փորձութեան մէջ չես ձգեր մեր կարողութենէն աւելի։

Կրնդրեմ որ փորձութեան հետ մէկ ճամփայ մընալ ցրցընես որ համբերեմ. տաս շնորհք արիութեան որ յաղթեմ ամէն փորձութեան. ես, ինծի չապաւինիմ, այլ՝ի քեզ տէր ցնտուս մարդասէր, որուն Հայր Աստուած ամէն դատաստան ապրաս, չէ թէ

աշխարհ դատեալս, այլ աշխարհ փրկեալս հաստատ պայծառ հաւատքով քեզ տապալինիմ, յուսով և սիրով քեզ դիմեմ։ Վասն զի ոմն մեզ խալըստրնէ հոգևոր և մարմնաւոր փորձանքներէն՝ որ ամենն օր ծովու մը պէս վրանիս կը թափին. ոմն մեզ փրկէ սատանայէն ալէկոծութենէն, որ ամենն օր մեզ կորստնել կուզէ, եթէ ոչ դու Ցիսուս, զոր Հայր Աստուած ասոր հաստատ խրկեց աշխարհ։ Դու միշնորդ և բարեխօս, և փրկութիւն մեր, որ մեզ քէրէ և մահուանէ քուկին արիւնդ թափելով փրկեցիր, և այսօր թաղվելով և յարութիւն առնելով մեզ ալ յոյս յարութեան պարգևեցիր, և հանգիստ յաւիտենական երանութեան։ Տէր փրկեա զմեզ, զի կորնչիմք աւասիկ։ Տէր, արժանի ըրէ որ ինչպէս ամենն ուրբքը քուկին օգնութիւնդ գտնալով ամենն աշխարհիս փորձութենէն խալըսեցան, աղքայութեան փառաց արժանի եղան, և հիմա կը հանգչին հանգիստ յաւիտենական, ասանկալ ան արքաց բարեխօսութեամբը՝ նահապետ-

տաց, մարդասիրելոց, աստուածելոց, մարտիրոսաց, Հզնաւորաց, և կուսանաց, մինչեւ անուանց՝ և մանաւանդ քուկին օրինակիդ հետեւելով, ամենն փորձու Թեան վրայ ելլալով, վայելենք այն երանութիւնը, որ դուն մեզի համար վաստակեցար ու պատրաստեցիր։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

Digitized by Google

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Խոստովանութիւնեէ առաջ չորս բան պէտք է. մէյմէ՝ դանիլ մեղքէ. երկրորդ՝ միտքը բերել իր մեղքերը. երրորդ՝ զղջալ ցաւալ իր ըրած մեղքերուն վրայ. չորրորդ՝ հաստատ առաջադրութիւն դնել մէյմենալ չընելու։ Հոսալ աս կարգով կրգնաս ամմէն մեղքին հասնար յաստուած աղօթք։

Աղօթք վան գաբրէլոյ ի մեղայ։

Վա՜յ ինծի տէր իմ, որ անչափ բարիդ անարդեցի, անհոգութիւնդ չէ սիրեցի, այլ մնաւանդ մեղքով վշտացուցի, պատուիրանքներդ կոտրեցի, քու հրամանդ ոտքդ կոխեցի, աշխարհիս ու իմ կամքս աւելի մեծ սեպեցի, աստուածային քու խօսքերդ բանի տեղ չդրի, մարմնոյս հեռանացայ։ Վա՜յ ինծի ալէս կոյր մեղաւորի.

Digitized by Google

անչափ կուրցայ որ՝ աղէկը դէշն տեղ առի, դէշը՝ աղէկի տեղ. պզտիկը՝ մեծ բռնեցի, մեծը՝ պզտիկ. աւետարանին սուրբ պատուիրանքները թողուցի՝ որ ինծի արքայութիւն կուտան. աշխարհս՝ մարմնոյ՝ ինչ որ ինծի զուրցեցին, անիկայ աղէկի տեղ բռնեցի, որ ինծի տանջանք ու դժոխք կուտան. աշխարհիս բարիքները վաստակելու ետուէ ընկայ, որ մէկ երազի մը պէս կանցնին. սուրբ աւետարանին զուրցածները բնաւ չուզեցի վաստակելու՝ որ ինծի անանց յաւիտենական կեանք կուտան։

Հիմա օրերս պարապ անցուցած, մեղքերով բեռնաւորված, ան մեղքերէն ուրիշ օգուտ մը չմնաց որ տղբ ուլաց։ Պընիմ ողորմութեան հօրդ առջին կուգամ, թող ինծի այսօր անմեղութիւն մեղքերս, որոնցմէ եսալ դաներեմ. ես ինծմէ կրխոստովանիմ, զղուելով անոնցմէ այսօր կուզեմ խոնարհութեամբ խնդրել զթողութիւն։ Դու ես ցիսուս քաւիչ քահանայապետ, քու փոխանորդիդ քահանային

Digitized by Google

առջին հոգեւոր, թող քու ողորմդ պարզ լլվեւոր կաղաղակեմ. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. իմ խոստովանութիւնս, իմ զղջումս մի արհամարհեր այսօր։

Աղօթք վասն յիշելոյ զմեղս. և խոստովանելոյ։

Դու տէր, սրտագէտ ամենայնի, որ ներսի գիս ամենն խորունկը գիտես կրաեանաս. քենէ ծածուկ բան մը չկայ լսոր. բայց իմ ներսի գիս զղջմամբ, սպասուէ իմ քարացեալ սիրտս արցունքով, շարժէ իմ լեզուս 'ի խոստովանութիւն։ Դու տէր զանազան հիւանդներ զանազան հարցմունքով առջեդ կանչեցիր, առաջ իրենց ցաւը զուրցնել տալվիր, ետքը Հարտար բժշկի պէս իրենց ցաւը ըռնացուցիր. կոյր եղողին գթալով հարցուցիր. ինչ կուզես որ քեզի ընեմ. երբոր անիկայ ըսաւ, Տէր, թող բացցին աչք իմ և տեսից, գուն շուտ մը հրամացիր, աչքը բացվեցաւ, քու եռանդ եկաւ։

Հիմա ես շատոնցմէնէ կուրացեր եմ.

մեղքերուս խաւարը աչքս գոցելով, չեմ տեսնար, չեմ ճանչնար ոչ մեղքերը, և ոչ մեղքերուս հատմանքը. գոգ դիալով իմ վրայ՝ բաց աղաչեմ մեղքս աչքը, լուսաւորէ որ տեսնամ, ճանչնամ, հատմանքները միտքս բերեմ: Բաց բերանաւ խոստովանելու քահանայ ին, զուրցելու իմ հոգւոյս ցաւը, իմ պակասութիւններս, որ մեղաց խաւարը փարատի, քեզ լոյսդ Քրիստոս տեսնամ, առջի ճամփան ձգելով՝ քեզի հետևիմ ան լուսաւորեալ կուրին նման: Ջանցուածս իւր ով կարէ առնուլ՝ ի միտ. ի դաղտնեաց իմոց սուրբ արա զիս տէր, և յաստուծէն պահեա զծառայս քո: (Սաղմ. ԺԹ:)

Այլ աղօթք առ նոյն:

Երբոր մեղքերուս ծանրութիւնը և շատութիւնը կը թշնեմ Ցէր իմ, կը սասհատիմ. որ մէկը զուրցեմ, միտքս ալ կը շփոթի, ամէն մէկ մեղքերս չեմ կրնար միտքս բերել, կը տարակուսիմ ալ ինչպէս զուրցեմ. անկէց ինծի ծանրութիւն ու ձանձրութիւն կու-

գալ խոստովանելու. այս սարսափելի սանդիսները իս կրթուլցնեն, բերանս կրկասին։ Գիտեմ տեր իմ, որ սատանը սամենը սատանայի փոքանութիւններ են, որ իս հեռացնեմ սուրբ խորհուրդէն, ուշացնեմ իմ բժշկութիւնս. այլ կայն գու բժիշկ հոգւոց և մարմնոց տեր իմ Յիսուս, քանի որ իմ ծուլութիւնս բռնեմ կապէ, գու տեսնելով այս իմ հիւանդութիւնս՝ փարատէ. և քանի որ սատանան ուշացնել ուզէ՝ զանազան կերպով առիթներ բերելով, գու սատանային կապանքը քակէ։

Սատանի երբեմն սատանան չէր ուզեր հիւանդներուն բժշկիլը. քու ձեռքովդ. ուշացնելիս էր՝ ասելով՝ հրէանէրուն բերտուր. շաբթիվան մէջ վեց օր կայ. ուրիշ օր եկէք Յիսուսին քով բժշկիվելու, այսօր մի դալք կը սէր։ Բայց գու տեր սատանան ամենը ըրեր ըսելով, ասիկայ գուստր Աբրահամու է, հիմա սատանան կապեր է, ալէտք է որ՝ շուտով այսօր ես բժշկեմ այս ըսելով բժշկեցիր։

Հիսնալ ասոր նման ըսէ իմ հոգիս

համար, աս հոգին իմ եկեղեցնայ որ-
դին է, սատանան կապերէ մեղքերով
չուզէր խալըստնել. այսօր պէտք է որ
ես քեզ բժշկեմ, միտքդ լուսաւորեմ՝
որ մեղքերդ յիշես խմանաս. սիրտդ
շարժեմ զղջալու, մեղայ ըսելու. բա-
ղանդ բանամ, լեզուդ շարժեմ որ հա-
մարձակ խոստովանիս քահանային։ Եր-
բորան ձայնը երկնային բժշկիդ կառնէ
իմ անդամալուծ կապված հոգիս չուտ
մը կապանքներէն կարձրկին, սատա-
նան կըհեռնայ. և ես բժշկված ըզ-
լալով նորէն շնորհաց մէջ կրդանը-
վիմ, եկեղեցնայ հարազատ որդի կըլ-
լամ։ Երանի, ում թողութիւն եղև
մեղաց, և ծածկեցան ամենայն յան-
ցանք նորա։ Երանի առն՝ որում ոչ
համարի տէր զմեղս նորա։ (Սաղմ. լբ։)

Այլ աղօթք առ Նոյն։

Խնդրեմ տէր իմ Յիսուս, որ մեղ-
քերս միտք առնելէն ետև, բանաս
իմ բերանս որ քահանային համարձակ-
կիմ խոստովանելու. վասն զի թէ-
պէտ ես զզուած եմ մեղքերէս, ներ-

Digitized by Google

ոչ դիս ցաւի մէջ է իմ բրածնէրուս
վրայ, բայց սատանան չթողուր որ հա-
մարձակութեամբ մեղքերս խոստո-
վանիմ քահանային, մանաւանդ թէ
քեզ Քրիստոսի տեառնդ իմոյ, որ հան
նստած ես քահանային միջնորդու-
թեամբը։ Հիմա բայց բերանս աղաչեմ
խոստովանելու քահանային՝ որ քու
փոխանորդդ է, մէկիկ մէկիկ զուրցել
իմ ցաւս, իմ հոգւոյս պակսութիւնքն
որ ինչպէս որ պէտք է՝ որպէս զի բժշ-
կութիւն գտնամ։ Ինչպէս որ ան հի-
ւանդն որ կուզէր իր բժշկութիւնը ծա-
ծուկ պահել, դուն հարցանելով վեր-
ջապէս բերանը բացիր, զուրցանել սը-
վիր, անանկալ նայէ իմ վրաս ինորքով
կանչէ իս առջիդ քաջալերելով։ Ցաւս
ինծի զօրութիւն, որ ամենը փարատի՝
ուր որ պէտքը չէ ամչնալ. ահիւ և դո-
ղութեամբ համարձակ բերանով խոս-
տովանիմ իմ բրածնէրս, որով յայտնի
բժշկութիւն գտնալով փառաւորի քու
սուրբ անունդ։ Զմեղս իմ ցուցիցք քեզ,
և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից՝ ի
քէն։ Ասացի թէ ապառամեցից ինձէն

զմեղս իմ, և գու Թողցես զամենայն սամ-
բարշտութիւնս մեղացս իմոց։ (Սաղմ. ։)

Աղօթք զգլման և առաջադրութեան։

Մեղայ քեզ տէր, մեղայ քեզ տէր, մեղայ անհամար մեղքերովս. որ մեկը զուրցեմ, որ մեկը խոստովանիմ. աշխարհս իս խաբեց, մարմինս՝ իմ միտքս երեն քաշեց. սատանան իս մուլորցուց՝ իս վերաւորեց. աս իրեք թշնամին իս աս խեղճութեան մէջ ձգեցին, իս զրկեցին քու տրված շնորհքներդ, թշնամի ըրին քեզի։ Բայց հիմա նորէն քեզի կուգամ հայր սուրբ, գու որպէս հայր անոխակալ և անյիշաչար՝ մի յիշեր իմ ըրածներս, յիշէ քու ըրած բարերարութիւնդ։ Դարձի զերեսս քս 'ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։ Քու ըրած շնորհքներդ պարապ չիհանեցու համար՝ թող ինձ այսօր իմ անօրէնութիւնս։ Ներէ, հաշտվէ, նոր շնորհք զգլման տուր, որ ճշմարիտ սրտիս զգլալով մեղքերս տրբրիմ, նորէն արքայութեան որդի ըլլամ։ Եա սասցի

'ի զարմանալ խմբեալ՝ թէ ընկերցայ ուրեմն յերկուսից աշակերտաց։ Քաջալերեցարուք, և զարմացին սիրտք ձեր, ամենեքեան զոյգ յուսացեալ էք 'ի տէր։ Բազում տանջանք են մեզաստուծոյ, բայց զոյգ յուսան 'ի տէր՝ ազատութիւն տուան շուրջ երկնչի զնոքաքք։ (Սաղմ. ԼԴ։ ԻԹ։)

Այլ աղօթք առ նոյն։

Կարտնասամ այսօր տէր՝ խիմն թշուառութիւնս, և ապատանելով ապարդիւք իմ հոգւոյս խեղճութիւնը, ներուն կը խնդրեմ մեղքերուս։ Եւ առ աշխարհիս մէջ ճանապարհի մը նմանեցայ, որ յանկարծ չիգիտնալը ճանապարհն մեջը ասազանէրուն ձեռքը ընկայ. իս թալանեցին, ամենն բռնաս առին. անկեց եղաքը խաղ զարկին, վիրաւորեցին. ինչ չնորհքնէր ունէի մոռուցեան, ամենը տարին, անմեղութիւնս կորսնցուցեալ տրին։ Ան ճանապարհս աւազակները՝ անգութ ասասանանէրը՝ հոգեսալ վիրաւորեցին, հաւատքս խաւարեցուցին։ իս մեղքէ մեղք ձգելով թուլութեան

մը մեջ ձգեցին՝ որ աղօթք չեմ ուզեր
ընել, աղօթքիալ նստիմ՝ համ չեմ
առներ. բերանսալ կը դոցվի, սամին
հոգւոր բանի պտոնեղութիւն կուգայ.
աշխատհային բաներու սէր կուգայ քա-
ղեգործութեան բանէրը եւ կը ձգեմ
անոնց վրայ է սիրտս միտքս. սամանկ
թշնամոյ ձեռք եմ ընկեր, կազազա-
կեմ ապարչիդ։ Ահա, դու տէր բարե-
գութ, դու որ գթած սամարտցիին
պէս օտար կերպարանք մտար, մարմին
առիր, հասարակ մարդ եղար, աս աշ-
խարհս անցնելով իմ խեղճութիւնս
տեսար, հասկրցար իմ ամենն ցաւս, մի
զանց ըներ ուրիշներուն պէս, նայէ
վրաս ու գթա. բժշկէ իս աս հոգւոր
հիւանդութենէ, ունորէն եկեղեցնայ
պանդոկին յանձնելով սուրբ եկեղեց-
նայ զանազան խորհուրդներով շնորհք
ներով իս ամրցնելով զարմանք, հոգւ,
ինչվան մեկալ անգամ գալուստդ մեռ-
նելուս առեղը. ինչպէս որ սամարտ-
ցին օրինակովը մեզի հասկրցուցիր. որ
մեռնելուս առեղը առողջ ըլլամ հո-
գւորապէս, պարզերես եղլամ քու առ-

ջիդ, ու յաւիտեան քեզի հետ մնամ։ Մերձ է տէր առ այնոսիկ՝ որ մաշեալ են սրտիւք, և զխոնարհս հոգւով կեցուցանէ։ Այլ անձն իմ ցնծացեալ ի տէր, ուրախ եղիցի ի փրկութեան նորա, և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր ո՞ նման է քեզ։ Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զանկարկն յայնցանէ՝ որ յափշտակեն զնա։ (Սաղմ. ԼԴ. ԼԵ։)

Այլ ազօթք առ Նոյն։

Եւ որ բոլորովին մեղաւոր եղերեմ, մեղքերու մէջ թաղթխրվերեմ, արքայութեան ժառանգութենէն զրկվերեմ, հիմա թէ որքան մարդասիրութիւնդ իմ զղջումս ընդունի, իմ մեղքերէս ազատէ, բոլորովին փրկիչ դուն կըլլաս ո՛վ ողորմութեանդ Աստուած. որ իս փրկելու համար խորհուրդ խոստովանութեան և սուրբ հաղորդութեան սահմանեցիր։ Ամէն սուրբք և հրեշտակք ալիտոր զարմանան անքննադիտութենդ վրայ, որ մէկ մեղաւորը ասանկ անարժան՝ ինչպէս երեսկ

Digitized by Google

չիձգեց, չիդատապարտեց, նորէն իբ
շնորհքներուն արժանի ըրաւ. մանաւ
անդ թէ արքայութեան որդի ըրաւ,
որոց հետ մէկ տեղ նստեցուց։ Եւ
ալ զարմանալով կաղաղակեմ անաւ
տենը, ո՜ անքաւ մարդասիրութիւն
Քրիստոսի. փառք գթութեան քո
տէր, փառք մեծի բարերարութեան.
որչափ հրեշտակք կան և սուրբք երա
նեալք՝ ամենենալ օրհնեն գովին մե
ծացուցանեն պիտոր ասանկ անհուն
գթութիւնը՝ որ իմ վրայ ըրած կրլլաս.
Եւալ անոնց հետ մէկտեղ օրհնօղ, փա
ռաբանօղ պիտոր ըլլամ յաւիտեան։
Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա, 'ի
միտ առնու զամենայն գործս նոցա։
Անձինք մեր հոգեբերեացեն տեսուն,
զի օգնական և պաշտպան մեր է։ Եղի
ցի ողորմութիւն քո տէր'ի վերայ մեր,
որպէս յուսացաք 'ի քեզ։ (Սաղմ. ՃԼԳ։)

Այլ աղօթք առ նոյն։

Գթած, ողորմիչ տէր իմ, ինչպէս որ
ողորմեցար բորոտին. ծունկի՛ չոքելով
առջիդ՝ Եւալ անոր պէս կաղաղակեմ

ցէր, եւթէ կամիս, կարող ես զիս պրք-
քել։ (Մարկ. ա. 40.) Գարշելի է իմ
հոգւոյս բորոտութիւնը, ընկայ, կոր-
ծրվեցայ, մեծ մեծ մեղքերու մէջ ալեշ-
ուրկեցայ, մէկ հրեշ մը գարշելիս որ
չեմ ճանչցուիր. եասալ ինծմէն կրգանիմ,
սատանայ կը հաղորդեմ, ինչ ընեմ որ՝
բժշկիմ, ով յոյս չմնաց իմ գիսացէն։
Հրեշտակներ սուրբեր ինծմէն կրգա-
նին, երես կրդարձնեն. դուն ես
միայն ան երկնային գեղեցիկ բժիշկը՝ որ
չես գանիր. դու կարող բժիշկ ամենն
ցաւերու՝ բժշկէ իս. դու հզօր փրկիչ ա-
մենայն աշխարհի՝ ազատեսա զիս. եկի,
նայէ որ մէկ գիս ողջ չէ մնացեր. քու
սատգծուածդ է, բայց այնչափ օտա-
բացեր մեղքերով որ չեմ ճանչցուիր։
Ցէր, եւթէ կամիս, կարող ես զիս պրք-
քել։ Դու

Երբ ալիսոր լսեմ ան ուրախութեան ձայնը, թէ եկայ սեսայ քու ողորմութիւնդ, սրբեցի մեղքերէս քու հոգիդ։ Իմ բորոտեալ հոգիսալ աս ձայնը առաջին պէս՝ շուտ մը բորոտութենէ կըսրբվի. քու խրատով շնորհքովդ ուժ կառնէ, որ երթայ քահանային համարձակ ցոյցնէ զինքը. իրեն բորոտութեան մեղքերուն վերաբերակը մեկիկ մեկիկ խոստովանելով սատամէ. եղբը սատարագ մատուցանէ վասն սրբութեան։ Ան առնը տէր իմ, եսալ կառաջադրեմ որ՝ փոխվիմ, ուրչափ որ քենէ հեռու էի, այնչափալ աւելի քեզ մոտիկնամ, քեզ քարոզեմ, իմ վարքովս իմ խօսքովս բարի օրինակ ասամ ուրիշներուն, որ անոնք ալ քեզի գան, քենով փրկութիւն գտնան ամենքը։

Սաղմոս ԻԳ.

Յիշեա՛ տէր զգթութիւնս քո, և զողորմութիւնս քո, որք են յաւիտենից։

Չմեղանակութեանիմոյ և զանգի-

ուրեան խմոյ մի յիշեր, այլ յիշեա զիւսեր ըստ ողորմութեանդ քոմ վասն քաղցրութեան քո, զի քաղցր և ողորմ ես։

Վասն անուան քո տեր քաւեա զմեղս իմ զի քաղցրամ եղեն. ով է մարդ որ երկնչի՝ ի տեառնէ, օրէնսդէտ առնէ զնա՝ ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ։

Աչք իմ յամենայն ժամ առ տեր, և նա հանէ յորոգայթէ զոտս իմ։

Տէս զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն զմեղս իմ։

Այլ աղօթք առ նոյն։

Եւ սուրբ եկեղեցեայ որդի էի, սուրբ աւազանին մկրտութեամբ լուացեալ էի, իմ մեղքերովս կորնչցուցի հոգւոյս մեղքութիւնը. չարաչար մեղքերով ազատուեցայ, կերպ կերպ երկան ցաւերով հիւանդութեան մէջ ընկայ. կուզեմ նորէն լուացվիլ, նոր պողպատիկ աւազանը ապաշխարութեան մանալ բայց չեմ կրնար։ Անգամալուծ մը դարձերեմ մեղքերովս, դանդաղութիւնը վրաս տիրեցրէ, ծու-

լութեան և ձանձրութեան սատանան իւ. կապերէ, իւ կրիսդէ, ոտքս ձեռքս առաջ ելրեթար՝ սուրբ սպասչասրութեան սաղանին մօտիկնալու, սարսակուսեր կեցեցեմ, մէյրնը չուենիմ որ իւ հոգայ դարմանեմ։

Հիմա դու բժիշկ հոգւոց, ի՛նկ տե՛ս աս երկան ժամանակվան իմ ցաւս. եկո՛ ինծի տեսութիւն, ինչպէս որ ելկար երսունը ուրթ տարվան անգամալուծին քովը. հարցո՛ ինծի աստուածային քու բերնովդ, դամա՛ն ոգի լինեալ։ (Յոհ. Է. 6։) Ան սատեր իմ բերանտալ կրբացվի, հրսկսիմ խոսովանիլ, իմ ցաւերս իմ սկարութիւնս պատմել. Տէր ոչ զոք ունիմ թէ յոյժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես գանգատիմ՝ այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Տէր իմ, ցաւս անբժշկելի է. վասն զի շատանցմանէ ոպզտիկուցմէ բնութիւնս գէշի կրդիմի. զղջումս չունիմ, առաջագրութիւն չեմ պահեր, խոսովանութիւնդ ծանր բան կուգայ ինծի, և սանձնէն աւելի ինծի գէշ աս է որ՝ մէկ մը-

նաև չունիմ որ ասս բանիս ճար ընեմ, բայց եթէ զքեզ, որ հիմա քահանայի կերպարանքը եկիր ես, իս կը հարցուցեմ ես որ՝ պատմեմ զարդեմ իմ ցաւս, անանկով բժշկութիւն գտնամ։

Ես կը պատմեմ քեզի իմ հոգւոյս ցաւը ասէր իմ, գունաւ լսեցու ինձի ան քու ձայնդ. Աղի, ան զմահիձս քո, և գնա։ Քու ցաւերուդ պատճառը ան է որ կը ասես, ապի չես, դուն քեռնէ մեղքերուն մահիճէն չես ելլ բարձ. ան քեզի անանկէնէ ապիութեան հնարքը հոգւոյն սրբոյ, վերցու մեղաց մահիճը, գնա քահանային քովը ձգէ խոստովանելով։ Ա՛ս ձայնս երբոր իմ հոգիս առնէ, շուտ մը կպատնէ, կողջընոյ, կը քալէ։

Բայց շատ թշնամիներ իս կրպաշտ բանս, չեն ուզեր որ մեղքերս վերցնեմ Ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո, կասեն։ Առաջ իմ ձանձրութիւնս գեմ կելլայ, քիչ մը առաջ ինչ որ կաւաջագրեմ՝ եղբը կը ուլամ պահելու. ես իս պէտք էր միշտ զոչման մէջ պահեի որ չիմանամ, Դաւթի մարդ

Digitized by Google

գարեին ալէս ըսելով. Եւ մեղք իմ առաջի իմ են յաւիտենական ժամ։ Բայց խոստովանելէս մեղքերս կրմոռնամ. իբր թէ յայտնի թողութիւն գտած եմ՝ անանկ հանգարտ կրնստեմ։ սիրտս միտքս աշխարհային բանէրու կուտամ։ թէ որ քիչ մը ուրախութիւն գտնամ, ան ուրախութիւնը բոլորովին մարմնաւոր կրդարձնեմ, հոգեւորէն կը պակղամ, աս է իմ կորստեանս պատճառը։

Ասոնք մէկիկ մէկիկ առջեւդ կրդնեմ՝ ով ճարտար բժիշկ հոգւոց մերոց Քրիստոս, ինչպէս որ հիւանդ մը իր բժշկին կրզրոյցէ, որ ինծի դեղը տաս, ճարը դնաս. վասն զի իրաւի ինծմէ յոյս չկայ, քեզի է մինակ բժշկելը։ Դուն իա՛ ծորէն գիտիր խոստովանելէս ետև աս տուրբ տաճարիս մէջը, ու ըսէ՝ ինչպէս որ ըսիր ան բժշկեալ անդամալուծին. Ահա՛ դիպ ողջացար, մի՛ ևս մեղանչեր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։ Ա՛ս խրատիս զօրութիւնը ետսալ իմ արտիս մէջը առնելով՝ աս օրէս ետև փոխիմ, մինակ մեղքերու վրայ ցաս-

ՀԵՐՈՎ ԶՂՋՈՒՄԻ ՀԵՏ ԸՆԼԱՄ, ՈՐ ԻՆՉ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՐՆԵՄ, ԱՍԱՀԵՄ։

ԹԷ ՈՐ ԿՈՒԶԵՍ ՄԵՂՔԷՔԴ ՄԻՍՔԴ ԲԵՐԵԼ, ՈՒ ԱՒԵԼԻ ԶՂՋՈՒՄ ԸՆԵԼ, ԿՐՆԱՍ ՆԱԵ ՄԵԾ ԱՊՔԻՆ ԵՐԳՈՒԴ ԵՒ ՀՈՐԴՈՐԴ ՀԱՐԹՈՒԱՆ ԱՂՕԹՔՆԷՐՆԱԼ ԸՍԵԼ, ՈՐ ԵՆ ԱՂՕԹՔ ԶՂՋՄԱՆ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ։

Digitized by Google

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՌ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹՔ

ՅԱՌՕԱՋ ՔՈՆ ՋՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Ո՛Ր գիտաս բաքեւլացւոց անդ նըստէաք և լայաք, յորժամ յիշէաք զքեզ Սիոն։ (Սաղմոս. ճլ։) Եղբայր խորայեւլացիք իրենց մեղաց համար գիրն ընկան, ինչվան Բաբիլոն քըշվեցան անդուռթ գաղդէացւոց ձեռքովը, հառաչելով Երուսաղէմը կը յիշէին ու կուլային. ինչպէս կորսնցուցինք քեզ Ե՛րուսաղէմ կըսէին, երբ պիտոր տեսնանք քեզ Երուսաղէմ մեր քաղաքը։ Հիմա իմ հոգիսաղ ասոնց պէս գուռթ սատանանէրուն ձեռքը ընկելով մէկ մեղքէ մէկալ մեղքը գլորե-

Digitized by Google

լամ քանզի հեռացաւ, կորսնցուց վեր-
ին Նորատաղենը, ազգայութիւնը,
կորսնցուց արքայ ընկերութիւնը. մաք-
նակից եղաւ սատանաներու։ Ամենեքեան
աւելի զքեզ կորսնցուցի սեր իմ, ա-
բարիչ իմ. գերի եղայ մեղանոյ,
աշխարհի, և սատանայի, որ նորէ նոր
կրկնանայ իս մեղքերու մէջ ձգելու.
անհաւատի մը պէս ղեկուցեալ հեռա-
ցայ սուրբ խորհուրդներէ, սուրբ շր-
նորհքներէ. Թողուցի զանապական
մարմին և արիւն Յիսուսի, եղայ մարմին
և արիւն աշխարհի, ոչ ոք կարէն ժա-
ռանգել զարքայութիւնն Աստուծոյ։

Հիմա զղջալեալ խորհեցայ հա-
գիս կրկին անաւսուրբ խորհուրդները,
ան հոգւոյս շնորհքները որ սատեն մը
կրկայելէր. կուլայ կրհառաչէ, սեր
կուսէ սուրբ Սիոն, սուրբ խորան ան-
մահ պատարագիդ. ինչպէս քեզ կորս-
ընցուցի, ինչպէս քեզ Թողուցի։ Ա՜յ
գութ Աստուած ողորմութեան, Ա-
տուած միսիթարութեան, որ կրգը-
թաս քու ստեղծուածիդ վրայ, այս-
օր գթած իմ վրայ. Եկ, երանցու քու

Digitized by Google

սուրբ երկոգ հրաշալի խորհրդով մեզ
մեզ և արեան քո. ինչպէս որ գթալով
երկնայոր Թոմայի առաքելոյն. կանչէ
քո ակին քաղցր ձայնովդ իմ ապրիս՝ որ
գործքով անհաւատ եղեր ես, ասելով,
Բեր զմատունս քո, և արկ այսր։ Մե՛
Թողուր ասելով սրտոց ընկերութիւնք՝
որ երբոր ես իս ցրցմնեմ անմոց, գան
ալ իմ ահաւութենէս ջղալկվիս. մի
խստացցներ քոս սիրտդ առաքելոյնէ
ոնն քարտէնէրուն ասածին դէմ, որ
անհաւատի գործք ցնեսա։ Այն ասածն
ալ այն ձայնս ասելով իմ քարտցեալ
սիրտս կրկակէնայ, քեզի կրգառնայ,
կաղաղակէ Թոմայի հետ, Տէր իմ և
Աստուած իմ։ Ակէկց հոգը քեզի կը
հաւատամ սէր իմ, քոս սուրբ աս
քանէնէրուդ խրատը խօսքը կրգանեմ.
հերիք է որ քոս սուրբ ձեռանէնդ կը
գալ չէն ինծի, քոս սուրբ անարիոյդ խոր
հուրդը կրհաղորդվի ինծ ի, քոս սուրբ
արիւնդ կրկաթի իմ վրայ. ակէկց հոգը
չեմ բաժնվիր քենէ, քեզ միայն Աս
տուած կրգաստանիմ հաւատքով, և
քեզ կուզեմ ծառայել մարմնով և հո

գլուխ, որ յաւիտեան քեզ փառաւորեալ լիցուս ապրժանի ըլլամ. Ամէն։

Այլ աղօթք առ Նոյն։

Կրցաւիմ մեծապէս տէրիմ Յիսուս, որ մեղանչելովս քենէ հեռըցայ. կը ճանչնամ այսօր՝ որ քենէ հեռընալով ամենէն բարեաց զրկվեցայ. կուզէի հանգստութիւն երջանկութիւն, կարծէի որ՝ կամքս կատարելով մեղքի հետևելով ուզածս կրցանամ. բայց մեղանչելովս ասոնք չվաստակեցայ, քեզ զալ սէրդ իմ կորսնցուցի, սիրոս աւերեցի, խաղաղութիւնս կորսնցուցի, խղճմտանքս շփոթցուցի, չմոռնամ որ քենէ դուրս երջանկութիւն չկայ։

Հիմա սիրոս թշուառացաւ, հոգիս այրեցաւ, զրկեալ իր արարչէդ, իր փրկիչդ, կուլայ, քեզ կը փնտռէ. կը գտնայ քեզ առ սուրբ խորանին վրայ՝ շնորհաց ամբոխը նստած սուսանաւ խորհրդոյ հաղորդութեան, կրկնելիք կապազանկ, Յիսուս վերդասանս, ողորմեա՛ մեզ։ Իրաւի չեմ կրնար համարձակիլ առջեւդ երևնալու, ուր մնաց

Digitized by Google

զքեզ տրտութիւնդ տրտուց իմ մեղաւոր
սրտիս մէջը առնելու խորհրդով հա-
ղորդութեան . վասն զի կամիս զքեզ
թողուցի , քու թշնամիներուդ հե-
տեւեցայ , որ է աշխարհ , մարմին , և
սատանայ :

Բայց քու անբաւ մարդասիրու-
թեանդ ապաւինելով , ոտքդ կը նամ ,
մեղայ կրսեմ , նորէն թողութիւն կու-
զեմ , նորէն քեզի կը մոռանամ առ
սուրբ խորհրդով հաղորդութեան ,
փեղդ կը փակուիմ . ինչպէս որ հիւանդ-
ները մինակ փեղիդ փակելով կը բնա-
ցանիր , հիմայալ իս ըռընացու մա-
հացու հիւանդութենէս , որ հոգիս
ալ կուզէ սպաննել : Ինչպէս որ Զա-
քէոսին տունը գալով , քարոզեցեալ
սիրոյ փոխեցիր , մեղաւորը արդա-
րիր , չար սովորութիւնները փոխեալ
տալիր , անանկալ եկիր իմ սրտիս մէջը
նստէ սուրբ խորհրդով , իսալ արդա-
րացու անոր պէս : Վասն զի քու գալ
նստելդ միայն , ան տունը արդարու-
թիւն և արդութիւն կը լայ , անանկալ
իմ սիրտս քու գալովդ բնակարան և .

թեան կրկին ամենասուրբ Եղիսաբեթ թեանդ։

Այլ աղօթք առ նոյն։

Ե՛կ տեր իմ, տե՛ս ինչ եղեր է ան հոգին՝ որ դուն ստեղծեցիր։ Ե՛կ տեր իմ տե՛ս ան վիճակը՝ որ աշխարհիս ունայնութեան մէջ ընկղմեր է։ Ե՛կ տեր իմ տե՛ս ան աչքը՝ որ դուն ստեղծեցիր աշխարհիս գեղեցկութիւնը վայելելու, քեզ փառաւորելու համար, ան աչքը աշխարհիս մեղքերովը կուրացեր է. ան բերանը որ պէտք էր քեզ օրհնելու՝ ոխերիմ խօսքերով անէծքով լեցուեր է. ան անկատը՝ որ երկնային սուրբ նոյն ձայնը պէտք էր մեկիկ գնել, սատանային ձայնը կը լսէ, անոր խրատը ըսածը կը պահէ. աշխարհիս հոտը իր հոտառութեան անուշ կը գայ. երկնային անուշահոտութիւնը աղօթքի՝ քարոզի՝ իրեն ազէկ չի գար։

Այսպէս տեսնալով տեր իմ, եկիր դուն տիրէ քու ստեղծուածոյդ վրայ. մի թողուր որ օտար սատանան տիրէ։ Մի ընկենուր զիս տեր յերեսաց քոց,

Digitized by Google

և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն։
Այլ քու սուրբ խորհրդաւոր գալըստ-
ուամբդ որ հիմա ալիտոր գաս, իմ սրբ-
տիս մէջը ալիտոր նստիս , դուն տիրէ,
դուն իշխէ , թագաւորէ շնորհքովդ ,
վասն զի քու ստեղծուածդ եմ։ Սիրտս
սուրբ հաստատեա յիս Աստուած , և
զհոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։
Նոր միտք , նոր աչք , նոր զգայարանք-
ներ տանիէ , որ բոլորովին քու երկիւղդ ըլ-
լամ՝ ասկէց ետքը մէկ կամք՝ մէկ վարք
ունենամ քեզի նման։ Ապաշխարու-
թիւնէ՝ խաչ քաշելէ չփոխիմ, որ ան-
դինամ յաւիտեան քեզի հետ մէկտեղ
ըլլամ դէմ յանդիման քու սուրբ ե-
րեսդ տեսնալով. Ամէն։

Այլ աղօթք առ նոյն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ահա կը-
տեսնամ քեզ մարմնով նստած որդու-
թեան սեղանոյս վրայ՝ որ է տեղի ողոր-
մութեան. հոս չես նստած հիմա գա-
տաւոր արդարութեան , հապա հայր
ողորմութեան , որ ամենուն կրքաց-
նես հաց կենդանութեան, կարօտները

Digitized by Google

կրկնակրեաս։ Ասանկ ողորմութեան առեալը՝ ողորմութիւն օրհնէր՝ մեկը չկապաժրնկը, որչափ անարժան ու մեղաւոր ըլլայ. ես որ հիմա ասանկ ողորմութեան առեղծ եմ ապաւիներ, որ է պատարագիդ տուրք սեղանը, մի պատժեր տէր իմ, այլ ողորմէ. քու գթութիւնդ շնորհքէդ ինծի խալ մեկ բաժին մը՝ մեկ փոքրանք մը հանէ ըսերով. Գթամ 'ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. (Մատթ. ԺԵ. 32.) ինչպէս որ ըսիր ջորա հաղարին վրայ. վասն զի իրաւունքնէ հոգիս չուտնի բան մը ուտելու առանց խրատիս ճաշակելու մեջ. մեռնելու մեռակ է անօրենութիւնէ. վասն զի ինչ շնորհք ինչ բարիք որ տրվեր էիր հոգիս կերակուր ըլլալու հանար, անոնք ամէն մէնը կորսնցուցի, մեկ ոգին մեղքի մը համար դուս նետուցի, մեկը չկայ կերակուր տրվող։ Աւաղ ինձի՝ քահանաներդ՝ ամենենալ տարակուսերեն իմ անապատացեալ հոգիս վրայ։

Դուն միայն ես որ կրնաս իս կերակրել և չես ուզեր որ անօրէն արձը.

կեռ Թոզուս, զբլայ որ՝ աշխարհիս Ճանկեռն մէջ անօրէն մնամ. Թէ որ գուն ասանկ չիհոգաս տէր իմ, որ աշխարհ կերակրուցիր, իս մէկը չիկրնար հոգալ. Թէ որ գուն իս չիկշտացնես, որ ջրոս հազարը օրաբ հացով կշտացուցիր, մէկը իս չիկրնար կշտացնել, ոչ աշխարհ, և ոչ մարմին։ Դրաւի ես ինչ վան հիմա կրկարծէի որ անոնք իս կրբնան կշտացնել, անոր համար աշխարհի ու մարմնոյ հետաքրքրայ. բայց խաբէբայ-հիմա իմացայ որ՝ գուն ես միայն հոգիս կշտացնող անմահական սեղանովդ։ Ցաւոր ինծի աս տուրբ մարմնոգ հաց անմահական, կերակուր յաւիտենական, անանկով գանիմ հեռանամ աշխարհային բաներէն, միայն քեզի մտիկնալով քու կամքդ կատարելով զմայլիմ յաւիտեան. Ամէն։

Այլ աղօթք տա՛ նոյն։

Ահա՛ կը հասնիս ծանկիմ կուգամ կը մտիկնամ քեզ տանելու ով երկնային մանանայ, ով հաց հրեշտակաց, որուն մէջը պայծառ հաւատքովս կրսեմ նամ

բազմաբաղձալի զանէրդ իմ Ցիսուս Քրիստոս. կուգամ ոչ իսմով արժանաւորութեան, այլ քումիցն անհուն գթութեանդ և անհուն կարողութեանդ՝ որ իմ ախորոյս համար աս խոնարհ կերպարանքը մեռար։ Ասիկայ ըլլայ ինծի քաւութիւն և թողութիւն անցեալի մեղաց իմոց, հաշտութիւն ամենասուրբ Երրորդութեան հետ, ներքուստն ամենայն պատժոց որ մեղքերս վաստակեցան։ Ըլլայ ինծի գեղ կենաց, ընդհանր յարատեւութեան, որ ամենն մեղքերէն՝ չար սովորութիւններէն կազատիմ։ Ըլլայ կատարիչ խնդրուածոց, թէ ինծի՝ և թէ անոնց՝ որոնց համար պարտական եմ աղօթելու, կենդանեաց և մեռելոց։ Ասով հոգիս զօրանայ՝ որ առաքինութեան հետեւիմ, քեզ տեսանդ բնակարան ըլլամ, ինչպէս սուրբ երրորդ տեսանելու արքայութեան մէջ արժանի ըլլամ. Ամէն։

ԵՂՕԹՔ

ԶԿՆԻ ՀԵՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ո՛վ մարդասէր տէր իմ Յիսուս, ինչ ալէկու�Քիւն տեսար իմ վրայ՝ որ իբր հաւնելով արժանի համարեցար սուրբ մարմնովդ ինծի դալ՝ իմ փրկութիւնս հոգալու համար. իսկ ես անպիտան ծառաս միայն ապերախտութիւն ընելու հեռու եղայ ինչվան հիմա։ Ինչ ալէկութիւն ըրած ունիի տէր իմ, բաց ի մեղաց. աս ինչ սէր է աղարիչ իմ, որ իմ վրայ կրցրցնես. յայտնի կերևցնես որ՝ դուն ես իմ ապարիչս, և ոչ այլ ոք. քու ձեռաց ստեղծուածդ եմ, չես ուզեր որ կորստիմ։ Քանի՞ որ ես քենե կրփախչիմ, մեկ մեղքէ մեկալ մեղք ինալով կրհեռանամ, այնչափալ դուն մարդասիրութեամբդ իմ ետևէս կուգաս, քաղցր ձայնով ինծի կրկանչես. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։

Ամ հերիք չմտանելով հիմնալ իմ սիրտս կուգաս կը հանդիպիս, մնարմնով և արեամբդ կրկներակրկես իս շահելու հաստատ։ Քուվինդ եմ ասէր իմ, քու կենդ է ասս սիրտս, ասս միտքս, որ ես ինչվան հիմա մեղքի ծառայեցուցի. թայց քու ասս սէրդ՝ ասս քու գալուս ապդ ասեմնալով հիմա թոլորովին կը գառնամ, մեղքերս կը ձգեմ, քեզի կուգամ։ Ասան զի դու Թագաւորս Թագաւորաց՝ առաջ ինծի եկար։ Կաղաչեմ ասէր իմ, ասս սէրդ իմ վրայէս մի պակասեցնիր ինչվան երդը. եկո, իշխէ իմ վրայ. Թող մի ասար որ ասապանայ. ինչվան որ երթաս երթամի ապրայս Թեռան մէջ քեզ սեսնելու, քեզի հետ մէկ տեղ նստելու ապրմանի ընես ասէր իմ և Աստուած իմ։

Այլ աղօթք առնոյն։

Ո՛վ սպասաւորական մնարմին Քրիստոսի, որ եկար իմ մարմնոյս հետ խառնվելցար, դու արքայութիւն պրարցդ՝ մեղաւորս պրախս մեջը ընակեցար. իս սրբէ, իս կեցո, իս մաքրէ։

Digitized by Google

Ո՛վ մեղաւաքարիշ ապիրեն Քրիստոսի, որ իմ մեղաւորէր ապիրեանս մեջ խաչեցար, վերացար, վասն իս քու սիրովդ. անուշ ցաւ իմ լեզի բարկութենէս, լեզի հպարտութենէս, և մեսացած սամին մեղքերս։

Ո՛վ պատուական ջուր կողին Քրիստոսի, անմահութեան ջրովդ կենդանացո իմ հոգիս, մարմինս, և միաբանաժշկէ չարաչար մեղքերու բորբոքութենէ։ Թէ որ Յորդանանու ջուրը ներեցման սատրին բորբոքութիւնը լուաց՝ Եղիսէ մարգարէին խոսքովը, քանի՞ աւելի դուք ի անհուն ջուր սարաբչենոր բոսեղծողն է Յորդանանու և Ոսկեանոս ծովու, որ խաչին վերայէն Քրիստոսի կողէն բացված աղբիւրի պէս մեղաւորիս վայ կըվազէ, քանի՞ աւելի սէրոք է որ լուանաս, մաքրես սրբես մեղքերուս գարշելի բորբոքութիւնը։

Ո՛վ պատուական քրտինք Քրիստոսի, որ ինծի համար ապիրեն քրտնեցար, գոնե ինծի կեանք տուր, զորութիւն տուր, որ քու սուրբ պատուիրանքներդ պահեմ, քու կամքդ կատարեմ։

Ո՛վ անդին չարչարանք Քրիստոսի՝, ամուր ինծի ապիւրեան հնորհք, որ եսալ սիրով քաշեմ իմ խաչէս. քու սուրբ վէրքերդ տապաստոցն իմ պահս մէջը, որ ուրիշ բան չիսիրեմ սա աշխարհս՝ բայց ԷԹԷքեանն համն խաչակից ըլլալով անպինալ քեզի նման ըլլամ, վայելելով քու թագաւորութիւնդ, քեզ գէմ յանդիման տեսնալով յաւիտեան. Ամէն։

Այլաղօթք առ նոյն։

Ա՛ սուրբ խորհրդով հաղորդութեան տէր իմ Յիսուս Քրիստոս, որ զքեզ բոլորովին ինծի կուտաս, եսալ բոլորովին քեզ կընուիրեմ, քեզ պատարագ մատուցանեմ իմ անձս, իմ ամէն մէն կարողութիւնս, միտքս, կամքս, ամէն զգայարանքներս. ինչպէս որ դուն եսալ ինծի համար քեզ պատարագ մատուցիր Հօր Աստուծոյ, և սուրբ մարմնդ և արիւնդ եսալ հիմա ինծի հաղորդեցիր։ Ա՛ սուրբ խորհուրդին ուժովը ըրէ տէր իմ, որ տակէց եղբը մեր մընալ չիսամենքիմ քենէ մեզանչելով,

հեռու ձգեմ առելորդ հոգէրը, միայն քու սիրովդ տալինայ իմ քարացեալ սիրտս, միայն քու վրադ խօսիմ, քու չարչարանքներդ մտածեմ, և ինծի ըրած բարերարութիւններդ յիշեմ, զըւարճանամ. վասն զի արժանի ես սիրելոյ, պատուելոյ, և պաշտելոյ տէր իմ Յիսուս։

Ի՞նչ ապէկութիւն, ինչ երախտիք է տէր իմ, որ արժանի համարեցար ինծի պէս մեղաւորին սիրտը գալ. դու որ սրբութիւն սրբոցդ ես, դու որ թագաւոր թագաւորաց ես, արարիչ ամենայն արարածոց, ուսկից կրդողն երկինք և երկիր, հրեշտակք սերովբէք և քերովբէք։ Երբոր կը մտածեմ, եսալ կրդողամ կլսարտասափիմ. ուրիշ խօսք չեմ կրնար ըսել, բայց եթէ տէր, դու ստեղծեցիր աս ստեղծուածը, դու այսչափի երախտիք, պարգևներ, շնորհքներ տըվիր. դուն ինայէ, մի կորնչցներ, մի յիշեր իմ մեղքերս, այլ քու միին շնորհքովդ պահէ իս սատանայի, աշխարհի, և մարմնոյ փորձութիւններէ, որ մեռնելս ետևալ քեզի հետ մէկ տեղ ըլ-

լսամ սաղքայութեան մէջ զմայլելով յա-
վիտեան. Ամէն։

Այլ աղօթք առ Նոյն։

Ո՛վ արդարութիւն աստուածային,
սասկէց ետքը ալ չէս բարկանար մեղքէ-
րուս հանար, տեսանելով որ Միածնին
սրբութեանը մէջ թաթաւեր է իմ մեղաւոր
մարմինս. թէ որ պատուհասող հրեշ-
տակը՝ մարմնաւոր անբան գառին ա-
րիւնը տեսանելով հրեայերուն գունե-
ղուն վրայ, անցաւ գնաց, չիմտիկ-
ցաւ չիմեռցուց հրեայերուն անդրա-
նիկները, հիմա որ իս կրնամ ա-
ռաջանք անապատ գառին Աստուծոյ
լուացուած, ինչպէս պիտոր բարկանաս,
ինչպէս պիտոր սուրն բարկութեան
քոգարձրնես Արնոյ ըլլալ որ վրէժխնդ-
իր ըլլայ արդարութիւնդ ան մեղաւ-
ին՝ որ արիւնն Ցիսուսի վրան թափե-
լով արքեց, ու միշտորդ Աստուծոյ և
մարդու ըլլալով Աբելին արիւնէն ա-
ւելի կրիստոսի, յերկինս կաղաղակէ.
Հայր, թող աս մեղաւորին. վասն զի
ես իմ արիւնս ասոր վրայ թափեցի,

Digitized by Google

իմ արիւնս ասոր Ճաշակիլ տրվի, իսկ
արիւնս ասոր արեան հետ խառնիլեցի.
մեկ մարմին եղանք սուրբ խորհրդով
հաղորդութեան։

Ո՛վ Ճայն սուրբ արեանն Ցիսուսի,
Ճայն զօրաւոր քան զՃայն իմ սուսկալի
մեղքերուս, հզօր բարեխօս, խնդրող
ողորմութեան, որ մեկ Ճանով սասակալ-
կը արդարացուցիր սրբեցիր՝ քուս-
բեանդ մասիկ կենալովը, հիմա իս արբ-
ի, իմ մեղքերս ջնջի, սատուածային
արդար բարկութենեն իս ազատի, որ
քու արիւնդ Ճաշակեցի։ Եւ դու,
ով արդարութիւն Աստուծոյ, դատաստա-
քու բարկութեանդ սուրը, մի սատա-
ծիր իս իմ չարաչար մեղքերուս հա-
մար։ վասն զի արիւնն Աստուծոյ քաված
է վասանդին անհուն արիւնն Ցիսուս-
ի է՝ որ վրաս կաթեցնելով իմ մեղքե-
րուս ներում կը մնդրէ։ Աստուած է որ
կաղաղակէ կը բարեխօսէ մեծի հասանդու-
Ա՛լ սատաժելուն տեղ հոգւոյն արքայ
հնորհքով լեցու, զարդարէ, որ սա-
կէց եղբը միայն սատուածային կամ-
քը կատարելով, արդարութեան

տրբուլթեամբ անցանեմ մնացած իմ կեանքս։

Աղօթք դէնի հաղորդութեան առ սուրբ կոյս Աստուածածին։

Աստուածային անհուն գթութեան էր՝ որ ինծի սա կոչումը սա հարկինքը ընտրեաց, տրժանի ընելով հաղորդվելու Յիսուսին մարմնոյ և արիւնն. որ է հոգևոր հացմանը ուրախութիւն սիրոյ, ուր մեկտեղ հաց ուտելով վայելենք։ բայց իմ գթելիս շնորհաց պակասեցաւ, սանթեով մեղաց մեծամբարեամ պատճեն սրբոց ու հրեշտակաց սուրբին։ դու ով անմոռացիկ սուրբը կոյս Աստուածածին, որպէս մայրը գթած, ինչպէս որ Կանայ գաղիլեացւոց հարսանիքին մէջ՝ երբոր գինի չունին՝ պակասեցաւ, ծածուկ դայլերգիս տասի յայտնեցիր, խնդրեցիր հրաշքով մը գինի ընելու, որ սանուտերը սանթեով լինիս, սասանակալ սլյսոր իմ պակասութիւնս բաց, Քրիստոսի սուրբին գիր, ըսելով՝ Թէպէտ կուտամ կրվայելեմ սա հոգևոր հարսանիքին սեղանին, բայց գինի չունիս հաց հոգևոր

արքայ չունիմ. անմահական բաժա-
կաւ հոգևոր ուրախութեան չեմ կրը-
նար զմայրել։ Դու այն հզօր բարեխօսն
ես, որ թէև իմ անարժանութեանս
համար Քրիստոս չուզէ հրաշք ընել,
բայց քու միջնորդութեանդ համար
կրկնատրէ. քու ձեռքովդ դուն
ընորհաց Քրիստոսի կրթացիք իմ վրայ,
ինծի կատարելապէս ջրով ապաստաւոյց ա-
պաշխարութեան լեցնելէ իմ երկու
աչքիս անմնեղը, իմ քարացեալ սիրտս
ալիրեն ընորհքով կրթելայ ջուր զրոյ-
ման, աչքերնիս արցունքով կրլեցիք՝
մեղքերս լալու համար. ինչպէս որ ան
հարմնիքին մէջը թակոյկները ինչպան
վերը լեցվեցան. ան ջուրը ապաշխա-
րութեան Քրիստոս անեղծոյթ զրաս-
թեանմէ կրփոխէ, գինի ուրախութեան
կրդարձնէ։

Ան սահեր կրզարմանան իմ վրայ
հարմնիքին տաճարասիրանեղը, սուրբը
երկնայինք՝ և հրեշտակք, թէ ինչպէս
ան հոգին որ՝ պարապալ էր ընորհքներէն,
գեղ էր, հիմա լեցվեցաւ ու անուշցաւ
հոգւոյն արքայ ընորհաք. սուրբ որ լե-

պիտութիւն ունէր իր գէշ վարքովը, լերդ կերունային խրատն Աստուծոյ պատուիրանքները, փոխուէցաւ, Աստուծոյ պատուիրանքներուն համար քաղցրութիւնը հիմա առաւ։ Եթէ կառնեմ կրիմեմ Աստուծոյ պատուիրանաց բաժակը վրկութեան ու կըղմայլիմ երկնային սիրով, անկէց ետքը աշխարքէս համ չեմ առներ. միայն Աստուածային բանեերու վրայ սիրաս ձգելով ես ինծի կրսեմ. Ինչ յոռի ու գէշ է երեր աշխարհիս գինին, աշխարհիս ուրախութիւնը, որ առաջ կրպաշտէի. հիմա ետքի օրերս կիմանամ թէ ինչ անուշ է երեր գինին երկնային կենաց, և չկրտեմ զի՝ աս հրաշական գինիին փոխուելը՝ քու աղաչանքովդ եղաւ, չէնէ ես ոչ երբէք արժանի էի աս շնորհքիս։

Նախասայրն Եւայ՝ առջի պատուղը մեզի կերցուց՝ Աստուած ըլալու համար, ամենիքսալ անէծքի ու տրտմութեան մէջ ընկանք, կորանք։ Հիմա դուն երկնային դրախտին առջի խաղողը մեզի կերուցիր, անապական անուշ գինին Քրիստոսին ձեռքովը բաժնել

ոչ վիր, որ խաչին ծառին վրայ ողկուզք նման քաղցրերցաւ անմահական բաժակին մէջ։ ան բաժակը ամենեքեան խըմելով հաղորդութեան մէջ զմայլեցանք, Աստուած գովեցանք, անմահացանք, սեղանակից ըլլալով Որդւոյն Աստուծոյ աս աշխարհիս մէջ։ Քանզի հոգի բարեխօսութիւնդ ընէ որ սեղանակից ըլլանք անգինալ արքայութեան մէջ։ ամենայն օրհնեանք զԱստուած, օրհնեանք և գքեզ Ճշմարիտդ Եւայ՝ մեր նախամայր յաւիտենական կենաց։

Digitized by Google

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՆԴ ՀՈԳԻՈՑ

ԶԿՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Յարմարեալ Բանից Երգոց Երգոյն Սողոմոնի։

Այսուհետ երբեմն մարդս ստեղծեց, մեկ աղվոր գրախտի մը մէջ դրաւ. հոն մարմնաւոր կուարձութիւնէն զատ՝ հոգևորական մէկ տեղ կրվայելէր, անմեղ ըլլալով Աստուած մարմնաւոր կերպով մը մարդուս կերևար, իրեն հետ կըխօսէր, իրեն բաներ կըսորվեցնէր. մարդասէր Աստուած կըսիրէր, սիրտը զուարթ, խղճմտանքը հանդարտ, Աստուծոյ հետ կըխօսէր, կըզմայլէր։

Ադամայ մեղքը՝ մեկ սրգեղեալ պտուղ մը ուտելով, զինքնա՛ և իրեն որդիքնէրնա՛ դուրս ձգել տրվաւ, զրկեց ան մարմնաւոր ու հոգևոր զուարճութենէ։ Երբոր Քրիստոս տէրն մեր աշխարհ եկաւ, նորէն մեզ մեկ

Digitized by Google

հոգևոր դրախտի մը մէջ խօթեց, որ Ադամայ դրախտէն շատ վեր գերազանցեց։

Այս դրախտը՝ է հրաշալի խորհուրդ սուրբ հաղորդութեան. հոս Աստուած մարմնաւորապէս մարդուս կուգայ և շնորհօք կրխօսի, մարդասէր Աստուծոյ հետ կրխօսիլ, կաղաչէ, հոգևոր բանէր կըսորվի, երկրաւոր բանէրը կըմոռնու, երկնային բանէրուն սէր կըձգէ։ Այն Աստուածային սէրը՝ որ մարդս երկինքը պիտոր վայելէ Աստուծոյ հետ, աս սուրբ խորհրդովը իբր թէ անոր համտեսը կրնէ աշխարհիս վրայ։

Սոզոմեն խմաստուն հոգւով սրբոով խմանալով սասնկ սէրը Աստուծոյ ու մարդու մէջ, մէկ գիրք մը շարադրեց Երգ երգոց անունով. հոն կըձևացրնէ իբր մէկ դրախտ մը, ուր Աստուած հոգիին հետ կրխօսրանէ, սէր կրտրցրնէ, մարդուս հոգինալ Աստուծոյ հետ կրխօսրանէ։ Այս սէրը ու խօսակցութիւնը կրլլայ մէյմի երկինքը տրքայութեան մէջ, մէյմնալ երկրիս

վրայ Յիսուս առնելու սահմանը սուրբ խորհրդով հաղորդութեան։ Ամ Երգ երգոց գրքին խօսքերը հոս կրկարգաս հիման օխտը խօսակցութեան մէջ, որք են խորհուրդք գաղտնիք և զարմանալիք։

Ա. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԾՈՒ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ո՛վ է սա որ ելեալ գայ յանապատէ, իբրև ղծուխ ծառացեալ իբրև ցեալ. զմիրառ և ինդրուկ յամենայն փոշոյ խղգիրցոյ. (Գ. 6։) Եւ իբր դու զիեպ գարշապարացն հօտից, և արածիցես զոլս քո՝ ի վրանս հովուացոյ. (Ա. 7։)

Ո՞վ է սա հոգին, որ անապատ էր գարձեր մեղքերով, շնորհքնէրէ զբրկրվելով. իմ պատուիրանքներս իրեն սահելի ծանր կերևային. երկնային բանները ձգեր էր, երկրաւոր բանեքը մինակ կրսկրեր. անոր համար ինծմէն հեռու կրքալէր։ Հիման սա սիրոյ աղօթքովը գէպ՝ ի վերս ինծի կու-

դայ , ինչպէս մէկ մուխ մը մեղքէ-
ղով սեւցած՝ որ երկիրս կը ձգէ , մէկէն
վերկենալայ ծառիմը պէս կրբաբերնայ.
հեռնալ անուշահոտութիւն կրբերէ ,
զմուռս ապաշխարութեան , ինդրուկ
աղօթից , խառնուած սուրբ խղղով
ողորմութեան և բարեգործութեան ,
ինծի համար երկնալ կուզէ , իս կրփրն-
ալուռ , մէկտեղ ըլլալ կուզէ ։

Ահա ուրդեակ , պէտքը չէր սասնկ
մեղանչէիր , պէտքը չէր սասնկ խեղճ
ձգէիր հոգիդ , ան հոգիդ որ՝ ես ինծի
համար ստեղծեր էի ։ Բայց ողորմու-
թեան Աստուած եմ՝ նորանց կընդու-
նիմ քու ապաշխարանքդ , քու մե-
ղադ , կըլսեմ քու աղօթքներդ՝ որ հի-
մա հաղորդվելէդ ետև ապաւէցիր ։
Բայց դուն մէկ պակսութիւն մը ու-
նիս , որ ան քեզ շատ սասելի կընէ ին-
ծի ։ Դուն մէկ առաջադրել մը ունիս
որ՝ հոս խօսք կուտաս , ասկէց դուրս
եղածիդ պէս կրմոռնաս . երբոր մէկ
մեղքի մը սուխթ կուգայ՝ հոն պէտք
էր յիշել քու առաջադրութիւնդ ,
ամենևին չես յիշեր ։

Digitized by Google

Հիմա դուն երբոր մեղաւորներուն մէջէն, եկար հետևեցար ոչխարներուն հօտին ետևէն. բայց քիչ մը անցնի՝ մեղքի մը առիթ գայ, կերթաս ուղղորուն (քէջնէրուն) ժողովքին հետ մէկ տեղ կարծրվիս, մէկ տեղ կրխառնրվիս։ Ահա ասկէրպ առաջադրութիւնդ է՝ որ քեզ թող չիտար առաջ գալու, թող չիտար որ միշտ մէկտեղ մնանք. մէյմը ինծի կուգաս, մէյմը ինծմէն կրբաժնրվիս։ Եթէ կուզես որ՝ միշտ մէկ տեղ մնանք, հոս ինչ որ կառաջադրես, ան առաջադրութիւնը միշտ հետդ տանիս, միշտ յիշես որ՝ ինծի ինչ խօսք ասվիր։

Digitized by Google

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ԳՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Զայն եղբօրդեաց իմոյ բաղխէ ընդառաջ. մերիայսոյ ընդոգմուռնան իմ, զիարդ զգենցայդ զնա. լուացի զոգս իմ, զիարդ աղտեղեցից զնոսա։ (Է. 2. 3։)

ԱՀԱՒԱՍԻԿ կրկնեմ իմ արարչին՝ իմ փրկչին ձայնը, որ իրեն սիրալիր ձայնովը իմ խղճմտանքիս դուռը կը զարնէ, իս կարթնցնէ. Ճանիկայ կրցրցնէ որ՝ ալ մեղքերու մէջ չխնամ, իրմէ չքաժնուիլիմ։ Ցէր իմ Ցիսուս, ես ան մեղաւորն հաղուստը հիմա մերկացայ Թողուցի, մէյմնալ ինչպէս հագնիմ. իմ մեղքի Ճանիկաս գոհեցի, ուսընէրս սուրբ խորհրդով ապաշխարութեան լուացի, ինչպէս մէյմնալ ալտոտեմ։ Ո՛վ տէր իմ Ցիսուս, գտայ ես զքեզ, որ մեղքերովս կորսընցուցեր՝ էի, ասկէց ետքը անանկ կառաջադրեմ, որ մէյմնալ ոչ երբէք մեղանչեմ, ոչ երբէք քենէ բաժնը-

Digitized by Google

ՔԻՄ. միշտ մեկ տեղ նստինք քեզ սի-
րելով ինչպէս որ դուն ալ իս սիրեցիր։
Որչափ բան քաշէմ, քեզ ունենալով
անհուն Աստուածդ, միշտ սիրտս՝
հոգիս՝ մարմինս ուրախ կըմնայ։
Սխալն աս կապաչէմ՝ սիրելի Ցի-
սուս. Թշնամիներս շատ են. երբոր իս
մեզք խօթել պիտոր տան, դուն իս
չիթողուս, ինորհքովդ հանիս, մեզ-
քերէս պահես, որ միշտ քեզի հետ
մեկտեղ մնանք, մեկմեկէ բնաւ չի-
բաժնըվինք։ Ա՛ս կապաչէմ՝ չէ թէ իմ
արժանաւորութեանս համար, հապա
քու արարչական ու փրկչական սիրոյդ
համար։

Բ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ա՜խ՝ալածիդ գլխէդ՝ի գոռ մօր իմոյ, և՝
ի սէնեակ յղացողելոյն զիս. արբ՝ոցիդ գեղ
՝ի գինւոյ ի-ղձագործաց, յօշարակեն նը-
նեն՝ նեայ։ (Ը. 2։)

Ո՛վ որդեակ, երբոր ես աշխարհ-
քէս բաժնուվէի պիտոր, յիշեցի որ
քուկին առջի հարդ Ադամ երբոր
գրախտը գրի, ամենէն ազնիւ պտուղ-
ներ իրեն կերակուր տրվի. բայց ինչ
կերակուր որ տրվի իրեն, Ադամ մի-
նակ ան պտուղը աւելի ուզեց ուտել՝
որ ինծի նմանիլ մը կրբերի հասկրցաւ։
Ես ասս յիշեցի, քեզալ միտքս բերի,
ըսի որ՝ թէ որ ադամ կերակուր մը
չկրցաւ ուտել որ ինծի նմանի, գո-
նէ իր զաւկնէրուն մէկ կերակուր մը
հնարեմ որ, անիկայ կերածնին պէս
ինծի նմանին։ Հացն զոր ես տաց՝
մարմին իմ է, զոր ես տաց վասն կե-
նաց աշխարհի։ (Յ.Հ. Է. 52։) Քեզ-

Digitized by Google

ալ միտքս բերի, ըսի որ՝ անանկ կերակուր մը ընեմ որ՝ մինակ իմ առեւնի քրիստոնէները չվայելէն, հապա յաւիտեան քշէ, որ դոնալ անկէց վայելեմ ուտելով։

Ա՛ռ ըսի, իմ ամէնն իմաստութիւնս քանեցուցի, հացն ու գինին՝ որ մարդուս ախորժակն կերակուր էի ստեղծեր, անանկ մէկ հրաշալի խորհուրդ մը գրի որ՝ ով որ ուտէ ան կերակուրը, ով որ ըմպէ ան գինին, իբր թէ մէկ օշարակ (շէրպէթ), մէկ երկնային ըմպելի մը կառնէ, որ իրաւ կրկշատացնէ, իրաւ կրզմայլեցնէ անմահական բաժակով։ Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է։ (Ղ. 56։) Եւ իբր թէ իմ տունս իմ սենեակս (օտաս) տարված կրլլայ, ուր որ ես արարիչս կուսածին մարմնով յղացայ և ծնայ 'ի տուրբ Կուսէն. ինծի հետ մէկտեղ բնակակից կրլլայ, իս կրփոխակերպի։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակէսցէ, և ես 'ի նմա։ Վասն զի ես իս կերակուր տրվի իրեն։

Digitized by Google

Ա՛ ըրի՛ քու սիրոյդ համար՝ որպէս զի չիմեռած՝ երկրիս վրայալ իս գրեսես, իս վայելես, ինծի հետ մէկ ըլլաս, անով հեշտ ըլլայ քեզի իմ առջեւ պատուիրանքս պահելու՝ որ ապապաշխարեմ. Սիրեացես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ մտաց։ Վասն զի հոգւի մը Աստուծոյ հետ հաղորդված՝ առանց ապապրելու ալ ինքիրեն պէտք է որ մինակ Աստուած սիրէ։

Digitized by Google

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ԳՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Տարա՝ գիս արքայ ի սենեակ իւր, զնա՝ ծառայսք և արքայն էիցուք մեք ի փեսայ։ Ծրար սպանչին է եղէօրդրդին իմ ինչ։
(Ա. Յ. 12։)

ՏԷՐ իմ Յիսուս Քրիստոս, աս ինչ մեծ շնորհք է որ ըրիր ինծի. դուն ա՝ ղատարիչ գոլով եկար իմ պտիս մէջը հանդչելոյդ, ոչ միայն շնորհքով, այլև սուրբ մարմնովդ. թէ որ մէկ իշխան կամ թագաւոր մը հողեղէն ըլլար իմ տունս եկողը՝ անանկ մեծ շնորհք չէր կրնար ըլլալ աս աշխարհիս մէջ. հապա դու թագաւորդ թագաւորաց Աստուած, ապարիչ երկնի և երկրի։ Ա՝ խինչ սեր է՝ որ արժանի սեպեցիր չէ թէ իմ տունս՝ հապա իմ պտիս մէջը գալու. ես որ մարդ մենեմ ոչինչ, ես որ քեզի թշնամի եղեր էի. ես ոչինչա՝ որ քեզի դէմ ձեռք վերցուցեր էի, քու սուրբ պատուիրանքներդ ոտքի տակ

առեր էի. քանի որ կարիքեմ աս քու ըրած սէրդ իմ վրայ, այնչափ ուրա-խութիւն՝ այնչափ զարմանք կուգայ վրաս։

Հիմա աս կաղաչեմ տէր իմ, որով հետև արժանի ըրիր գալ, և իս քու սուրբ սենեակդ տանիլ, հոն գքեզ ինքդ հոգևոր կերակուր ինծի հանել, ըրէ որ՝ ասկէց ետքը սիրտս միտքս քեզ-նով ուրախանայ, քու անուշութիւնդ առնէ, աշխարհային բաներէն ձգէ։ Եւ ինչ ծրար որ ունիս անուշահոտ խունկ կերու, հոգևոր արբոյն շնորհքներու, բայց քու գանձդ, զարդարէ իմ մերկացեալ հոգիս՝ առաքինութեանքդ, ցուցո՛ ինծի ինչ ընեմ որ փրկութեան Ճամբան գտնեմ. վառէ իս քու սիրովդ, վասն զի դու տէր իմ Ցիսուս մեկ պահուած ծրար մենես ստաշխին (պուհուրի), մեկ գաղտնի խորհուրդ մենես, երբոր սիրոյն կրակին մէջը կեցնաս՝ ան առաքինը քեզ կրցրընես ծուխ երկնային հանելով, զմայլողական անուշահոտութիւն բուրելով։

Digitized by Google

Գ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ի պարբերաց ընթերցանէ ի հայել ի յարմարութիւն սաղմոսի, փերատնելն ի ծաղկեալոյն որոնեն, թե ծաղկեալոյնն նոռենիք։ (Ղ. 10։) Եւ՝ ի՝ ի՝ էլիբանանի. եկեսցէս և անցցես՝ ի սիրեան հատապոյ։ (Գ. 8։)

Ո՛վ որդեակ, երբոր ես մեղաւորացս համար մեռնելու եղայ, մտածեցի ինչ ընեմ որ՝ մեռնելէս ետեւալ չի զատվիմ իմ եկեղեցիէս, ան ատենը քեզալ միտքս բերի։ Հիմակվան հաւատացեալները իս մարմնացեալ կը տեսնան ըսի, բայց ան հոգին՝ որ շատ տարիներն ետեւ աշխարհ պիտոր գայ՝ որոնց մեկը դուն ես, իմ աշխարհ գալը պիտոր ըսէ, բայց իս մարմնացեալ պիտոր չիտեսնայ. ինչ ընեմ որ՝ քու հոգիդալ իս տեսածի պէս ըլլայ, մեղքին նայով մոռնալով իմ ամենակարող զորութիւնս ձեռք տուի, անանկով աստուծոյ հաղորդութեան խորհուրդը սահմանեցի, ամէն քահանայից իշ-

Digitized by Google

խանութիւն տրվի՝ որ երբոր անոնք պատարագէն, ամենն տեղ հեշտ (խաղայ) տեսնաս իս։

Հիմա՝ ամենն հեղ որ սուրբ պատարագը կրտեսնաս, իս կրտեսնաս հոն մարմնովնստած Հնորհաց աթոռը քուաղաչանքդ լսելու, քեզի օգնութիւն հասնելու։ Եւ ամենն հեղ՝ կրհաղորդվիս սուրբ խորհրդոյն, դուն ինծի կուգաս, ես քեզի, մեկ տեղ նստած կրլլանք։ Մինայն իմ փառքս մեծ ըլլալով չես կրնար մարմնաւոր աչքով նայիլ։ անոր համար հացին ու գինիին տեսակաւը կերևնամ, որով կրնաս համարձակ իմ վրայ նայիլ։ վասն զի հացին ներքեւը ես եմ նստած։ Ինչ կրսես՝ կրլրսեմ, ինչ նեղութիւնդ՝ սիրտդ՝ կրբանաս, մտիկ կրդնեմ։ ասկէց աւելի ինչ սէր կրմնայի ցուցնել, ինչ կարողութիւն կրնայի բանեցնել։

Դուն որ հիմա աս իմ սէրս տեսար, պէտքը չէր որ քեզ բոլորովին ինծի տայիր, պէտքը չէր որ գիշեր ցորեկ իս մնած էիր, հնորհակալութիւնդ ընելու, իմ կամքս կատարելու, որ երբոր

եսալ հոգւոյդ վնաս նայեի, կերպ կերպ առաքինութեան պտուղներով ու ծաղկներով ծաղկած զարդարված տեսնայի քեզ պատեղն մը պէս։ Բայց ես կրտեսնամ որ՝ սատր դէմ չէ թէ իմ կամքս չես կատարեր, սէր չես ցոյցներ, հապա և ոչ տեսնալ կուզես երբոր պատարագ կրլլայ, և ոչ կուզես հաղորդիլ, ինծի սնտիկնալ։ այլ ակամայ կրտեսնաս պատարագ, և ակամայ կրհաղորդիլիս։

Ա՛ խնչ պաղութիւն, խնչ ապերախտութիւն է քու ըրածդ, և խնչ սէր է իմ ըրածս։ Ա՛ կրզրջնէ որ՝ հաւատք չունիս, անկէց ասանկ պաղութեան ու ապերախտութեան մէջ կիյնաս։ կուզեմ որ՝ ասկէց ետքը դուրս ելլաս ասանկ օտար լեռնցիի բնութենէ, հաւատքդ բաց ու պայծառ ապահես, որ է սկիզբն ամէն բանի։ վերջնեռ պտիպ մէջէն աս պաղութիւնը, ջերմեռանդ ելլաս։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ԳԻՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Ահաւասիկ սա եկայ յԵրուսաղէմ որմոյն մէջ։ յառաջեալ ընդ պարսուհանան, հայեցեալ ընդ վանդակապատն։ Յոյս ինչ պղէմս էր, և լսելի արա ինչ զբարբառս էր։ վասն զի ձայն էր փաղջի է, և դէմ էր գեղեցիկ։ (Է. 9. 14։)

Ո՛հ, տէր իմ, ալ մի յիշեր, մի երեսիս տար իմ ապերախտութիւնս. թէ որ աթոռը շնորհաց նստած՝ ասանկ անուշութեամբ զուրցելով ես գոռ կելլամ լսելուս առեղը, ամենէս գեղեցիկն անցնիլ կուզեմ, հապա ինչ պիտոր ըլլայ՝ երբոր դատաստանին օրը սատակութեամբ դատաւորի պէս զուրցելու ըլլաս։ Սակայն տուր համարձակութիւն որ՝ իբրև գթած հօր սիրտս բանամ։ Իրաւի՝ մեծ շնորհք է որ կրնես ինծի, պատարագին խորհուրդին մէջ գալովդ՝ և սուրբ սեղանին վրայ նստելովդ մարմնով, հաղոր-

Digitized by Google

գուրթեան սահմանալ իմ պտիս մէջ նստելով։ բայց քուկին դէմքդ չես երևցներ ինծի, այլ իբր թէ պատի մը եռանէ, վանդակի (խաֆէսի կամ փէրատէի) մը եռանէ՝ անանկ գոցված կրցրցնես։ Խաչին վրայ աստուածութիւնդ գոցված էր, այլակերպութեան սահմանը մարդկութիւնդ լուսով գոցված էր։ բայց աս սուրբ խորհուրդիս մէջ աստուածութիւնդ ալ մարդկութիւնդալ կրգոցես հացին ներքև։ Իմ տեսանելիքս՝ շօշափելիքս՝ ճաշակելիքս՝ ամմէնալ կրխաբվին։ մէնք ծածկրված է, մեզի չերևնար, չիտեմք կրսէն։ միայն ըսելքս կրլսէ քու սուրբ ձայնդ աւետարանէն, և հաւատքիս աչքը կրտեսնայ։ Բայց ես ըլլալով տկարամիտ՝ մութ բան մը կերևնայ ինծի, ինչպէս պէտք է քեզ ընդունիլ, ինչ պտիս ընելս, չեմ կրնար։

Երբոր Պետրոս առաքեալը այլակերպութեան օրը մէկ քիչ մը տեսաւ քու գեղեցիկ դէմքդ, զմայլելէն չիտեր ինչ կրզրուցեր, չէր ուզեր լեռ-

նէն բաժնովին։ Երբոր Մովսէս մարգա-
րէին շատ բարեկամութիւն ու սէր
ցրցուցիր, շատ մտիկ խօսութեցիր, չէ-
գիմացաւ՝ այնչափ ազաչեց որ՝ վեր-
ջապէս դէմքդալ ցրցուցիր։ Ես ինչ-
պէս գիմանամ որ՝ իմ սիրոս կրհանդ-
չիս սուրբ խորհրդով հաղորդութեան,
բայց քեզ ամենևին չես ցրցներ։ Հի-
մա աս կաղաչեմ վասն ապրդեանց հինգ
վերացդ ովտեր իմ Ցիսուս, որ իմ հա-
ւատքս զօրացրնես, լուսաւորես, քու
գեղեցիկ դէմքդ պայծառ տեսնամ
հաւատովս աս սուրբ խորհուրդին
մէջ, ինչպէս որ սուրբերը տեսածի
պէս կրլլային, երբոր սուրբ հաղոր-
դութիւնը կառնէին։ Քու խօսքերդ-
ալ մէյմէկ շնորհք՝ մէյմէկ զօրու-
թիւն ունին, ան զօրութիւննալ տպա-
ւորէ իմ սրտիս մէջը, որ քու քաղցր
ձայնդ սրտիս մէջէն առնելով, պա-
հեմ ինչ որ ինծի կրպատուիրես։

Digitized by Google

Դ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Այլեւ եղեւ Սողոմոնի 'ի Բէթղամոն. եւ զայլոցն ի-բ ցոպհոպանան, բէրոյթ այր ի-բ-փանլի-ր 'ի պարոյ ի-ր-մէ հաղարս արծաթոց։ Ոչ նոպիսոդ 'ի պարդեղս, այլ անան փեղ։ (Ը. 11. 13։)

Ո՛Վ որդեակ, ես մարդկային բնութիւնը մէկ այգի մը տնկեցի, քեզ անոր վրայ պահապան դրի որ՝ հաղարապատիկ պտուղ բերես. բայց դուն ամ պարտէզին մէջէն ինծի պտուղ տալուն տեղը՝ ուրիշներուն խօսքը կը-ընես, ուրիշներուն կուզես հաճոյանալ, աշխարհիս՝ մարմնոյ՝ ու սատանայի՝ որ իմ թշնամիներս են։ Ամանակ ըլլալով թէ որ ես հիմա դէմքս ցրցընէի, բարկացած դէմքս սիրտոր ցրցընէի նման դատաւորի մը պէս՝ ու քեզ պատժէի. ինչ բարեգործութիւններ ըրած ունիս որ՝ անուշ հայրական դէմքս քեզի ցրցընեմ։ Պետրոս առա-

Digitized by Google

քեռալը ինչ սէր ունէր վրաս՝ գիտեա։ Մովսէս մարգարէն ինչ պրուԹիւն արուի, ինչ հաւատարմուԹիւն։ Քուկին ըրած գործքերդ ինչվան հիմա՝ ամենենալ Աստուած բարկացընող են, իմ պատուիրանքներս կոտրողներս մոռցած՝ բոլորովին աշխարհային դրսի զբաղմունքներու տրվերես դուն քեզ։ Անանկէնէ՝ աղէկ է որ՝ հիմա չիցդը նեմ քեզի դէվքս։ դուն իս հիմա հաւատքովդ տեսնալով, բարեգործուԹեան հետ եղիր ու աղօԹից։

Աբրահամ նահապետ ուզեց իսահակը իր զաւակը մորԹելով պատարագ մատուցանել։ ուրիշ բան չիտեսաւ՝ բայց եԹէ մէկ խոյ մը կախված ծառէն իսահակին տեղը։ բայց երբոր իմացաւ որ՝ աս բանս խորհուրդ ուներ, օրինակ էր իմ պատարագվելուս, այնչափ ուրախացաւ որ՝ իս տեսածի պէս եղաւ։ ԹէՀ որ դուն իմանաս որ փէրտէին կամ խաՀէին եռև մարմնաւոր Թագաւորը նստած է, յայտնի տեսածի պէս քու աղանչանքներդ կընես։ իսալ անանկէնէ՝ հացին ներքև

իբր թէ փիլոսոփի եռանեռաստած իմանա-
լով քուվին աղաչանքներդ ըրէ։ Եւ
ամենեն բանէն աւելի հաւատքիդ հետ
յոյսդ զօրացո՛, շնորհակ պատուվ աներկ-
բայ յուսա՛, թէ որ իմ պատուիրանք-
ներս պահես, խոնարհուելեամբ աղա-
չելով իմ վրայ յոյսդ դնես, իրաւունք
մեկ օր մը արժանի կըլլաս իմ դէմքս
յայտնի տեսնալու իմ աղքայութեանս
մէջ։

Digitized by Google

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Յարեայց Ի զբջեցայց ընդ փաղափն 'ի քո-
զոյս Ի 'ի հրապարակս, Ի խնդրեցիս՝ զոր
սիրեաց անձն իմ։ (Գ. 2. 4։) Խնդրեցի զնա
Ի ոչգտի. կոչեցի զնա, Ի ոչ էպ ինչ զիմն։
Կալայ զնա Ի ոչ թողից զնա, մինչ փա-
բայց զնա 'ի տուն մօր իմոյ։ Ահա ես գե-
ղեցիկ մերձաւոր իմ, բայց 'ի լուսաւորեալ
փուռմն։ (Գ. 1։)

Ա՛խ, ասէր իմ՝ ան ատենէն վերբ՝ որ մեզ Աստուած հետ դրախտին դուրս հանեցիր, միշտ սիրտս քեզ կուզէ, քեզ կըմնտռէ. վասն զի դուն ես արարիչ իմ՝, յոյս իմ. ասդիս ան գին քեզ կը-փնտռէի գտնալու, բայց չգիտնա-լով որ ուր ես, արարածոց մէջ աշ-խարհային զբաղմանց մէջ քեզ կըփրն-տռէի, կարծելով որ՝ իմ սիրելի Աստուածս հոն է, բայց խաբեցայ. ամենն ստեղծուածոց մէջ փնտռեցի, չգտայ. կանչեցի, քու ձայնդ որ դրախտին մէջը կառնէի, ամենևին չլը-

տեցի։ Եղբը գոռայ զքեզ աստուծ սե-
զանին վրայ, ոչ ահարկու կերպարան-
քով ինչպէս որ Սինա լեռը տեսան խա-
ղայելացիք. այլ քաղցր և գեղեցիկ
կերպարանքով. վասն իմ մարդացեալ
վասն իմ խորհրդացեալ հացին և քա-
ժակին կերպարանքով. հոս կրքռնեմ
կրշաչափեմ զքեզ իմ արարիչդ. հոս
ուզածիս պէս կառնեմ կքանիմ իմ
տունն՝ որ է իմ մեղաւոր սիրտս։

Ասոնք ամենեքն ազնիկ են և գեղե-
ցիկ. բայց քու լուռ կենալդ՝ ձայն չի-
հանելդ և չիխօսելդ՝ ինծի շատ ապրա-
մութիւն կրբերեն ու վիշտ։ Գիտես,
մեր բնութեան կարեկից ես, գիտես
որ քանի թշնամի ունինք. նոյն իսկ
մեր մարմինը՝ որ մեզի հետ մէկ տեղ
է՝ թշնամի է մեզի։ Եղբոր կրնեղիմ,
եղբոր փորձութիւնները չորս դիս կը-
պատեն, քեզի կրդիմեմ, չես լսեր,
չես խօսիր, անանկ կրզգրնեես որ իբր
թէ ամենևին հոն չես, ամենևին չես
տեսնար։

Հիմա աս է աղաչանքս. վասն ար-
դեանց հինգ վիրացդ՝ և եօթը խոցին

Digitized by Google

սրբոյ Աստուածածնին, թէ որ քու Աստուածութեանդ և մարդկութեանդ գէմքը ծածուկ կրպահեա ինծմէ, գոնէ քուկին ձայնդ արժանի ըրէ լսեցնելու, ինչպէս որ սրբոց հետ ներսէն շնորհքով կրիսօխս։ Ան առեր նը իմ յոյսս կրզօրանայ անոնց պէս, և առաքինութիւններ գործելու հետ կրլայ։ Ամանկով Մատթէոս մաքսաւորը մէյմի կանչելով աւետարանիչ ըրիր. Զաքէոսին անունը տալով որդի փրկութեան ըրիր. Պօղոս առաքեալը մէյմի երկնքէն կանչելով Հոգւոյն սրբոյ անօթ ըրիր։

Digitized by Google

Ե. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Դիէր զիս իբրեւ զմիւս ի վերայ սրտի քո, իբրեւ զմատանի ի վերայ բազկի քո. վասն զի հզօր է իբրեւ զմահ սէր։ Զոտրտ բազմամտ ոչ ելցեն զիւղոյանէլ զսէր, և գետք ոչ արգելցեն զնա. եթէ փայլցէ այր զամենայն զվեանս իւր ի սէր։ (Գ. 7։)

Ամ խօսքերը անոր է՝ որ միշտ սիրելի եղեր է իր հօրը. միշտ իր պատուիրանքները պահեր է. դու ինչ մեղքերով վշտացուցերես իս՝ դիտես. ինչ արդիւնք ունիս. ինչ արժանաւորութիւն ունիս, որ քու ձայնդ լսեմ, քեզի հետ խօսրանեմ։ Հապա քեզի հաւատաք, յոյս, և ամենեն աւելի սէրը պէտք է՝ որ արժանի ըլլաս։ Եա աւաղակին միայն քովը կեցայ, ինչպէս հոս սուրբ խորհրդովը հաղորդուելու՝ քովդ կեցերեմ. ես անոր հետ բան մը չեմ խօսեցայ, ինքը իր խաչելովը իր հաւատքը ինծի խրկեց. իր յոյսը վրաքս վերցուս իմ վայ դիտաս. իր սէրը

Digitized by Google

ցրցուց. ան ատենը արժանի եղաւ իմ ձայնս իր փրկութեան համար լսելու. Այսօր ընդ իս լցես 'ի դրախտին։ Մեղաւորը կնիկը ինքիրեն եկաւ ոտքս ընկաւ. ես բան մը չըսած չխօսրատեցած՝ իր հաւատքը, յոյսը, սէրը ցրցուց իր զղջմամբը ու արցունքովը. ան ատենը արժանի եղաւ իմ ձայնս լսելու։ Թողեաւ լեցին անոնց մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց. Հաւատք քո կեցուցին զքեզ։

Անանկէնէ ամենէն աւելի նայէ որ սէր Աստուծոյ ունենաս. ինչպէս որ՝ մարտիրոսները հաւատք և յոյս ունենալէն զատ՝ անանկ սէր ունեցան վրաս, որ մահը յանձն առին ինծի համար։ Ան ատենը թէ որ աշխարհայինները պաղեցուցիչ խօսքերը ջուրի պէս վրադ վազեն, չեն կրնար քու սէրդ մարել. ան ատենը կերպով կերպով փորձութիւններու՝ նեղութիւններու ալեկոծութիւնը գետի պէս վրադ կոխեն, քեզ չեն կրնար ողողելել ինծի դալու, իմ պատուիրանքներս պահելու. թէ որ բոլոր կեանքիդ մէջը գուն

Digitized by Google

քեզ Աստուծոյ սիրոյն ասաս, ինչպէս որ եւսալ քոս սիրոյդ համար իս բոլոր քեզի ասելի։

ԽՕՍԱՔ ՀՈԳԻՈՑՆ

ԵՒ ԳՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Սիրելին 'ի ենեղբայս մեր, երգեսցուք զնէր։ (Բ. 13։) Աբի հիսուս, Ես էկ հարաս. ընկա 'ի պարքեզ իմ, Ես բուրեսցեն խունկք իմ. ինչպէ եղբօրդրին իմ 'ի պարքեզ իս. Ես ներիցէ զդրաս ծառոց իւրոց։
(Բ. 16։ Է. 1։)

ՊԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ սէրդ սէր իմ Ցիսուս, ոչ կրնայ պատմել, որ ինծի համար աշխարհ եկար մարդացար. մեկ կաթիլ մը քոս արիւնդ հերիք էր իս փրկելու, ամենն արիւնդ թափեցիր ինծի համար, խաչվեցար և մեռար. ասս հերիք չեսեպելով հիմնալ հրաշալի խորհրդով հաղորդութեան հաստին և բաժակին տեսակաւը եկար իմ սրտիս սենեակը (օտան) նստար։ Կրնանայ բլլալ ասկեց ետքը որ քեզ չեսի-

ըեմ, քեզի գէմ մեղքերովս Թշնամու-
Թիւն ընեմ, քաւ լիցի։ այլ միշտ քեզ
սիրել կառաջադրեմ, քուկին սիրոյդ
վրայ զուրցել, պատմել, երգել, օրհ-
նել կրօնաստանամ։ Ա՛ս է իմ առա-
ջադրութիւնս, իմ բաղձանքս։ բայց իմ
հաւատքս՝ յոյսս՝ սէրս տկար են, միտքս
պղտոր, կամքս անեզր։ իսկ Թշնամի-
ներս շատվոր, ոյժ են մատմին, աշ-
խարհ, սատանայ։ ո՞վ պիտոր իս ազա-
տե՞ սատնցմէ, եթէ ոչ դո՛ւ։ ո՞վ պի-
տոր իս բռնե՞ պահէ իմ առաջադրու-
Թեանս մէջ, եթէ ոչ դո՛ւ։

Ինանկ էնկ կաղաչեմ։ Թէ որ իս
արժանի չեմ սեպէր իմ ծանր մեղք-
քուս համար դէմքդ ցոյցնելու, ձայնդ
լսեցնելու, գոնէ արժանի ըրէ քու
Հոգւոյդ սրբոյ շնորհացդ՝ որ մէկ ա-
նուշ հովի՝ մը պէս շնչէ իմ հոգւոյս
պարտեզը։ Ինչպէս որ աշխարհիս մէջ
ամ դիս ան գէն մէյմը հիւսիս, մէյմը
հարաւ կրսիէ, անով ամէն կենդա-
նիք շունչ կառնեն, անով ամէն տը-
ղանք՝ կերպ կերպ պտուղներ՝ ծովէն
խաղաղաց նաւերով քաղաքը կրքե-

րեն. անով պարտէզնէրուն մէջ ծաղկինները անուշ հոտեր կրբուրեն, ծառերը կրպտղաբերեն, անանկ ալ հրամէ քու Հոգւոյդ հրաշալի հովերուն, Արի՛ հիւսիս, եկ հարաւ։

Ան ատենը իմ հոգւոյս պարտէզը անուշահոտութիւն կրբուրէ խունկէ բուրումներ, ան ատենը իմ սիրտս գալու բլլաս խորհրդով հաղորդութեան, կրդրանաս կերպ կերպ պտուղ առաքինութեանց՝ փրկիչ քու պարտիզդ մէջը։

Զ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ես ծաղիկ դաշտայ, և շուշան հովտայ։ Կալաբոտ մէջ աղուէսներս փոքրուն ղալպանիլս այդեցայ, և այդիք մէջ ծաղկեցայ։ (Բ. 2. 15։)

ՈՒՐԴԵԱԿ, ես այնչափ սիրեցի մարդս, որ Մարգասէր բաւեցայ. ես անհունս սիրով սիրեցի քեզ աս սուրբ խորհրդով հաղորդութեան, որով կուգամ քեզի՝ չէ թէ մինակ շնորհքով

հասպա իմ մարմնովս ալ։ Դուն երբոր մեկը սիրես՝ պտիղ մեջը կուգես գնել և չես կրնար. ես սա հրաշքս սա սուրբ խորհուրդիս մեջ կատարեցի, որով երկնի և երկրի ստեղծող Աստուածս կուգամ, մարմնովս քու պտիղ մեջը կընտրիմ։ Եա ստեղծ հրաշք բրի որ՝ չէ թէ մինակ մեկ անգամ կեանքիդ մեջ սա սէրս տեսնաս, հասպա միշտ երբոր ուզես. սասնկ իշխանութիւն տալով քահանայից. որովնմանեցայ ես ան ծաղիկներու, ան շուշաններու, որ դաշտերու և հովիտներու (օվաներ, տէրեներ) մեջ կրլլան. ամենեսնալ ուզածնին պէս կբերցնեն, կրվայելեն. գոցված պարտէզի մեջ ծաղիկներուն չնմանեցայ՝ ուր որ մինակ տէրը կրվայելէ։

Գիտցիր որ՝ քու ջերմեռանգուութեանդ ձեռքն է. ամենն անգամուն որ դուն արժանապէս կբհաղորդվիս, զանազան շնորհքներ կառնես. և մեկ առնելդ՝ մեկալ առնելուն արժանաւորութիւն կբերէ, և շնորհքը կբկրկնապատակէ. անանկով ամենն մեկ հեղ

առնելդ աս սուրբ խորհուրդը՝ կըլ-
լայ մէկ առուտուր մը խիստ շահաւոր,
որուն շահը յանհունս կաւելնայ, յան-
հունս կարդիանաւորի, կրբերէ քեզի
գանձ (խանձնա) ընորհաց։ Անոր հա-
մար իմ ծառանէրէս ո՛վ որ արժանա-
պէս առաւ, թէպէտ երկրիս վրայ էր՝
բայց իբր թէ երկինքը նստած հրեշ-
տակ մը կրդառնար. վասն զի մէկ էնք
եղած աս սուրբ խորհրդովը։ Ան
ծառանէրուս մէջը ասմէն առաքինու-
թիւն կրփայլէր. սրբութիւն հոգւոյ
և մարմնոյ, արիութիւն, արդարու-
թիւն, խոհեմութիւն, հանճար, խո-
նարհութիւն, եղբայրութիւն. իսկ
Աստուծոյ սէրը անչափ կրվառէր սրբ-
տէրնուն մէջը, որ երբոր կրհաղորդը-
վէին՝ շուտ մը կերթային կուսապաշ-
նէրուն առջին, իս խոստովանելով
ասանջանքներ կրքաշէին, իրենց արիւ-
նը կրթափէին։

Հիմա գուն որ կուզես հոգւոյն սրբոյ
ընորհքները վաստակիլ, պէտք է որ
արժանաւորապէս առնես աս սուրբ
խորհուրդը, և շատ հեղ։ Իսկ թէ որ

Digitized by Google

չեմ տեսնար. Ինորհք, քու-կին պաղու-թիւնդ է պատճառ. դիտես թէ իմ վրայ ամենեին սէր չկայ. քու արտիդ մէջը, ան վաստակներդ՝ ան հոգւոր դանձերը (խաղնանէրը) ուրիշները կը-շահին կըվայելեն, դուն անանկ աղ-քատ ու մերկ կըմնայս։

Այս պաղուութեան պատճառն այն է որ՝ թէպէտ մենծ մեղքերին կրզգու-շանաս, բայց պզտիկ մեղքերին հեգ-նալու ամենեին հոգդ չէ։ Այս պզ-տիկ մեղքերը կրլմանին պզտիկ աղուէս-ներու (թիլքինէրու). ով որ բանի տեղ չիդներ պզտիկ սեպելով, բոլոր այդին կաւրվի կապականվի։ Դուն կը հաղորդվիս՝ եռքը կեալաս մեկին դատարկաբանութեան հետ կրլլաս, սիրոգ ունայնասիրութեան մէջ կրզ-բաղեցնես, սաղարդ կրամբասես, աղքարդ կրդատես, տանը գլաղմանց մէջ բոլորովին կրնկրզվիս, առաւտու-ընդ մինակ խեղդ կուտաս, քարոզ-ելը կրձգես՝ պարապ խօսքերով ա-տենդ կանցընես, մեկ գթութեան ողորմութեան գործք մը ընելու հոգ

չունիս, անոր տեղը կծու խօսքերով աղբօրդ սիրտը կաւրես։ Առջի քու բանդ տես աշխարհիս բանէրը գրէլուես, բոլոր օրը խեղդ միայդ անոնց կուտաս. իսկ իմ բաներս՝ իմ սէրս՝ երկրորդական չորրորդական գործք կլսես, ետ կրձգես. վերջապէս սիրտդ չնաակ չէ իմ վրայ։

Առնք ամմէնը պզտիկ բաներ սեպելով կրզարմանաս որ՝ հաղորդուելէն ետև ինչպէս Հոգւոյն սրբոյ շնորհքը չես առներ։ Ասանկ էնե՝ հիմա մէկ նոր առաջադրութիւն մը դիր. որչափ պզտիկ մեղքեր պակասութիւններ կան, անոնք

ԽՕՍՔ ՀՈԳԻԱՑՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Հայր եղբօրդ-ոյ իմոյ. եղբօրդին իմ էանոյ, և հոգի իմ էլ ընդ բանի նորա. խնդրեցի զնա՝ և ոչ գոսի, խոչեցի զնա՝ և ոչ լսեաւ ինձ։ Գոսին զիս պահապանն որ ի ՀԷՔԷՆ 'ի փաղարին, և վիրաւորեցին զնս. ասին զնչայն իմ յինքն պահապանք պարպոյ։ (Է. 6. 7։) Ահեակ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պարեցոյ զինև։ (Ը. 3։)

Տէր իմ, անուշ են քու խօսքերդ, զորաւոր ու շահաւոր. բայց մէյմը կը խօսիս, ետքը կանցնիս կերթաս, իսկ անանկ կրթողուս. ան ատենը իմ հոգիսաղ խօսքիդ հետ մէկտեղ քենէ կը բաժնուվի կրհեռանայ. նորէն կընստիմ աղօթք ընելու, քեզ կանչելու, չես լսեր, կըմնամ իմ առջի կիրքերուս ձեռքը՝ որ սրտիս մէջը միշտ կը քաշեն, նորէն իմ հոգիս կը խոցեն կը վիրաւորուին մեղքերով. ինչ խիլայ՝ ինչ պարգև հոգւոյն արքոյ առի նէ սուրբ հաղորդ

Digitized by Google

գութեան խորհրդով ձեռքիս կառնեն, իս մերկ կրթողուն։ Քուվին պատուիրանքներդ ուրչափ քաղցր ու պզտիկ ըլլան, ինծի խիստ կերևնան. մանրաքննին դատաստանդ՝ ինչվան դատարկ խօսքերուն վրայ հաշիւ ուզելդ՝ իմ սիրտս խիստ կրվախցնեն։ Քու Ճամփադ ահռելի մը կերևայ ինծի, անկէց կրձգեմ կրհեռանամ, կարծելով որ կրնամ խաղրսիլ. թէպէտև ամէն տեղի արդարութեան դատաստանիդ տակը կրմնամ։ Ո՛վ է որ՝ հաղորդութեան առնելը ինչ սէր կունենամ Աստուծոյ, նոյն սէրը հեռու մնար։

Ըրէ՛ տէր իմ, որ հաղորդվելէն ետև չքաշմտրվիս ինծմէ, միշտ հետս մնաս, քուվին պատուիրանքներդ ապկէց ետքը անուշ ցրցնեն. լուծ քաղցր, և բեռն փոքրագի։ Ըրէ՛ որ՝ արդարութեանդ հետ անհուն ողորմութիւնդ ալ յիշեմ, յոյսս առատ ըլլայ անդին արեանդ միջնորդութեան վրայ, և սուրբ մարդ բարեխօսութեանը վրայ։ Այս երկուքն են ինծի աջ և ահեակ

ձեռք գթութեանդ Աստուծոյ, որ զիս կրքոնեն կրպահեն, և յոյս կուտան որ՝ դատաստանին՝ օրը քաղցրութեամբ կարես իմ դատաստանս։

Է. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ահա յիմաստ էանց, անիրաւ անցին, և գնացեալ մեկնեցան. ծաղիկ երեսեցան չերերի. ժամանակ հոպանելոյ եկաս. յայն փոփոխի սեռի եղև չերերի մերոյ. Քրիստոսի ընկիսաղեաց զբոզբոզ իւր. այգիս մեր ծաղկեցան, և բուրան զհոտս իւրեանց։ Արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ. ազանի՛ իմ. Կի՛ ընդ հովանեաս վիմի, մերձ առ նախապարիսպն։ (Ի։)

Ո՛ՐԴԵԱԿ, զեղ իմ սերս պահելու՝ է մեռածական ընելը աս սուրբ խորհուրդին զօրութիւնը. պատճառ՝ որ գուն միայն հաղորդութիւն առնելու ատենդ սէր Աստուծոյ կունենաս, եւ քաջ կրմոռնաս կրպարիս, աս է որ՝ ատենեանին չէս մեռածեր ինչ էր առաջ

Digitized by Google

ծրդ, ինչ զօրութիւն ու խորհուրդ ու-
նի. թէ որ դուն քիչ մը մտածելու-
ըլլայիր, անհուն սէրն աստուածային
կիմանայիր, քու սրտիդ մէջնալ սէրն
Աստուծոյ չէր մարէր։

Մտածես պիտոր՝ որ քահանային
հետ ես եմ հոն՝ որ կրսպատարագեմ,
հացն ու գինին մէկ խօսքով 'ի մարմին
և յարիւն կրփոխարկեմ. ես եմ հոն
որ ինչպէս Գողգոթայ լեռը խաչվեցայ,
անանկ բաղխատարած խաչված սեղա-
նին վրայ զոհ (զուրպան) կրլլամ քեզի
համար. կրմորթվիմ անարիւն պա-
տարագով, ու կրմեռնիմ առանց մե-
ռանելոյ, որպէս զի քու մեղքերուդ
թողութիւն տայ Հայրն երկնաւոր։
Մտածէ որ անհուն է դերազանցու-
թիւն քահանային՝ որ եմ ես. անհուն
է դերազանցութիւն զոհին (զուրպա-
նին) որ եմ ես. վասն զի զոհ մինչ,
որով Աստուծոյ կեանքը՝ քահանային
ձեռքովը կրտրվի կընծայվի Աս-
տուծոյ. պարգևողը՝ պարգևը՝ ամենին-
ալ անհուն, որ է աքանչելիք աքանչե-
լեաց։

Digitized by Google

Աստվ դուն թէպէտև հունաւորեաս, բայց անհուն թողութիւն կրգրնաս քու մեղքերուդ՝ որչափ շատ ըլլայ. անհուն պատիժներուն ալ լեռվ վհարումն կրգրնաս, որ քու մեղքերուդ համարունէիր քաշելու. անհուն կրփառաբանեաս աստվ դուն զԱստուած. վասն զի որչափ դասք հրեշտակաց և արքաց մեկ տեղ ժողովին, նապհապետք, մարգարէք, առաքեալք, մարտիրոսք, կուսանք, և փառաբանեն զԱստուած, մեկ պատարագին պատիւը աւելի է Աստուծոյ առջին։ Վասն զի ես եմ որ սուրբ սեղանոյն վրայ կուգամ, խոնարհ կերպարանքով աղաչող բարեխօս կրլլամ Աստուծոյ, քահանայ կրլլամ, երկրպագող և փառաբանող իմ երկնաւոր Հօրս. զոհ կրլլամ պարտաւորի մը պէս քու պարտուցդ համար, և կրխորհիմ կրպատարագիմ աս պատարագովս քեզ փրկելու համար։

Ա՛ հ մեկ դանձ մը որ քու ջերմեռանդութեդ ձեռքն է. որչափ կուզես՝ այնչափ աւելի կրշահիս, կառնես կրն-

գունիս ամենն բարիք՝ որ հարկաւոր են քու փրկութեանդ. կընդունիս ընորհք Հշխարհս զոչման անցած մեղքերդ վրայ. կազատիս նեղքին փորձութիւններէն՝ որ քու չար սովորութիւններդ կրբերեն. կառնես օգնութիւն Աստուածային ընորհաց. նաև ժամանակաւոր բարի, առողջութիւն, խաղաղութիւն, յաջողութիւն քու գործքիդ՝ որը որ հաճոյ է Աստուծոյ. կառնես ապաշխարութեան ընորհք, ազատութիւն մարմնաւոր պատիժներու՝ որ քաշել ունիս. նաև թողութիւն պատժոց ենջեցեալ հոգիներուն։

Ա՛ խ կերակուր՝ որով քու հոգիդ սնունդ կառնէ, կապրի։ Հաց յԱստուծոյ է՝ որ իջանէ յերկնից, և կեանս տայ աշխարհի։ (Յոհ. Զ. 33։) Աստված մարմնաւորդ կրլլաս հոգւոր. սատվմեռնելու առնենք՝ քու հոգիդ կրնայ ազքայութեան արժանի ըլլալ. վասն զի ազքայութեան Համփուն թոշակը պաշտը քու հոգիդ՝ աս պիտոր ըլլայ։ Եթէ ոք ուտիցէ 'ի

հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան։
(Գ. 52։) Եղբարք երկինքը երկրաւոր ճամ-
փուն մէջի աւազակներքը՝ որ են սա-
տանաներդ՝ աս թոշակով քեզ պահ-
ված տեսան, քենէ պիտոր փախչին,
հրեշտակներդը քովդ դան։ Կաւ էտքի
դատաստանին օրը քու մարմնոյդալ
յարութիւն առնել տրվօղ՝ աս հացս
պիտոր ըլլայ, որ է իմ մարմինս։ Վասն
զի իմ մարմինս ճաշակելովդ՝ կրնաս
իմին մարմինէս, որ գերեզմանի մէջ
չմնաց, յարութիւն առաւ. ան իմ
մարմնոյս զօրութիւնը եղբի օրը քեզ
մեռելներուն մէջէն յարութիւն առ-
նել պիտոր տայ, ըլլալով նման ինծի՝
որ եմ առաջին պտուղ ննջեցելոց։ Որ
ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ,
ունի զկեանսն յաւիտենականս, և ես
յարուցից զնա յաւուրն յետնում։

Հիմա տեսս որ՝ ասկէց աւելի կրնայի
իմ սէրս ցոյցնել. անոր համար գիտ-
ցիր որ իմ սէրս իմ հաղորդութեան
խորհուրդն է. և որովհետև աս խոր-
հուրդը միշտ քովիկն ձեռքդ է, քու
աչքիդ առջևն է, եասալ անանկէնէ հան

եմ, քենէ չեմ հեռընար. մէկ հատիկ պատճառ հեռընալուն՝ է քու չի-մացածելդ ասոնք։

Ակէց եղբը կուզես որ քենէ ա-մենեին չհեռընամ, միշտ քովդ մնամ։ Առաջ մրցածէ աս անհուն խորհուրդը, աս մտածականը քեզի կրլլայ նա-խապարիսպ մը. մտածականով ընդ-հովանեաւ վիմին կեցած կրլլաս, որ եմ ես. ան տեսնը անհնար է որ քու սէրդ պատի ինծմէ։ Ադամ ուղեց ու-տել արգելված պտուղը՝ որ ամենէն Աստուծոյ բանը իմանայ, Աստուծոյ պէս ըլլայ. ահա ոմ որ աս հայցը արժանաւորութեամբ ճաշակէ, և իր խորհուրդը մտածէ, կիմանայ Աստուծոյ անհուն կարողութիւնը, և ան-հուն իմաստութիւնը, և Աստուծոյ նը-ման եղած կրլլայ։ Երկրորդ՝ դունաւ-ինծմէն օրինակ առնելով նեղութիւն և խաչ քաշելը սիրէ. վասն զի ան խա-չը պատճառ կրլլայ որ՝ իմ սէրս քու սրտիդ մէջը չկպաղիր. դունէ ինչ իսաչ որ ես կրխրկեմ քեզի՝ մի մերժեր, մի ճշգռհայ. վասն զի ոմ որ իա կրսիրէ, ու

Digitized by Google

ինծի հետ մեկտեղ կընտրի սուրբ խորհրդով հաղորդութեան, պէտք է որ խաչ քաշէ. եսալ ովոր կրսիրեմ՝ աս աշխարհս խաչ կրխաչեմ. անոր համար իմ առաքեալներուս որ ինծի սիրելի էին, ամենուն՝ մեծ մեծ տանջանքներ քաշել տրվի։ Եւ երբորդ՝ քու հոգւոր հօրդ հնազանդ եղիր ամենն կրթութեանդ մէջ։

Digitized by Google

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ԳՐԻՍՏՈՍ ՊԱՏՇԱՐԱԳԵԱԼ

Ահա՛ տեսայ զի գեղեցիկ եղէօրդեաց իմ և վայելու՛ն. առ գահոյս մեր հովանաւորս, գերանք պանոյ մերոյ մայրք, դարա՛նդք մեր նոճք։ (Ա. 15։) Որպէս խնձոր ի թաւ-փոյս անտառաց՝ այնպէս եղէօրդեաց իմ ի մէջ ուսուցչաց. ընդ հովանեաւ նորա ցանկացայ նստիլ և նստայ. և պտուղ նորա փաղցր է ի կոկորդի իմում. մուծէ զիս ի տուն գինւոյ. կարգեցէք ի վերայ իմ զսէր. հաստատեցէք զիս ի նշանս. նուազեցէք յիս խնձոր. զի խանդակաւոր եմ ես սիրովն։ (Բ. 3։)

Աչս տեսայ տէր իմ Յիսուս քրիստոս զեղեցկութիւնդ աստ սուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ, տեսայ քրիստոս անհուն զօրութիւնդ և իմաստութիւնդ, լսեցի աստ խրատանէիր՝ որք են շահ և փրկութիւն իմ հոգւոյս. ասակէց եղբօր ես որոն պիտոյ երթամ, ինչպէս մուտնամ առաջադրութիւնս, ինչպէս ստեղծուածներս ստեղծողդ

վեր գնեմ, քանզի բաժնելիմ։ Մինչև
աս կաղաչեմ դու որ թագաւորի պէս
նստեր ես հիմա իմ սրտիս մէջ իբր քու
գահիդ (թախտիդ) մէջ, հովանաւոր
ըլլ աս թախտը, միշտ հովանի ըլլաս՝
ինծի օգնես։ Ան ատենը իմ տանս գե-
ղանները (քիրեչները) ամուր փայտէ
կըլլան, չեն փտիր. առաջադրու-
թիւնս չեմ կոտրեր. անուշ հոտաղ կը-
հանեն անուշահոտ նոճիի (սէրվիի)
պէս չինված. անանկով հաստատուն
տան մէջ նստած կըլլանք մեկտեղ
շնորհքը։

Ես ինչման հիմա ստեղծողդ թո-
ղուցեր էի, ստեղծուածոց մէջ իբր
փայտէ անտառներու մէջ կըմինտուէի.
հիմա ինծորի մը ծառ գտայ որ Ա-
դամ կորսնցուցեր էր, ան ծառն է
սուրբ խորհուրդը հաղորդուելեան,
որ է ինծոր գիտուելեան,նաև անմա-
հուելեան. աս պտուղը ուտելով կաս-
տուածանամ, ամենն բան կըգիտնամ
աս ծառիս տակը կուզեմ կառաջա-
դրեմ նստիլ ու նստայ. սակէց ետքը
չեմ բաժնելիր. վասն զի սատր պտուղ

զը՝ որ է քու սուրբ մարմինդ և արիւնդ, ոչ թէ իմ Յիսուս, խիստ անուշ է իմ բերանիս մէջ։

Դու պահապան հրեշտակս, դուք իմ պաշտպան սուրբերս, ապաչեցէք զԱստուած՝ որ միշտ աս սուրբ գինուոյն տունը մնամ, Յիսուսին սիրովը իբր անուշ գինւով վառուած ըլլամ, մէյ մընալ չիբաժնուիմ։ Եղբայրսիրութեան ողորմութեան եղովայ իս հաստատեցէք, որ եղբարներս սիրելով Յիսուս սիրած ըլլամ. մէյմէկ ընորհքով իս մխիթարեցէք, որ իբր մէյմէկ խնծորի պատուղներ ուտելով, միշտ հոգւորին մատիկնամ, սերս չպակաղիցնեմ. մէկ օրմընալ արժանի ըլլամ դէմ յանդիման զինքը տեսնելու արքայութեան մէջ, որուն միշտ կրբաղձամ. Ամէն։

Digitized by Google

Digitized by Google

ԱՂՕԹՔ

Ի ԺԱՄ ՊԱՏԱՐԱԳԻ

ՊԱՏԱՐԱԳԻՆ սուրբ խորհուրդը առնելու առնելոյ՝ երկու բան պէտք է որ մտածես։ Մէյմի մտածէ որ Քրիստոս տէրն մեր քեզ հարկինք կը կանչէ, սեղան (զիանքէթ) կընէ, ինչ պէս որ առաքեալներուն ըրաւ վերնասանը մէջ։ Ան սեղանին վրայ իրեն սուրբ մարմինը և արիւնը տրուաւ իրենց Ճաշակելու, որ է մեկ կերպակուր մը անմահացուցիչ։ և ուրիշ բանէրէն զատ՝ իրեք բան պարգև ըրաւ առաքեալներուն։ Մէյմի ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը տրվեցուց, լուսաւոր խաչերով հասկրցուց։ Երկրորդ՝ համարձակութիւն տրվաւ որ՝ Ցիսուսին անունովը խնդրեն ինչ որ ուզեն, խոստանալով որ իր անունովը ուզածնին պիտոր առնեն։ Եւ երրորդ՝ սիրոյ պարգև տրվաւ, սէրը իր կասկովը իրեն նշան թողուց։

Ասանկ հիմա գունալ սա սուրբ ա-

Digitized by Google

ղանին վրայ կանչված ես Քրիստոսի առաքեալներուն պէս. հաւատքով Երրամեռանգութեամբ տես պատարագը. մէյմը որ Աստուած միտքդ լուսաւորէ, պայծառ իմանաս առջևի տեսած խորհուրդդ, և Աստուածային գաղանիքները. երկրորդ՝ Յիսուսին անունովը ինչ որ ուզես քիչի պէտք եղած հոգևոր նաև մարմնաւոր բարիքները տայ քեզ Աստուած. երրորդ՝ սէրն Աստուծոյ եղբայրական սիրոյն հետ վառէ Աստուած քու սրտիդ մէջը, որ է մէկ հատիկ Ճանապայ ազգայնութիւն հասնելու։

Երկրորդ՝ մնածէ, աչքիդ առջևն բեր Գողգոթա լեռը, իբր թէ իրաւունքնէ հոն ես, ու աչքովդ կլուսնանաս որ Յիսուս քեզի համար խաչին վրայ կրգասնին, ինքն Յիսուսալ իրեն տուրը արիւնը վնաջներով կրմեռնի, խաչին վրայ կրպատարագի, որ քեզ փրկէ յաւիտենական մահուանէ։ Ասոնք մնածելով, խնացիր որ պատարագը ուրիշ բան չէ որ՝ քու հիմն փրկութեանդ բանն է. նայէ ինչ փոխարգով, ինչ միտով պէտք է որ տեսնաս սուրբ հրաշալի խորհուրդը։ Եւ գիտցիր որ՝ որչափ քու կեանքիդ մէջը այսչափ առօրեքներ ըլլեն ինչման հի-

Digitized by Google

մաս, ան ամենենալ մէկ տեսած պատա-
ղագին տղդինքին չէն կրնար հասնիլ։
Անանկ գիր որ՝ ամէն մէկ պատարագ
տեսնալուդ առտեղը հազար քէսէ վաս-
տրկէիր, ինչպէս սիրով կրվազէիր տես-
նալու, անանկ սիրով տես. վասն զի
իրաւունքն անանկ հազար քէսէ շնոր-
հաց կրվաստրվիս, որ չաւրվիր։ Ա-
քէսէնէրը հիմա չէս վայելէր, հապա
մէկ մասհանի մէջ բաշխելի տակ կրպա-
հես, որ երբոր առտեղը գայ, ան առտե-
ղը բանաս վայելես ուղածիդ պէս, ա-
նանկալ առտեղը պիտոյ վայելես մեռ-
նելու առտեղդ ան դիի աշխարհքը, որ
է հարրատութիւն մը անանց յաւիտե-
նական։

Առտեղ մնածելէն ետև՝ դիտաւո-
ղութիւն (նիէթ) դիր տեսնելու առջևի
պատարագը՝ ի փառս ամենատրբեր
տրդութեան, ի պատիւ ամենայն
արարչաց և հրեշտակաց, յօգուտ ամէն
քրիստոնէից, թէ անանց որ՝ քէզի
բարեկամէն, և քեզի ազօթք յանձ-
նեցին, և թէ անանց որ՝ քեզի լիշնամի
են. սուրբ եկեղեցեայ խաղաղութեանը
և փառաւորութեանը համար, ինչպէ-
ս ցեղոց հոգինէրուն հանգստութեանը
համար, մանաւանդ անյիշատակ ինչպէ-
ս ցեղոց։ Բայց ամէնէն առէլի քու ան-

Digitized by Google

Էինք օգտին հաստատ, ինքդիրքով հնարքք որ՝ առջի մեղքերուդ թողութիւն առնես, վարքդ շտկես, ժամանակ ու նեղնաս ճշմարտապէս ապաշխարելու. և հոգւոյն արքոյ միխիթարութիւնը ու նեղնաս քու ամէն նեղութեանդ մէջ. մարմնաւոր գործքերուդ համարալ յաջողութիւն ունենաս, որն որ բարի կերպան Աստուծոյ։ Ամենցմէ զատ՝ ինչ ուրիշ գիտաւորութիւն (նիէթալ) կուզես թէ հոգևոր և թէ մարմնաւոր 'ի վասա Աստուծոյ՝ կրնաս դնել, վասն զի անհուն է օգնութիւն և զօրութիւն պատարագին։

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ՊԱՏԱՐԱԳԸ՝ Քրիստոսին չարչարանքը կրնեռկայացնէ. անոր համար քրիստոնէին ան է ապէկը որ՝ ամէն պատարագ տեսնալուն ատենը Քրիստոսին չարչարանքը մտածելով տեսնայ։

Ասանկով պատարագ սկսելու ա-

տեղը մոտածէ Քրիստոսին պարտէզին մէջ մնալը, աղօթելը, ու արիւն քրտնելը։

Սկիզբը քանալու ու բաժակը դնելու տեղը՝ մոտածէ Յուդային համբուրելով մատնելը զՅիսուս. Յիսուսին բռնելիլը, կապելը, ու քահանայապետին առջին տարելը։

Գիլը ու աւետարան կարդալու տեղը մոտածէ, երբոր երդվընցնելով կուզէին որ Քրիստոս ըսէ, հասկըցընէ իրեն համար ովէ, ինչ է։

Հաստատելին տեղը մոտածէ Քրիստոսին աներկիւղ յայտնի դատելիլը իր Աստուածութիւնը, և իրեն գալուստը։

Սկիզբ քանալու և լուացվելու տեղը մոտածէ Քրիստոսին իր լաթերը հանելը, կարմիր քղամիդ հագնիլը, փոշոտվատակվելը, ծեծվելը, ու պիղատոսին լուացվելը Քրիստոսի արիւնին պատրաստութենէն ազատվելու համար։

Սուրբ Սուրբ ըսելու տեղը՝ մոտածէ Քրիստոսին նախատական խօսքերը ըսելը, ծաղր ընելիլը, այն որ հրեշտակներուն երգերով միշտ սուրբ սուրբ կըսեր, կրկնաբանվեր։

Եռեք կերէք ըսելու տեղը մը-

տածէ Քրիստոսին խաչին վրայ գամ-
վելը, արիւնը վաղցնելը։

Ի արքունութիւն արքոց ըսելու. առեանը
մտածէ Քրիստոսի խաչին վրայ գամ-
ված վերը վերցրվելը, դէտանին վրայ
տնկրվելը ամմէնուն առջին, ու երկ-
նաւոր Հօրը առջին, որ մեր մեղքերուն
քաւութիւն ու թողութիւն գտնայ։

Հաշտարքը բեկանելու՝ և մէկ մասը
բաժակին մէջ ձգելու. առեանը մտածէ
Քրիստոսին հոգին աւանդելը, և լիմ-
պատը ինչնալը, նախահայրց հոգիքը
ազատելու համար։

Ճաշակելու առեանը մտածէ Քրիս-
տոս խաչէն վար ինչեցնելը, ու Իրեն
թաղու

ինքդ կրպատրաստես սեղանին վրայ մորթելվելու իմ փրկութեանս համար երբոլ մէկ գառն մը անարատ։ Ո՛վ անհո

գթութիւն, հերիք չէր անչափ աղօթքներդ, անչափ քաշածներդ, որ ինծի համար քաշեցիր, այլ իմ վրայ այնչափ գութ ունեցար որ՝ ձեռք առիր քուկին անհուն իմաստութիւնդ, և չեղած բանը ըրիր։ Մէկ անգամ պատարագվեցար արեամբդ Գողգոթա լեռը. հիմա նորէն անարիւն պատարագով կրպատարագվիս, զուրպան կրլլվիս իմ առջիս ինծի համար, բայց մի և նոյն պատարագդ ես, ինչ որ եղաւ Գողգոթա լեռանը վրայ։

Յաստէ փահանային. Եւ վասն սրբոնհոյ Աստուածածնին։

Ո՛վ սուրբ կոյս Աստուածածին, դուն որ Գողգոթա լեռան վրայ եղած պատարագին առջին կեցար, և որդւոյդ հետ մէկտեղ պատարագվեցար կենդանուն խորվելով արտիտ մէջը, որ ես խալըսիմ՝ բարկութենէ հօրն երկնաւորի, մեղքերուս թողութիւն

դանամ, տուր կատարեմ քու բարե, խոստովանեմք՝ որ աս պատարագիս առջին էս ալ ինչպէս պէտք է անանկ կէնամ, պատվա մոքովս աս պատարագը Հօրն երկնաւորի մատուցանեմ։ Ըստ աղաչանքներդ ունիմ ընելու. քու Լիկին բարեխոստովանդ զօրաւոր է Աստուծոյ առջին մայր տուրբ, բարեխոս եղիր ինծի մեղաւորիս համար, որ ձայնս լսէ, խնդիրքներս կատարվի։

Յաղէն. Խոսրովանիմ առաջի Աստուծոյ։

Ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, քահանային խոստովանութեանը հետ իմ խոստովանութիւնսալ ընդունէ տղորմէ, վասն զի իմ մեղաւորիս մեղքերը քահանան իր վրան առած անանկ կրխոստովանի. մանաւանդ թէ նոյն ինքն Յիսուս միածին, Ճշմարիտ քահանայապետն, անմեղ գառն Աստուծոյ իր վրան առած իմ մեղքերս քահանայի կերպարանքով անանկ կրխոստովանի քու առջիդ ով Հայր երկնաւոր, մեղայ կրսէ, թող կրսէ

աս մեղաւորիս մեղքերը, ես անոր տեղը ահա կրպատարագվիմ զուրպան կըլլամ։ Անանկէնէ երբոր քահանայապետին Յիսուսի աս խոստովանութիւնս իմ գիտցէս կրլսես ով ողորմութեան Աստուած, թողութիւն տուր իմ ամէն մահացու և ներելի մեղքերուս որ ինչվան հիմա գործեցի. և Յիսուսին պատարագվելը մորթելը աս սեղանիս վրայ ընդունէ, այսօր ինծի հետ հաշտվէ. որպէս զի կատարեալ հաշտվելով Աստուածութեանդ հետ՝ աս ինծի ան ամէն չնորհքները, ինչ որ պատարագիս մէջը պիտոր ուզեմ. լսէ, կատարէ ան խնդիրքներն, ինչ մեղքով որ առաջադրեցի աս սուրբ պատարագը տեսնալու։

Մարդ առաջի սեղանոյ առ Աստուած, որ սարսափ առնէ զմանկանիսն իմ։

Եսալ մնամամ աս սեղանս, որ Յիսուս կրկանչէ, ես լցեալս մեղքերով մնամամ վայրերեմ աս սեղանէս՝ որ Յիսուս կրպատարաստէ. վասն զի ինքն Յիսուս հարկինք ըլլաս, հրաւիրեց

իր սեղանը կաղէր, կոյրէր, խեղէր, ան մարդիկները՝ որ ոմանք լոյս հաւատոյ չունէին, հոգւով կոյր էին, ոմանք կաղալով կերթային, մէյմէն Աստուծոյ ծառայելով մէյմէն սատանայի, ոմանք մէյ մէկ գին ցաւ ունէին, մէյ մէկ կիրք և մոլութիւն. ասանկներուն հիմա կրսէ. Դուք մեղաւորք եկէք աս գառս կերէք, որ ձեզի դեղ ըլլայ, ձեր մեղքերուն թողութիւն գտնաք, հոր Աստուծոյ հետ հաշտութիւն գտնաք։ Աս սեղանս է որ ձեզ կուրախացնէ. հոս ես կրխորվիմ ձեզի համար, իմ սուրբ արիւնովս ձեր մեղքերը կըլուանամ, նորէն անմեղութեան շնորհքով ուրախ կընեմ ձեզ. ինչ որ մանկութեան պզտիկութեան ատենը ունէիք մկրտութեան շնորհքովը։

Դոպ արա ինչ Աստուած, Ե իրա արա ինչ 'ի դարասկանի իմոմ։

Ո՛վ հայր երկնաւոր, հիմա իմ դատաստանս դու կտրէ, ան ազգէն՝ որ ոչ է սուրբ, որ է իմ մարմինս, ան մեղաւոր ու նենգաւոր մարդէն՝ որ է

իմ կիրքս՝ փրկէ իս, սատանային որոգայթներէն խալրանէ իս աս սուրբ պատարագին վրայ նայելով։ Քու միածնիդ է որ ինծի համար կապաչէ, որ մեղքերուս թողութիւն գտնալու համար ինքիր զինքը կը պատարագէ աս սուրբ սեղանին վրայ։

Դու Աստուած հզօրիւ իմ ես, ընդէր մոռացար զիս, ընդէր պրպտամ գնամ ես ի նեղութենէ։

Տէր իմ Յիսուս, աս բարեբարոյութիւնները դուն ես որ ըրեր ես ինծի. աս պատարագովը դուն ես որ կրպատարագիս կը մատրաստես, քուկին արիւնդ կը թափես իմ սիրոյս համար. հիմա ինչո՞ւ մոռցեր ես իս իմ մեղքերուս համար, իմ սիրտս՝ քենէ պաղած ըլլալով չէմ կրնար պատարագը սիրով փափաքով սանալ ինչպէս որ պէտք է. թշնամին որ է սատանան, աշխարհ, և իմ կիրքերս, կրնան ինձ փորձութիւններով անկեց եալ տրտմութեան մէջ կենալ։ Բայց դու աստուածային Աստուած, հզօրիչ իմ ես,

Digitized by Google

զրաւցի զիս Աստուած, աս սուրբ պատարագին զրուագութիւնը տուր ինձի, որ անով փրկագութիւններուն յաղթեմ, սկսած՝ միտքս՝ բոլորովին քեզի ընծայեմ. ինչպէս որ գունալ քեզ բոլորովին ինձի կուտաս, եսալ իս բոլորովին քեզ նուիրեմ, քեզնով մեռթարվիմ։

Խոսքովան եղէց քեզ օրհնութիւնամբ, Աստուած Աստուած իմ։

Կրիստոսովանիմ Աստուած իմ, և կօրհնեմ քուկին անչափ բարերարութիւնդ, որ աս պատարագովը ինձի կրցրցընես. իմ մեղքերուս քաւութեանը համար յանձն առիր չէ թէ ոչ խար մը կամ գառ մը մորթել տալ, հապա դուն ինքդ մարդացեալ Աստուած իմ Յիսուս, կուսածին մարմինդ իմ սիրոյս համար խաչին վայ բոլորովին խորվեցիր, Հօրն երկնաւորի պատարագ մատուցիր. կրիստոսովանիմ Աստուած իմ օրհնելով աս երախտիքը որ ինձի ըրիր, կրիստոսովանիմ կրկին նաև իմ ապերախտ

Digitized by Google

տուլթիւններուս վրայ, որ մեղքերովս գործեցի. կրցաւիմ քանի անգամ որ քեզ վշտացուցի հինգ զգայարանքներովս, օխտը մահացու մեղքերով։ Աստուածդ ասելին ձգելով իմ մեղքերս, կրկնդրեմ ներումն, քու սուրբ արիւնովդ լուանաս. մեղքերուս չիշատակը ջնջես արդեամբք և զօրութեամբք սուրբ պատարագիս։

Արդ ընդէր փրփռամ ես անչի իմ, կամ ընդէր. ե՞ այլ։ Օրհնեցուք զՀայր. ե՞ այլ։

Կը հարցնեմ ես իմ անձինս, ինչու տրտնամ ես, թէ ինչ է որ ոչ երբեք կը հանգչիս։ Ինծի ներքին պատասխան կուտայ, չեմ հանգչիր՝ վասն զի Աստուած կրկանուեմ՝ չեմ գտնար, աղարտածոց մէջ հանգստութիւն կուզեմ, չեմ գտնար հանգիստ. մեղք կը գործեմ որ կամքս կատարեմ, բայց անոմ ալ աւելի խռովութեան ու թշուառութեան մէջ կիյնամ՝ կուլամ կրպտրտամ, մէկ հանգիստ տալով մը մէկ փրկիչ մը չեմ գտնար։ Ամէնը

Digitized by Google

նալ մեկ ձայն մը կառնեն իմ հոգիս խո-
րանէն, ինչու՞ տրտում ես, ինչու՞ կը-
խռովիս, ահա փրկիչ մը կերևնայ, ա-
հա Աստուած կուգայ աս սուրբ խո-
րանին վրայ. դուն Աստուծոյ վրայ
դիր յոյսդ, խոստովանէ, հաւատա,
հաւատքովդ ուղղծովդ պաշտէ անոր
կայ. Աստուածալ հիմա կուգայ, փրր-
կիչ երեսաց քոց կրլլայ. ուրիշ տեղ մի
մինտուր ոչ Աստուած և ոչ քու հան-
գիստութիւնդ, այլ միայն աս խորանիս
վրայ մնտրուէ, որ ամէն ցաւիդ մեղ-
թարութիւն գտնաս։ Ա՛ ձայնս կրլը-
սեմ սուրբ սեղանոյն վրայէն, յոյս
կառնեմ, հոգիս կուրախանայ, կը-
փառաւորեմ ամենասուրբ Երրորդու-
թիւնը ըսելով. փառք Հօր, և Որդւոյ,
և Հոգւոյն սրբոյ. կօրհնեմ ամենա-
կարող Աստուածը՝ որ իս արժանի
ըրաւ ասանկ սուրբ տեղ կենալ, ուր
որ իմ Աստուածս՝ իմ արարիչս՝ մար-
մնացեալ խորհրդացեալ աս սուրբ
խորհուրդիս մէջ հիմա պիտոր տեւ-
նամ։

Digitized by Google

Ի յարէի սրբութեան ... խոնարհեալեր-
նի-ոգի- երիր պագանիմ ։

Երկրպագեմ աչքը իմ ցիսուս քրիստոսի երկայնմտութեանդ, երկրպագեմ քրիստոս անչափ խոնարհութեանդ, երկրպագեմ քրիստոս անչափ մարդասիրութեանդ՝ որ սա պատարագովը ցրցուցեր իմ վրայ։ Աւաղ խաչվեցար թաղվեցար ինծի համար, և յարեար փառաւոր, հիմա ալ նոյն խաչելութեանդ յիշատակը անարիւն պատարագովդ կը հրաշագործես՝ ինծի կրնես երկայացընես, անով սա տեղս կը լլայ հրեշտակաց բնակարան, որոնց հետ եալ մեկ տեղ ձայնակից ըլլալով ահով դողով խոնարհեալ երկրպագութիւն կուտամ, և փառաբանութիւն կերգեմ։

Օրհնեալ Աստուածածնին Հօր Ն Որդւոյ։

Ա յսօրվան տունին յիշատակը որ տուզը եկեղեցին կընե, եալ քարեխօս միջնորդ բռնելով ամենասուրբ Երրորդութիւն, խնդրեմ որ սաս ինծի ան շնորհքները՝ ինչ որ պէտք է ինծի։

Digitized by Google

թէ որ երկրաւոր իշխաններդ իրենց տունէրուն մեծ մեծ շնորհքներ պարգևներ կրբաժնեն, քանի աւելի դուն տէր իշխան մեր ամենեցուն այսօրվան տոնին պատիւը մի պարապ հաներ. որչափ շատ է իմ մեղքերուս ծանրութիւնը՝ մի յիշեր. այլ՝ի պատիւ տոնին թողութիւն տուր առաջ իմ մեղքերուս՝ որով կատարեալ հաշտութիւն ըլլայ. անկէց ետքը տուր ինծի հաւատ, յոյս, սէր, և բարեգործութիւն, որ մնացած կեանքս ապաշխարութեամբ և բարի գործքերով անցնելով, բարի պատրաստութեամբ հոգիս քեզ ապանդելով, երկինքը տոնելարժանի ըլլամ տոնս ամէն սրբոց և հրեշտակաց հետ մէկտեղ։

Ս՝ոբ Աստուած, սուրբ Ե՛ հզօր, սուրբ Ե՛ անմահ ողորմեա՛ մեզ։

Հրեշտակային փառաբանութիւնը բերանս առնելով, քուկին մարդասիրութիւնդ օրհնելով կաղաչեմ տէր ամենակալ՝ ողորմէ՛ ինծի որ իս ստեղծեցիր, ողորմէ՛ ինծի իմ ամէն հարկաւո-

բուԹեանս առեն, ոլորմէ ինծի խնայէ վրկէ իս ամենն պատիժներէն, որ արդար բարկուԹիւնդ Աստուածային իմ մեղքերուս համար կրիրկէ վրաս։ Սանատորապէս աղաչեմ, աղաստէ պահէ իս մահարժամն, կրակէ, յանկարծակի մահուանէ, երևելի և անեղծուԹիւն փորձանքներէ, չար Ժշնամիներէ, նայելով սուրբ պատարագիս վերայ որ սուրբ եկեղեցիայ գիտաւորուԹեամբ բոլոր սրտով քեզ կըմատուցանեմ, ընկալ ու ողորմէ։

Հաստատմ 'ի մէ Աստուած։

Հաւատամանն ամենն խորհուրդներդը, ինչ որ կըհաստատայ սուրբ եկեղեցին. իրեն հետ մեկտեղ զուրցելով աս հանգանակը, կըխնդրեմ ԹողուԹիւն Թէ որ հաւատքիս դէմ մեկ խօսք մը մեկ գործք մը ըրեր եմ ու չեմ ճանչնար. և կաղաչեմ որ աս սուրբ պատարագիս արդեանցը համար տաս ինծի շնորհք որ՝ ուղղափառ հաւատքս պրտով՝ մտքով՝ խոստովանիմ, և հաւատքիս կէսրէ ալ գործք ունենամ։

Digitized by Google

ինչ որ սուրբ աւետարանը կապակցէ, գործքով կատարեմ։

Խաղաղութեամբ եւ Քրիստոս էրէնէ մէր։

Քանզի խաղաղութիւնդ որ աշխարհ բերիր տէր իմ Յիսուս, պարդևէ ինծի սուրբ պատարագիս արդեանցը համար, խաղաղութիւն իմ սրտիս ու մտքիս մէջը՝ խղճմտանքս մաքուր պահելով, Աստուծոյ հետ միշտ հաշտված մնալով։ Խաղաղութիւն իմ տանս մէջ՝ հեռացնելով ամէն խռովութիւն որ սատանան կը ջանայ բերել մեզի։ Խաղաղութիւն քաղքիս մէջը, փոխանակներէ՝ չար պատահմունքներէ պահելով։ Եւ ան ամէն խաղաղութիւնը կենցաղավարութեանս մէջ՝ որ հարկաւոր է քրիստոնէական քեզ ծառայելու. որպէս զի հոս քեզի ծառայելով, ետքը անդինալ գտնամ երկնային խաղաղութիւնը աղբայութեանդ մէջ։

Digitized by Google

Լուսոցից սրբությամբ գյեռա իմ։

Լուսա տէր իմ Յիսուս՝ իմ հոգիսալ ամենն աղաղոտութենէ, որ մեղքերովս աղաղոտեցի. մաքրէ, սրբէ իս ինչ որ քեզի դէմ մեղքերովս գործեցի փ�ութեամբ և անգիտութեամբ, կամայ և ակամայ. որպէս զի արժանի ըլլամ աս անմահ պատարագը սրբութեամբ քեզի մատուցանել և առնելոյն ամենն շնորհքը՝ որ հարկաւոր են իմ հոգւոյս փրկութեանը համար։

Ողջոյն տուտ Դիմանց։

Աս երկնային ձայնը լսելով խորանին վրայէն՝ ասկէց ետքը ողջոյն կուտանք, սէր կրցընենք մեկմեկու վրայ։ Եւ ով է որ չխոսրե իր ընկերը, չենրե իր թշնամիներուն, տեսնելով՝ Յիսուս Քրիստոս քանն Աստուած մեզի համար երդոր իրեն թշնամի էինք, ինքը առաջ մեր վրայ այնչափ սէր ցրցուց որ՝ հիմա խորանին վրայ ելեր է՝ յանձն առեր է մեզի համար իր սուրբ արիւնը թափելու, որ մեզ երկնաւոր հօրը հետ

հաշտեցընէ։ Տէր ոչ էր իմ, որ եսալ քեզի հեանէլով ան սէրը ունենամ Աստուծոյ վրայ, ընկերնէրուս վրայ, թշնամիներուս վրայ. ամենունալեղ բայրական սէրս ցրցընեմ արտաքս և գործքովս՝ որ քենէալ սէր գտնամ։ Իս սիրով ընդունիս տէր իմ, այն սրբոց ընկերութիւնմէ մէջ, որ սիրով զմայլեալ աղբայութեան մէջ, անձառելի տեսութեամբ քով և քաղցր ընկերութեամբ միմեանց՝ կուրախանան յաւիտեան։

Ահա կացցուք, ե այն։ Պապարագ Քրիստոս մարգի անարգ գտան Աստուծոյ։

Կրեանամ ահա քահանան խորանէն դուրս եղած, Յիսուս Քրիստոս ձեռքովը Երուսաղէմ, զուրգան պիտոր ընէ. Երուսաղէմ այնը որ կրսէ, աս է գառն երկնաւոր, որ մորթելի պիտոր աս խորանիս վրայ. ինչ կուզես իրանդրէ, զուրցէ, հայրն երկնաւոր աս պատարագիս սիրտը ջիգիանտար, ուզածդ պիտոր կատարէ։ Եսալ աս ձայնս առնելով, սիրտս կրքաջալերի. կը-

խնդրեմ առաջ իմ վրայ ողորմութիւն, որպէս զի արդարութիւնը մեկ դի թողու, իմ վրայ դիմութեամբ ողորմի. երկրորդ՝ կրկնդրեմ խաղաղութիւն. մեղքէրս թշնամի ըլլաս իս Աստուծոյ հետ, Աստուած ինծմէն հեռացուց, խաղաղութեան սատանան քովս նըստեցուց, հիմա պատարագիս զօրութեամբը մեղքէրս թողութիւն տալով խաղաղութիւն հաստատութիւն ըլլայ իմ մէջ և Աստուծոյ մէջ. խաղաղութիւն ըլլայ իմ տոխս և խղճմտանքիս մէջ, իմ տանս մէջ, և ընկերներս մէջ. երրորդ՝ կրկնդրեմ որ սատանայ ըլլալով աս պատարագին ուժովը օրհնէ իս հայրն երկնաւոր. օրհնէ իմ ամմէն տունս, ամմէն գործքս մարմնաւոր և հոգևոր, հեռացնէ մեղքէրս, սատանային ուժը, և ամմէն թշնամեաց սաստելութիւնը։

Շնորհք. սէր, և սոպոսածային օրհնութիւն զօրութիւն... եղիցի ընդ քեզ ամէն։

Ահա կրկնեմ խորհրդոյն ուրախութեան ձայն, պատարագիս ուժովը

կայուսամ առնել շնորհք Հոգւոյն սրբոյ, որ ասկէց ետքը չմեռանիմ. աս խորանէս կառնեմ սէրն երկնային, որով սիրոս միտքս երկրաւոր բանէրէն կորսեմ. աս խորանէս կառնեմ աստուածային արքարար զօրութիւնը, որով մեղքերուս թողութիւն գտնամ, արդարանամ, զօրանամ աշխարհիս՝ մարմնոյս՝ սատանայի դէմ, և ասկէց ետքը ըլլամ Ճշմարիտ աշակերտ Քրիստոսի։

Ի ՎԵՐ ԸՆԴՈՅԵՑՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՍ ՅԵՐ։

Խնդրեմ տէր իմ, աս պատարագիս զօրութեամբը՝ որ հաւատքս պայծառացընես, բաց աչքք տեսնամ աս աշխարհիս ունայնութիւնը և ոչնչութիւնը. սիրոս անոնցմէ կրարեմ հեռացընեմ, բոլորովին Աստուծոյ դարձընեմ։ Յոյսս զօրացընես բարեգործութիւն ընել տալով, սէրս շտկես որ միայն աստուածային երկնային բանէրուն սէր ձգեմ. այսօրուայ մատնաւորապէս կապաչեմ մեղքերու ապիթնէրէ պահես, որ առանց մե-

զաց անցընեմ. սովորական մեղքերս ձգեմ, մանաւանդ բարկութիւնը հպարտութիւնը, և նախանձը։

Ե- գոհացու

բերանը կոտնեանք, քեզ կրդովեանք։
Օրհնեալ և փառաւորեալ լիցայ ոգեր
զօրութեանց քոս անուանդ Յիսուս,
որ աշխարհս եկար, մարմնացար մեզի
համար, ու նորէն ալիտոր դաս.
մենքալ սերոբէներուն քերոբէներուն
հետ զքեզ կօրհնենք, զքեզ գովենք,
և զքեզ կրփառաւորենք, զի գոս մի-
այն ես արժանի ամենայն պատուոյ
ընդ Հօր և սուրբ Հոգւոյն։

Ա՜մէն։, ՝ԷՐԷ։

Ո՛վ Հայր ամենակալ, մեծ է քոմ
մեղքերուս ծանրութիւնը,մեկը չիկրը-
նար քաւել. հիմա քոս սիրելի Որդիդ
միածին աս խորանին վրայ եկեր կաղաչ
չէ. Ահա ես, ահա ես աս մեղաւորին
տեղը կրմնրթըվիմ, չորս գիտցէս ա-
թիւնս կրթափիմ. միայն թէ աս մե-
ղաւորիս մեղքերը արրէ, ասոր հետ
հաշտըվէ. իր տեղը ես կրպատժըվիմ,
խաչին վրայ գամվելով կրպատասխանվիմ։ Ո՛վ Հայր գթութեանց, երբոր
աս քոս միածնիդ ձայնը կրլսես, ա
սանկ խոնարհութիւնը կրտեսնանայինչ

պէս սիրտդ սիտոր դիմանայ։ Եսալ անոր ձայնին հետ մէկտեղ ուրիշ բան չէմ կրնար համարձակիլ ըսելու, բայց եթէ մեղայ տէր իմ մեղայ։ Քու միածնիդ ձայնն է, քու միածնիդ մարմին և արիւնն է, որ ինծի համար կրպատարագվի կրթափի. իմ վայ կօծվի, իմ արեանս հետ կրխառնըվի. Նայէ ողորմի՛, այդպարութիւնդ մոռցիր, գթութիւնդ յիշէ, մեղքերս քաւէ։

Աբէլ։ 'Ի սանկ։

Նայէ ով արդարութիւն ատուած այն, Յիսուս միածինն է՝ որ քեզի զոհ, ողջակէզ զուրպան կրլլայ իմ տեղս. ան Յիսուսն է՝ որուն Հայր Ատուած երկնքէն վկայեց, թէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։ Ահա ան սիրելի որդին անմեղ գառն անարատն է, որ իր սուրբ արիւնը կրթափէ հիմա ինծի համար, կրխորվի, խաչին վայ բոլորովին կրպատարագվի, որ ես փրկրվիմ, որ իմ մեղքերուս ներես, ինծի հետ հաշտվիս։

Digitized by Google

Ե-գ-ոյ-ն՝ Ի-ե-ոյ-ոց։ Յ-ա-ն-ա-յ-ն-ի օ-ր-ն-ե-ա-լ-ն-ե-ս։

Քրիստին անհուն բարերարութիւնդ որ ցոյց տուցիր մեր վրայ տէր իմ, կրկայլէր որ մեծ մեծ բաներ զոհ պատարագ մատուցանէինք, զուրպան ընէինք, ընտիր պարգևներ քեզի ընծայէինք. բայց բան մը չունինք, վասն զի ամէն բանը քրիստինդ է, դուն ես ստեղծեր, մեզ դուն ես ըրեր ոչնչէ։ Ա՛ս խորհնիս վրայ ահա ունինք մէկ հատիկ քրիստիրելի Որդիդ, անիկայ քեզի կրպատարագեմք անարիւն պատարագաւ, անիկայ քեզի կընծայեմք։ Բայց կը տեսնանք որ անալ քրիստինդ է, անալ գոն ես ով անբաւ Աստուածութիւն, անհուն մարդասիրութիւն։ Ի՞նչ կրնանք ըսել աս հրաշալի գործքերուդ վրայ, բայց եթէ տէր քրիստինդ քեզի կրմատուցանենք, անոր հետ մէկտեղ մեր միաքնալ սիրտնալ որ դուս ստեղծեր ես, քեզի կընուիրեմք. ա՛ռ ինչպէս որ ուզես անանկ ըրէ. ինչ խաչ, ինչ նեղութիւն ուզես՝ խրկեէ՝ սիրով կրքաշեմք։ Միայն

նայելով աս Յիսուսին պատասխանին վրայ, մի՞շտ լով իրեն քաշած չարչարանքները, խաչելութիւնը, մեռի հետ հաշտելիս, մեզ սիրես, մեր մեղքերը քաւելով հայրապետ մեզ նախախնամես, որ մենքալ քեզ օրհնենք, գովենք, գոհանանք, հոս և անդինալ յաւիտեան:

Որդեա՛ դի եղէցի սա ամենեցուն մեզ մերյեղելոյս յանդգնապարտութիւն, ի փառութիւն, և ի նոր-ութիւն մեղայ:

Ահա՛ կելլամ Գողգոթա լեռը, աչքիս առջեւն կբերեմ նամտերն իմ խաչին վրայ կախված, ձեռվընեերը՝ ոտվընեերը գամ ված, իր սուրբ արիւնը մեկ անհուն աղբերկ մը կրվազէ իմ մեղաւորիս վրայ. սուրբ Աստուածածինը մեկ դին կեցած, իր միածին որդւոյն հետ արտին մեջը խորվելով լալով կրբարեխոսէ ինծի համար. մեկալ դին Սաթիամ մանգալենացին զղջում ընելով, Յիսուսին սուրբ ոտեամբը լըսացվելով, թողութիւն կրգտնէ իր մեղքերուն, օրինակ տալով իս կարդարանալ.

Digitized by Google

ինքն Յիսուս հալած մաչված իրեն նեղ-
ղութիւնը մոռցած, քահանային հետ
մեկտեղ ինծի համար կաղաչէ. Հայր-
երկնաւոր, թողութիւն տուր սա մե-
ղաւորիս մեղքերուն։ Հոգիդ սուրբ,
թող մի յիշեր սա մեղաւորիս ըրած
հպարտութեան, բարկութեան, և
եօթը մահացու մեղքերուն ծանրու-
թիւնը. քանէ սա մեղաւորիս բերնով,
ձեռքով, աչքով, ականջով, մտքով
ըրած մեղքերը կրսէ. ես ահա անոր
համար կը քաշեմ. ես սիրելի էակիցդ
անոր համար ամենեն զգայարանքներս
դամեր եմ խաչին վրայ, որ սա մեղա-
ւորիս թողութիւն տաս։

Ա՛խ, եսալ հիմա սա ձանս խորա-
նին վրայէն լսելով, սա ահաւոր ազե-
տալի տեսիլքս տեսնալով, կը վախեմ
հաւատքովս սուրբ խաչին տակը, տա-
վնեերուդ կրպլլվեմ Մարիամմագդա-
ղենացիին պէս, կաղաղակեմ. իմ վրայ
թափէ սա սուրբ արիւնդ տէր իմ
Յիսուս. իմ հարաշար մահացու մեղ-
քերս լուա քու սուրբ արիւնովդ։ Ես
պղտիկուցմէ բորոտվեր եմ գարշելի

մեղքէրով աս սուրբ պատարագիդ ա-
րիւնովը որ կրթափեսս ինծի համար ,
իս պրէ , լուա , մեղրէ . վասն զի կը-
խոստովանիմ կրհաւատամ որ՝ դուն
ես պատարագ-քաւութեան և թողու-
թեան, որ կրմորթիլիս սուրբ սեղանին
վրայ , և կրլլաս ողջակէզ հաշտու-
թեան հոր Աստուծոյ :

Ո՛վ հայր երկնաւոր, թէ որ իմ ձայ-
նիս չես լսէր բարկանալուդ համար ,
տես քու սիրելի Որդիդ է՝ որ ինծի
համար կրքաշէ , հիմնաալ քահանային
հետ կաղօթէ , կրբարեխօսէ . ասոր
ձայնին լսէ , ասոր արիւնին վրայ նայէ ,
որ սուրբ պատարագովս՝ քահանային
ձեռքովը բռնած քեզի կրցրցնեմ :
Եւ՝ բկինք, սուրբ հրեշտակներ , գուրալ
տեսէք աս նոր տեսիլքս , ցրցուցէք
երկնաւոր հօրը : Ո՛վ աղբիւր ողորմու-
թեան , նայելով աս պատարագիս
վրայ , ողորմէ արքէ իմ աղտոտու-
թիւնս , տուր ինծի պատարագիս ան-
հուն արդիւնացը համար մէկ զգաստ
հնարքը մը յաստուածութեան , որ աս-
կեց եղբը բնաւ չիմեզանչեմ , միշտ

Digitized by Google

շնորհաց մէջ մնամ, քեզ ծառայեմ, քեզ սիրեմ և փառաւորեմ հոգ՝ և 'ի հանդերձեալն յաւիտեանս. Ամէն։

Ցիշեա՛ տէր, Ն ողորմեա՛։

Գողգոթա լեռը կեցած, սրտովս մեղովս խաչին վրայ եկած, քեզ Ցիսուսի Թագաւորիդ խաչակից ըլլալով բարի աւազակին հետ մեկտեղ կաղաղակեմ. Ցիշեա՛ զիս տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։ Դուն ալ ո՛վ տէր իմ Ցիսուս, միշտ Աստուծոյ և մարդկան, յիշէ՛ քու խոստմունքդ որ անոր ըրիր. ինծի՛ալ այսօր քու քաղցր ձայնդ լսել տուր ըսելով. Այսօր ընդ իս եղես 'ի դրախտին։ Ինչ մենծ մեղքեր որ ըրիր՝ Թողութիւն կուտամ այսօր, դրախտն շնորհաց կը մուտցնեմ, մեռնելուդ աւենաւոր դրախտն երկնային կը մուտցնեմ։

Կաղաչեմալ որ՝ յիշես, ողորմիս աս սուրբ պատարագովս անոնց համար որոնց համար կը բերանամ աս պատարագս, և որոնց որ պարտքեան

եմ աղօթելու, իմ ծնողաց, աղգական-
ներս, բարեկամներս, և անոնք որ՝
ինծի մէկ բարերարութիւն մը ըրեր-
են, յիշելով սա սուրբ պատարագիս
մէջ բարիք հատուցանես, ողորմու-
թիւն պարգևես։ Կամ անոնց որ՝ ին-
ծի թշնամութիւն ըրերեն, կաղաչեմ
ներես, ողորմիս, շնորհք պարգևես։

Ցիշէ տէր իմ, նաև ննջեցեալ հո-
գիքներդ իմ առջիններուս, ծնողքնե-
րուս, բարեկամներուս, և ան հոգի-
ներդ՝ որոնց համար պարտական եմ
աղօթելու. սա անմահ պատարագիս
արդեամբք քաւէ այսօր իրենց մեղաց
պատիժը, տուր մխիթարութիւն, ա-
զատէ և ցրցու քուվին անճառելի
տեսիլքդ, որ քեզ փառաւորեն յաւի-
տեան։

Ե՛ Էլիոյ ողորմութեան ՀԵՐԻՒ ԱՌ-
ԳՈՒԾՈՅ։

Ո՛վ տէր զօրութեանց, Աստուած
ամենակարող, որ զարմանալի հրաշա-
գործութեամբ երկնքէն վար ինկած
սա սուրբ պատարագիս մէջ, խորանին

վայ նստեր էս մարմնովդ, որ իմ աղաչանքներուս մտիկ դնես, իմ մեղքերուս քաւութիւն պատգնես. թէպէտ հայցին ներելն ես, բայց իմ աչքս հաւատով գիտէ, կրնաստատանի, կը հաւատայ որ դուն ես հայցին ներելն նըստած, անանկ ինչպէս թագաւոր մը կընստի փէրտէին էսին. աչքս փէրտէն կրտեսնայ, բայց գիտնալով որ հոն է թագաւորը, ինքը տեսածի պէս կրլայ: Հիմնալ աս խորանին վայ դու ամենակարող տէրդ ես՝ թագաւորը թագաւորաց Աստուածն՝ որ նստեր ես. իսկ հացը փէրտէ մէնէ աչքիս առջեն քաշած. դու Հնամարիս քահանայապետ ես՝ որ մարթվելով երկնաւոր Հայրը կը հաշտեցնես ինծի հետ. ինչ հրաշք, ինչ գթութիւն և սէր է ապարիչ և փրկիչ իմ:

Հիմա ասչափ սէր, ասչափ աշխատանք ցոյցնելէն ետև իմ վրայ, մինթէ կրկորանցնեմ իս տէր իմ, մինթէ կը մերժեմ իմ աղաչանքս. այլ քանի՞ քանի՞ ըներար, մանրդասէր, նայէ քու պատարագվելուդ վայ, ողորմէ ինծի

քահանային աղօթքովը, զարմ տուր ինծի, որ քու ապիւնդ պատսպ չեր-թայ։ Ինչպէս որ մէկ գառնալով նայ-եալով Գեորգոս առաքեալին վրայ, երբեն հոգին մեղքէն խալըսցուցիր, մարքին փորձութիւնը չփոթութիւնը փարատեցիր, սրտին զգջումու դարձ տուիր, որ միշտ կուլայ։ Հիմա ինծիալ գթած աչքովդ նայելով ողորմու-թիւնդ անպակաս ըրէ, մեղքի փորձու-թենէ ազատէ, սրտիս զգջումտուր, որ Գեորգոս առաքեալին պէս միշտ լամ, մեղքերուս թողութիւն գտնամ։

Ե- գ�՝ մեղհամարձակեցայ բարբառել։
Հայր մեր։

Հայր երկնաւոր, բոլոր տուրք եկեղեցեայ հետ եսալ կաղաչեմ, թէպ որպէսզի է հոգւոյս և մարմնոյս՝ ինծի շնորհես։ քու կին ապրելիդ միածինն Յիսուս որ խորանին վրայ է, ինծի տուր վերցուց ասանկ համարձակութեամբ քեզի Հայր ըսել աղաչելը։ ինքնալ ինծի համար մեկտեղ կաղաչէ։ անոր բարեխօսութեանը համար տուր ան ամենն

մարմնաւոր բարիքը՝ որ ինծի հարկաւոր կը՝ճանչնաս. տուր ինծի ան ամենէն շնորհքը՝ որ պէտք է հոգւոյս փրկութիւնը գտնալու, որով աս աշխարհիս մէջ փրկուելով ամենէն փորձութենէ, արքայութեան երկնից արժանի ըլլամ։

Ի սրբոյն Եփրեմ սրբոյ։

Իմ աչքս քեզի կընայի ով արքութիւն, ով մարմին և արիւն Յիսուսի. գունալ ամենասուրբ Երրորդութեան առջին խօսէ միջնորդէ ինծի համար։ Թէ որ արիւնն Աբելի կրիսօսի, քանի՞ աւելի պիտոր խօսի բարեխօսէ աս անդին արիւնը։ Թէ որ մէկ մեղաւոր մարմին մը իր արիւնը թափէ՝ ճայնը լսելի կըլլայ, հապա որչափ աւելի լսելի պիտոր ըլլայ Հօրն երկնաւորի՝ աս սուրբ արեան զօրութիւնը, որ է արիւն գառնին երկնաւորի, և արիւն Որդւոյն Աստուծոյ, որուն Հայրն երկնաւոր վկայութիւն տուաւ։ Ահա աս սուրբ մարմին և արիւնն որ կրբարձրացնէ քահանան՝ է գին իմոյ փրկու-

Digitized by Google

թեան, որ սեփական երկնքէն հայր երկնաւոր, և գագրեցնես ինծմէն քուկին բարկութիւնդ։ Դրաւի ծանր են, մեծ են իմ մեղքերս, բայց աւելի մեծ և անհուն են արդիւնք արեանն Յիսուսի, որ իմ վրայ թափելով կրնանդրէ քաւութիւն և թողութիւն մեղաց։ Ասոր վրայ նայելով հաշտվէ, իմ մեղքերուս թողութիւն պարգևէ։

Օրհնութիւն Ն֊ փառք Հօր, Ն֊ Որդւոյ Ն֊ Հոգւոյն սրբոյ։

Ի՞նչ շնորհակալութիւն, ինչ գոհութիւն կրնամ տալ այսչափ անհուն բարերարութեան Աստուծոյ, եթէ ոչ միայն օրհնելով կազաղակեմ։ Օրհնեալ լլլայ Հայրն երկնաւորս, որ իր միածին Որդին իմ փրկչոյս համար տուաւ։ Օրհնեալ լլլայ Որդին Աստուած, որ իր սուրբ արիւնը ինծի համար թափելով ինքիր զինքը պատարագ մատուցց։ Օրհնեալ լլլայ Հոգին սուրբ, որ սա սուրբ մարմինը և արիւնը երկնային մանանայի պէս հրաշագործելով, ինծի անմահական կերակուր կրպատ-

Digitized by Google

բաստեն։ Ա՛ռ օրհնեցէք արժանի ըրկ-
ութիւն ամենասուրբ Երրորդութիւն, երկ-
նային Երուսաղէմի մէջ սրբոց հետ մեկ-
տեղ երգելու յաւիտեան աշխարհս
բանելով. Ամէն։

Ի սուրբ 'ի սուրբ։

Ահա աղքայութիւնը աչքովս կը-
տեսնեմ. Յիսուս դառն Աստուծոյ
Որդին միածին ընդաջմէ հօրն Աստու-
ծոյ նստած կերևնայ ինծի. հրեշտակ-
ներ չորս դին բոլորված, սերոբէք
քերոբէք փառաք գոչված, ձայն կեղ-
լայ քաւութիւն և թողութեան մե-
ղաց. թողութիւն եղաւ կրսէ քու
մեղքերուդ. աս սուրբ պատարագովը
քաւվեցաւ քուկին մեղքերդ, ինչը-
վեցաւ քուկին անօրէնութիւնդ։ Ես
ալ աւետեաց ձայնը առնելով խո-
րանին վրայէն՝ ասկէց ետքը յոյսս կը-
տիրէ, հաստատ գիտնալով որ աղքայ-
ութիւնը իմն է, մեռնելուս տեղը
չեմ մնար անանկ, այլ Քրիստոսի
նման յարութիւն կառնեմ, կեանք
յաւիտենական կրգտնամ; կեանք յա-

Digitized by Google

փրեանական փառաց. վասն զի խո-
ռանին վայելն հրեշտակներդ կրքա-
ղոզեն որ ինքն Քրիստոս ինծի հա-
մար արդիւնաւորեցաւ վաստակեցաւ
աս ինորհքներդ։ Անանկ է նէ ես ալ
սաղմոս ըսեմ օրհնելով զՅիսուս, որ
իս ասանկ խաչցուց յաւիտեանական
մահուանէն. սաղմոս ըսեմ օրհնելով
զՀայրն Աստուած, որ ասանկ իմ հո-
գւոյս փրկութիւնը հոգաց. սաղմոս
ըսեմ օրհնելով զՀոգին սուրբ Ա-
ստուած, որ աս ինորհքներս՝ աս հրաշք-
ներս՝ ինծի պէս մեղաւորիս վայ-
ելուաւ։

Եւ առաքէ զրիան փոխ 'ի փառաւորեան և 'ի
Բողոքեան մեղաց։

Ո՛վ Ճշմարիտ քահանայապետ
Յիսուս Քրիստոս, ո՛վ միածին Ա-
ստուծոյ և մարդկան, որ սուրբ ա-
րիւնդ թափելով զքեզ պատարագե-
ցիր սուրբ սեղանիս վրայ, իս երկնա-
ւոր Հօրդ հետ հաշտեցնելու համար
ինքիր զինքդ զոհ մատուցիր. ես պի-
տոր քաշէի, դու իմ տեղս քաշեցիր։

Digitized by Google

Կաղաչեմ քահանային հետ, աս անդին արեանդ համար բլլայ որ իմ փոքր կուրեանս գինն է, մի թողուր իս ասկեց ետքը իմ մեղքերուս մէջը մնալ։ այլ ինչպէս կրհաւատամ որ անճառելի սիրոյդ համար աս պատարագովս քաւութիւն թողութիւն տուիր ինծի, հիմա նոյն պատարագին զօրութեամբը աս ինծի հոգւոյն արբոյ ընդհանրը յարատեւելոյ 'ի բարին, որ սուրբ արիւնդ իմ վրայ կաթեցընելով իս արբեցիր։

Գոհանամք ոչէն փէր։

Գոհութիւն և փառս մատուցանեմ տէր իմ, որ այսօր արժանի ըրիր աս սուրբ պատարագս տեսնելու, պատարագին անհուն գանձը և ընդհանրը առնելու։ հիմա աս պատարագիս հետևալ զիս պատարագ մատուցանեմ տէր իմ, բոլորովին զիս քու կամացդ յանձնելով։ Աւաջ կրզջամ կրցաւիմ բոլոր սրտովս իմ անձնասիրութեան ու կամապաշտութեան մեղքերուս վրայ, որ ինչպան հիմա իմ կամքս պաշ

տեր եմ. քեզ բոլորովին թողուցե՛ր եմ. ինչ խաչ որ ինծի տրուեր ես, ինչպէս տիկ վիշտ՝ պզտիկ հիւանդութիւն ձա խորդութիւն իրկեր ես, սիրով չեմ քաշած, մանաւանդ թէ ճչգոհացեր եմ քու կամքիդ դէմ. չեմ յիշած քու պատարագվելդ, որ անով ամէն օր իմ աչքիս առջին կրցրցրնես և կրնի շեցրնես քու անտանելի չարչարանք ներդ. մոռցեր եմ ամենևին քու սուրբ արիւնիդ թափվելը որ անարիւն պա տարագովդ իմ աչքիս առջին կրբերես. թէև մեղք մը ըրած չըլլայի, մինակ աս պատարագվելդ տեսնելով կամակար սրտով պէտք էր որ խաչ քաշէլ փնտը ռէի: Հիմա աս քու սուրբ պատա րագդ իմ սիրտս բոլորովին փոխեց: Քու մեռնելդ աս անմահ պատարագիդ մեջ ինծի համար՝ իմ սիրտս կակղցուց. ետպէ ասկէց ետքը չեմ ուզեր հանգըս տութիւն, հեշտութիւն, զբօսանք. հապա մինակ խաչվել կուզեմ, չարչա րանք քաշել կրբաղձամ իմ մեղքերուս համար, ինչպէս որ դու տէր իմ ինծի համար քաշեցիր. քու սիրոդ սեր հա

տուցանեալ կրփապիգիմ, որ քեզն նման խաչակից ըլլալով, անդին ալ քու փառացդ մասնակից ըլլամ. բաց երեսով դքեզ տեսնալով, անանկով յաւիտեան դքեզ սիրելու և գոհանալու արժանի ըլլամ. Ամեն :

Եղիցի անուն գէտառն օրհնեալ Օրհնեալ Եղերոյ 'ի ընդհաց առաբի հոգոյն :

Օրհնութիւն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ աս պատարագիս զօրութեամբը ըլլայ իմ վրայ, օրհնրվի իմ տունս տեղս : Աստուածային օրհնէնքը ըլլայ իմ առուտուրիս վաստրկիս մէջը՝ որ այսօր կերթամ ընելու. բարի յաջողութիւն պարգևէ որչափ որ պէտք է իմ ապրուստիս համար : Ընդհանր հոգւոյն սրբոյ հետս ըլլայ, պահէ իս ան մեղքերէն՝ որ այսօրվան իմ գործքերուս մէջը կրնան հանդիպիլ. պահէ իս բարկութենէ, գէշ խօսքերէ, անիրաւութենէ, զրկողութենէ. չի մեղանչեմ ոչ Աստուծոյ դէմ, և ոչ եղբօրս դէմ. այլ մնաւանդ 'ի փառս Աստուծոյ ընեմ իմ ամենն գործքս և

աշխատանքս՝ որ մարմնոյս շահը մնաս
չմտայ հոգիս շահուն։ Արդարու-
թեամբ վաստակիմ, և ան վաստակա-
ծիս վրայ Աստուածային առատու-
թիւնդ և օրհնութիւնդ ըլլայ որ՝ ան
քիչովը առանց մեղայ իմ տունս տեղս
կարենամ պահել. իմ ամէն գործքը-
վրս ինչպան մեռնելուս օրը Աստուած-
ային առատաւորդ ըլլամ, որ եղբնալ ազգայ
ութեանդ ժառանգ ըլլամ. Ամէն։

Digitized by Google

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ՏԻՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

ՆԱԵՒ

ՄԵԾՈՒ ՊԱՀՈՑ

ԵՐԷՍԼԷՍՈՓ ԿԱՐԳԻ ՊՕՆԱՅՈՍՊԻՆ ։

Ի ՏՕՆԻ

ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ անհուն խորք գթութեան տեառնդ Աստուծոյ. թէչ գթութիւն է, որ այսօր կրցրցընես իմ վրայ. դուք յաւիտենական բանդ Աստուած, աղարիչդ երկնի և երկրի՝ թողուցիր երկինքը, իջար երկրիս վրայ իս փրկելու համար ։ Ո՛վ խորք մարդասիրութեան. բանդ Աստուած ամենակարող գոլով մարդացար, աղայ եղար, իմ եղբէս եկար, իս մերորեալ ոչխարդ գտնալու համար ։ Ո՛վ անբաւ խնայութիւն, որ առջի օրեդ ծնանելու աստենալ ինծի քարոզել սկսար գործ-

Digitized by Google

քով, իս ապաշխարութիւն կանչել սկսար քու օրինակովդ, ցրտութիւն, աղքատութիւն, և ծարաւութիւն քաշելով։ Ամէն հարստութիւն դու ստեղծեր էիր, մէկ տուն մը չիգտանը-վեցաւ քեզ արարչիդ ծնանելու համար։ Ամէն հանդստութիւն դուն տրւեր էիր մարդիկներուն, քեզի մէկ տեղ մը չիտրւին մարդիկ։

Ա՜ ինչ սեր է տեր իմ, որ այսօր կը-ցրցունես իմ վրայ. ես քեզ թողուցեր էի, չէի ճանչնար, չէի պաշտեր. դուն՝ալ ինծմէն քաշվելով անհամոց մէջ դացիր, հովուաց հետ նստար. և անանկ խեղճ ազգայական կերպարանքով իմ կամակորութիւնս, իմ բարբարոսութիւնս ուզեցիր անուշցնել, ճամփայ բերել։ Եւ իրաւի՝ իմ ապաստաժ սիրտս՝ սեռնալով քու-կին խեղճ կերպարանքդ, փոխվեցաւ, ինչաս, քովդ գալու համարձակեցաւ։ Զիշարժեցաւ իմ չարութիւնս ոչ ջրը-հեղեղն պատիժովը, ոչ երկնատե-զաց կրակովը, ոչ Սինայ լեռան վրայ եղած ահեղ տեսիլքովդ. այլ երբոր

այսօր Բեթղեհէմին մարին վայ կընայ-
իմ, երբոր քաշած խեղճութիւնդ կը-
սեռնամ, սիրուս ջիգիմնայր, ըրած
չարութեանս ու ապերախտութեանս
վայ ցաւ կուգայ, սիրուս կրփրզնի։
Սեղայ կրսեմ ոեր իմ մեղայ, եսալ
հովուաց հետ Բեթղեհէմ կուգամ,
քու ազքատութեանդ՝ քու ճգնու-
թեանդ կրհետևիմ. ինծիալ ցոյց
քուկին սահիլքդ, ինծիալ լսեցու քու-
կին ձայնդ, որ հովուաց պէս հրեշտա-
կաց հետ քեզ օրհնեմ երգելով.
Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յեր-
կիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հա-
ճութիւն։

Փառք խոնարհութեանդ քու տէր,
որ աս ազքատութիւնս, աս խոնար-
հութիւնս յանձն առիր վասն սիրոյ
իմոյ։ Փառք մարդասիրութեան քու
տէր. այնչափ իս սիրեցիր՝ որ իս փրր-
կելու համար մուտցար քու երկնային
փառքդ, թողուցիր հայրական ծոցը՝
եկար հողին վայ իս փնտռելու։
Փառք իմաստութեան քու տէր, որ իմ
չարութեանս վայ ո՛չ աստուկութեամբ՝

այլ քաղցրութեամբ յաղթել ուղե-
ցեր։ Այսօր ահա յաղթվեցայ քու-
դթութենէդ տէրիմ Յիսուս վասն իմ
մանկացեալ. սիրաս տրորեցաւ. մեղայ
դոչելով ողբդ կուգամ ով վասն իմ
մարդացեալ։ Տուր ինծի լան շնորհքը
աղքատութեան, որ աշխարհային բա-
ները արտէս դուրս հանեմ։ Տուր ինծի
բարեխօսութեամբ սուրբ Աստուածա-
ծնի մօր քոյ՝ քու խոնարհութենէդ,
քու իմաստութենէդ, որ քու այսօր-
վան տրուած օրինակդ մոտածելով ամենին
բան ձգեմ, քեզի հետևիմ, հաւատքս՝
յոյսս՝ սէրս՝ ամրցնելով զոյժմամբ
անցընեմ օրերս որ ինչպէս՝ տեսայ
քովին մարդեղութիւնդ, անանկալ
քովին Աստուածութիւնդ դէմ յան-
դիման տեսնալու արժանի ըլլամ.
Ամէն։

Ի ՅՕՆԻ

ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Երկրպագեմ հրաշափառ անուանդ
տեսան մեծոյ Յիսուս. անուն՝ որ զբ-
ոութիւն կուտայ մեզ հաւատացող-

Digitized by Google

լոց, կրիրկէ 'ի թշնամեաց, հալածիչ
է գիւաց, կատարիչ ամենայն խնդրուա-
ծոց։ Զի յանուն Յիսուսի Քրիս-
տոսի կրկնեսցի ամենայն ծունր երկ-
նաւորաց և երկրաւորաց և անդարա-
մեռականաց կրսէ Պօղոս առաքեալ։
Եւ դանալ ասիր տէր իմ, թէ Զոր
ինչ խնդրիցէք յանուն Յիսուսի, եղի-
ցի։ Այս սուրբ և ահաւոր անունս միշտ
քերանս առնելով, նոյն անուանը զօ-
րութեամբը կրխնդրեմ 'ի Հօրէն յա-
ւիտենականէ տալ ինծի ան ամէն շը-
նորհքը՝ ինչ որ պէտք է հոգիս փրկե-
լու։ Եւ զոր յիշեմ առ սուրբ անունս Յի-
սուս, փախչին ինծմէն ամէն փորձու-
թիւնք, փախչի ամէն ծուլութիւն.
հոգիս ալիանայ, միտքս լուսաւորվի.
սպասիսարհեմ իմ մեղքերուս վրայ,
թողութիւն քաւութիւն գտնամ։

Ո՛վ Յիսուս, անուն ցանկալի, ա-
նուն հրաշալի, յոյսդ մեղաւորաց,
քարեխօս վասն մեր. զոյց զզօրութիւն
անուանդ քո տէր զօրութեանց. հաշ-
տեցո՛ իս այսօր երկնաւոր Հօրդ հետ.
անցո՛ զքարկութիւն արդարութեան.

Digitized by Google

Աստուծոյ վասն՝ անուան քոյ սրբոյ. քու անունովդ պաշտպանէ իս ահեղ դատաստանէդ Աստուծոյ։ Զեմ աղ ժանի հնորհիդ, բայց անուն քո կոչեցեալ է 'ի վերայ իմ. վասն փառաց անուանդ Յիսուսի ազատէ իս ամենեն հոգևոր ու մարմնաւոր փորձանքներէ այժմ և 'ի ժամու մահուան իմոյ, որ եսալ օրհնեմ զանունդ Յիսուս ընդ սուրբս քո յաւիտեան. Ամէն։

Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Այսօր յայտնեցիր զքեզ տէր իմ այն Թագաւորաց, որ քեզ հեռուստեղէրեկ եկան փնտռելոյ՝ երկրպագելու համար. ծածկեցիր զքեզ մեսիկ երօր հերովդէսն՝ որ քեզ կրփնտռէր մեռցնելու համար։ Երանի ան արդար հոգիներուն՝ որոնց դուն քեզ կրցուցնես. վայ ան մեղաւոր հոգիներուն՝ որոնցմէ դուն քեզ կրծածկես, կրհեռացնես։ Տուր ինծի այսօր ան հնորհքը տէր իմ, ինչպէս որ ան Թագաւորները՝ երկայնմտութեամբ

սատանին՝ վերջապէս տեսան սատրը, անոր առաջնորդութիւնը ընդունելու Ճամբորդութիւնը, եկան գտան զԱստուած մարդացեալ. այն լոյս հաւատոյ՝ այն երկանմոռն աղօթքի եսալ ունենալ. քեզ սպասեմ, պտտով մըտքով քեզի գամ, որ քեզ աս աշխարհիս մէջ հնարքով տեսնամ, անդինալ Աստուածութիւն պայծառ տեսնալու արժանի ըլլամ: Քու աստուդ հնարքաց իսկ ուսաւորէ, առաջնորդ ըլլայ իմ կենսագրերկարատև Ճամբորդութեանս մէջ, ամենն փորձութիւններէ պահէ, երկնային Երուսաղէմը հասցնէ:

Պայիշեմ տեր իմ, երբոր ան իրեք մոգերը մտուրը մտան, ինչպէս արքայութիւն գարձած գտան ան մտուրը, հոն տեսնալով զքեզ Յիսուս մանկացեալ զսուրբ Աստուածածին, և զսուրբ Յոսէփ, ամենն հրեշտակներով: Եւ ինչպէս որ ան իրեք մոգքը քեզ տեսածնին պէս՝ երկրպագութիւն տուին, իրենց գանձը բացին, քեզի ընծայեցին ոսկի, կրնդրուկ, զմուռս. եսալ անոնց հետևելով քեզ միայն երկրպագեմ, քե-

Digitized by Google

զի ընծայեմ ոսկի՝ որ է իմ հաւատքս առաքինութեան գործքերով զարդարեալ, քեզ ընծայեմ կնդրուկ՝ որ է անուշահոտութիւն աղօթից, և զմոռս մեռելութեան ախտից։ Եղբնալ ապահասան հրեշտակիս առաքինութեամբ անոնց պէս ազատիմ սատանայի որոգայթներէն՝ որ նման հերով դէմ կուգէ իմ ձեռքովս՝ իմ մեղքերովս՝ սպանանել զՅիսուս, իս շնորհքս զկեալ։ Ո՛վ ամենաողորմնեալ տուրբ կոյս Աստուածածին, ինչպէս որ այսօր քուկին ներկայութեամբդ արժանացան ան իրեք մոգքը Յիսուսի տեսլեանը, քու բարեխօսութեամբդ իսալ արժանացու Յիսուսը տեսնելու արքայութեան մէջ 'ի յաւիտեան։ Ամէն։

Ի ՏՕՆԻ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ անբաւ խոնարհութիւն Աստուածային, որ ինծի համար յանձն առիր այսօր մեղաւորի կերպարանքով գալ, քու ծառայիդ մաքրութիւն ուզել ջրով մարմին որ առիր

ըլլալով մարդին ազատային՝ մեղաւորի պէս երևցար, և քու ծառայդ տուրբ Յոհաննէս մկրտչէն լուացվիլ ու մկրտուիլ ուզեցիր. ան ծառան որ՝ դուն ուզեցիր, անկէց մկրտվիլ ուզեցիր, անակ զարհուրեցաւ քու խոնարհութենէդ, հրեշտակներնալ երկնքէն նայելով դողացին։ Բայց դու իմ սիրոյս համար յանձն առիր մեղաւոր երևնալ լուացվելենծիալ մեծ պարգև մեծ խորհուրդ տրվիր որ՝ էնալ լուացվելով տուրբ մկրտութեան սկզբանկան մեղքէն Ազատայ լուացվիմ, սրբվիմ, հոգւոյն սրբոյ շնորհաց ընդունակ ըլլամ, աստուծայի ծառայ ըլլալով հրեշտակաց մէջը դասնվիմ։

Սակայն ես ապերախտս փոխանակ աղէկ պահելու աս մեքրութիւնը և փոխանակ շնորհակալ ըլլալու, մեզանչելով կորսնցուցի աւազանին շնորհքը, հոգիս աղաստեցի, նորէն աստուծայի ծառայ եղայ մեղքերովս։ Այսօր մկրտութեան սանդ ըլլալով ովմարդասէր տէր, սանկի մենծ օրը գիտեմ որ՝ նոր շնորհքներ կրաժնես,

Digitized by Google

ամենուն մեղքը կրլուանաս, եկեր ոսոքդ կինամ, թողութիւն կրինգրեմ ամենն մեղքերուս համար։ Պաղաչեմ նորէն լուանաս, և ան մկրտութեամն շնորհքը որ կորընցուցի, նորէն ինծի դարձընես։

Գիտեմ ասէր, որ իս լուանալու համար ինծմէն ջուր արտասուաց կուզես, ահա աս աղօթքս կրնաստուցանեմ. ջուրնիմ ալցուցնք, ջունիմ կատարեալ ցաւ ստոմ, սիրաս քար է կորեր. իմ մեղքերուս շատութիւնը ապառաժի պէս կարծրցեր է, բայց իմ ապաշխարութեան ձանս ալցուցնք թափոզի պէս ընդունէ. ու քու մկրտութիւնդ ջուրդ հետ խառնելով նորէն իս շնորհքով մկրտէ։

Այլ աղօթք։

Մի նայիր իմ արտիս կարծրութեանը տէր իմ Յիսուս, այլ նայէ իմ կամքիս՝ իմ բաղձանացս, որ ասկէց ետքը խրատցընէ կուզեմ ետ կենալ մեղքերէս, և իմ չար սովորութիւններուս նէէման ասորիի պէս բորոտվերեմ

մեղքէրովս , լուսաւորեսցես զոր դանանոս ջրով սպասաշ խարութեան . կրկնեալ կրկնեսիս զէ-թէ անոր սէս եօթն անգամ, հապա ամէն օր . դու Հշմարիտ Եղիսէ՝ լուսաւ ջիշկէ , ով տէր ներողութեան , ով Աստուած գթութեան : Սրբէ իմ ձեռվընէրս՝ որ զանազան մեղքէրով աղտոտեցի , սրբէ իմ աչվընէրս՝ որ մեղքով պղծեցի , սրբէ իմ բերանս՝ որ գէշ խօսքէրով, բարկութիւնով, բամբասանքով վիրաւորեցի . սրբէ իմ անկաՀնէրս՝ որ գէշ խօսքէրու անկաՀ դրի . լուսաւորեսցես՝ որ չարի վազեցի աղէկի չվազացի . սրբէ իմ սիրտս իմ միտքս՝ որ աղէկ բան չմտածեցի , չարը բանէրու խեղք տրվի : Ամանկ սրբ-ըվէլով այսօր եասալ աղէկի գառնամ, մնացած կեանքս քեզի ծառայեմ , քու սուրբ պատուիրանքնէրդ պահեմ , և մահուանս առեն Հօր Աստուծոյ սիրելի որդի ըլլալով , իրեն երանական ձայնը լսելու արժանի ըլլամ . Ամէն :

Digitized by Google

Ի ՏՕՆԻ

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՔԻՆ

Ո՛Վ մաքրութեան սիրող Յիսուս, դու որ անարատ մտքդ հետը եկար առաձալը, և Հօր Աստուծոյ ընծայվելով, զմեզ մաքրեցիր և Աստուծոյ ընծայեցիր, զիս որ մաքրութեան կարօտեմ, արքե և ինչ մեղքերս որ ըրեր եմ պզտիկուց ինչվան հիմա, և մեղքերով հոգիս աղտոտերեմ, առ՝ քաւութիւն և թողութիւն։ Եւ ինչպէս որ Սիմէոն ծերունին շատ ազօթքով սպասեցէն եւան արժանի եղաւ քեզ տեսնելու, իր գիրկը առնելու, անոր պէս խնամ արժանի ըրէ ազօթքով ազատանքով սպասել պատրաստուիլ։ քեզ հաւատքով պայծառ տեսնալ և սուրբ և արժանաւոր հաղորդութեանդ իմ պտիս մէջը առնել, շնորհքով զարդարուիլ։ քեզ տեսնալովս սուրբ սատարագիս խորհուրդին մէջ զմայլիլ։

Digitized by Google

Երբոր սասնկ արժանապէս առ-
նեմ սուրբ հաղորդութեան խորհրդ-
ով քեզ Յիսուս, հաւատքիս աչքը
կրբացնէ, դքեզ փրկիչդ պայծառ կը-
տեսնայ, սէրս կրվառի, յոյսս կրհաս-
տատի։ Ամ ատենը իմ հոգիսալ Սի-
մէոնի պէս քեզ կրփաթաթի՝ քեզի կա-
ղաղակէ ըսելով Արդ՝ արձակեա զծա-
ռայս քո։ Յիսայ իմ փրկիչս վասն
իմ մանկացեալ, տեսայ իմ տէրս հա-
յին տեսակաւ խորհրդացեալ, ասկէց
ետքը գանեցայ աշխարհքիս չեմ ուզեր
աշխարհային բաները. ալ չեմ ուզեր
աշխարհիս վրայ կենալու. ասկէց ետ-
քը արձակէ իս մեղքերէն. արժանի
ըրէ բարի մահուամբ քեզի գալու,
քեզի հետ յաւիտեան մնալու ով տէր
իմ, արարիչ իմ, և փրկիչ իմ։

Դու սուրբկոյս Աստուածածին, այս-
օր կատարել տուր իմ խնդիրքս, և ինչ-
պէս որ Սիմէոն ծերունին գիրկը
դու տուիր այսօր զմանկացեալն Յի-
սուս, քուկին բարեխօսութեամբդ
ըրէ որ՝ եսալ արժանապէս առնեմ
զՅիսուս փրկիչն իմ սուրբ հաղորդու-

Digitized by Google

թեան խորհրդով իմ պատիւս մէջը անուն զմայլիմ, ուրիշ բանի չիցանկամ իմ կեանքիս մէջը։ Դուռ որ անկարօտ էիր պրդութեան՝ բոլորովին տուրբ ըլլալով, ուրիշ հատարակ մարդց պէս աղօթքներու օրհնութիւններ կարդալ տուիր. Ես եմ մեղաւոր կարօտ մաքրութեան և պրդութեան, իմ վրայ տպաւորել տուր աղօթքներուն զօրութիւնը՝ որ իմ առջի ըրած մեղքերս Ջնջուին։ Ամէն։ Եւ դարձ արդարութեամբ անցնեմ մնացած իմ կեանքս, եւ դարձ արժանի ըլլամ աղքայութեան մէջ պայծառ երեսաք տեսնելու զՅիսուս ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. Ամէն։

Digitized by Google

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ի ՄԵԾ ՊԱՀՍ

Ա՝ԵՂԱՒՈՐ հոգին երբոր առ Աստուած կրդաւնայ, առաջ Ճանչնալ կրսկիզբի կրմոնած է իր մեղքին գարշութիւնը, ինչ փորձանք՝ ինչ չար բերրաբերեն սատանային փորձութիւնը, և իր հեռանիլը սատանային կամքին. և ինչպէս զրկրվեցաւ Աստուծոյ շնորհքէն իրեն մեղանչելովը։ Երկրորդ՝ կրցաւի կրզջայ որոնց իր ըրած մեղքերուն վրայ։ Երրորդ՝ կերթայ քահանային, կրխոստովանի իր մեղքերը։ Չորրորդ՝ որոնց ապաթք կրնէ Աստուծոյ շնորհքը ինդրելու, որ խոստովանած մեղքերուն թողութիւն տայ։ Հինգերորդ՝ կրպատրաստի իր սրտին մէջը առնելու Յիսուս սուրբ հաղորդութեամբ։

Ա կարգիս վրայ առջի հայրապետաներնալ կարգաւորեցին բոլոր մեծ պաքին կիրակինէրուն աւետարանները և շարականները։ Առջի և երկրորդ կիրակին կամ շաբաթը՝ Ադամայ ու Եւայի փորձութիւնները յիշելով, որ է

պատճառ մեր ամենէն մեղաչը, յորդորվինք անոնց պէս՝ ըրած մեղքերնիս ապաշխարել։ Ագահայ մեղքը մեկ է, բայց ուրիշ մեղքերալ կրնանան, որ մենքալ միշտ ան մեղքերուն մէջ կինանք, հպարտութիւն, որկրամոլութիւն, ծուլութիւն կամ անհոգութիւն Աստուծոյ պատուիրանքը պահելու, և անձնահաճութիւն՝ որ է իր կամքը և ուրիշին կամքը՝ Աստուծոյ կամքէն վեր դնել։ Ցիշենք և Քրիստոսի փորձութիւնը, անով զրանանք փորձութիւններուն դէմ դնել, սատանան քամահրել, և մեղքերէ զգուշանալ։

Երրորդ շաբաթը՝ Անառակ որդին օրինակը կարդալով յորդորվինք անոր պէս մեղայ գոչել, զղջալ։

Չորրորդ շաբաթը՝ Ցնոսեանն օրինակովը համար տալ մեղքերնուս վրայ՝ խոստովանելով քահանային։

Հինգերորդ շաբաթը՝ Քրիստոսի օրինակովը սրտանց ազօթքի հետ ըլլալ, մեղքերնուս համար թողութիւն առնելու, և Աստուծոյ հետ հաշտվելու։

Վեցերորդ շաբաթը՝ Քրիստոսի գալուստը յիշելով, պատրաստվիլ իրեն գալստեան սուրբ խորհրդով

Digitized by Google

հաղորդութեան, պատարագելիս և բարի մահուան։

Հոսալ ահա սա կարգով գրված են բոլոր մեծ պաքին աղօթքներդ տեղին օրվան համար, որ է հոգևոր կրթութիւն Յիսուս առնելու սուրբ հաղորդութեամբ։

Digitized by Google

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրիւոնիան պիսոպոսիան ընդդէմ քրիստոնիան, յիշատակաւ քրիստոնիան Ադամայ և Քրիստոսի։

ՀԱՐԱԿԱՆ

Որ ըստ պահոց քառասնօրեայ փրկիչողին պահելով հաղորդացեալ եկեղեցի, զի մոցէ 'ի յառաքաստ ընդ փեսային յարուցելոյ։ Եկայք հաւատացեալք Քրիստոսի, ցնծութեամբ պահեսցուք, ընդ անմահին մահուամեռանելով մելաց, զի յարութեամբ նորա կենդանասցուք արդարութիւն։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Առաջին օր մեծ պահոց.

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ հարկաւոր սեպեցիր պաք բռնելը որ առջի մարդուն Ադամայ՝ նշան իր հնազանդութեան՝ պաքը ապրապրեցիր

չուտել Գիտութեան ծառէն։ Եղբը երբեմն դունալ աչխարհ եկար, ինձի սապաչխարանք սորվեցընելու համար՝ առ ջի քանդ եղաւ քառասուն օր պաք բռնել, չուտել, անանկով սատանայի փորձութեանը յաղթել։

Տուր ինձիալ տէր իմ այսօր ընորհք, որ աս սուրբ օրինակիդ հետևելով, եսալ որ քառասուն օր պաք բռնել կըսկըսիմ աս օրէս, բարի դիտաւորութեամբ բռնեմ. ու պաքին հետ լեզուսալ բռնեմ. եռ կենամ գէշ խօսքէր հանելէն, անէծք տալէն, բամբասանքներէն, և ուրիշ իմ ամէն մոլութիւնէս ու մեղքերէս դադրիմ։ Տուր մեզ տէր տէր մահու քո նմանիլ մուռելութեամբ մեղաց, զի և կենաց քոց հաղորդիլ արժանասցուք կենդանարար արքայութեանդ։ Ամէն։ Ամէնէն աւելի կաղաչեմ, պահես իս ան մեղքէն՝ որ ըրաւ Ադամ, լսելով ձայնի կնոջ՝ Աստուծոյ կամքը ոտքի տակ առաւ. չըլլայ թէ եսալ ուրիշին կամքին չիդրսլչելու համար՝ Աստուծոյ կամքին դէմ բռնրնեմ, Աստուծոյ պատուիրանքը

Digitized by Google

կոտրեմ, անով Ադամայ պէս դրախտէն քշվիմ դուրս ընիմ։ Այլ քեզի հետ հիմա 'ի պարտէզն աղօթից և պաշխարութեան մնալով զասկին սուրբ շնորհքներովդ զարդարվիմ, երկնային դրախտին արժանի ըլլամ։

ԵՐԵՔՇԱԲԱԹ

Երէցուդ օր մեծ պահոց։

Մարգասէր տէրիմ Յիսուս, ան առջի փորձութեանդ համար որ քաշեցիր, կատարէ այսօր իմ ազաչանքս որ քենէ կրնդրեմ. յիշէ երբոր սատանան քեզ չնչանչալով քովդ եկաւ յանդգնեցաւ քեզի փորձութիւն բերելու Ադամայ պէս, ու անօթիութեանդ համար ըսաւ որ՝ քարերը հաց դարձընես։ Դուն անիկայ սուրբ գրոց խօսքով մեկէն քրշպեցիր, հաց ուտելը հոգալու բան մը չէ ըսցուցիր. մինակ Աստուծոյ բանը հոգալու է ըսիր. անով Ադամայ որկրամոլութեան մեղքը ջնջեցիր։

Կաղաչեմ քաւէս արբես իմ որկրամոլութեան մեղքերս՝ որչափ որ ըրեր

եմ պղտիկուց ինչման հիմա. և սաղ-
վունէ իմ սրտէս հանէս ան աւելորդ
հոգերը իմ ապրուստս վրայ։ Վասն
զի սրտովս մեջովս աւելի հոգ կրաս-
նիմ ապրելուս վրայ՝ քան թէ Աս-
տուծոյ բանէրուն վրայ, և հոգիս հո-
գաչու վրայ։ Ադամայ պէս մէկդի
ձգերեմ ան բաները՝ որ Աստուած տը-
վեր է ինծի, եւեւէ ընկեր եմ ան բա-
նէրուն՝ որ Աստուած տրդիլեր է,
որով դուրս ընկաւ կորսնցուց ձեռքի
եղած դրախտանաղ. եսաղ անոր պէս
խելքս տրվեր եմ անոնց որ տրդիլեր-
ես, որ է աս անցաւոր աշխարհիս
բաները, մոռցեր մէկդի ձգեր եմ ան
գիլի աշխարհին բաները։ Ինհոգ կե-
ցերեմ Աստուծոյ պատուիրանքները
պահելու. աղօթքիս՝ պատարագ տես-
նալուս առեւնալ՝ ասանկ պարսաղ
բաներու տրվերեմ միտքս, մոռածե-
լով ինչ ընեմ որ ապրիմ, ինչ ընեմ որ
տուն պահեմ։ չեմ մոռածած ինչ
ընեմ որ քու կամքդ կատարեմ, քեզ
փառաւանեմ։

Աս աւելորդ հոգերը իմ ապրուս-

Digitized by Google

ոտիս վրայ ինծանէն վերցընես, որկրա-
մոլութեան մեղքէ պահես, ժուժկա-
լութեան հնարքը պարգևես, որ խել-
քըս միտքս տամ բարեգործութիւն
ընելու, և աստուածաշունչ գրոց խօս-
քերը մտածելու։

ՁՈՐԵՍՔԱՐԱԹԻ

ԵՐԵՔԵՐԵՐ օր ՄԵԾ պահոց։

Խոնարհութեան օրինակ տէր իմ
Յիսուս Քրիստոս, որ թող տալիր սա-
տանային քեզ առնելքերել Երուսա-
ղէմ, տաճարին աշտարակին վրայ հա-
նել. հոն ինքնակ սուրբ գրոց խօսքե-
րով յանդգնեցաւ փորձութիւն քե-
զի ելու. տեսնելով որ գուն սուրբ գրոց
խօսքերով իրեն դէմ կրպատերազմիս,
ուզեց հպարտութեան մեղքի մէջ
ձգել, Ադամայ պէս, Աստուած փոր-
ձել, պարապ տեղը հրաշք ընելու սա-
փառաւորվելու համար։ Դուն ինքն
որ խոնարհութեան ճշմարիտ օրինակն
ես՝ նորէն Աստուածային սուրբ գրոց
խօսքերով անոր խօսքերը ջրվեցիր,
ամենի ըրիր. փառասիրութեան մեղ-

Digitized by Google

քը Աստուծոյ՝ որով դրախտէն դուրս ընկաւ՝ ասով քաւեցիր։ Տուր ինծի կաղաչեմ մէկ շնորհք մը խոնարհութեան, որ հպարտութեան և փառասիրութեան մեղքերը իմ պատէս հանեմ. քանի որ սատանան միոքս փորձութիւն ձգէ, սատուածաշունչ գրքին խօսքերը միշտ միոքս բերեմ, բերանս առնում, անով մերժեմ ցրվեմ սատանային բերած պիղծ և հպարտ միոքերը։ Ասալ կաղաչեմ, քու զօրութիւնդ տպաւորես ան խօսքերուն վրայ, որ զուրցածիս պէս սուրբ գրոց խօսքերը, պրտէսալ հալածվի ամենն փորձութեան շոշորդնէրը. Ամէն։

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Զ՝ԷՐՐՈՐԴ ՕՐ ՌԵԴ պահոց։

Աղքատութեան սիրոց տէր իմ Յիսուս, երրորդ փորձութիւնալ քաշեցիր սատանայի ձեռքէն ինծի համար, երբոր քեզ տարաւ բարձր լեռան վրայ, ցոյց աշխարհիս ամենն թագաւորութիւնը ու իրենց փառաւորութիւնը, ու քեզի պարգևելու խօսք

տրաւաւ, թէ որ իրեն երկրպագութիւն
ընէիր։ Ինչպէս որ Ադամայ միտքը ա-
զատութեան ու աստուածանալու
մեղքը ձգելով պղտորեց, անով դրախ-
տէն դուրս հանեց, անանկալ կարծեց
որ քուվին մարդկութիւնդ ալ Աստու-
ծոյ դէմ մեղքի մէջ կրնայ ձգել։ Իսկ
դու տէր, անատենը սատանէլով հա-
լածեցիր. Աստուծոյ պատուոյն դէմ
ան չարին խօսիլնալ չուզեցիր, ըսելով.
Աստուծոյ միայն տալու է երկրպա-
գութիւն. անով Ադամայ մեղքը՝ որ
չարին լսելով Աստուծոյ փառքը իրեն
ուզից առնել, և ազատ ըլլալ, ջնջե-
ցիր, Աստուծոյ փառքը տեղը դրիր։
Ո՛վ տէր իմ, իմ պատէհալ շատ հեզ
կանչունէ սատանան աշխարհիս մեծու-
թիւնը, հարստութիւնը, փառքը,
պատիւը ու ներքսէն բանէրուն քաղ-
ձանք բերել կուտայ. ես չունիմ կա-
րողութիւն ան չարին սատանէլու, իմ
մեղաւոր մարմնոյս համար կրթուլ
նամ։ Դու՛ տէր իմ, ան զօրութիւնը
ինձիալ տուր, որ ան սատանային միտ-
քերը մեկէն վռնտեմ դուրս ձգեմ.

Digitized by Google

մինակ Աստուծոյ մեծութիւնը՝ Աստուծոյ փառքը ուզեմ իմ ամենն գործքիս մէջ. Ամէն։

ՈՒՐԲԱԹ

Հինգերորդ օր մեծ պահոց։

Ո՛վ երկայնամիտ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ Աստուծոյ որդիքները փրկելու հաճար՝ աշխարհ եկար, և ամենն մեկ Աստուծոյ փորձութեանը ու մեղաց հաճար՝ թող տրվիր որ սատանան քեզ Աստուծոյ պէս մարդ կարծելով, ասէափ անգամ փորձեց, բայց դու ամենն մեկ փորձութիւններու վրայ եելար, Աստուծոյ ընկած փորձութիւնները երեսապաշտութեան, որկրամոլութեան, հպարտութեան, ազատութեան, անձնասիրութեան, աս սամենն մեկ մեղքերը քաւեցիր, անոր տուած չար օրինակներուն դէմ՝ աղէկ օրինակներ տալիր. անանկ որ սատանան ամօթ բլալով փախաւ, հալածվեցաւ, հրեշտակները անոր տեղը քովդ եկան քեզ պաշտելու։ Ցաւոր ինծիալ ան ինորհքը՝ որ քեզ նոր Աստուծոյ հե-

Digitized by Google

տեսելով, ամենն փորձուենելուն վասն
ելեալս. խնդրս միտքս, սիրտս մինակ Աս-
տուծոյ ծառայելու տամ, որ սատա-
նան բոլորովին ինծմէն հեռանայ,
հրեշտակներդ քովս գան, ու բարի
միտք էրով օրհնելս անցընեմ. Ամէն։

ՀԱԲԱԹ

Վէրջերորդ օր ՌԺ պահոց։

Գրեած տեր Յիսուս Քրիստոս, ինչ
որ սատանան փորձութիւն բերաւ Ա-
գամայ, ինծիալ միշտ կրբերէ, կուզէ
իս յաւիտենական մահուամբ կորսն-
ցընել, Աստուծոյ պատուիրանքներդ
մոռնալ կուտայ, Աստուած վար գնել
կուտայ. քան զկիրս իմ և քան զհաճոյս
իմ, քան զբարեկամս իմ։ Շատ հեղ
իմ կամքս՝ և բարեկամաց կամքը կա-
տարելու համար՝ Աստուծոյ կամքը
ոտքի տակ առեր եմ, ես ինծի հաւ-
նելով անձնասպասան եղեր եմ Ագա-
մայ պէս, դուրսի զուարճութիւն-
ներու, դուրսի բանէրու խնդրս տը-
ւերեմ, ու իբր թէ ես ինծի տեր ա-
զատ ըլլալ ուզեր եմ Ագամայ պէս։

Digitized by Google

Այս մեղքերս այսօր խոստովանելով քու առջեւդ կը դնեմ. գութ որ Աստուծոյ մեղքերը քաւեցիր, իմ մեղքերսալ քաւէ. տուր ան առաքինութեան շնորհքներդ՝ որ փորձութեանդ մէջ ցոյց տուիր. և ինչ որ աղօթք կրնէիր հօր Աստուծոյ քառասուն օրվան պաքիդ մէջ մնանալանդ առ առջեւ շաբթուն մէջ, իմ անարժան աղօթքներսալ խառնէ, միացիր, և ընծայէ Աստուծոյ, որ արժանի ըլլամ առ շնորհքնեերը ընդունելու. Ամէն :

Digitized by Google

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՒԱՔ

ՄԵԾ ԳԼԽՈՑ

Կրեռնելիան մահացուցման պատարագաց, յիշատակաւ Գրիգորեանն Եսայի և Քրիստոսի :

ՀԱՒԱԿԱՆ

Ընդ նախահօրն տրտմութեան՝ որ վասն երկեցն 'ի դրախտէն կենաց, ընկալցուք և մեք զտրտմութիւն ապաշխարութեան. զի յարութեանն Քրիստոսի արժանացուք մտից դրախտին երկեղեցւոյ : Որ յաղթեցեր մերով բնութեամբ 'ի փորձութեան կամակոր օձին, որով եռուր իշխանութիւն որդւոց Ադամայ կոխել զգլուխս չար վիշապին, և ընդ երկնայնոցն երգել զփառս 'ի բարձունս :

ԳԻՐԱԿԻ

Եօթնեբորդ օր մեծ պահոց :

Բարերար տէր իմ Յիսուս Քրիստոս, միանակ սատանան չէ որ Ադամայ պէս իս կրպորձէ, այլ նաև աշխարհ

Digitized by Google

ու մարմին։ Աշխարհիս բանէրը ինծի
աղէկ կերևայ քան աստուածային բա-
նէրը. սիրտս իրեն քաշէ կուտայ, Ա-
ստուծմէ կը հեռացընէ. մարմինսալ
պրստամբ եղած մարքիս չի հնազանդիր,
շատակին չի հեռանիր, ծուռ ճամբիս
նէրտուն մէջ կրմոլորի։ Վասն այն փոր-
ձուելեանց՝ որ ինծի հասնար քաշէ-
ցիր, տուր ինծի շնորհք և կարողու-
թիւն, որ աստանայինալ և աշխարհիս
փորձուելիւններուն յաղթեմ. աշ-
խարհիս ամէն մեծութիւնը փարթա-
մութիւնը ինծի լեղի երևնայ, միայն
հանդերձեալ աշխարհին բանէրը ա-
նուշ գայ, անոնք վատրկելու ետեւէ
իյնամ։ Եւ վասն քառասնօրեայ պա-
հոցդ՝ որով ստորը մարմնոյդ մեղաւոր
մարմնոյդ պէս ճնշել ուզեցիր ինծի հա-
մար, իմին մարմինս է մեղաւոր, իմին
մարմինս է ապստամբ. տուր ինծի
շնորհքմէ՝ որ մարմինսալ փորձուելե-
րէ, մարկ չիդնեմ. պարքով ճգնաւորով
զարեմ, Աստուծոյ պատուիրանաց
հնազանդիցնեմ լով, մեղքէրէ խալը-
սելով, շնորհքով զարդարվելով, երկ-

նային դրախտը մտնալու արժանի լը-
լամ. Ամէն։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹ

Ռ-ՌԷԲՐՈՒԱՐ ԵՐ ՄԵԾ ՊԱՀՈՑ։

Աստուած ողորմութեան, լուր իմ աղաչանացս, և տուր այսօր շնորհք մահացուցանելոյ իմ զգայարանքներս, մնանանդ իմ լսողութիւնս. զի լսելոյ որ ասկէց եղբք դէշ խօսքեր լսելով մտիկ դնեմ. ինչպէս նախասանային Եւա լսելով սատանայի խօսքերուն չկիսա-խաւ, խօսակից եղաւ, պատատիսա-նեց, անով մեղք մնաւ, մեզքէն մահը տիրեց աշխարհիս վրայ՝ պատուղ և պա-տուծ իր մեղացը, որ շուտ մը տեսաս-աչքովը իր սկրեալ անմեղ զաւակին վրայ Աբելի, լալով ողբալով անոր մե-ռելին վրայ։ Այս որոգայթներս մէջ չլլլայ որ՝ եսալ իմ հոգիս ձգեմ սա-տանայի փորձութեանը անկանդ դնե-լով։ Այլ ինչպէս որ դուն սատանայի խօսքերուն մտիկ չդնելով, տուրբ գրոց խօսքերը լերանգ առնելով, հա-յածելիր սատանային փորձուելնէլը՝

և իրեն հրապարակները, եւսալ սուրբ գրոց ու հոգևոր խրատուց և քարոզ-նէքու անկաշտ բանամ։ Անուշ գայ ինձի հոգևոր խօսքերը, լեզի երևնայ աշխարհային խօսքէրը, և աստուա-ծային բանէրուն մոռիկ գնելով իմ անկաշտ սուրբ պահեմ, սիրաս Ա-ստուածային բանէրուն տպաքցնեմ քու շնորհքովդ։ Ամէն։

ԵՐԵՍՓՐԱԲԱԹ

ԻՆՆԷՕՐԴ ՕՐ ՄԷՋ պահոց։

Տէր Աստուած, որ իս ստեղծեցիր մարդ ի պատկեր Աստուածութեանդ քո, և հինգ զգայարանք զարդարե-ցիր. աչք տուիր որ անով ամէն բան տեսնամ, և քեզ փառք տամ, ես ան աչքով մեռանիմ ցի, ինչպէս որ նախա-մայրն Եւա աչքովնայելով արգելեալ պտղոյն վրայ, փորձութեան ու մեղ-քի մէջ ձգեց զինքը ու զիրեն ընկերն-ալ Ադամ։ Դու տէր իմ Եւայի մեղքը քաւելու համար՝ անոր ըրածին դէմ ինայեցար աշխարհիս մեծութեանց ու թագաւորութեանցը վրայ, երբոր

սատանան փորձութիւն քերելու համար քեզ ցրցուց, քեզ մեծցնելու խոստացաւ. այլ ամենեանալ տեսածդ պէս քամահրեցիր. ուստի ինձի շնորհք որ՝ քու սուրբ օրինակիդ հետևելով զապահեմ իմ աչքս, ձեռայիմ ապարատոց վրայ մեղանչելու համար, այլ քեզ փառաւորելու համար, Աստուած իմ և ապարդիչ իմ, հոս սուրբ պահելով աչքս, երկինքը քու սուրբ տեսարդ ապրժանի ըլլամ. Ամէն։

ՁՈՐԵՐՈՐԴԱԲԱԹ

Տանէրորդ օր մեծ պահոց։

Ամենակարող Աստուած, որ իմ անդիտանաս համար ճաշակելիք հաստատեցիր, կարողութիւն համառութեան տուիր, որ անով պատուհանէրը վայելեմ, քեզ փառաւորեմ. իսկ ես փորձութեան նախատանքն Եւայի հետևելով որկրամոլութեամբ ճաշակելեացս քեզի գէմ մեղանչեցի։ Դուն իմաստուն բժիշկ, ան որկրամոլութեան մեղքը քաւելու համար՝ քու սուրբ ճաշակելիքդ զրկեցիր ամենն

կերպակուրքներին որ դուն ասեղծեր-
եր, չկերար, ժուժկալութիւն սար-
վեցուցիր : Վասն քո սուրբ ալրեանց
պահոցդ՝ տուր այսօր ինծի քաւու-
թիւն թողութիւն իմ ամենն որկրա-
մոլութեան մեղքերուս, ինչ որ պրդ-
տիկուց ինչվան հիմա ըրեր եմ, և տուր
շնորհք ժուժկալութեան, որ ասկէց
ետքը քու սուրբ օրինակիդ հետևե-
լով զգաստ եմ ճաշակելիքս, պատուի-
բանիքն դուրս չելլամ : Եւ տես մեծ
պարքը Ջերմեռանդութեամբ բռնե-
լով Ճգնութեամբ կատարելով քեզի
հաճանելով ինչ մեքով որ դրեր է սուրբ
եկեղեցին, ընդունիմ ան ամենն շը-
նորհքները Իբրև բարի քրիստոնեայ,
հարատարտ որդի եկեղեցւոյ :

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Մեծ պասանցդ օր մեծ պահոց :

Տէր իմ Ցիսուս, վասն քո սուրբ
առանձնանալդ անապատի մէջ ամ-
մէն աշխարհային բաներէն՝ տուր ին-
ծիալ առանձնանալ աշխարհային
զբաղմունքներէն՝ աշխարհային գործ-

Digitized by Google

քերկ։ Ուրիշ զգայութեանց հետ
սուրբ պահեմ և զզգայութիւն հոտա-
ռութեանս, զբլայ որ նախամօրն Եւայի
հետեմիմ, որ պտղոյն տեսիլքէն հո-
տէն՝ համառութենէն խաբեալ Ա-
ստուծոյ դրած պատուիրանքը մոռ-
ցաւ, անմահութեան կեանքը կորսընչ-
ցուց, մահկանացու կեանքը վաստա-
կեցաւ. իրեն և իր զաւկընէրուն վրայ
տեսնելով մահը, լաց ու ողբ բերաւ.
զբլայ որ՝ եռալ ասանկ զգայարանք-
ներովս խաբվիմ, հոգիս մեռցընեմ։
Այլ զատվելով ու հեռընալով աշ-
խարհային գործքերէ՝ չիմեղանչեմ
ոչ տեսութեամբ, ոչ հոտառու-
թեամբ, և ոչ համառութեամբ. մի-
այն զԱստուած պաշտելով իմ ամենէն
գործքերուս մէջ որ կընեմ զգայա-
րանքներովս, զԱստուած փառաւո-
րեմ, եղանալ արժանի ըլլամ արքայու-
թեան մէջ դէմ յանդիման հրեշտա-
կաց հետ զԱստուած փառաբանելու
՝ի յաւիտեան. Ամէն։

Digitized by Google

ՈՒՐԲԱԹ

Երկոպասանէրորդ օր մեծ պահոց։

Կաղաչեմ ամենեքեան աւելի սէր իմ լեզուս պահեսք մեղանչելեն, զի՝ որ՝ ինչպէս նախամայրն Եւա լեզուով յորդորելով զԱդամ, արգելեալ պտուղը կերցուց, մեղքի մէջ ձգեց, անով մահ տարածեց աշխարհիս վրայ, եսալ ուրիշը մեղքի մէջ չձգեմ, պատիժ չքաշեմ, այլ բարեգործութիւն ընելու պատճառ ըլլամ։ Զի՝ որ՝ պարապ խօսքերու լեզուս բանեցնեմ, բարկանալով գէշ խօսքեր կամ անէծք բերնէս հանեմ, գիմացիներս մեղք խօթեմ, բամբասելով ուրիշին անունը կոտրեմ։ Այլ միշտ բարի խօսքերու բանեցնեմ լեզուս, քեզ օրհնելու, քեզ փառաւորելու։

ՀԱՐԱԹ

Երէքասանէրորդ օր մեծ պահոց։

Հոգիդ սուրբ, աղբիւրշնորհաց, վասն արգեանց պահոց Յիսուսի տեառն

խմոյ, ոչ՝ զի ինձի այսօր շնորհք մեռուս-
ցանելոյ զսպելոյ չէ թէ մինակիմ հինգ
դուրսի զգայարանքներս, այլ նաև իմ
ներսի կիրքերս, իմ հպարտութիւնս,
անձնասիրութիւնս, փափկասիրու-
թիւնս, բարկութիւնս, ծուլութիւնս,
և ուրիշ ամենի իմ չար մոլութիւններս
բռնեմ, շոկեմ։ Մեծութեան փարա-
թամութեան չիցանկամ, ինչպէս որ
Ադամ և Եւա ցանկանալով ասուուս-
ծանալ, դրախտէնալ զրկվեցան, մահ
քերին իրենցալ ու իրենց զաւակնե-
րուն։ Այլ Քրիստոսի տեսան խոյ
խանարհութեան հետևելով, միայն
Աստուծոյ կամքը կատարելու ցան-
կամ, միտքալ սուրբ պահեմ, մեղաց
առիթներէն զգուշանամ։ Կաղաչեմ
նաև քեզ ով մարգացեալ Աստուած
իմ Ցիսուս, վասն անհուն սիրոյդ՝ որ
իս փրկելու հանար մարդ եղար, ան-
չափ աշխատեցար, ես երկրորդ շաբ-
թուս մէջ ինչ երկրպագութիւններ
ըրիր աղօթելովդ, անոնք իմ աղօթք-
ներուս հետ խառնես, որ իմ աղօթքս
ալ զօրութիւն առնելով, ես շաբ-

Digitized by Google

թուս մէջ ինչ շնորհքներ որ խնդրե-
ցի, արժանի ըլլամ առնելու, և ջ-
տակ խղճմտանքի համոզում երթալով
հոգեալ մարմնալ Աստուծոյ նուի-
րեմ. Ամէն։

Digitized by Google

ԵՐՐՈՐԴ ՀԱՌԱՔ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրեռոնիան զղջման և ապաշխարութեան 'ի դէմս Անառաքելոյն:

ՀԱՐԱԿԱՆ

Ընդ անառակին որդւոյ գոչէմք առ Հայրդ գթած. մեղաք յերկինս և առաջի քո. քաւիչ յանցանաց. Եկ ընդառաջ սիրով, գրկեա համբուրիւ, մաքրեա զմեզ 'ի մեղաց մերոց:

ԿԻՐԱԿԻ

Զուրէփսաանէրորդ օր մեծ պահոց:

Պարծած Հայր երկնաւոր, այսօր մոռածելով կիմանամ որ՝ պատճառ իմ մեղքէ չիդառնալուս աս է որ՝ ես իս զղջման մէջ չեմ պահեր, այլ մարմնաւոր ուրախութեան կրվազեմ, և իբր

Digitized by Google

թէ առջի մեղքերուս թողութիւն ա-
ռած՝ անանկ սիրտս հանգիստ նստիլ
կուզեմ։ Այս կը զարմանէ որ՝ ոչ ատառա-
ծային երկիւղ ունիմ, և ոչ ատառա-
ծային սէր. անկիւց կուգայ ինծի ան-
հոգութիւն առջի մեղքերս լալու,
անհոգութենէ կուգայ որ՝ փոխձու-
թիւններուն չեմ կրնար վայ ելլալ,
նորէ նոր մեղքի մէջ կիյնամ։

Բայց այսօրվան անառակ որդիին
օրինակովը իմ սիրտս շարժեցար. յի-
շեցի իմ առջի լրած մեղքերս, թէ
քանի՞ ապերախտութիւն լրի երկնա-
ւոր Հօրդ դէմ ան մեղքերովս. քանի՞
հարստութիւն շնորհաց ունէի՝ մինչէս
անմոռ ցրուեցի. մկրտութեան և ու-
րիշ խորհրդոց շնորհքները, որ դուն
Հայր երկնաւոր ինծի պարգևեր էիր՝
կորսնցուցի, ապականեցի։ Բայց ինչ
պէս որ անառակ որդին միտքը բացվե-
ցաւ՝ մինչ իրեն եկաւ զղջում ընել՝ մեղայ
ըսել՝ առաջադրեց, ան լոյսը շնորհաց
կապաչեմ իմ մտքիս մէջը ծագէ այսօր,
եւ ալ անոր պէս տեսնամ մեղայ դարը
շուտ թիւնը։ Խնամամ իմ խեղճու-

թիւնս անառակ որդիին պէս՝ որ երկնաւոր Հօրս առունը ձգեցի, խոզերուն հետ նստիլ և ուտել ուզեցի. քուկին հոգևորբարիքներդ. ինծի ծանր եկան։ Հոգևոր Ճանփան երթալ, հոգևոր խօսքեր լսել, քու սուրբ պատուիրանքներդ պահել՝ անհամ երևեցաւ ինծի։ Անոր տեղը ընդունայն աշխարհիս ղուարճութիւնը, որ պիտոր անցնին երթան, իս չեն կրնար կշտացնել, մեղաւոր մարդկանց հետ խոզերուն նման նստիլ ելլալ ուզեցի։ Ա՛ս դարշութիւնը աղէկութեան տեղ գրեր եմ, անանկ կերթամ։ մեռնելու օրս վրայ չիհասած՝ այսօր լուսաւորէ իս քու Հնորհքովդ որ արթննամ, ասկից ետքը գանիմ, մեղքերէս ետ կենամ։

ԵՐԿՈՒՐՀԱԲԱԹԻ

ՀՆԳԷՊՏԱՆԵՐՈՒԴ ՕՐ ՄԵԾ պահոց։

Թէպէտ շատ է իմ մեղքիս ծանրութիւնը, թէպէտ անարժան եմ քու Հնորհացդ՝ տէր իմ, սակայն անհուն

Digitized by Google

է՝ չիհասանիր.քու ողորմութիդ։ Խըն-
դրեմ կաղաչեմ՝ պարգևէ ինծի այսօր
ան լոյսը շնորհաց՝ որ անառակ որդի
ին պէս՝ չէ թէ մինակ մեղքէրուս դար-
շութիւնը իմանամ, այլ նաև հոգևոր
ճամփուն աղէկութիւնը իմանալով
միտքս բացվի, եւ այլ ըսեմ.Քանի վարձ
կանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք ։
և ես սատ սովամահ կորնչիմ։ Պայծառ
տեսնամ ո՛րչափ աղէկ է անմեղութիւն
ճամփան, ո՛րչափ աղէկ է քու սուրբ
պատուիրանքներդ պահելով քեզի
ծառայել՝ քան թէ սատանայի ։ ո՛ր-
չափ աղէկ է աշխարհային ցանկու-
թիւններէ հեռու կենալ, իսկ ճանաչքս
մաքուր պահել, քու շնորհքովդ հա-
ղըստանալ, ինչպէս որ սուրբ արդար
մարդիկները կրնեն ։ Այս իմանալով
այսօր, ասկից ետքը քուկին պատուի-
րանքներդ ինծի թեթև երևնայ, մե-
զաց ճամփան գէշ երևնայ, հոգե-
ւոր ճամփան աղէկ անուշ երևնայ ։
հոգևոր խօսք լսելը՝ կարդալը՝ ինծի
զուարճալի երևնայ ։ Կարենամ մտա-
ծական ընել ինչպէս որ ըրաւ անա-

ռամ որդին, և պայծառ մոգք Ճանչ-
նամ իմ խեղՃ մեղաւոր կացութիւնս.
և քու ծառաներուդ հոգևոր ազէկ
կացութիւնը՝ հարստութիւնը՝ հոգևոր
բարիքներդ որ հիմա շնորհքով կը-
վայելեն, եռքը արքայութեան մէջ ալ
որ վայելեն։

ԵՐԵՍՈՒՆԹԻ

Վէրստանէրդ օր ՌԺ պահոց։

Որ անապառդ ես ողորմութեամբ
հայր բարեգութիւն, տուր ազատեմ այս-
օր ինծի ան շնորհքը, որ չէ թէ մի-
նակ Ճանչնամ մեղքերուս գաղտնու-
թիւնը՝ և սուրբ պատուիրանքներուդ
հոգևոր ազէկութիւնը, հապա նաև
գործքով բնեչու առաջադրեմ. անա-
ռամ որդին պէս ելայ լսեմ. Ցարու-
ցեալ գնացէց առ հայր իմ, և ասացէց
Մեղայ։ Առաջադրեմ զգաստ ընե-
լու, մեղայ գոչելու. առաջադրեմ
քահանային ոտքը երթալու՝ որ է քու
փոխանորդդ. մեղքերս մէկիկ մէկիկ
խոստովանիմ անոր առջին, և ցաւե-

լով խոստովանիմ, առաջադրելով մեռնիլ քան թէ մեղանչել անհուն բարութեանդ դէմ։

ԶՈՐԵՔՐԵՐԱԹԻ

Եօթնեւտասներորդ օր մեծ պահոց։

Յաւազնեալ արտով խոնարհեալ մեղքով կուգամ այսօր Հայր ամենողորմ, ոտքդ կընիմ, մեղայ գոչեմ անառակ որդիին պէս։ Մեղայ յերկինս և առաջի քո Հայր սուրբ, վասն զի քու հայրութիւնդ ուրացայ, քու պատուիրանքներդ ոտքիս տակ առի։ Մեղայ յերկինս և առաջի քո Որդի միածին, վասն զի քու ըրած մարդասիրութիւնդ չծանչցայ, նորէն քեզ խաչ հանեւ ուզեցի իմ մեղքերովս։ Մեղայ յերկինս և առաջի քո Հոգի սուրբ, վասն զի քու սուրբ խորհուրդներդ պղծեցի. քու բարի շնչումներդ քամահրեցի, քանի տեղ չիսկեցի։ Իմ մեղքերս շատ են քան զաւազ, ծանր են քան զքար, վասն զի քեզ միայնոյ մեղայ, և գիտութեամբ

մեղայ, և չարաչար մեղայ։ Զատրանք աշխարհիս խաբեցին իս. իմ մարմինս իս մոլորցուց, սատանան իս որոգայթ ներս մէջ ձգեց. այսօր կրիստոսավանիմ գայնցանս իմ, Թողութիւն կը խնդրեմ իմ ըրած անօրէնութեանս վրայ, նորէն կրդասնամ իմ հօրս աբարձիդ քովը։

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Ո-ՆԱՓԱՆԷՐԴԴ օր ՌԵԹ պահոց։

Հայր գթութեանց և Աստուած ողորմութեան, երբոր կը լսես աս իմ մեղայ գոչելս, իմ զղջման ձայնս, գութալ վերէն երկինքէն մի դարձներ քու երեսդ, մի յիշեր իմ անօրէնութիւնս. այլ յիշելով որ քու կին զաւակդ եմ սուրբ մկրտութեամբ, խնայարէ, լսէ իմ ձայնս, երբոր ընդ առաջ ինծի հետ հաշտվելու՝ ըսելով. Այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։ Ինչպէս որ ըսաւ անառակ որդիին հայրը։ Մի դարձեր իմ տգեղեղի կերպարանքէս, որ մեղքերով հոգիս աղտոտեցի, խոզերու հաւասար եղայ.

հապա փոխել տուր, նորէն հագցնել տուր ինձի առջի պատմուճանը սուրբ աւազանին մկրտութեան որ՝ կորսընցուցի։ Ան կոչեկը՝ որ է ապիրութեան շնորհքը՝ ինձի պարգևէ, որ ասկէց ետքը քու սուրբ պատուիրանքներուդ ճամփան երթամ, հին օձը սատանան իմ ոտքս չխոցէ, իս չմոլորցնէ. այն մատանին՝ որ է յարատևութեան շնորհք հոգւոյն արքայ, կապանք բարեգործութեան մէջ մնալու՝ ինձի պարգևէ, որ անմեղութեան և արդարութեան շնորհքով փայլիմ։ Խափրատալ որ յուսահատութեան մէջ ընկած էի, յոյս առնէ, քաջալերի, սանկից ետքը միայն քու կամքդ կատարէ։

ՈՒՐԲԱԹ

Ինն Հոգեգալստեան օր մեծ պահոց։

Ո՛վ Հայր յաւիտենական, զոր յաւիտենից պատրաստեցիր ինձի հաճար եղն պարարակ, որ է Յիսուս միածին զիներալ 'ի վերայ խաչին, և 'ի խորհուրդ պատարագին։ Երբեմն աս

իմ ինգրած շնորհքներով իս կրպարը-
դարես, շնորհէ ինձի արժանաւորաս-
պէս Հաշակերլով վայելելն ելն պա-
ղարակ, որ ինձի համար կրնորթըվի
սուրբ սեղանոյն վրայ։ Ամենկ արդ-
ժանաւորապէս առնելէս ետու՝ խընդ-
րեմ ուրիշ մէկ շնորհքմնալ տաս ինձի,
որ է շնորհ արտասուաց։ յիշելովենչ
մեծ բարերարութիւն ըրեր ինձի պէս
մեղաւորին, քարացեալ սիրտս կա-
կրընայ, փղձկի, միշտ յիշելով ըրած
մեղքերս լամ։ Ինչպէս որ Դաւիթ
մարգարէն ունէր աս շնորհքը որ կը-
սէր։ Լուացի զամենայն գիշեր զան-
հիծս իմ, և զանկողինս իմ արտասուք
թացի։ Ինչպէս որ Պետրոս առաքե-
լոյն վրայ մեյմը նայելով Յիսուս միա-
ծին՝ տրվաւ աս շնորհքը, որ միշտ յի-
շելով իրեն մեղքը կուլար, կրպաղչոր-
կէր իր խոցված սիրտը Յիսուսի սիրոյն
վրայ։ Իմ սիրտս ալ անանկ խոցէ սեր
իմ, որ լամ, ինչու գթած Հօրդ սիրտը
ավերեցի, շնորհաց փաթթամութիւնը
կորսնցուցի, սուրբ պատուիրանքներդ
կոխեցի։ Անանկ լալով սիրտս պաղչոր-

ցընեմ, աստուածային սէրը աւելցը-
նեմ. ան լացով իմ ցաւիս արմատը ը-
ուընտնայ. մէյմնալ չիդառնայ ինծի մե-
ղաց հիւանդութիւնը, նորանց չնչ-
նամ մեղքերուս մէջ, այլ միայն քեզի
ծառայեմ մնացեալ կեանքիս մէջ։

ՀԱՐԱԾ

Քանէրորդ օր մեծ պահոց։

Աղաչեմ Հայր ամենակարող. երբ-
որ աս ընորհքները կընես, քուկին
արդարութիւնդ դէմ կելլայ՝ անառակ
որդիին մեծ երգօրը պէս, մէկիկ մէկիկ
մեղքերս դատաստանին մէջ բերելով
իմ անարժանութիւնս կրցրցընէ, քու
որդիութեանդ ժառանգութենէ կու-
զէ իս զրկել. անատեղը քուկին բաց-
արձակ կարողութեամբդ՝ հայրական
սիրովդ մէկ դի թող արդարութիւնդ.
անոր տեղը գթութիւնդ ձեռքդ առ,
ինչպէս ըրաս անառակ որդիին հայ-
ը, մի յիշեր իմ մեղքերս։ Մի մատներ
'ի դատաստան ընդ ծառայի քում, զի
ոչ արդարանայ առաջի քո ամենայն
կենդանի։ Այլ յիշէ քու առջի ըրած

Digitized by Google

ողորմութիւններդ, ողորմելով հնարէ ինձի վերի խնդրած հնարքներս զատ՝ նաև հնարք ճգնութեան, որ եղբը չէ թէ միանակ ըրած մեղքերուս վրայ լամ, հապա իմ մարմին ճնշեմ, ըրած մեղքերուս ապաշխարանքը ապատիժը հոս քաշեմ, ան դին չքաշեմ, ինչպէս որ ամէն քու սիրելի ծառաներուդ հոս քաշել տրվիր որ՝ ան դին արքայութիւնը վայելեն։ Տուր ինծիալ աս հնարքը՝ որ դժար չերևնայ ճգնութիւն քաշելը, ապաշխարելը. թէ որ դուն ալ խաչ խրկես իմ վրայ, համբերութեամբ սիրով քաշեմ, ապանակով նորէն որդիութեանդ ժառանգութեան արժանի ըլլամ։

Կաղաչեմ նաև Հայր սուրբ, աս շաբթուս մէջ ինչ ճգնութիւն, արթնութիւն, ծնրադրութիւն, ծոմապահութիւն, և աղօթքներ որ ըրաւ քու միածին սիրելի Որդիդ, ինծի համար ըրաւ. ընկալ անոնքալ իմ դիտցէն նուէր պատարագ ընդունելի, և իմ անարժան աղօթքներուս հետ մէկ տեղ խառնէ ինչ որ աս շաբթը վանս

մէջ եսալ ըրի, անանկով հաճոյ ըլլայ քեզի իմ աղօթքներսալ։ Մեղքերուս թողութիւն տաս, և մեզաց այսոփիժն ալ հոս քաշէլ տաս, որ անդին արքայութեան մէջ սուրբ տեսութեանդ արժանի ըլլամ. Ամէն։

Digitized by Google

ՉՈՐՐՈՐԴ ՀԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կը բնութիւն խոսքովանութեան յիշատակ-
նաւ Յնոդէսին։

ՀԱՐԱԿԱՆ

Որ տիրականս առ 'ի քէն կարդեալ
անտես բնութեան մերոյ, իմաստու-
թեամբ զալարտիս եթող քոյոց ալար-
տասանաց. թող և զմեր դանցանս
ողորմութեամբդ քո Քրիստոս։

ԿԻՐԱԿԻ

Քսանեմի օր մեծ պահոց։

Ովիր քաջ և բարի տէր իմ Յի-
սուս, գոր որիբրև մեկ հոգ տանող վար-
պետ մը առակներովիս ուղեցիր խրա-
տել, անանկով այսօրվան աւետարա-
նիդ խօսքովը ինծի յիշեցուցիր որ՝
համար պիտոր ուզես իմ ամենէն ըրած-
նէրուս վրայ, ըսելով, Յոր զհամար

Digitized by Google

ոնտեսութեան քո։ Ահա, քանի որ աս համար տալը կարիչեմ, բոլոր մարմինս գող կելլայ. ես իս քննելովկը գտնամ որ՝ ծանր մեղքեր շատ գործեր եմ, իսկ պզտիկ մեղքեր անհատնում ըրեր եմ, բարեգործութեանս մէջնալ չարութիւն խառներ եմ. հապա քու ամենատես աչդ ինչէր պիտոր գտնայ։

Բայց ինչպէս որ ան ոնտեսը իմաստուն փրթաւ ասով որ՝ իր մարդիկներուն քովէրնին երթալով տէֆթէրը բանալ տալով ջնջեց, ուզածը գրել տրվաւ, առաջուցմէ իր բանը շտկեց, կաղաչեմ տուր ինծի այսօր ասանկ մէկ լոյս մը որ՝ իմ ամէն ըրած մեղքերս պզտիկուցմէ՝ միտքս բերելով, քահանայիս մօտը երթալով խոշտանգիս տէֆթէրը բանամ, մէկիկ մէկիկ զղջմամբ խոստովանելով, ոնտեսին պէս տէֆթէրէն ջնջեմ մեղքերս, մանաւանդ հպարտութեան մեղքերս, թէ ծածուկ և թէ յայտնի, թէ մարմնաւոր բանի մէջ և թէ հոգևոր բանի մէջ։

Digitized by Google

Վասն զի ծածուկ սրտիս մէջը շատ հեղ հպարտութիւն ունեցերեմ՝ ես ինծի հաւնելով, կամ անանկ բան ը-նելով որ ուրիշէն գովվիմ. երբոր ըն-կերքս գովեր է՝ չեմ ուզած չեմ հաւ-նած, նեբսէս վար զարկեր եմ. յայտ-նի հպարտութիւնալ բրեր եմ բերնով պարծենալով, ուրիշները քամահրե-լով, ծաղը ընելով։ Վայ ինծի. ես որ ամէն քամահրանքի արժանի եմ, ես որ ինծմէն բան մը չունիմ, բայց եթէ մեղք ու պակասութիւն, անուն վաս-տրկիլ՝ մեծ մարդ երևնալ ուզեր եմ. ցանկացեր եմ որ ամէն տեղ զուրցվիմ ճանչցվիմ. ասանկ հպարտութեամբա իբր թէ գող եմ եղեր ան փառքին՝ ան մեծութեան որ քեզ միայնոյ Աստու-ծոյ կրպատշաճի. վասն զի ամէն աղէ-կութիւն, ամէն տուրք բարիք քենէ են ով Հայր լուսոյ։ Ա՛ս չար հպարտութիւնը սրտիս մէջը տընկած ու-նենալով՝ ուրիշ ամէն մեղքի մէջալ ընկեր եմ, ինչ որ ինքնահաւանութիւ-նը կրբերէ. կամքիս դէմ եղած բանէ-րուն վրայ սրդոցլել, ինծմէն մենծէ-

ղուս լիրք պատասխան տալ՝ կամա-
պարտութիւն, կամակորութիւն ընել,
իմ կամքս վար չիձգելով. անկէց շատ
մեղաց պատճառ տուվեր եմ ուրիշնե-
ղու, ես իս խրատելուն և շինելուն
տեղը՝ նայեր եմ որ ուրիշը խրատեմ։

Եւ ամենէն ցաւալին սա է որ՝ իմ
չար հպարտութիւնս հոգևոր բանէրու
մէջալ խոթեր եմ, աղօթք պատարագ
տեսնալը, խոստովանութիւնս, ողոր-
մութիւն տալս, կեղծաւորութեամբ
ըրեր եմ, որ ուրիշները ինծի հոգևոր
է ըսեն, կամ թէ չընեմ նէ՝ չընլայ
թէ իս վար զարնեն, ամենը սասնկ
մտքերով ընելով հոգևոր գործքերս
ալ աւրեր եմ քու առջիդ տէր իմ, ես
անարգ և ոչինչ որդս։

Երբոր սոնք մէկիկ մէկիկ դատա-
սանին օրը յիշես ըսելով, Ցո՛ւր զհա-
մար անտեսութեան քո հպարտու-
թեան գործքերուդ վրայ՝ որ ըրիր
խոնարհութեան գէմ, ես ան տես-
նը ինչ պատասխան պիտոր տամ։
Բայց Ներսէս Աստուած գթութեան,
տեսնելով այսօր՝ որ ես ինծմէն առ

Digitized by Google

մեղքերս կրխոստովանիմ, քահանային ըսելով՝ քեզի կըսեմ, կայիշեմ, կրզըլ-ջամ, գու մի յիշեր ան սոսկալի օրը, մի տար երեսիս, այլ բոլորովին ջնջէ տէֆթէրէն, թողութիւն տուր մեղ-քերուս։

ԵՐԿՈՒՐԱԲԱԹԻ

Քսանեբիւրդ օր մեծ պահոց։

Ելայս Հնմարիտ տէր իմ Յիսուս, մեկ չփոթութեան խաւար մը մոքիս վրայ ձգեր է սատանան՝ որ կրպղտորվիմ, չեմ կրնար միտքս բերել իմ մեղքերս, և ոչ միտքս պահել. անով շատ մեղք կրմոռնամ, կամ թէ չեմ կրնար պա-րագանէրով զուրցել, կամ կրտարա-կուսիմ որ՝ ալէկ չեմ հասկրցրեր քա-հանային, անկէ ցխոստովանանքը ծանր բան կերևնայ ինծի, հոգևորէ պա-ղիլ կուդայ։ Բայց գու տէր իմ, ինչ չնորհք տրվեր Դաւիթ մարգարէին, որ քու առջեդ միշտ զղջմամբ կրյիշէր, կրխոստովանէր իր մեղքերը՝ չէր ձան-ձրանար, և ինչ չնորհք որ կրտես ու-րիշ մարգարէին բերնովը՝ թէ գուն ա-

ուաջ ըսէ՝ քուկին ըրած անօրէնութիւնդ, որ եսալ չնչեմ, ան չնորհքը խրկէ հիմա ինծի՝ աս մուրթը և շփոթութիւնը փարատի ինծմէ։

Անով՝ որչափ որ նախանձու մեղքեր ըրեր եմ պզտիկուց ինչվան հիմա, այս օր խոնարհութեամբ ու զղջմամբ խոստովանիմ քահանային՝ քու փոխանորդիդ։ Որչափ որ ընկերոջս բարեւոյն վրայ նախանձեր եմ, աչք անկեր եմ իրեն հարստութեանը՝ յաջողութեանը, անոր մենծնալը ա-նուանի ըլլալը չեմ կրցեր քաշել. թէ որ անոր յաջողութիւն մը եղեր է՝ ցաւեր եմ, թէ որ ձախորդութիւն կամ փորձանք մը եկեր է՝ ախորժեր-եմ, ուրախացեր եմ։ Երբոր անիկայ մեծցուցեր գովեր են՝ տրտմեր եմ։ Երբոր վար զարկեր են՝ չեմ հաւնած՝ որ-տէս ուրախացեր եմ, մանաւանդ թէ ձեռքի տակէն անանկ ըրեր եմ որ՝ վար զարնեն, կամ չիհաւնին ընկերոջս։

Ասանկ վարվեր եմ պզտիկուց ինչ-վան հիմա. վասն զի աս ախտը նա-խանձու՝ ինծի բնականի պէս եղեր

է, և նախանձէն. ինչ մեղքեր

ԵՐԿՐՈՐԴ ԹԻ

Քսանեերորդ. օր, մեծ պահոց :

Աստվածորդ կուրացելոց Քրիստոս Աստուած, մեկ ուշացմունք մը կրքերէ աստուանան խաստովանութեանս վրայ : Ի՞նչ շահ կերպայ աս խաստովանանքէն կրսկ միտքս, որովհետև նորէնոր ապատոր ինամ ան մեղքերուն մէջ, նորէնոր մեղանչեմ, ալ աւելի գէշ պիտոր ընեմ՝ ողբասպղծութեան մէջ ինկնալով: Բայց աչքս կազաչեմ, փարատէ սատանային կուրութիւնը՝ որ միտքս սեւնայ . արդեօք գիտեմ, ողջ կրնամ մնալ թէ չեմ վազան օրը . լուսաւորի՛ իմանայ միտքս՝ թէ որ հիմակուցմէ սկսիմ ապաշխարել, տարիներէ չեն օգտէր կատարեալ ապաշխարելու , պատուիրէնքս քաւելու , չար սովորութիւններս բարի սովորութիւն դարձնելու՝ զապելով իմ կիրքերս :

Ամանկ լուսաւորվելով օրհնվելիմ, այսօրվընէ խաստովանիմ ինչ որ բարկութեան մեղքեր ըրեր եմ, վասն զի պզտիկուցմէ վերը կամքիս դէմ բան մը

Digitized by Google

եղածին պէս՝ պրդողեր եմ, ուրիշնե-
րուն հանդարտութիւնը աւրեր եմ,
տունը տանիս-վայ եմ ըրեր. մեղք
խօթեր եմ, կամ պտանց հրդեհաւորով
պիտաս դնելով երկաս ծռելով անով
մեծի պզտիկի սիրտը կտրեր եմ, բեր-
նով կանչվռտելով զուրցելով մեղքի
պատճառ եղեր եմ։

Վայ ինծի, աս իմ բարկութեանս
երկաս տալով ուրիշ ամ աւելի մենծ
մեղքերու մէջ ընկեր եմ, ինչ որ բարո-
կութիւնը կրքերէ. իմ պրոխ հան-
դարտութիւնը աւրելով ազօթքէ պա-
զեր եմ։ Աստուած մոռցեր եմ, դիսա-
ցինս նախատեր եմ, հայհոյեր եմ.
սիրտ ծակելու ծանր խօսքեր զուրցե-
լով, ինչվան պիղծ խօսքեր՝ մարդու չի-
վայլած, թող թէ քրիստոնէի վայլած,
առատապէլ խօսքեր բերնէս հանելով
անանկ յարձակեր եմ, անէծքալ տը-
վեր եմ, պտահա ուզեր եմ որ անոր չա-
ղթը վրայ։ Վայ ինծ, դեռ Աստու-
ծոյ անունը աս պիղծ խօսքերու մէջ
բերանս տուեր եմ բարկութեանէ, երբ
դուսանալ ըրեր եմ Աստուծոյ անունին

վրայ. ըստատնալով որ՝ իրեն չարիք ոչիսորը ընեմ, որոնց մէջէն ցանկացեր եմ անոր փորձանք մը գալու, բերնովս ալ յայտնի ուզեր եմ վրէժխնդրութիւն ընելու, անով լսողներուն գայթակղութիւն տուեր եմ, բարկութիւնս տաքնալով ձեռք վերցուցեր եմ, զարնելուզեր եմ։

Ասանկ ընկերոջս սիրտը աւրելով բաժնուելեր եմ, չեմ նայած որ սիրտը չենեմ, կամ թողութիւն առնեմ. հոգը աւրուած կեցեր եմ, բարև չեմ տուած չեմ խօսեցած, ես իս խաբելով որ՝ արուեստ բան չունիմ։ Դուրսվանց երեւաշտութիւն ըրեր եմ, կեղծաւորութիւնս բարեկամ ձեւանալով, նենգութիւն ասելութիւն, թշնամութիւն, և ոչ ապահեր եմ. բարկութենէս երդեր է ալ որ՝ բամբասելով անունը կոտրեր եմ։

Ասոնք, ոչ ասոր նման հազար կերպ բարկութեան գործքեր ըրեր եմ, հիմա եկեր եմ մեղայ կրսեմ, անօրինեցայ և յանցեցայ. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս, թող իմ բարկութեան մեղքիս, մի յիշեր. այլ ապրեց եղբը

ընչէ տէֆթէրէն, որովհետև ես կարի-
շեմ, ես կրխոստովանիմ Աստուա-
ծուխթեանդ առջին։

ԶՈՐԵՔՀԱՐԱԹԻ

Քանի՞ երբոր օր մեծ պահոց։

Դարձուցիչ մոլորեալց տէր իմ Յի-
սուս, սիրոս քար կտրելորվեր է սա-
տանան. ամենևին զղջում չիգար.
քանի՞ կրկանամ որ ցաւիմ, անչափ
ցաւս կըպակսի. կուզեմ որ լմնը-
նեմ երկամ զղջումէս, պարապ առեն
անցընել մը կուգայ ինծի։ Կաղաչեմ
տէր իմ, դու որ Զաքէոսին սիրտը մեկ
խօսքով զղջումի բերիր, Պետրոս առա-
քեալին վրայ մեկ նայելով մը լացու-
ցիր, տուր ինծի այսօր ապաստաժ սրբ-
ոխս մեկ կակղութիւն մը՝ որ մեղքէ-
ղուս աղտոտութիւնը տեսնալով, զղ-
ջամ, ցաւիմ իմ մեղքերուս վրայ, մա-
նաւանդ իմ ծուլութեանս վրայ, որ
բոլոր առեն պարապ անցուցի, մե-
նակս յանկարծ վրայ որ հասնի՝ ինչ-
պիսոր ընեմ չիմանար։

Դու՞ որ ինծմէն հաճար ուզես, աս-

չափ տարի քեզի կեանք տրվի ըսելով, թէչ ըրիր ամենէն ամիս, ամենէն օր, եւ թէչ պատասխան պիտոր տամ. Եւ որ՝ բոլորովին ծուլացեր եմ, ձգեր եմ հոգւորը, իբր թէ տէր մը, արարիչ մը չունիմ ծառայելու, ինքնագլուխ ինքիր կամքիս գացեր եմ. մէկ օր մը չէ եղած՝ որ քու ծառայութեանդ մէջ անցընեմ. թէ որ քու ծառայութիւնդ ալ ըրեր եմ, ուրիշ դիտաւորութիւն ներ խառներ եմ, Եւ ինծի ծառայեր եմ, Եւ իս ուզեր եմ։

Այս ծուլութիւնը պատճառ եղեր է որ՝ աղօթքներդալ շատ հեղ ձգեր եմ, կամ թէ ակամայ ըրեր եմ, արտորալով, քերնէ թափուք, լիրտասալով, աս դիս ան դին նայելով, խելքս ուրիշ տեղեր տարտղնելով. սանակ եղեր է պատարագ տեսնալալ։ Կիրակի օրերը՝ որ ամ աւելի ալեղեր քեզի ծառայելու, Եւ մանաւանդ ան օրը ամ աւելի ծուլութիւն ըրեր եմ, պարապ անցուցեր եմ, ակամայ պատարագ մը տեսեր եմ. քարոզ կամ հոգւոր խրատ ըսելու, հոգւոր գիրք մը

Digitized by Google

կարդալու՝ վախեր եմ, մանաւանդ թէ կիսակի օրէրը սէլ տաւէլի մեղք ը-ներ էմ։ Գործք ողորմութեան կընայի ընել, հիւանդներու՝ վշտացեալներու՝ բանտին մէջ եղողներու՝ կընայի տես երթալ, մխիթարել, չեմ ըրած, ան-հոգ եմ եղեր. կարօտ եղողներու ձեռքէս եկած ծառայութիւնը չեմ ըրած. մանաւանդ ազքատի ձեռքէս եկած ազատութիւնը չեմ տրված, քշակերով քամահրելով մը եռ դատ-ճուցեր եմ։

Ի՞նչ գործքիմէջ դրեր էս, ան գործ-քէրտալ չեմ ըրած, առեղծս պարտաւ անցուցեր եմ ծուլութեամբ. անկէց խաք խօրաթայ եղեր է մենծերուս հետ, և ինչ որ կրհետեւի պարտաւ կե-նալէն՝ ան մեղքերուն մէջնալ ընկե-լեմ, դատապարտութիւն ընել, ու-ղիշը ծաղր ընել, բամբասել, անցաւ-ուն ունայն զուարճութեան կատակեր-գութեան եռանէ կինալ։ Հապա որ հա-մար ուզէս իմ քանքարս բանեցնելու վայրք, ես ինչ պատասխան ալիտոր տամ. շատ աղէկութիւններ կընայի

ընեւ ընկերներուս և հաստատակի՝ չբրի, մինակ սա զանցառութեան մեղքը իս կը վախցնեմ. չբլայ որ քանքարաթաղոյց ծառայի պէս դատապարտուիմ։

Բայց այսօր տէր իմ, ես կը խոստովանիմ, ես ինծմէն կը հանեմ ամենայն իմ անօրէնութիւնս. դուն մի յիշեր, այլ ինչէ տէրիներէն ոմն աղքատ ողորմութեան տէր իմ Ցիսուս. ան՝ որ հնարք որ մնացած կեանքս պատսպարանցնեմ, այլ արիութեամբ բարեգործութեան հետ ըլլամ։

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Քսանեւհինգերորդ օր մեծ պահոց։

Բժշկութիւն և զղջութիւն հոգւոց տէր իմ Ցիսուս, մեծ վախի մէջ եմ, արդեօք թողութիւն կրլլայ իմ ծանր մեղքերուս. սա վախէն մէկ շփոթութիւն և յուսահատութիւն մը կրբերէ սատանան. անկէց մէկ պատիլ մը կուգայ խոստովանանքէն, և մէկ անհանգստութիւն մը։ Դուն տէր, կարող ամենայնի, նայէ երկնքէն վասն ողորմելով. թող մի տար որ քու մոլորեալ

ոչխարդ կորսրվի. այլ քու սուրբ ա-
ռեանդ համար տուր ինծի այսօր մէկ
յոյս մը՝ որ ան յուսով խոստովանիմ
իմ մեղքերս, մանաւանդ ագահու-
թեան մեղքերս, որ չափէն աւելի ապ-
րուստիս վրայ հոգ տարեր եմ, հո-
գւոր գործքս երկրորդական եմ ըներ,
մարմնաւոր շահը առջի գործքի տեղ
դրեր եմ։ Ագահութեամբ իմ սիրտս
աշխարհիս փարթամութեան եմ տը-
վեր, մենծութեան և զեղխութեան
սեր ձգեր եմ. փառաւոր երևնալ ցան-
կացեր եմ. շահած ըստակիս վրայ
սիրտս փակուցեր եմ, չեմ կրցեր հար-
կաւոր բանէրու խարճել, կամ բարի
բաներու. ըստակը պահելու սեր մը
ձգեր եմ ագահութեամբ, իբր թէ
պաշտեր եմ։

Առուտուրի մէջ ալ անիրաւութիւն
ըներ եմ, կերպ կերպ ճամփաներով
ինծի եմ քաշեր, խաբելով, գողու-
թիւն և զրկում ընելով եղբօրս, շատ
աւելի գնով ծախելով, խաղդախու-
թիւն ընելով, գէշը ալէկի տեղ՝ պա-
կասը լրմանի տեղ՝ տալով։ Աստանկով

Digitized by Google

իբր թէ կռապաշտ եղեր եմ Պօղոս ա-
ռաքեալին ըսածին պէս արծաթը
պաշտելով, հոգիս մատնելով։ Վայ
ինծի, եղեր է որ՝ սատանէ խարդախ առ-
ուտուրի մէջալ սուտ երդվընցեր եմ
քու սուրբ անունիդ վրայ. երբոր բան
մը առեր եմ ծախեր եմ՝ աւելի գին
զուրցեր եմ, ես ինծի անցուցեր եմ,
ուրիշին պարտքը չեմ վճարած։

Ա՛խ, որ մէկը յիշեմ, որ մէկը զուր-
ցեմ, սակայն ասչափ զուրցելով ըն-
դունէ տէր իմ խոստովանութիւնս,
թողութիւն տուր, տէ՛ր Յիսուս Քրիստ,
ու ինորհք տուր, որ Զաքէոսին պէս
ըսեմ. թէ զոք զրկեցի, հատուցից չո-
ր քէքիին։

ՈՒՐԲԱԹ

Քսանեվեցերորդ օր մեծ պահոց։

Բարեգու

առ Ջիդ լալով իմ անօրէնութիւնս, մանաւանդ ինչ որ ոսկրատմրութեան մեղքէր ըրեր եմ։ Դու՝ ամէն հազար բարիք սահեցեր ես որ՝ չափով ուսեալով, անոնց կերպ կերպ համը առնեմ. քեզ ապարիջդ յիշեմ, ու շնորհակալ ըլլալով օրհնեմ. սոնկը պիտոր հարցնես գաստասանին օրը ըսելով, Տէր զհամար անուսութեան քո։ Վայ ինձ մեղաւորիս, ես ինչ պատասխան պիտոր տամ, որ որջաի համով բան կերեր եմ, ամենևին ապարիջդ չեմ յիշած, փառք չեմ տրված, անբանի պէս իմ ախորժակս նայեր եմ որկրատմրութեամբ. վերջին վախճան իմ համատութիւնս դնելով անանկ կերեր եմ, անալ չափէն աւելի։ Եղեր է որ՝ ողջութեանսալ դէմ բան գտեր եմ, միանակ իմ ախորժակս հեշտացընելու համար ուսելով, ողջութիւնս աւրեր եմ։ Անկշտութիւն ըրեր եմ, անգամ կերեր եմ, չափէն աւելի ալ խմեր եմ, անկից մեղք մտեր եմ, ես իս մեղքի առիթնէրու մէջ ձգեր եմ։ Ա սոնկը կրմամրատամ, ու ինծի վայ կու-

Digitized by Google

տասամ. ուրը լսամ, ուրը խոստովանիմ։ Բայց դու տէր ողորմութեան՝ ասչասի խոստովանելով՝ իմ ասմէն որ կրսամ։ Թեան ըրած մեղքերս ջնջէ այսօր տէր Աստուածս, ապրէ, և զքեզ ընդունելով Թողութիւն պարգևէ։

ՀԱՐԱԲԱ

Քանանէոնիներուդ օր մեծ պահոց։

Սրբութեան պիրոյ Աստուած իմ Յիսուս, խոստովանելու բերանս չի բացուիր, ամենայն մի կրբերէ ինծի սատանան. դու տէր, ինծի մեկ ապրութիւն մը տուր, որ մեղքը ընելէն ամէն նամ, չէ թէ խոստովանելէն. դու որ չիխոստովանածներասալ գիտես, իմ ամմէն մեղքերս տեսեր ես, բայց այսօր բերանս որ՝ ինչ մեղք ըրեր եմ մոռացուցուով քեզի գէմ, խոնարհութեամբ խոստովանիմ տէր իմ Յիսուս։

Ի՞նչ որ մոքովս գործեր եմ անկարգ բաներ մտածելով. ինչ որ աչքներովս մեղանչեր եմ գէշ նայելով նաև հոգևոր և սուրբ տեղերուս մէջ, ինչ որ բերնովս անկարգ առասպել խոսքե-

ղով, ցոփաբանութեամբ խօրաթե-
ռեմ աշխարհասէրներու հետ, կամ
ծիծաղերես մանիկ գրեր եմ անոնց խօ-
ռաթանէրուն, մանաւանդ պզտիկնե-
ռու մէջալ խօրաթեղով գէշ օրինակ
ու գայթակղութիւն տուեր եմ։ Ա-
նանկներուն հետ համարձակ վարվե-
ռեմ, շատ ծիծաղեր եմ, որոնց հետ
վարվելս մեղքի պատճառ կրլլար. չեմ
փախած անանկ մարդէն՝ անանկ տե-
ղէն՝ ուսկից որ ինծի մեղաց առիթ
կրլլար, այլ մանաւանդ կամքովս յայտ-
նի մեղքի առիթներու մէջ ես իս ձը-
դեր եմ. իմ մարմինս՝ որ Հոգւոյն սրբոյ
տաճար պիտոր ըլլար, անկարգու-
թեամբս պղծելով քեզ իրայ տաճար
եմ ըրեր։ Ինչ որալ ատոնց նման մեղ-
քեր գործեր եմ պզտիկուց ինչվան հի-
մա, մտքով, աչքով, բերնով, ձեռքով,
հինգ զգայութեամբ և բոլոր մար-
մնովս, հիմա եկեր եմ առջիդ զղջա-
ցեալ սրտովս կրխոստովանիմ։

Դու տեր իմ Յիսուս, իմ ապրեցուն-
ված վեբքերս արբէ, իմ հոտած բոլոր
տութիւնս բժշկէ, ինչպէս որ ան մե-

պատուոր կինը մինակ ոտքդ ընկալով, արցունք թափելով, դուն իմացար անոր պատանց խորունկ խոստովանիլը, ու բերնով քիզուրցած՝ իր ամենն մեղքը թողուցիր։ Այսօրալիմ ասչափ խոստովանելով՝ ինչ մեղք որ ալ մոռցեր եմ, կամ չեմ ճանչցեր, ամենուն մեկէն թողութիւն տուր, ըսելով սուրբ բերնովդ. Թողեալ լեցին քեզ մեղք քո բազում։ Ու փոխանակ աս օխտը մահացու մեղքերուս՝ որ ես գործեցի, դու տեր օխտը առաքինութիւն պարգևէ ինծի այսօր. Խոնարհութիւն, Եղբայրսիրութիւն, Հեզութիւն, Արիութիւն, Աղքատասիրութիւն, Ժուժկալութիւն, և Սրբութիւն հոգւոյ և մարմնոյ։

Աստուած իմ, որ կրբանաս ականջդ զքնացեալ մեղաւորաց, կաղաչեմ աս խոստովանանքս որ աս շաբթվանս մէջ ըրի, տնտեսին հետևելով տէր Թէրա հիմնակուցմէ շուկել ուզեցի, անանկ ընդունէ աս խոստովանանքս իբր Թէ մահուան առեանը ըրած ըլլայի. Թէ որ ան առեանը հիւանդութեանս

համար չկրնամ ընել, հիմակվանը ընդունէ, ու պահէ իս որ մէյմնալ չկամ զանչեմ։ Եւ քուկին առ շարթվանս ուրբ ծոմապահութեանդ մէջ ինչ փառաբանութիւն, ինչ ճգնութիւն, ինչ աղօթք որ ըրիր առ Հայրն երկնաւոր տէր իմ Յիսուս, յիշէ, և իմ խոստովանութեանս ու զղջմանս հետ խառնելով Հօրն երկնաւորի ընծայէ. վասն զի ինծի համար ըրիր անոնք, ինծի մաքրութիւն, փրկութիւն հոգւոյս և մարմնոյս՝ անոնք ամէնորս ըլլան յաւուր դատաստանի։

Digitized by Google

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրեսուրեան Աղջիկ յիշատակաց Դապարին։

ՀԱՐԱԿԱՆ

Որ պատուիրան Ճշմարտութեան աւանդիցեր եկեղեցւոյ քոյ Քրիստոս, անսահման Ժամանակաց աղօթել միշտ առ Աստուած հոգւով և մտօք։ Դատաւորս արդար, որ հաստատեցեր 'ի մեզ դատող ընութեան զմիտս մեր, չնորհեա սմա դատել զանձինս իրաւամբք և արդարութեամբ, խնայեա 'ի մեզ տէր ողորմութեամբ։

ԿԻՐԱԿԻ

Քսանեւութերորդ օր մեծ պահոց։

Դ ԱՑԱՒՈՐ արդարութեան Քրիստոս, որ արդարութեանդ հետ միանդամայն ողորմած ես և գթած. զի որպէս գթած հայրդ՝ այսօրվան աւե-

Digitized by Google

տարանին խօսքովը կրտրվեցրնես ինչ ընեմ որ ազդաբ դատաստանէդ խալը-սիմ, ողորմութիւնդ գտնեմ։ Այս ճամբ վասն սորվեցուցիր՝ որ միւնակ աղօթքն է. ինչ որ ես չեմ կրնար ընել, աղօթ-քով կրնամ առնել. քանի որ ստոտա-նան փորձութիւն բերէ, աշխարհ և մարմին հոգւոյս դէմ ելլան, դուն սորվեցուցիր որ՝ աղօթքն է մէկ հատիկ դէղ։ Աղօթքով քեզ աղաղակեմ, քեզ բողոքեմ, անչափ որ՝ իմ անարժանու-թեանս ջնայիս, այլ թէր թէ ճանձ-ռանալէն ինծի ողորմիս, ինչ շնորհք որ պէտք է ինծի տաս։

Հիմա ես աս ճամփան քեռնէ սոր-վելով, համարձակութիւն առնելով, կրմնդրեմ ամէն բանէն առաջ՝ որ շնորհք աղօթելու տաս ինծի. և մաս-նաւորապէս այսօր պարգևես ինծի Առջի ստիճան աղօթից, որ է սէրը աղօթելու։ Սիրով յօժարութեամբ նստիմ աղօթքի, քանի որ պէտք ըլլայ. վասն զի աղօթքը ինծի ծանր բան մը կերևցնէ ստատանան. քանի հեղ որ նստիմ աղօթելու, ճանձրութիւն քուն

կրքերէն։ Խնդրեմ ոչ իմ, մի՛ զրկեր իս
աս շնորհքէն, վասն զի գու սորվեցու-
ցիր՝ առանց ձանձրանալոյ խնդրել և
առնել։

ԵՐԿՈՒՐԱԲԱՆԻ

Քսանեւչորրորդ օր մեծ պահոց։

Օրհնեալ գովեալ բոլոյ անհուն
ողորմութիւնդ տէր իմ Յիսուս, որ ինչ-
ծի սիրտ տալու հասնար՝ աւետարանին
խօսքերովը քեզ նմանցուցիր անիրաւ
դատաւորի մը, որպէս զի ես չիգադ-
րիմ աղօթելու։ Եթէ հիմա չեմ գադ-
րիր, կաղաղակեմ. Դատ արա ինձ տէր
յոսոխէ խնդիր. որ է սատանան։ Թէ
որ գու դատաւորդ չելլաս չիհալածես
անոր փորձութիւնները, անոր ըրած
անիրաւութիւնները, ես չեմ կրնար
խաչըսել, վասն զի միշտ կրպրտորի իմ
հոգիս կորնչիլնելու։ Գիտեմ որ իմ
աղաղակելս՝ իմ աղօթելս՝ անարժան
է. վասն զի չիյտեմ աղօթելու կերպը.
Ջերմեռանդութիւն չիկայ աղօթքիս
մէջը. արտէս չիբրիսար, այլ չորս ցամաք,
քարէն թանգուք, համ չեմ առներ ա-

Digitized by Google

ղոլթքէս։ Անկէց սատանան յուսահատութիւն կրքերէ, միտքս ձգելով որ՝ սատանկ աղօթք Աստուծոյ չանցնիր, պարապ է. ասչափ տարի է՝ խնդիրքս չի կատարվիր, ինչ շահ ունի աղօթելը։ Կաղաչեմ տէր իմ, տուր ինծի այսօր Երկրորդ ասոիՀան աղօթից, որչափ սիրտս խիստ ըլլայ, ան ատեննալ քու շնորհքով եւ չիկենամ։ իմ անարժանութեան առջեւ ունենալով և ոչ քու գատաւորիդ չիլսելը, միշտ անդադար աղօթք ընեմ պատանց ու խոնարհութեամբ, ինչպէս որ գուն տրվեցուցիր խօսքով, նաև օրինակովդ, գիշերը ինչվան լոյս աղօթք ընելով հօրն Աստուծոյ։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Երէանէրորդ օր մեծ պահոց։

Երկայնամիտ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ կերպ կերպ առակներով Համբ փանէրով ինծի փրկութիւն տրվեցուցիր, շատ բան սորվեցնելէն ետև՝ սինտ ետքը իմ փրկրվելս քու վերջագ ձգեցիր. հասկրցնելով որ՝ քանի աշ

խաստիմ, ես իս չեմ կրնար փրկել, ինչ-
վան որ գու տէր ձեռքէս չիբռնես,
չօգնես։ Քուվին օգնութեանդալ
ապժանի ըլլալու համար՝ մի միայն ա-
ղօթք ընելը հասկրցուցիր, անդադար
աղօթելով, այնչափ որ՝ Աստուած
ձանձրացընեմ, միայն թէ ես չի-
ձանձրանամ. ան ատենը Աստուած
իբր թէ կրբռնադատի փրկութեան
շնորհք տալու։

Այսօր ահա ես տէր իմ, ցաւագին
ողոխ անդադար ձայնիս կապաղա-
կեմ. Դատ ապա ինձ տէր յոսոխէ իմ-
մէ. որ է իմ մարմինս։ Ասիկայ մէկ
ոսոխ՝ մէկ թշնամի մընէ, որ իմ ներ-
սի դիս է, իմ հետս է, չեմ կրնար
բաժնելիլ, և միշտ իս կը մոլորցնէ.
քուվին օգնութիւնդ միայն կրնայ իս
ապրեցընել։ Ապրեցո զիս տէր 'ի չար
մարմնոյս յայսմանէ։ Եա որ հիմա ա-
սանկ կաղաղակեմ կաղօթեմ, քիչ մը
կանցնի՝ կրձանձրանամ աղօթքէ, քիչ
մը կանցնի՝ միտքս հազար տեղ կը-
ցրուի, աշխարհիս անցաւորպարապ
բաները իբր խիստ հարկաւոր բաներ

պէս աղօթքի առեն միտքս կուգայ. ինչ ընելու է, ինչ խօսելու է, ինչպէս արուեստս բանեցնելու է, աղօթքի առեն պայծառ միտքս կրքերէ ասատ նան, անով անպտուղ պարապ հանել կուտայ աղօթքս։

Դու տէր, որ վերէն երկնքէն կը տեսնաս իմ ասանկ կերպ աղօթելս, խնայէ, խղճալով ողորմէ, տուր ինծի այսօր Եղրորդ ասոիճան աղօթից, որ աղօթքիս առեն միշտ խելքս վրաս պահեմ, երկրաւոր մտմտուքներդ ձգեմ, երկնաւոր աստուածային բաներդ մտածեմ, կամ գոնէ ջանք ունենամ խելքս վրաս ժողվելու, բարի բաներդ մտմտալու, պարապ մտքերդ դուրս հանելու. ինչպէս որ դու տէր իմ՝ օրինակովդ սորվեցուցիր, որ քաղաքէն և մարդիկներէն հեռընալով, լեռը ելլալով, անանկ աղօթքի հեռ կելլայիր։

Digitized by Google

ՁՈՒՆԵՐՀԱՐԱԳԻ

Երեքշաբթի օր Զ-ի պահոց։

Փառաւորեմ և մեծացուցանեմ զանբաւ գթութիւնդ տէր իմ Յիսուս, որ ինձի այսօր մինչ գանձ տրվիր աղօթքը, և աղօթքով սորվեցուցիր ամէն շնորհքը քեզնէ առնուլ։ Հիմա իմ հոգւոյս խեղճութիւնը առջևդ կը դընեմ, որ շնորհքէ զրկրված ըլլալով քեզնէ հեռընալով, այլի մը դարձեր է խեղճ ողորմելի, նման ան այրին պէս, որ օրինակ բերիր աւետարանին մէջ. հրեշտակներդ ինձմէն երես են դարձուցեր, իմ ոսոխներս սատանաներդ եկեր պատեր պաշարեր են, խաղ կընեն։ Ինձի ճար չկայ ասկէց խալսելու՝ քայց եթէ աղօթելով. այլ սատանան անչափ տիրեր է վրաս՝ որ աղօթքէս պաղեցուցեր է, դրսի աշխարհիս երկրաւոր մեծութիւն՝ հարստութիւնը՝ փառքը՝ իմ աչքիս հարկաւոր կերևայ, աղօթքը՝ և երկնաւոր փառքը ոչինչ մը կերևայ։ Մէկ իշխանի մը հետ տեսնելու, խօսելու,

ուսկից շահ մը չիկայ, ինծի մեծ փառք կըսեպեմ, և չեմ ձանձրանար. իսկ աղօթքով քեզի հետ խօսելեն՝ որ ես թագաւորը թագաւորաց, և ուսկից է իմ ամենն կենդանութիւնս, ոչինչ կըսեպեմ ու կըձանձրանամ։

Հիմա ոտքդ կենիմ, ան այլոն կենողն պէս կաղաղակեմ. Դատ արա՛ ինձ տեր յոտոխէ իմոնէ. որ է աշխարհ. ազատէ իս ասս աշխարհիս խաբէութենէ։ Եւ տուր ինձ տեր այսօր Աղրտրդ ասսի. Ճան աղօթից, որ աղօթքի ասսեն սիրտս գրսի բանէրէն կարդեմ. աշխարհային մեծութիւնը, փարթամութիւնը, բանի տեղ չեսեպեմ, չմնամնամ, այլ մանաւանդ աշխարհիս ունայնութիւնը՝ անցաւորութիւնը՝ պայծառ տեսնամ, յիշելով քու խօսքդ. Զինչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ։ Ես որ ասս խօսքիդ ներքնակ ճամփայ բռներ եմ, այսօր փոխեմ ես խաղաղութիւնը ինձի մենձ գանձ և վաստակ սեպելով, առջի գործքս աղօթքը և հոգևոր գործքը ըլլայ. երկրորդ գործ-

քը՝ աշխարհային գործողութիւնս և մարմնաւոր ապրուստս ըլլայ, անով յաժարութեամբ ու սիրով ընեմ աղօթքս. որով երկնային յաւիտենական մեծութիւնը հայրասութիւնը վաստակիմ, որ է ազգայութիւնը. Ամէն։

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Երեսնեւերորդ օր մեծ պասոց։

Ա. քեզ գիտեմ ով ազգիւր ողորմութեան և արդարութեան, նայէ քու դատաւորական աթոռդ և ողորմէ։ Դու իմ մարմինս և հոգիս մեկ տեղ սահմանելով իբր թէ մեկ քաղաք մը չինեցիր, և անոր դատաւոր դրիր իմ խղճմտանքս՝ որ չիտակ դատաստան ընէ. բայց ես եռանդ եռա մեղքերու մէջ ինկնալով, աս խղճմտանքս բոլորովին կուրցուցի՝ որով չիտեսնար իր խեղճութիւնը. իմ միտքս խստացուցի, չուզեր ամենեին մեղքերդ ես կենալ. սիրտս քարդարձուցի, չուզեր ամենեին զղջում ընել. քանի որ կրկնամամ խղճմտանքս շատեր՝ ամենեին չի լսեր, անիրաւ դատաւորի նմաներ է։

Հիմա եսալ քեզ երկնաւոր դատաւորիդ ոտքը կենամ, կաղաղակեմ. Դատարան ինձ տէր յոտիսէ խնդիր. որ է իմ կուրացեալ խղճմտանքս, չարս սիրոս. մինակ քեզի մնաց իմ փրկութիւնս։ Կուզեմ սանկ քեզի դիմել աղօթքով. անորալ իմ ամենէն օրվան գործքս թող չեն խաբր, սիրոս՝ միտքս՝ քէնէ կըհեռըցնեն, աղօթքէ կրխափանեն։

Կաղաչեմ տէր իմ, անգին արեանդ համար տուր ինծի այսօր Հինգերորդ աստիճան աղօթից, որ ամենէն օրվան գրսի գործքերսալ անանկ ընեմ որ՝ անոնքալ աղօթք ըլլան։ Առտվանց ինչպէս որ կառաջադրեմ իմ ամենէն գործքս 'ի փառս Աստուծոյ ընելու, անանկալ գործքերս ընելու ատենը՝ միշտ Աստուած աչքիս առջեւն ունենալով նոյն առաջադրութեանս հետեւիմ, զԱստուած յիշելով 'ի փառս Աստուծոյ ընեմ, ինչպէս որ սուրբ առաքեալը կրսորվեցրնէ. Թէ ուտիցէք, և Թէ ըմպիցէք, զամենայն ինչ 'ի փառս Աստուծոյ արասջիք։

Անանկով սիրոս՝ խեբքս՝ բոլորովին

գրքի գործքերուն չիտամ, այլ ան գործքերու մէջէն հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ ներգործութիւններ ընելով Աստուծոյ յիշատակը միշտ արտիս մէջը պահեմ, կատարող ըլլամ անով քու հրամանիդ, թէ Յամենայն ժամ աղօթս արարէք։ Որպէս զի երբոր աղօթքի նստիմ, միտքս շուտով Աստուծոյ տանելու կարենամ և ինծի պէտք եղած շնորհքները առնելով փրկութիւան հասնիմ։ Եղբայրս քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, տէր օգնական իմ և փրկիչ իմ։

ՈՒՐԲԱԹ

Երեքշաբաթ օր մեծ պասոյ։

Մարդասէր տէր իմ Յիսուս Քրիստոս, հիմա ողորմութեան աթոռն ես նստած. ցոյց քու ողորմութիւնդ իմ վրայ, իսկ արդարութիւնդ՝ իմ սոխնէրուն վրայ ցոյց, որոնց դէմ կապազակեմ։ Դատ արա և ողորմի։ Այս սոխնէրը՝ ան թշնամիներն են, որ աղօթքը ինծի ծանր բան մը կըլլանին,

Digitized by Google

անանկով իս կուզեն հեռոյցնել աղօթքէ. բայց անանկէնէ մոռիս աչքը, որ աղթենայ սեռնայ քեզ աթոռն շնորհաց նստած: Թէ որ մեծ իշխանի մը առջին երլլամ, դիմանամ որ՝ ինչ որ ուզեմ պիտոր առնեմ, բոլոր օրը սիրով կաղաչեմ, չեմ ուզեր անկէց բաժնվիլ. ինծի ծանր բան մը չերևնար աստենին երկայնութիւնը. հապա քանի աւելի պէտք է որ քեզի սիրով աղաչեմ, որ թագաւոր ես թագաւորաց, և պատրաստ ես ամենին բարիք տալու՝ ինչ որ ուզեմ աղօթքով:

Անոր համար խնդրեմ տուր ինծի այսօր վ. Էցերորդ աստիճան աղօթից, որ աղօթք ընելու ատենը քեզ պայծառ տեսնալով, այն պիտորժը՝ այն անուշութիւնը առնեմ, ինչ պիտորժ որ կառնեն սուրբերը. անոր համար թէպէտ երկրիս վրայ են, բայց իբր թէ երկինքն են՝ անանկ չեն կշտանար աղօթելէն. իմանամ որ աղօթքով ամենակալոյ Աստուծոյդ առջին կելլամ, աղօթքով քեզ պարարջիդ հետ համարձակ կրթօսիմ, գունալ ինծի

Digitized by Google

հետ կրխօսիս երբեմն ընորհք տալով, միտքս լուսաւորելով։

Այ բանիս սատանան նախանձելով թող չիտար. վասն զի ինքը թէպէտ հոգեղէն դերասանց ստեղծուած է, բայց ցիկնարԱստուծոյ առջեւ երեւնալու խօսաթեան անարգեալ ըլլալով քենէ. իսկ ես հոգեղէն տկար ստեղծուած մը ըլլալով կրնամ ապօթքով իբր որդի ընտանեբար սիրոս բանալ քեզ Հօր երկնաւորին. անոր համար կը հակառակի, խափանել կընայիս։ Բայց ես քուկին ստեղծուածդ եմ ասէր իմ, և արեւամբ քով փրկուած, մի թողուր զիս ան չարին ձեռքը խնալ. այլ որչափ որ անարժան եմ, արժանի ըլլէ զիս այն քաղցրութեան աղօթքի։

ՀԱՐԱԾ

Երեանելորդոյ օր մեծ պահոց։

Զեզեմ տէր իմ ան ընորհքը վերանալոյ մտաց առ Աստուած, որ քուստուրքերուդ պարգեւեր էիր, ինչ զմայլելի կիմանային հաւատքով և սիրով որ

Digitized by Google

կրապիշտակէր զանոնք աղօթքի ատեն։ Որոնց մէջը մէկնալ սուրբն Արսէնն էր, որ արեր մոնալու ատեն դէպ 'ի արևելք աղօթքի կընստէր կրվէրա-նար, ինչման գիշերվան անցնելը չէր իմանար, առաւօվանց արևին ճառա-գայթը աչքին զարնելովը կիմանար, աղօթքէ կելլար։ Որոնց և գլուխ և օ-րինակ գուն եղար տէր իմ Յիսուս, երբոր քու անճառելի մարդկութիւդ բոլորովին Աստուծոյ կրապիշտակվէր, Հանելով զգիշերն 'ի գլուխ յա-ղթան Աստուծոյ։

Հիմա ես անարժանս միջնորդ բրո-նելով զբարեխօսութիւն մը քո և կուսի, և ամենայն սրբոց, կաղաչեմ, տուր ինծի այսօր Եօթներորդ աստի-ճան աղօթից։ Թէ որ աս հնորհքը ինծի տաս, որ միտքս բոլորովին քեզի վերանայ, անատենը միտքս սիրոս ինչ իրեն կրկտրվի երկրաւոր մտմտուք-ներէ, ինչիրեն աղօթքի կրվազէ քեզի դիմելով։ Ա՛խ տէր իմ, կրսիշեմ ան սուրբերուն Ալէլուիան, որ երկինքը քեզի կերգեն, մէկ ալէլուիա մը յա-

վիճակեանն, մեկ աղօթք մը անվախ-
ճան, որ սուրբ Յոհաննէս աւետարա-
նիչը լսեց։ Զունին մեկ բան մը քենէ
խնդրելու, բայց իրենց մեծ փառք և
ուրախութիւն կրսեպէն քեզ օրհնելց
և քեզ փառաւորել. քանի՞ օրհնեն՝
այնչափ օրհնելին կուգայ, և այնչափ
աւելի կուզեն փառաւորել։

Ա՛յն դասք հրեշտակաց, սերովբէից
և քերովբէից, այն դասք առաքելոց և
ամենայն սրբոց, որոնց գլուխ և դա-
սապետ սուրբ Աստուածածինն է, մեկ
ձայն, մեկ բերան, միաբան, սուրբ
սուրբ սուրբ երգելով չեն կշտանար,
յաւիտեան կրզմայլին, ես ողորմելիս
ինչպէս ձանձրանամ։ Թէ որ սուրբէ-
լոր միայն զքեզ փառաւորելու համար
սասանկ չեն դադրիր աղօթելու, ես որ
քու ողորմութեանդ՝ քու ընորհքնե-
րուդ այսչափ կարօտութիւն ունիմ,
ինչպէս աղօթքս կարձեցնել կուզեմ։
Բայց ասոր իմ, աս ամենն բանը կրշրջ-
կրվի, թէ որ քուկին աս շաբթվանս
մէջ ըրած աղօթքներդ ապդիւնքդ հա-
ռաջանքդ, խառնելով իմ անարժան

աղօթքիս հետ, երկնաւոր Հօրդ և հոգւոյն սրբոյ առջին հանելով, այսօր առնես ինծի հասնար աս շնորհքը։ Հոգին սուրբ ինծի սորվեցնէ, իս զօրացնէ, անանկ նատիլ աղօթքի՝ որ բոլորովին միտքս Աստուծոյ վերանայ յափշտակվի, որ է շնորհք շնորհաց։

Digitized by Google

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՒԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրիոնիւն պապրասպոնիեան մահուան, և սուրբ հաղորդութեան՝ յիշատակաց Գալոփեանն Քրիսպոսի :

ՀԱՐԱԿԱՆ

Յոլ համ փառաք հայրենի Քրիստոս ծաղ՝ հա՛ի յերկնից, և յայրուցանեաս զմեռելսն, յայնժամ դասեա՛ ընդաջմէ քումմէ, և կոչեա՛ զմեզ՝ի փառաս քո :

ԿԻՐԱԿԻ

Երէանելի գեղեցիկ օր ՌԺԴ պահոց :

ՀԱՐԱՒՈՐ ահաւոր, որ այսօրվանն սաւառապանով ինձի իմացուցեր քու գալուստդ Թագաւորի պէս, համար ուզելով ինձմէ իմ ամենէն գործոցս վայ : Կաղաչեմ քու սուրբ վերացդ համար ըլլայ՝ հանէ փարատէ

Digitized by Google

ինծմէն մեռքիս թմրութիւնը, որ մէկ անդգայ թմրածի մը պէս ամենեին չեմիշէր քու գալուստդ։ Բայց լուսաւորէ միտքս՝ որ մեռնիլս միտքս բերեմ, խմանամ որ կենանքս լմնայ պիտոր, և քու առջիդ ունիմ երևնալու որ համար տամ. վասն զի քանի որ օրէրս կրկարձրնայ, այնչափալ մեռնիլս կրմտիկնայ։

Ա՛ա թմրութիւնը անչափի սաստիկ է վասա՝ որ թէպէտ աչքովալ կրտեսնամ որ՝ ամենը մէկիկ մէկիկ կրմեռնին կերթան, բայց ինծի անանկ կերեւայ որ՝ ես աւելի շատ պիտոր ապրիմ։ Վա՛յ ինձ, չեմ արթընար, չեմ խմնար, որ վաղվան օրնալ ձեռքս չէ. թէպէտ գու տէր իմ մէկիկ մէկիկ ինծի յիշեցուցիր ըսելով. Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու տէրն ձեր գայ. Ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամն։ Կաղաչեմ տէր իմ, աս թըմրութիւնը որ սատանան ձգեր է վասա, դու փարատէ այսօր և լուսաւորէ, որ միշտ մահս յիշելով պատրաստ կենամ քու գալստեանդ։

ԵՐԿՈՒՐԱԲԱԹ

Երեանեվէրբրդ օր մեծ պահոց։

Դու տէր իմ Յիսուս, առաջ Երուսաղէմ եղող մեղաւորներուն վայ կարդացիր, արթնցնելով որ ապաշխարեն, եւ քեզ թագաւորի մը պէս եկար մտար Երուսաղէմ քովէն քաղաքդ ողջանեցնելով, ինծի հասկցնելով, որ եսալ իմ հոգիս՝ որ քովէն քաղաքդ է՝ արքեմ ապաշխարութիւն. որպէս զի երբոր գաս թագաւորի պէս՝ հոգիս ցնծալով ուրախանալով քեզ ընդունի։ Աղի տէր իմ, այսօր աս խրատովդ հոգիիս վայ մեկ ընորհք մը տպաւորէ, որ մեռնելու յիշատակը պայծառ յիշեմ, մանաւանդ երբոր կրից մէջ կրլլամ։

Երբոր բարկութեան կիրքս կելլայ, ցանկութեան կիրքս կիշխէ, հրապարութեան միտքէր կլսուիրեն, ան ատենը շուտ մը միտքս բերեմ իմ մեռնիլս, անով ինչան ան կիրքերը, իմանայ հոգիս որչափ պարապ բան է արքդոգիլս՝ հնհնալս՝ ինչու ուզածս չըլ-

Digitized by Google

լար ըսելով։ Երբոր մեռածէ որ՝ իրաւ վաղվան օրը կրմնայ արդէօք աշխարհիս վրայ թէ չէ, ան ատենը կրպատի աշխարհասիրութեան միտքերը։ Երբոր պայծառ տեսնայ որ՝ վաղը իր մարմինը ճանչին մէջ մնանալով ամենեն աւել իրմէ փախչին պիտոր, հողին տակը կերթայ, ուր ան ատենը հպարտութիւնը, փառասիրութիւնը, երբոր իրաւ իմանամ որ մեռնելէս ետև մէկինալ պիտոր չմնիշէ, մոռցրիմ երթամ պիտոր։

Այս բանէրուս գէղ է միշտ մահուան յիշատակը, ինչպէս որ դունալ ապրեցիր տեր իմ Եղերոնք պատրաստը, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ։ Կաղաչեմ անանկ էնէ տուր ինծի աս շնորհքը որ՝ երբոր կերքերս շարժին, սատանան իս փորձութեան մէջ ձգէ, շուտ մը չիշեմ մահս, անով զգաստանամ։ Ես իս արթնցնելով մաքրեմ, սրբեմ իմ սիրտս, տեղի և օթեան պատրաստեմ քուկին դալստեանդ, որ զատկական սուրբ խորհրդով հաղորդութեան

գասնստիս իմ սիրոս, շնորհքով Թա-
գաւորես յաւիտեան։ Եսքնալ մա-
հուանս ատենը աստուածային փա-
ռաւոր գալստեանդ արժանի ըլլամ։
Ամէն։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Երեսնեւօթնեւրորդ օր մեծ պահոց։

Իմաստութեան գանձ տէր իմ Յի-
սուս, որ իբրև իմաստուն հովիւ ա-
ռաջնորդեցիր զուրցեցիր քու գալուստդ,
պատրաստութիւն տեսնալ ապստրե
ցիր ըսելով։ Զգոյշ լերուք անձանց,
գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շը-
ւայտութեամբ և արբեցութեամբ, և
հոգովք աշխարհականաց, և յանկար-
ծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն
այն, զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի
վերայ ամենեցուն՝ որ բնակեալ են
ընդ ամենայն երեսս երկրի։ Ակ,
տէր իմ, պատճառ որ մեռնիլս չեմ
յիշեր, արթուն չեմ կենար, ան է որ՝
քու ապստրածիդ դէմ սիրտս ծանրը-
ցուցեր եմ՝ մանաւանդ աշխարհիս հո-
գերով ու մտմտուքներով, իբր թէ

Digitized by Google

միշտ աչխարհիս վրայ պիտոր կենամ՝ անանկ ամմէն օր միտքս դուրսի բանէ-
ռու կուտամ. մահը ինծի հեռու բան մը կերևնայ. չեմ յիշեր քու գալուս
տրդ, անկէց աղօթքէ ալ կրպապղիմ. և թէպէտ դուն ներհակը կապրապրես,
ինծի ջուրի մը ձան կուգայ խօսքերդ։

Ո՞ւր է ան արդար հոգին՝ որ սիրտը աչխարհիս վրայ չիտաքցընելով, իրեն
հոգիին պատրաստութիւնը ամմէն օր տեսնալով՝ ան կեանքէս զզուած՝ բա-
րի մահուան կրցանկար ըսելով. Վայ ինձ, զի ընդ երկար եղև պանդխտու-
թիւն իմ. Ո՛տայր ինձ թեւս, զի թռչիցէի սլանայի յերկինս։ Ի՞նչ պիտոր ըլ-
լայ ինծի տէր իմ. կրվախնամ որ՝ ինչ պէս որ Եռուսաղէմ քաղաքը եկար.
բայց տեսնելով որ պատրաստութիւն չունէր, քեզ Աստուծոյ տեղ էր գրեր,
ինչ որ պէտք է չէր ըրած, լացեր վրան ու անիծեցիր ըսելով. Եթէ գիտէիր
դու գոնէ յաւուրս յայսմիկ զնաղաղութիւն քո, բայց այժմ ծածկեցաւ
յերեսաց քոց. զի եկեսցեն աւուրք 'ի վերայ քո, և ոչ թողուցուն քար 'ի

քարի վերայ յամենայնի 'ի քեզ, փո-
խանակ զի ոչ ծանեար զժամանակ
այցելութեան քո։

Ահա, չբլայ որ իմ վայրալ լաս, իա-
ալ թշնամւոյն, իմ ախոյեց, ու մեզ
քերուս ձեռքը մատնես, որ իս շնորհ-
քէդ զուկեն • ինչ բարիք որ տրվեր էիր
ինծի՝ քակեն կորանցունեն • անանկով
երեսէդ ինամ անարգվածի պէս •
շատ կրվախնամ կրգոզամ աս բանէս։
Այլ դու ողորմութեան Աստուած,
որ գէս ինծի ժամանակ տալով կե-
ռեայ որ իմ ապաշխարութեան կը-
պասես, տուր ինծի որ՝ միշտ աչքիս
առջին ունենամ աս խօսքերուդ մէջ-
տակը, քու գալստեանդ սհատորու-
թիւնը, մեռնելուս մտիկութիւնը։
Անանկով ձգեմ ամմէն աշխարհիս պա-
ղասպ մոմոուքները • միայն հոգիս հո-
գալու հետրլամ։ մեռնելուս ատենն-
ալ քարի պատրաստութիւն տեսնե-
լով սուրբ խորհուրդները առնելու
պժանի ըլլամ։

Digitized by Google

ՉՈՐԵՔՐԱԲԱԹ

Երէքանաչ-Ներսէսեան օր մեծ պահոց։

Փառաւորեալ տէր, որ փառաւք հօր երկնաւորի ունիս գալ աշխարհիս վասն, ու ամէն մարդու ամէնուն առջին ընդհանրական դատաստան ընել անաչառ, ուր որ մէկի մը բարեխօսութիւն չանցնիր, մէկէ մը կաշառք չառնուիր, միայն աղէկ գործք ու դէշ գործք կրնչուի. ինչ գործք Աստուծոյ համար ըրի, և ինչ գործք աշխարհիս համար, մէկին համար կրնայ վարձք առնելու, մէկալին համար պատիժ։

Ես ինչ պիտոր ընեմ ան ատենը, որ իմ աղէկ կարծուած գործքսալ զուտ Աստուծոյ սիրոյն համար չեմ ըրած, ամէնսալ ինծի համար ըրեր եմ. ես կարօտնէրուն չեմ հասեր, հիւանդնէրուն տես չեմ գացեր, բանտարկեալոց միսիթարութիւն չեմ տրված, անօթինէրը չեմ կշտացուցած. վասն զի ինչ որ ըրեր եմ ասոնցմէ՝ զուտ եղայրսիրութեան համար չեմ ըրած. մէյմէկ օտար միտք խօթեր եմ մէջը,

Digitized by Google

որով իս ուզեր եմ, իս մինարուեր եմ, չէ թէ զԱստուած. սանկը որ յայտնի ըլլան դատաստանին օրը՝ ես ինչ ուներմ պատասխան տալու։ Հապա իմ անօրէնութիւններս՝ իմ հոգւոյ և մարմնոյ չարութիւններս երբոր բացվին ամենուն առջին, ես ինչ պիտոր ըսեմ, բայց եթէ յաւիտեան դատապարտելոց մէջը պիտոր ինամ. և թէ որ հիմակուց յիշելով ապչափ կրգոզամ, ան օրը ինչ պիտոր ըլլամ։

Այլ դու ողորմութեան Աստուած, աս ահեղ դատաստանիդ յիշատակը միշտ իմ մտքիս մէջը տպաւորէ, որ ահիւ և գողութեամբ իմ փրկութիւնս հոգամ քու առաքելոյդ ըսածին պէս. և միշտ աղօթքի հետ ըլլամ քու ապրելս պրծիդ պէս։ Յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի ընդիմիք զերծանել յայնմ ամենայնէ որ ընելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ։ Ամենակով հիմա պատասխանութիւն ունենամ զատկրվան առբոր խորհրդով հաղորդութեան արժանապէս զքեզ ընդունելու. ետքն ալ երբոր հո-

գիս բաժնելու կրկայ մարմինէս, արժանի ըլլ որ միտքս զգաստ ըլլալով, պտանց զղջումն ընելով, աստուծոյ փոքանութիւնները դէմ դնելով, անանկով ելլամ առջեւդ, բարի պատրաստութեամբ ընդունիմ քուկին գալուստդ՝ Թագաւոր փառաց. և յաւիտեան մնամ քու երկնային Թագաւորութեանդ մէջ։

ՀԻՆԳՇԱԲԱԹ

Երեսնեւինն երորդ օր հեծ պահոց։

Դատաւորը արդար, որ դատաստանդ լմնցնելէն ետեւ՝ մեղաւորնէրը արդարութեամբ տանջանքը պիտոր խրկես դժոխքին մէջը, ըսելով. Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական։ Սատանանէրնալ անոնց դահիճ պիտոր դնես տանջելու։ Ահա, ինչ տանջանք է մինակ սատանանէրուն քովը նստիլը, և մինակ մեղաւորնէրուն մէջ ընկերութիւն ընելը. թէ որ հոս մինակ մէկ ժամատ կուսալար հոգիի մը հետ չեմ կրնար նստիլ, հապա ուր մնաց դժոխքին մէջը, ուր

Digitized by Google

բիւրք բիւրուց հոգիներ՝ ամենեանալ ժամանակ աւ կառուցարար, վասն զի ամենեքեանալ Աստուածամէ հեռացած, Աստուծոյ թշնամի են եղեր։ Հապա տանջանքներդ՝ որ անգութ գահիճներդ պիտոր տան մեղքերուն կերթիլ, ան կրակին երթալը, ան պոռին խզճմտանքին խայթելը. Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ չիջանի։ Հապա Աստուծոյ սեռութենէն զրկուիլը. որ ուրիշ տանջանքալ չըլլար՝ աս մինակ հերիք տանջանք էր. ան յաւիտենականութիւնը՝ ուակից չըլլար յաւիտեան խաղալու։ Ասոնք երբոր կը մոռանամ, բոլորովին դող կելլամ. վասն զի իմ գործքս իս գժոխքի արժանի կընեն։

Բայց գիւ բարեգութ Աստուած, աս գժոխքին յիշատակը միշտ իմ աչքս մէջը ապաւորէ որ՝ յիշելով ան տանջանքներդ ետ կենամ մեղքերէ, և աւելի մեղքերս ապաշխարեմ։ Կաղաչեմ, հիմակուց իմ միտքս վերնատան պէս պատրաստէ, որ վարի բաներդ թողում, վերի ելլամ մտքով, վերի բա-

նէրը մինակ մնացեմ։ Սիրտս լը զարդարէ ան ամմէն շնորհքներով որ պէտք է, ինչպէս ան զարդարված վերնատունը արժանի եղաւ զատական ընթրեացը ու սուրբ խորհրդոյն, անանկալ իմ սիրտս շնորհքներով զարդարված արժանի ըլլայ գրեթէ ընդունելի զատական սուրբ հաղորդութեան խորհրդով։ Եռքնալ երբոր հոգիս մարմնէս բաժնելի՝ արժանի ընեա պահապան հրեշտակը ինծի ուղեկից իրեն և առաջնորդ, որ աստուանանէ՝ ոչն իս խալսցնէ։

ՈՒՐԲԱԹ

Քառասնէրորդ օր մեծ պահոց։

Պարգևատու բարեաց տէր և Աստուած, արդարութեան դատաստանը սեանալէն եռա՝ իրեանց բարի գործոցը կեցուցի մեկ վարձք մը ալիսոր տաս որ՝ լեզուով չկրնար պատմելի՝ ըսելով. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի։ Ան արքայութիւնը՝ ուր ընկերութիւն է

ամենայն պրբոց, ուր ամենը բարի, ուր ամենը մէկմէկու խիստ սիրելի, մէկմէկէ գերազանց. հապա հրեշտակաց հետ նստիլը՝ որ բոլորովին հոգէղէն գերագոյն ստեղծուած բլլալով մեզի չեն նմանիր, գաս գաս սէրոբէներու քերուբէներու։ Սուրբ Աստուածածնայ փառքը եօթնարփեան լուսով զարդարուած։ Քու մարդկութեանդ փառքը տէր իմ Յիսուս, որ ամենն մէկ վերքէրէդ մէյմէկ լոյս ալիտոր. Ճառագայթէ։ Բայց ամենէն վեր մէկ լոյս փառաց մը ծագեցով ամէն սրբոց վրայ, անանկ քու Աստուածութեանդ փառքը ալիտոր ցոյցնես, որ խելքէ միտքէ գուրս է. հոն տեսնելով ամենասուրբ Երրորդութիւնդ, Հայր, Որդի, և Հոգին սուրբ Աստուած, ամենն բարութիւն ալիտոր տեսնան ու խմանան, ամենն գեղեցկութիւն, զուարճութիւն, խմաստութիւն, և զօրութիւն. և միշտ տեսնելով զմայլին ալիտոր յաւիտեան։

Ահա, երբոր աս սուրբերուն փառքը կարդացեմ, սիրտս վեր կելլայ, կրցան

կամ արքայութիւնը մոռնալու. բայց երբոր իմ մեղքերս կշռիշեմ, յայտնի կրտեսնամ որ՝ դուրս պիտոր մնամ։ Այս մտածելով կէրթիմ կրտոչորվիմ իմ ըրած մեղքերուս վրայ. և թէ որ հիմա ասչափ կէրվիմ, հապա ինչ պիտոր ըլլայ դատաստանին օրը, երբոր տեսնամ որ՝ իրաւ կրբաժնեն իս սուրբերուն մէջէն, կրհեռացնեն Աստուծոյ տեսութենէն։

Այլ ով ողորմութեան Աստուած, դուն որպէս գթած Հայր յիշէ քու միածնիդ քառասուն օրվան պաքը, և այլ ամէնէն չարչարանքները՝ որ իմ փրկութեանս համար քաշեց։ Յիշէ սուրբ Աստուածածնին օխտը խոցը, որ միածին որդւոյն հետ մէկտեղ քաշելով այնչափ կսկիծով ու խոցերով չարչարվեցաւ իմ մեղքերուս համար։ Ասոնց արդիւնքը յիշելով նայէ այսօր վերէն երկնքէն, և աս յիշատակը տարքայութեան՝ միշտ սրտիս մէջը տպաւորէ, որ քանի որ սատեն ունիմ՝ լամ առջի ըրած մեղքերս Դաւիթ մարգարէին պէս, բնաւ չիմանձրանամ ապաշխա-

ռելէն ու բարեգործութիւն ընելէն։ Անանկով քեզի հետ հաշտվիմ, զատկական հաղորդութեան խորհրդով անբաժան մնամ Աստուածութեանդ հետ սա աշխարհիս մէջ, որ մեռնելու օրս դատաստանին մէջ բարեկամի պէս ըլլամ քեզի։ Ան երանական ձայնը, Մուտ յուսախութիւն տեսանն քո։

ՀԱՐԹԹ

Քառասնեմի օր մեծ պահոց։

Քրիստոս Յիսուս, յոյս մեղաւորաց, Ճշմարիտ բարեխօսդ վասն մերոց անի՛ որ քու գալուստդ կրկնեմ, որ դարուն թեանդ դատաստանը, մեղաւորաց տանջանքը, արդարոց փառքը, սիրտս դողալէն բանեցնալ չէմ կրնար ընել։ վասն զի սեռանալով իմ չար գործքերս, իմ ծոյլ կենալս, անհոգ ըլլալս ապաշխարելու և աղօթելու, գիտեմ որ չկրնամ ոչիսոր ժառանգել արքայութիւնը, իսուս ոչիսոր դատապարտի՛ւիմ։ Ի՞նչ ոչիսոր ըլլայ իմ բանս, մտածելով յուսահատած կեցերեմ, հոգիսալ մեռելը է, սիրտս

Digitized by Google

ալ մեռելոց, մեկ բարի բան մը չեմ կրնար ընել։

Դու ով բժիշկ հոգւոց, յարուցիչդ մեռելոց, աս իմ մեռած հոգիս խեղճ ճուռթիւնը լսելով հասիր ինծի, ինչպէս որ հասար այսօր Ղազարու լսելով։ Ղազարոս բարեկամ մեր մեռաւ, այլ երթամ զի զարթուցից զնա։ Ո՛վ տէր, ես թէպէտ քու բարեկամդ չեմ իմ մեղքերուս համար, բայց քու ստեղծուածդ եմ, քու գնծու ծառադ եմ, ես իս մեռուցի, մեղքերու մէջ թաղեցի, չէ թէ չորս օրվան՝ այլ շատ տարվան. հիմա իմ լալագին աղաղակս քեզ հնդ առաջ կբխրկեմ Ղազարոսին քովը պէս գոչելով. Տէր, եկ, և տես. եթէ աստ էիր գիպեալ, ոչ էր մեռեալ հոգի իմ։ Եւ յուսահատած ըլլալով իմ հոգւոյս ողջունելուն վրայ կաղաղակեմ. Տէր, արդ հոտեալ իցէ։ Ե՛կ տէր իմ, տես մեկիկ մեկիկ իմ խոցերս, իմ փտած կիրքերս. լայ իմ հոգւոյս գերեզմանին վրայ, ինչպէս լացիր Ղազարոսին գերեզմանին վրայ։ Տո՛ւր առաջ հաւատք

լսելով. Եթէ հաւատացիս, տեսցիս զփառսն Աստուծոյ։ Որ եսալ լսեմ ասէս. Այո՝ տէր, ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ։ Դու ես մեզաւորաց յարութիւնն և կեանքն, կարող ես մեղքերս քաւել։

Դու կարող ամենայնի, հրամէ իմ քաւարարեալ ապիս լսելով. Ի բաց ա՛ր արքէք զվէմդ։ Վերցրնել տուր սա ապատաւոր քարը խաստարուութեան իմ վայրէս, որ լոյսդ Քրիստոս ծագի խաւարած մտքիս մէջ, ինչպէս որ ծագեցաւ և լուսաւորվեցաւ Ղազարու գերեզմանը։ Սաստիկ ձանով կանչէ իմ մեռած հոգիս. Ղազարէ, արի՛ էկ արտաքս։ Եկիր ո՛վ հոգի, ինչ կեցեր ես մեռեալ մեղաւորներուն մէջ։ Եկիր, դու՛ս եկիր ո՛վ մեռեալ հոգի. ինչո՛ւ լոցար, կեանքէ Թողուցիր, որ եմ էս. գացիր խաւարին ու մահուն քովը, որ է մեղքն ու սատանան։ Ա՛ս կենդանարար ձայնը արարչիդ առնելով իմ մեռած հոգիս՝ կենդանանայ, բայց մեղքերուս չար սովը

րութիւններէրը կրճատեն. վասն զի ստոյգ-
նան անոնցմով վարթեր է իա, չորս
դիս կարեր կապեր է, ուզեմաշ եղլայ՝
չեմ կրնար եղլայ։ Դուռ տէր իմ հրամ-
մէ հրեշտակներու, որ քահանան վա-
րատեն ինծմէն չար ախտերը՝ աս ու-
նակութիւնները՝ ըսելով. Լուծէք
զդա, և թողէք երթալ։

Ամէն, տէր իմ, ասչափ աղաչանք և
կրթութիւններ որ ըրի աս մեծ պա-
քին մէջը, կրթութիւն զգշման, խոս-
տովանութեան, աղօթքի, ու բարի
մահուան պատրաստութեան, ասոնք
պարապ չանցնի։ Ա՛յլ կաղաչեմ որ
քու անբաւ մարգասիրութեամբդ
ընդունելով, իա արժանի ընես աս
զաստիկս մաքրութեամբ ընդունել
քեզ սուրբ հաղորդութեան խորհրդ-
ով. որպէս զի մեկ՝նար յաստուծ
շնորհք մը առնելով յարատեւութիւն,
բոլոր տարին աս կրթութեանս վրայ
մնամ, վաղքս շտկեմ բարեխոսա-
թեամբ մեր քո և կուսի, բարի մա-
հուան, և գալստեանդ ատեն սուրբ
տեսութեանդ արժանի ըլլամ։ Ամէն։

Digitized by Google

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Կրիմեանի առաջնորդութեան յիշատակ
ԽԱ Զարեհեանցի Քրիստոսի։

ԿԻՐԱԿԻ

Ծառայաղարդ։

Ամագանոր թագաւորաց Քրիստոս, քու հոգեւոր թագաւորութեանդ օրինակ մը տալ ուզելով առաջ Երիքով քաղաքը մտար. հոն Զաքէոս մեղաւորը տեսար ժանտաթզենի ծառին վրայ ելած, մէկ ձայն մը տալով վար ինջեցուցիր ան ժանտ ծառէն. զիջումով սիրտը լեցուցիր, սպասխարեց գարձաւ ամէն մեղքէն։ Այսօր տէր իմ, ինծիսալ մէկ ձայն մը տուր, իսալ կանչէ ըսելով, Փութա՛ էջ այսի։

Երբոր իմ մեղաւոր հոգիսալ քու ձայնդ առնէ, ձայն արարչիդ ըլլալով

Digitized by Google

շուտ մը վար կինշնայ ան ժամու ու դարշելի ծառէն՝ որ իր մեղքերով բարձրացած է, կրխոնարհի իր բարձրամիտ հպարտութենէն ու խստասիրտութենէն, սիրտս կրփշձկի, շուտ մը զղջումի կուգայ ըսելով. տէր, ինչ մեղք որ ըրի, հոգիս չնորհքներէն պակեցի, չորեքկին զղջամ, չորեքպատիկ վշտաբեմ լալով, խաչ քաշելով. դունայ դառնաս ըսես ինծի որ, Այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել։ Այսօր քեզի կուգամ, քեզ մեղքերէ կըարբեմ, քու հոգիդ կըփրկեմ։ Եսալ ան ատենը բոլորովին կրփոխվիմ, որտանց կրդառնամ, և արժանի կրլամ ան խօսքը ըսելու. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ, զի և սա որդի Աբրահամու էր։

Ո՛վ տէր իմ Յիսուս, ինծիալ արժանի ըրէ ըսելու, սա հոգիսալ փրկութեան որդի է, սասալ նախասահմանեալ է. մեղքերուն թողութիւն տրվի, արքայութեան որդի ըրի, ան արքայութեան որդի ըրի, ան արքայութեան որդի լեզուով չիպատմիվիր, ուր որ ամենասուրբ Երրորդու-

թիւնդ յաւիտեան փառաւորելու որ ժանի ըլլամ. Ամէն։

Այլ աղօթք։

Ա՜յսօրվան ըրած շնորհքներդ՝ տէր իմ, ինծիսալ պարգևէ որ, երբոր մանկցար ձիթենեաց լեռը, Երուսաղէմ մտնալէն առաջ՝ կապված էշը արձկէլ՝ քու քովդ բերել հրամայեցիր, անով մեսար Երուսաղէմ։ Իմ հոգիսալ աստանան կապեր է մեղքերով թող չիտար քովդ գալու, խոտովանութեամբ զղջմամբ մեղքերս զուրցելու, իրեն ուզած բեռները՝ որ է մեղքը՝ վրաս կրբեռցնէ։ Դու իրրև արարիչ՝ իբրև տէր թագաւոր՝ թող մի տար իս աստանկ օտարներու ձեռք, այլ ինչպէս որ խրկեցիր առաքեալները հրամայելով, Ղուծէք, ածէք ինձ, ինծիսալ խրկէ տէր իմ այսօր քու երկնային շնորհքդ, և հրեշտակներդ, որ աստանային կապէն իս արձկէն, քեզի բերեն ըսելով. Տեառն իւրում պիտոյ է։ Վասն զի քուինդ եմ, դու ես իմ տէրս։

Digitized by Google

Երբոր քու գալուստդ լսեցին, ան պըղտիկ տղոց կապված լեզուներնալ արձակվեցան, քեզ օրհնելու փառաւորելՀ չէին կրշանար. իմ լեզուալ տէր իմ՝ սատանան կապեր է ծուլութեամբ, թող չիտար որ լեզուս արձակեմ, քեզ օրհնեմ։ Թէ որ այսօր ինձիալ գաս տէր իմ՝ շնորհքով, իմ լեզուալ կըբացվի, աղօթելու սիրտս կըշարժի, միտքս վրաս կրլայ, կամքս կըբաղձայ կրօժարի, ՀԷրմնանդուութեամբ ախորժմամբ աղօթքի հետ կրլլամ աղաղակելով։ Ովանենա բարձրբերլոյն, օրհնեալ որ գաստ յանուն տեառն, խաղաղութիւն յերկինս, և փառք 'ի բարձունս։ Եւ թէպէտ սատանան կրջանայ իս խափանելապօթքէն, ինչպէս որ Հրեանները ուզեցին խափանել տղոց բերանը, բայց գուն սատանէ քուվին իշխանութեան, ինչպէս սատանեցիր Հրեից՝ որ քարացեալ սիրտս շարժի քեզ օրհնելու, և փառաւորելու. վասն զի քու գալստեամբդ քարերնալ կըշարժին յօրհնութիւն։

Եարքը մնար սատանալը, ասեսար որ՝

Աստուծոյ տունը Հրէանէրը առուտուրի տուն ըրեր էին, աղօթքին տեղը՝ սաւազակներու տեղ դարձուցեր էին։ Եկէ՛ իմ սիրտս լսես որ՝ ան քու շինած հոգևոր տաճարը՝ որ քու տունդ պիտոր ըլլար, սատանաները մեղքերով իմ չար սովորութիւններովս, իրենց տուն վաճառի ըրեր են, առուտուր կընեն, մէկը չկայ որ՝ գուրս հանէ. այսօր երևցիր մէրմի, ապաշխարութեան շնորհքով անոնց աթոռները սեղանները ցրուէ, գուրս հանէ իմ սրտէս ըսելովս Ցուն իմ տուն աղօթից կոչեսցի։ Ա՛ սիրտս ես սառեցի, որ ես ընակիմ շնորհքով. իմ հօրս տուն և տաճար պիտոր ըլլայ. սա մեղքերը ինչ բան ունին հոս։

Ասանկ իմ սիրտս սրբելով տէր իմ, եկէ՛ այսօր տաճար ըրէ՛ քեզի. նրստէ, թագաւորէ՛ իմ վրայ, քեզի ծառայ ըրէ՛, որ ուրիշը չիշխէ. եասալ մնացած իմ կեանքիս մէջ քեզ միայն պաշտեմ, որ եղբի շունչ տալուս առեղը քեզի հետ թագաւորելու արքայութեան մէջ արժանի ըլլամ. Ամէն։

Digitized by Google

ԱՒԱԳ ԵՐԿՈՒՐԱԲԱԹԻ

Ի յիշատակ աղօթից Քրիսոստոմի 'ի պարփիզին։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ բարերարութիւններդ, այնչափ բարի խրատներդ և օրինակներդ տալէն ետև, այսօր ուզեցիր զուսուցանել զարշարանքներդով իս փրկել, առաջ պատուէրն մը մեջ մտաբ աղօթելու, որ պատուէրն մեջ ըրած մեղքը Ադամայ քաւես. ծերագրութեամբ խոնարհութեամբ աղօթքի նստար, որ ոտքով ձեռքով Ադամայ ըրած մեղքը հպարտութեան ընջիս, որ ոտքով արդելեալ ծառը գնաց, ձեռքով արգելեալ պտուղը կերար։ Մեկ գիտցէն քաշելու չարչարանքներդ միտքդ բերելով, մեկալ գիտցէն մարդկային մեղքերը յիշելով, ան սոսկալի տագնապը քաշեցիր, ինչ վանն արիւն քրտինք քրտնեցար։ Ամ օրը 'ի հարկէ իմ մեղքերսալ յիշեցիր, ինչ որ մտքովս՝ աչքովս՝ բերնովս՝ և բոլոր մարմնովս գործեցի. իմ մեղքերուս գարշութիւնը, մենծութիւնը,

մեղքիդ առաջին դալարմ ան տաղնտալը բերելու պատճառ եղան։

Յաւուրքն պատով աղաղակեցէք. Հայր անցո՛ յինէն զայս բաժակ։ Բայց Հայրն յաւիտենական ուզեց որ՝ դուն մարմնովդ չարչարանք քաշես, որ ես հոգւովս չքաշեմ, վիդաստապատը վիմ. դուն այրիս դառն հնազանդեցար իմ սիրոյս համար։ Հօրն երկնաւորի, ըսելով. Ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Յանձն առիր որ՝ դուն չարչարվիս, միայն թէ ես փրկվիմ։ Ահա ահեր իմ, աս քու սէրդ՝ և երկնաւոր Հօրդ սիրոյը տեսնալով այս օր իմ վրաս, կամենամ իմ ըրած մեղքերուս վրայ, կրդոզամ ըրած ապերախտութեանս վրայ. և կաղաղակեմ առ Հայրն երկնաւոր. Հայր, անցո՛ յինէն զբաժակ բարկութեան քո։ Վասն զի քու Որդիդ միածին իմ տեղս կառնէ զայս բաժակ չարչարանաց. ինծի համար աս տաղնտալը կրքաշէ, իմ մեղքերուս համար աս արեան քրտինքները կրթափէ. որչափ որ մեղք ըրեր եմ ազատիկութենէս վեր, ամ-

մեննալ աչքին առջին է դրեր, անանկ կաղաչէ քէզի ով Հայր երկնաւոր։

Ո՛րչափ որ շատ էր տաղնապդ՝ այն չափալ մտադիւրութեամբ աղօթքի հետ եղար, մէկէ մը մէկ մխիթարութիւն մը չիդտար, առաքեալներուն քովը եկար՝ քայց անոնքալ քունի մէջ գտար։ Կաղաչեմ տէր իմ Յիսուս, այն աղօթքիդ արդեանցը համար տես ինծի այսօր հնորհք Զգաստութեան և Արթնութեան։ Մէկ անհոգութիւն մը կայ վրաս հոգիս հոգալու, Աստուծոյ պատուիրանքները պահելու. տես անհոգութիւնը ծուլութիւնը մեկդի ձգեմ, արթննամ, իմ մեղքերուս վրայ ապաշխարեմ։ Ամենէն աւելի աղօթքիս հոգացող ըլլամ, ամենէն քանիս մէջ առաջ աղօթքի վազեմ. ինչպէս որ դուն չարչարվելդ սկսելու առենդ՝ աղօթքի հետ եղար։ Եւ միտքս վրաս պահելով անանկ մտադիւրութեամբ աղօթք ընեմ, ինչպէս որ դուն օրինակ տրվեր։ Երբոր նեղութիւն, կամ հիւանդութիւն, և կամ միտումտուք մը ունենամ՝ ձիշրիմոթիմ, ա-

զօթքներս ցնծզգեմ։ Ո՛ՐՉափ որ քուն բերէ սատանան աղօթքիս առեղնը՝ փախչեմ։ Ո՛ՐՉափ որ ծուլութեան, ձանձրութեան, մաղձոտութեան սատանան իմ հոգեւոր գործքերս խափանել ուզէ, իս ջերմեռանդութենէ պաղեցնել, անոնք ամենը փախչին, հալածվին քու աղօթելովդ տէր իմ Յիսուս, որ ինծի համար աղօթեցիր, ասչափ արեան քրտինք թափեցիր, որ իս Ադամայ հետ նորէն նորոգելով երկնաւոր դրախտը մտցնես փառաւորելզամենասուրբ Երրորդութիւնդ յաւիտեանս. Ամէն։

ԲԻԲԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ի յիշատակ լուսաբանչի Քրիստոսի։

Ո՛վ ծայրագոյն մարդասիրութիւն աստուածային, որ իմ մեղքերս վրդովառնելով մեղաւորի պէս մատնվեցար անօրէն Յուդայի ձեռքովը՝ որ քու աշկերտդ էր, սիրտդ կսկծալէն՝ իր մեղքը իր երեսին զարնելով ըսիր. Յուդա, համբուրելով մատնես զորդի մարդոյ։ Ե՛ս եմ ան Յուդան տէր

իմ, Ես եմ՝ որ մեկտեղ սուրբ հաղորդութեան սեղանը նստելով, Ճաշակելով, իմ արքայութեանդա գիս ստատանայի և իմ մեղքերուս ձեռքը կամաւորապէս մատնեցի։

Աւազակի մը պէս բռնելով, սուրերով թուրերով քաշկռտելով դուս Ճշմարիտ քահանայապետդ՝ սուտ քահանայապետին առջեւն կեցար, արդար դատաւորդ՝ սուտ դատաւորին դատապարտուելեցար, իմ անեղծ սուրթիւնս ընդունելու համար սուրբ երեսովդ ապտակուեցար. սիրտդ չիդիմանալով ապտակ զարնողին ողորմածին ձայնիւ ըսիր. Ընդէր հարկանես։ Այս ողորմուկ ձայնդ ինծի է. վասն զի ես եմ, որ ատանկ լերբ ըլլալով՝ քու սուրբ պատուիրանքներդ ու սուրբ խորհուրդներդ արհամարհեցի. ոտքի տակ առնելով իբր թէ քու երեսիդ զարկի։

Վայ ինձ մեղաւորիս, իմ մարմնոյս չարաչար մեղքերը սրբելու համար՝ բոլոր մարմնովդ չարաչար ձաղկելով խոցուեցար, որով կուսածին մարմնիդ

արիւնը լվայ եղաւ։ Գլխով մեղքով աչքով լրած մեղքերուս համար՝ փը-շով պակվեցար, արիւնները աչքերնե-րուդ վրայ կը վազէին, մէկ արթոլ մը ջիկար։ Իմ զԱստուած անարգելուս համար՝ նախատական խօսքերով ա-նարգվեցար։ Ճշմարիտ Թագաւորդ Թագաւորաց՝ սուտ Թագաւորի պէս ծաղր եղար, եղեգով զարնվեցար։

Ո՛վ հովիւ քաջ, որ աս ամմէն չար-չարանքները յանձն առիր, իս մոլ-որ եալ ոչխարս փրկելու համար։ Աս սոսկալի քաշածներուդ արդիւնքը մի պարապ հաներ տեր իմ Ցիսուս։ Իմ լրած անօրէնութիւններս՝ ինչ որ պղտիկուցմէ եռաւ գործեցի մարմնով հոգւով, քովէին սուրբ չարչարանք-ներովդ արբէ։ Ինչ որ անարժան մը-տածմունքով կամ հայեցուածովք Աստուծոյ դէմ բան լրի, զԱստուած անարգեցի, դուն քաւէ։

Եւ քովէին քաշածներուդ արդիւն-քը իմ վրայ տարուրէ. առաջ ասուր ենծի շնորհք մեղքութեան, որ ասկեց եղբը սուրբ մեղքուր պահեմ իմ զգայ-

արդարնէրս։ Ապոստոլոցին հեզութեան պատասխանելուդ համար՝ տուր ինծի շնորհք հեզութեան. քանզի մարմնով ձաղկվելուդ համար՝ տուր ինծի շնորհք ճգնութեան, սուրբ պահէ մարմնոյ՝ի մէջ փորձութեանց։ Գլուխդ փշով պատկվելուն համար՝ տուր ինծի շնորհք բարի խորհրդեան, որ միշտ բարին մտածեմ։ Ղեխատական խօսքէր լսելուդ համար՝ տուր շնորհք լեզուի մաքրութեան, որ սուրբ պատհեմ լեզուս, հոգիս, և մարմնս։ Որպէս զի արքութեամբ մեռնելով արքայութեանդ մէջ քեզ տեսնալով հոն քեզի շնորհակալութիւնս ընեմ այսչափ երկայնմտութեանդ ու մարդասիրութեանդ փայ զքեզ օրհնելով յաւիտեան. Ամէն։

ԱՒԱԳ ՀՈՐԵՔՇԱԲԱԹ

Ի յիլաթակ բանին, Ահա այրդ գէպ։
(Յոհ. ԺԹ. 5։)

Հայր յաւիտենական, տես ահա պատկեր միածին Որդւոյդ. իմ տեղս ինքը կրքաշէ պատիժ անարգանաց՝

որչափ որ ըրեր եմ այլոփկուց ինչվան հիմա քու Աստուածութեանդ դէմ իմ մեղքերովս։ Ա՛ պատկեր քու միածին Որդւոյդ քեզի կընծայեմ Հայր սուրբ, տէս, և քու բարկութիւնդ իմ վրայէս վերցու։ Ինծի համար փշով պսակվեր է ան Որդիդ՝ որ դուն անչափ կրսիրէիր։ Ինծի համար իր սուրբ արիւնը երեսնիվար կրվազէ, իմ անարդանքն մեղքերուս համար՝ ապտակ անարգանաց սուրբ երեսին զարնված կեցեր է։ Իմ արքապղծութիւններուս համար թքով լեցված, սուտ թագաւորի տեղ ծաղր եղած, գաւազանի տեղ եղէգ ձեռքը առած, թագի տեղ սուրբ գլուխը փուշէր խօթված, ծիրանիի տեղ՝ կուսածին մարմինը մերկացած, քղամիթ նախատանաց հագած։

Ա՛ կերպարանքով առջևդ կեցած կուլաղակէ. Հայր սուրբ, թող տուր, ներէ աս մեղաւորիս անհներելի մեղքերը. ես ահա կը քաշեմ անոր տեղը, ես թող մեռնիմ. իսկ դայս անօրէն բարբարայն՝ թող որ խալըսի։ Հիմա ես

ալ կաղաղակեմ, աս ողորմելի պատ-
կերը՝ քու սիրական Որդւոյդ պատ-
կերն է, աս ձայնս քու միածնիդ ձայնն
է, օտարի մը չէ։ Ե՛ս մեղաւորս՝ ես
Բաղաբբայս՝ այսօր քեզի կրցրնեմ
Հայր գթութեանց, բարկութիւնդ
դադրեցու իմ վրայէս, արդարու-
թիւնդ մոռցիր, գթութիւնդ ցրցու,
իս խաչըսէ մեղացս պատիժներէն։

Ողջ տեղ չէ մնացեր իր մարմնոյն
վրայ, ուժ չէ մնացեր իր կեանքին
վրայ. աստոր խեղճութեանը վրայ մար-
դու սիրտը չիդիմանար, ինչպէս գի-
մանայ քու Հայրական սիրտդ։ Բո-
լորովին ջնջէ այսօր իմ մեղքերս,
վասն զի բոլորովին զինքը պատարա-
գեց չարչարանքներով քու անչափ սի-
րական Որդիդ ինծի համար. նայէ
մէյմը բարձրէն երկնքէն Հայր սուրբ
աս պատկերիս վրայ որ այսօր քեզի
կրցրցնեմ, մի նայիր իմ անօրէնու-
թեանս վրայ։

Ես աս պատկերին տակը կապաւի-
նիմ կրպահպանիմ որչափ անգամ որ քու
բարկութիւնդ շարժի իմ վրայ, թէ

Digitized by Google

հիմա՝ և թէ իմ մեռնելուս ասելը։ Երբոր դատաստանին օրը ինծմէն հաշիւ ուզես իմ ըրած սրբապղծութեան՝ յանդգնութեանս՝ անարգութեանս վրայ, ես աս պատկերին ապաւինած ան օրը կալալակեմ տէր, յիշէ, նայէ աս միածնիգ պատկերը, ու իմ ամէն մեղքերուս թողութիւն տուր։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ի յիշատակ Ոգեւորայի, և ամենասուրբ խորհրդոյ Հաղորդութեան։

Ինչ խոնարհութեան օրինակ էր աէր իմ, որ այսօր մեզի ցոյց տուիր. դուինքդ մաքրութիւն ըլլալով յանձն առիր խոնարհիլ լուանալ մարդու ոտքը, որ դրսի աղտը լուանալով հոգւոյն ներսի աղտն ալ լուանաս, որ մարդկայինն հպարտութիւնը վերցնես, խոնարհութիւն տրվեցնես։ Իմ հոգիս է աղտոտ կերպ կերպ աղտոտութենով, օխտը մնահացու մեղքերով. այս օր տէր իմ, իմ հոգիսալ լուա, սրբէ։ Իմ սիրտս է լեցուած հպարտութիւն, ամբարտաւանութեամբ, չեմ կրնար

սիրտս ինչէ ցընչել, ինծի անարգանք կրսեպեմ խոնարհիլ իմ եղբօրս։ Ե՛ս եմ մեղաւոր, իմ եղբարս յանցաւոր կեսեպեմ, կը հեռընամ իրմէ։ Ե՛ս եմ անարգանաց արժանի, իմ եղբարս կանարգեմ, կընախատեմ, կը դատեմ, կը բամբասեմ։ Ո՛վ անհուն խոնարհութիւն Աստուածորդւոյդ. ինչ պատասխան պիտոր տամ դատաստանին օր, երբոր քու այսօրվան ըրած խոնարհութիւնդ ցրցընես ինծի, և իմ հպարտութիւնս երեսիս զարնես, որ չէ թէ եղբօրս ոտքը չելուացի, այլև ոչ մէկ գութ մը ցրցուցի. քենէ օրինակ չառի՝ սիրտս քար դարձուցի եղբօրս վրայ, զինքը քամահրեցի։ Դու տէր, այսօրվան ըրած խոնարհութիւդ իմ սրտիս մէջը տպաւորէ, որ փոխվիմ, քեզ նմանօղ ըլլամ։

Շատ են ինորհքդ որ ըրեր էիր մարդուս. բայց ինչ ինորհք՝ ինչ հրաշագործութիւն, ինչ պարգև էր, որ այսօր ըրիր տէր իմ, և Աստուած իմ։ Աքանչելի օրինակ խոնարհութեան տալէն ետև ինծի, ուրիշ ալ աւելի

պքանչելիք մը առէլցուցիր, որ ամէն
տուրքք և ամէն հրեշտակք կըզարմա-
նան։ Դու՛ր որ սրբութիւնդ ես սրբոց,
ուզեցիր իմ մեղքովլցված սրտիս մէջը
նստիլ։ Դու՛ր որ սարսափելին ես սե-
ղոքէից, ինծի հարկիք ուրախու-
թեան ըրիր, մէկտեղ սեղանակից ե-
զար, ան սեղանին վրայ իս սատանկ սի-
ղելէն՝ դուն քեզ մոռցար. ինծմէն չի-
քաժնըվելու համար՝ իմ սրտիս կերա-
կուր եղար. ուզեցիր իմ մարմինս քու
մարմնոյդ հետ՝ իմ արիւնս քու արեա-
նըդ հետ խառնել։

Ո՛վ խմաստութիւն անհուն, ան
աստուածանալու կարծած պտուղն
որ՝ Ադամայ ատենը երկրաւոր դրախ-
տին մէջը կրփարտադէի Ճաշակել՝ բայց
ապգիլած ըլլալով ինծի մահ կրբերեր,
այսօր փոխելով զան, սա սեղանը երկ-
նային դրախտ մը ըրիր, և պքանչելի
պտուղ ինծի Ճաշակել տվիր որ Աս-
տուածութեանդ հետ միաւորիմ։
Փառք անքաւ խմաստութեան քո
տէր. որուն վրայ որ կըզարմանան
հրեշտակք, ուսկից որ կըդողան զը-

ապրթունք, ես անիկայ բերնովս կառ-
նեմ, կը ճաշակեմ, սիրտս կը դնեմ,
մէկ կը լլամ։

Ո՛վ սրբութիւն սրբոց. դուն որ իս
արժանի ըրիր սանակ մեծ պարգևի՝
սրբէ հոգիս, մաքրէ մարմինս, հեռը-
ցուր յուդայեան սատանաներդ, վրդովն-
տէ մեղքերը. եկո՛, թագաւորէ իմ
սրտիս մէջը։ Ակէց ետքը մէկը չիշնէ
իմ վրայ՝ որ դուն մինակ տէր իմ և Աս-
տուած իմ. մէկտեղ նստինք հնոտիզք,
մէկտեղ սիրենք աստուածային սի-
րով։ Ակէց ետքը թող մի տար որ՝
մեղք մը գայ սրտիս մէջը. լուսաւորէ
հաւատքս, զօրացո՛ յոյսս, վառէ իմ
սէրս, որ մինակ քեզ սիրեմ, քեզ փա-
ռաւորեմ, քեզի նմանիմ հոս, որ ան-
դինալ դէմ յանդիման տեսնալու մէկ-
տեղ քեզի հետ մնամ յաւիտեան.
Ամէն։

Digitized by Google

ԱՌԱՔ ՈՒՐԲԱՔ

Ի յիշատակ Բարձրանալոյն Քրիստոսի 'Ի Վերայ Խաչին։

Ո՛վ ահեղ արդարութիւն աստուածային, որ իմ մեղքերուս կուրծս վրէժխնդրութիւն ընել իրաւամբք, քեզ կրցրընեմ կրներկայացնեմ աստ պատկերը միածնի Որդւոյդ Աստուծոյ. տես թէ ո՞վ է որ կրբարձրնայ խաչին վրայ։ Թէ որ ես չեմ Հանչնար անոր մեծութիւնը, անոր անմեղութիւնը, անոր անձը՝ թէ ո՞վ է, սակայն դու տեր կրՀանչնաս ու կրգթաս։ Ահա ինծի համար է՝ որ դամէրը ձեռուընէրուն մէջը խօթել տրվաս, ինծի համար աւազակներու մէջ՝ աւազակի մը տեղ սեպվելով խեղճ կերպարանքով վրայոն վրայ անկրվեցաս։

Ա՜խ բանիս քարէրը չեն գիմանար՝ կրպատռտրվին, արևը երեսը կրդոցէ, լուսինը կրխաւարի, քու հայրական՝ սիրտդ ինչպէս պիտոր գիմանայ ո՞վ հայր երկնաւոր։ Ինքն Յիսուս բաղկատարած ինծի համար խաչին վրայ

Digitized by Google

կեցած խղճալի ձայնիւ կաղաչէ. Հայր, Թող սա, զի ոչ գիտէ զինչ գործէ։ Հայր, ես կրքաշեմ, կրզոհվիմ, միայն Թէ սա մեղաւոր հոգին չիքաշէ, ազատվի։ Երբոր ԴաւԹի մարդարէին ձայնը լսեցիր Թէ՝ իս զարկ, ժողովուրդը մի զարներ, երբոր ԴաւԹին զոհը անբան անասնոց տեսար, սիրոդ ինչսա, ժողովրդեան հարուածը դադրեցուցեր, հիմա դու Հայր գԹուԹեանց՝ սա ողորմուվ աղէկտուր ձայնը քու սիրելի միածին Որդւոյդ լսելով ինչպէս պիտոր չիշարժիս սա կենդանի զոհը տեսնալով ինչպէս պիտոր չիԹողուս իմ մեղքերս, ինչպէս չինչնայ քու բարկուԹիւնդ իմ վրայ՝ որ իմ անտնեսելի մեղքերովս շարժեցի։

Բայց ես սա խաչին տակը պլլված կրկենամ կրկամԹրվիմ՝ ինչպէս ըրաւ Մարիամ մագդալենացին, ուր որ միածնիդ արիւնը իր խոցերէն ծովի պէս վրաս կրվազէ. սա անհոտն ով կիանոսին արեան մէջ ես իս կրձգեմ կրլրվացվիմ։ Քու սասակի արդարութեանդալ տեսնալով զիս սա սուրբ

Digitized by Google

արեւանս մէջ թաթխուած, կատարեալ թողութիւն պիտոր տայ իմ սասկալի մեղքերուս. վասն զի արիւնն Յիսուսի է՝ որ լուացաց իմ աղտոտութիւնս, ներ. կեց իմ հոգիս ու մարմինս. վասն չէ. լնար որած մեղքերուս պղծութիւնը, այլ գոյն արեան քու Որդւոյդ կերնայ, որ ամմէնեան՝ ի գութ կը. շարժէ։

Այսօր է օր թողութեան ով Աստուած իմ, ինչ որ ինչման հիմա հինգ զգայարանքս գործեցի, ինչ որ քու տասն պատուիրանացդ դէմ եղծին մա. հացու մեղքերով լրի, և քու բարկու. թիւնդ վրաս շարժեցի։ Այսօր է օր հաշտութեան ով անհուն գթութի. ներեա, քաւեա, և հաշտեա ով տէր արարիչ և փրկիչ, որ եկար իս փրկե. լու. գոն անտուտ բերնովդ ըսիր. Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։ Այսօր ահա կը բարձրանամ խաչին վրայ, և բարձրանալովդ՝ բիւրաւոր կոտրած մեղաւորները քեզի կը ձգես, կրկին կես. ես սալ մէկին եմ անոնցմէ, իսալ

քեզի ՀԳԷ, քեզի քաշէ փրկելովդ, վասն զի եսալ քու ապրանքդ գնված ծառադ եմ։ Տուր այսօր ընտրէք որ՝ ասկէց ետքը միշտ քեզ ծառայեմ, և աղքատութեանմէջ քեզ փառաւորեմ 'ի յաւիտեան. Ամէն։

Թէ որ ուզես՝ կրնաս զուրցելայս օր նաև ան աղօթքները Քրիստոսի խօսքերուն, որ խաչին վրայէն ըսաւ։ Տէս ետքերը։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ի յիշատակ Իլման 'ի խաչէն, Ե Խաղման։

Ինչ օր եղաւ աս օրս՝ յորում Քրիստոս բանն Աստուած մեռաւ, աշխարհս հիս ըստեղծօղը՝ աշխարհն աւրողն պէս սպանվեցաւ. մէկ հատիկ անմեղ միածին Ուրդին Մարիամու՝ Թաղելու կը-սանին իր ծանրկ հատակին մէջ մեռած։ Աստ, սուրբ Աստուածածին, աչքիդ առջին մեռած զաւակիդ ձեռ-վընները գամէրէն հանելով խաչէն ինչեցուցին, գիրկդ տրվին։ Դունալ ուշադրելով կորպայիս կրսէիր. վայ

Digitized by Google

ով որդեակ, արդար, անարատ, ով քեզ սասանկ ըրաւ. վախ իմ միածին Որդի, թ'նչ մեղքիդ համար էր որ՝ քեզ սասանկ անարդական մահուամբ մեռուցին. աւազակ մը չէիր տեսած՝ աւազակներու պէս քեզ ողջ ողջ սպանեցին, հիմա՞լ քեզ թաղելու կը սանին։

Ա՛ռ ողբալու ձայնդ բարձրամ ով մայր ցաւագին, իմ քարացեալ սիրտս՝ չէ դիմանար, կարիշէ իր ըրած անօրէնութիւնը. ես ինծմէն կուգամ կրխոստովանիմ մեղքերս։ Թէ որ կրմնոր ուես՝ ով սասանկ ըրաւ, ես իս ահա կը ցրցմնեմ. ես կրզուրցեմ իմ ըրած անգրթութիւնս։ Իմ դատողութիւններս՝ իմ գէշ մտածմունքներս էին՝ որ Յիսուս փշով պակէցին. իմ մարմնամոլութիւններս էին՝ որ Յիսուս ծեծեցուցին. իմ գէշ խօսքերս՝ բամբասանքներս էին՝ որ ծարաւած Յիսուսին լեղի խմցուցին. իմ յանդգնութիւնս՝ կամաւորապէս մեղանչելիներս էին՝ որ մեկ եղան, Յիսուսին ձեռքները երինալ ոտքերնալ խաչին վրայ գա-

Digitized by Google

մեզ տալին, հիմնալ մեռուցին, թա-
ղելու կրտանին։

Բայց աս ըրած անօրէնութիւննե-
րուս վրայ ես հիմա ցաւելով կը զղջամ։
գիտեմ կը ճանչնամ որ մեծ մեղքեր ըրի
Յիսուս տանջելով, և իրեն արիւնը
թափելով. բայց նոյն արիւնն է՝ որ
իմ ապրապիսի մեղքերուս համար թո-
ղութիւն կրնդրէ. նոյն Յիսուսին
մեռնիլը ինծի կեանք կուտայ, կաղա-
ղակէ. Ե՛ս աս մեղաւորիս տեղը կը-
մեռնիմ կըսէ. որ աս մեղաւորը յաւի-
տենական մահուանէ փրկուի, ինչպէս
փրկեցի աւազակը։

Օրհնեալ ըլլայ անհուն գթութիւն
Յիսուսի՝ որ իմ չիչարչարուելուս հա-
մար՝ ինքը չարչարուեցաւ։ Գովեալ ըլ-
լայ անբաւ մարդասիրութիւնն Յի-
սուսի, որ իմ չմեռնելուս համար՝
ինքը մեռաւ։ Փառաւորեալ ըլլայ գը-
թած սիրտն Յիսուսի, որ իմ թշնամու-
թիւնս չնչիչելով իմ քովս կուգայ,
իմ սրտիս մէջը շնորհքով կը բնակի, որ
արքայութեան արժանի ըլլամ։ Ամէն։

Digitized by Google

Ի ՏՕՆԻ ԶԱՏԿԻՆ

Ցառաջին առար։

Տէր իմ Ցիսուս, լուսով սուրբ յաւրութեանդ լուսաւորէ իս այսօր. որ ինչ խորհուրդներս որ ունիմ քու սուրբ յաւրութիւնդ, և ինչ գործքերով ինչ քարոզս օրինակ կուտաս, ան խորհուրդները մատածելով ու օրինակ առնելով, եւսալ քեզի հեռանիմ, սուրբ յաւրութեանդ պատուոյն շահիմ։

Դուն աչքս իմ, սուրբ գերեզմանին մէջէն Ադիութեանդ քարոզ կուտաս օրինակով, որ ինչ ծանր քար գլուած էր գերեզմանը գոցելու համար, արդեօք քու յաւրութեանդ, մեկգի նետեցիր, բացիր։ Ան ադիութեան շընորհքը ասուս ինծի այսօր սուրբ յաւրութեանդդ, որ եւսալ իմ ծուլութեան ծանր քարերդ՝ որ սատանան վասս քեռացուցեր է,գոցեր է իս հոտած գերեզմանի մէջ մեղքերովս թաղեր է,

Digitized by Google

եւսալ ասրիանսամ, մեկդի ձգեմ ան ծուլութիւնը։

Եւ ինչպէս որ թշնամիները քեզ մեռուցին, բայց դու անանկ չկեցար, այլ ելար յարութեան, կենդանացար, իմ հոգիս ալ սատանան իմ մեղքերովս սպաննեց, թաղեց, եկեր կեցեր է թող չիտար որ երկամ։ Ցուր ինծի սուրբ յարութիւնն ան շնորհքը, որ զգլխովդ և սպասքարութիւնովդ մեղքերէս ելլամ, հոգիս կենդանացնեմ։

Գերեզմանին բերանը կնքով գոցին թշնամիները, որ չիգան առաքեալ ները չիգանան, գերեզմանէն մարմինդ չիհանեն։ Իմ թշնամիսալ սատանան՝ ամուր կնքով կնքեր կապեր է բերանս, թող չիտար որ՝ առաքեալներուն քահանաներուն մոտիկնամ, բերանս բանամ, մեղքերս խոստովանիմ, մեռելալ հոգիս մեղքերուս գերեզմանէն դուրս հանեմ։ Դու տէր իմ, ասուր քու զօրութիւնդ որ եւսալ ինծմէն ան սատանային կնիքը՝ ամենը մեկդի ձգեմ, ահեղ յարութեան ձայնիս՝ հրեշտակային յարութիւնքերնովը մեր-

քէրս խոստովանիմ, Թողութիւն գտնամ։

Թշնամիներդ գերեզմանին չորս գին զինուորներ կեցուցին, որ պահեն. գրսէն մէկը չխնամեցնայ, գերեզմանէն դուրս չհանէ. դու անկարօտ դրսի օգնութեան՝ մէկէն հալածեցիր ա-նոնք։ Տուր ինծի՝ շնորհք՝ որ իմ թշնամիներս հալածեմ, իմ փորձութիւններս՝ որ չար զինուորներուն պէս իմ չորս գիս փաթթեր են, որ են ատանայ, աշխարհ և մարմին, ատոնք հալածելով մեղքերուս գերեզմանէն դուրս ելլամ։

Նոր մարմին մը առիր երանելի, անչարչարելի, հոգևոր ձրիւք զարդարեալ. քառասուն օր աշխարհիս վրայ եկիր, բայց իբր թէ չէիր, անեղծութիւն կերպով կը կենայիր, կը քալէիր։ Տուր ինծի՝ որ՝ աղէկ խոստովանութիւնս ընելէն ետև, փորձութիւններս յաղթելէն ետև՝ աստվծնէ իմ կիրքերս մեռցնելով նոր կեանք մը ակսիմ, բոլորտին հոգևոր ըլլամ, պարտս միաքրս աստուածային քանէրուն տամ.

աստուածային բանէրը ինծի անուշ նայ, աշխարհս լեղընայ. երբոր խաչ քաշեմ, չարչարվիմ, իբր թէ չիմանամ։ Աշխարհիս մէջը կրքալեմ. բայց քէզի նման իբր թէ աշխարհիս մէջը չըլլամ. մեռած ըլլան իմ չար կիրքերս, իմ զգայարանքներս. իբր թէ աչք, անկատ, բերան չունենամ. մեռած ըլլայ ինծի հին մարդը մարմնաւոր, որ դուն նոր մարդդ հագուր, տէր Յիսուս, կենդանի ըլլաս իմ սրտիս մէջը։

Ասոնք են տէր իմ, որ այսօր սուրբ գերեզմանէդ օրինակ կուտաս. տուր ինծի յարութեանդ շնորհքը՝ որ եռալ ասոնք մեռածելով առջի յարութիւնը առնեմ, որ ես մեռած հոգիս մեղքերէն վեր հանել, եռքը երկրորդ յարութեանդ արժանանամ. ապաշխարող մարմինս՝ ապաշխարող հոգիս հետ միանալով անանկով գերեզմանէն ելլամ, որ առաքելոց և խալարեր կանոնց պէս քու անձառ աստոյդ արժանի ըլլամ յաւիտեան. Ամէն։

Յերեւորդ առաջ.

Ամենակալ և հզօր ասէր. այսօր ցուցցիս քու զօրութիւնդ. Հրէանէրուն ըրածը աճեթ ըրիր, զինուորներդ վանտեցիր, աստուանային իշխանութիւնը կապեցիր. քեզի հետ գերեզմանէն մեռեալներդ յարուցիր, գժոխքը աւրեցիր. բիւրաւոր հոգիք նահապետաց՝ որ քեզ փրկողդ կրապասէին կրցանկային՝ խալցուցիր, ազգայութեան արժանի ըրիր. խաչին նշանաւ աստուանային թշնամոյն վրայ փառաւորապէս յաղթանակեցիր, ինծիալ յոյս տուիր երջանիկ յարութեան։

Աղաչեմ ով ասէր զօրութեանց, այսօր մեծ ուրախութեան օրդ է, պարգև քաշխեցու օր է, պարգևէ ասէր իմ աս ինորհքս, որ եսալ քեզ նման խաչակից ըլլամ. իմ մեղաւոր մարմինս, իմ հար կիրքերս՝ մարութիւններս խաչին վրայ գամելով մեռցնեմ, որ քեզ նըմանելով արժանի ըլլամ աստուծոյ յարութեանդ։ Երբոր փոքն գայրիէլեան գոչէ՝ Աթիք մեռեալք, երբոր ամենն

մեռեալք որչափ մարդ որ եկեր է ապ-
աշխարհս՝ ալիտուր կենդանանան, առ-
ջիդ գան, ոմանք 'ի յարութիւն կենաց
մոնալով, և ոմանք 'ի յարութիւն գա-
տապարանաց, ան ահեղը օրը իմ հոգիս
ապաշխարութեամբ սրբված ըլլա-
լով, մարմնիս փոտած հոգէն գուրս
ելլալով, արժանի ըլլամ տէր իմ յա-
րութեան կենաց. քու օրհնութեան
ձայնդ լսելով, որով ալիտուր հրաւիրես
սրբոց արդարոց գասքը, ան սուրբ-
թուն հետ մեկտեղ գասակից ըլլամ
արքայութեանդ մէջ, քեզի հետ մեկ-
տեղ թագաւորելով, հոգւով և մարմ-
նով քեզ փառաւորելով յաւիտեան.
Ամէն :

Ցերեկուան աղօթք :

Հոգիս մեղքերով մեռած՝ քու տա-
սութենդ զրկված՝ կարօտի կրկնա-
փաղի տէր Ցիսուս, սուրբ աստուածոյ
և իւղաբեր կանանց ալէս քու քովդ
գալ, քու տեսոյդ արժանանալ, քեզ
գտնալ, քեզի հետ խօսակից ըլլալ.
քարոյց ապատանան իմ ախրտա կրկոտրեր ը-

սերով, Ո՛վ Թաւալեցուցչ մեզ զվէճն
'ի դրանց գերեզմանին։ Ահա սա տա-
բակոյսերը՝ սա ծուլութիւնքն են՝
որ թող չեն խաղալ ինձի քեզի գալու.
սուր ինձի անոնց շնորհքը՝ որ Ա-
ռաուած ապաւինելով քեզի գալու
Հաճիաս առաջ երթամ, եւ ցիգատ-
նամ։ Հրաշալակաց օգնականութեան
արժանի լրջէ՝ ամէն իմ, որ անոնք ան
ծուլութեան ծանր քարերը մէկդի
նետեն։

Ա՛ռաջանց կանուխ խունկ աղո-
թից կուզեմ պատրաստել անոնց
ալէս, սատանան աղօթքը ինձի ծանր
քար մը կերեցընէ. բերանս շարժել
աղօթելու հանար՝ գիտեմ թէ հիւան-
դութիւն կրքերէ. աղօթքաւ ինեմ՝ նէ՝
քեզ չեմ գանար, այլ պատրաստ գերեզ-
ման կրգանամ, համ չեմ առներ,
ջերմեռանդութիւն չեմ ունենար։
Տժուր ինձի անոնց շնորհքը. ինչպէս
որ քեզ ցիգատան նէ՝ լալ ողբալ սկսան,
ան լացով պատան զքեզ, եւ լալ զՁայ-
լով լամ իմ մեղքերս՝ որ ինձի կորսուն-
ցընել տալու զՅիսուս. և ան ողբա-

լովս գանեամ անոնց ինորհքը ի՛ երան-
ուանգութեան ։

Եղբայր լսլովս չիգտան զքեզ տէրդ, գիրեզմանէն չիզատուելուն, կրնանայ-
լին կենալին, անով հրեշտակաց հետ խօսակից ըլլալու արժանի եղան, հրեշ-
տակներէն աւելիս միխիթարութեան առին ։ Եթէ որ լսլով վիճաբերլով քեզ չեմ կրնար իմ սրտիս մէջը գլուխ-
նալ, վասն զի մեղքերովս զՅիսուս մեռուցի, սիրոս հուսած գիրեզման դարձուցի՝ ուր չիկենար Յիսուս, ա-
նանկ ատենն աչ յոյսս չիկրթրեմ, որ-
ցունքը ապաշխարութեան թափեմ, հրեշտակաց հետ խօսակից ըլլալով գոչեմ. Արի տեր, օգնեա՛ մեզ վասն անուան քո, մի՛ մերժեր զմեզ խապա-
վասն անուանդ. ցոյց ինձ զդէմս քո ։

Ձիգիմացաս սիրոյդ Մարիամոս արքունքին, եկար երկրայսդ՝ բայց վոխ-
ված լութերով ըլլալով չիճանչցաս. ինչվան որ դուն իրեն անունը տալով զինքդ ճանչցուցիր ։ Այսանկալ տէր
իմ, թէպէտ կերևնաս ինծի՛ ի խոր-
հուրդ հաղորդութեան, բայց վոխ-

վեր կերպարանքով ըլլալով հայցին տեսակաւ երևնալով իմ տակար հաւատքս քեզ ցիկնար Հանձնալ. ան առանը դու լսել տուր ինծի քու ձայնդ, կանչէ իս Ընտրեալքով, բայց հաւատքիս աչքը որ քեզ տեսնայ։

Զիմաստուցիչ Պարիսանու մեռելնալ, բայց խոսք տալիր, ու աւետիս միխիթարութեան խրկեցիր առաքեալ ներքան։ Բայանկ ալ տուր ինծի աւետիս միխիթարութեան, որ հոգւոյս ապատանիմ. առաւաւելալ հոգիս լսելով Ընտրեալքդ ուրախանայ, և ուրախութեանէ ապատանի օր մը քեզ տեսնալու յարութեան առանը զքեզ իր տեղը անՀատ ուրախութեանէ միշտ և յաւիտեան։ Ամէն։

Digitized by Google

Ի ՏՕՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ

Բնդդ Աստուած Յիսուս Քրիստոս, միածին որդի Աստուծոյ, որ այսօր երկինքը կրթողուս, երկիրս կենչնաս, յերկնային փառաց յերկրաւոր անապականութիւն կրկնապատիս, Աստուածութեանդ կերպարանքին վասն հողոյս կերպարանք կառնես։ Փառք ասէր իմ, փառք անքնաս խոնարհութեանդ քո։ Հրաշալիք սասանին, սերոբէք զարմանան։ Ասան մի Աստուածութեանդ ահիդ կերպարանքս իս կանչեցիր, ես չիլանցի, մանաւանդ թէ աստուածպանիկեդ կոտրեցի անապրեցի։ այսօր իմ սիրոյս համար քու փառդ քու Աստուածութիւնդ կլմոնաս, մարդ կրլաս որ իս կանչես շահիս։ իս աշակերտաս, ու քու անդին արիւնդ թափելով իս ապաստաս։ Ինչ շնորհակալութիւն ը-

նեմ տէր իմ. օրհնեալ են տէր փառք քո, մեծ են ողորմութիւնք քո, ան-հուն է խնամատարութիւն քո։ Ցիշէ տէր իմ աստուածն ըրած քու մարդասիրու-թիւնդ. թող մի տար որ իմ չարու-թիւնս պարտաւ հանիլ ասոյ աս քու տէրդ. մի թողուր իս ինծի. գուն իս կանչէ ինորհքովդ, գարձիր իմ մեղ-քերէս. հանէ իմ պրանս հպարտու-թիւնը՝ որ շատ մեղքերու պատճառ կը լայ. սիրտս կանգնու քու ձայնդ լսելու, քուկին խոնարհութեանդ հետևելու։

Աղօթք։

Ո՛վ տիրամայր կոյս Աստուածա-ծին, այսօր է օր քու տատուածանայ-րութեան շնորհաց, որուն մէկը ի մարդկանէ չիհասաւ։ Հայրն Աստուած ասչափ մարդկանց մէջ միայն քեզի հասնեցաւ. Որդին Աստուած քու արգունեդ իրեն մարմին առաւ. Հոգին սուրբ Աստուած բոլորովին իջնալով քու վրադ հովանի եղաւ. և բովանդակ ամենատուրբ Երրորդութիւնը քեզ

միոյն հաճեցաւ։ Դու հողեղէն գո-
ղով ընտրեալ եղար, մարդէ վեր,
հրեշտակներէ վեր գերազանցեցար։
Բանն Աստուած ըղձալով այս օր խո-
նարհեցաւ ինձի համար մարդ եղաւ.
դու մարդ ըղձալով բարձրացար, Աս-
տուծոյ ծնող եղար։ Զարմացան հրեշ-
տակներքը՝ տեսնալով որ՝ մէկ հողեղէն
մը Աստուծոյ մարմին կուտայ, Աս-
տուած կրծնանի, Աստուած կրգրկի,
ժուռ կածցնի. խոնարհեցան քեզի
սերոբէք ու քերոբէք, տեսնալով որ՝
ամենազոր եղար Բանին Աստուծոյ. օթևա-
րան հոգւոյն սրբոյ. թագուհի երկնի
և երկրի։ Ուրախացաւ մարդկային
ազգը՝ տեսնալով որ իր մէջէն մէյմը
անանկ փառաւորվեցաւ՝ որ հարսն
եղաւ հոգւոյն սրբոյ. իսկապէս մայր
եղաւ Աստուծոյ, և Աստուածածին։

Հիմա եասալ հրեշտակաց հետ մեկտեղ
ուրախանալով հրեշտակային ողջոյնը
կուտամ քեզի. Ուրախ լիր քերուբ-
ներաց, տէր ընդ քեզ։ Դուն որ սաղայի
մեծութեան հասար սուրբ Աստուա-
ծածին, որ ամենն խելքէ մոքէ դուրս

Digitized by Google

է, այսօր ինծիսալ մեկ շնորհք մը ըրէ, մեկ կատարեալ դարձ մը տուր, զըղջման ու յարատեւութեան շնորհք։ Ըլլասի որ անարժան ըլլամ քու շնորհացդ, բայց յիշելով ան մեծութեան հանմելու օրդ, ան Աստուածամայրը ըլլալու ժամդ, կաղաչեմ մի մերժեր իս այսօր. թէ որ կենդանի աչխարհիս վրայ տեսնայի քեզ, ու աս օրվան փառքդ յիշեցնելով աղաչէի, չէիր իս մերժէր. հիմա կենդանի հաստատքովս երկինքը աստուածամայրութեան աթոռը նստած քեզ կըտեսնամ, կաղաչեմ, մի թողուր իս այսօր զուրկ 'ի շնորհաց։ Ինչպէս որ զարմանցան հրեշտակք աստուծոյ հրաշքին համար, Աստուծոյ մարդասիրութեանը համար որ մեղաւորաց վրայ ցրցուց, անանկ ալ իմ վրայ տեսնալով քու մեծ շնորհքդ իմ կատարեալ դարձիս համար, զարմանան ալիսոր հրեշտակները, ու քու անունդ փառաւորեն։

Ո՛վ աստղ առաւօտեանդ լուսաւորէ իս այսօր։ Ո՛վ արուսեակ զուարթաբարոյ՝ ուրախացիր իս այսօր։ Մխիթարդ

վշտացեալոց՝ միխիթարէ իւր Օգնականութ-
քրիստոնէից՝ հասիլ ու օգնէ ինծի ։
Ապաւէնդ մեղաւորաց ազատէ իւր բե-
զմարմն ձեռքէն և իմ մոլութիւնն է-
բէս . որպէս Աստուծոյ բրէ իս , որ ես-
տալ քեզ ու քու Որդիդ միածին փա-
ռաւորեմ յաւիտեան . Ամէն ։

Digitized by Google

Ի ՅՕՆԻ ՀԱՄԲՈՒՐՅՄԱՆ

Տե՛ր իմ Յիսուս Քրիստոս, քու վարքդ հայելի օրինակ ալիքիր ինծի. խորհրդով կատարելիր ամէն ըրածներդ. առաջ չարչարվեցար, խաչեցար, եռաքը յարուցիր առիր, այսօր փառաք հանգարձաք երկինքը. ցրցուցիր աստվինծի որ՝ առաջ պէտք է նեղութիւն և խաչ քաշել, եռաքը անքաշածներուն հանար փառք վայելել։

Առաքեալներդ կանչեցիր՝ որ ձիթենեաց լեռը երթան. ուր որ սկսեր էիր քաշել քու սուրբ չարչարանքներդ՝ հոն եռաքի խրատներդ՝ եռաքի ողջոյնդ ալիքիր։ Իմ հոգիսալ ահա կեցած է այսօր անանկ ապտանած, կրնապատէ որ՝ դուն կանչես քովդ ներդութեան լեռը ձիթենեաց, որ ապտովմնքովս հեռանամ վերը երթամ աստ աշխարհէս իբր բարձր լեռան վրայ։

ձգեմ զգուշիմ աշխարհային բանէրէն, և բարձր երկնային բանէրու փափաք-գիմ. ինչ նեղութիւն, ինչ խաչ խրը-կեա՝ սիրով քաշեմ, հոգւոյն տրոյց շնորհքովը մխիթարվիմ։

Երբոր բաժնըվելու եղար, հեռէրը-նին խօսելով իրը թէ մեզքնանալով բաժնըվեցար, հոգին սուրբ իրկեալ խոստացար, որ սիրտ առնին։ Իմ հո-գիսալ որ բաժնըված է քէնէ, կրկին-գրէ քու կիին սիրտ տալը. կարօտ է հո-գւոյն տրոյց շնորհքին մխիթարու-թեանը։

Ամէն խօսքէն եռաքը՝ ձեռքդ ամ-բառնալով վեր վերցնելով օրհնեցիր առաքեալներդը, անոնկ հանգառնալ սկսար։ Ահա, յիշէ տէր իմ աստու

հոգիս լուսաւորվի. Հոգւոյն սրբոյ
շնորհքը խրկէ որ ասկէց ետքը միշտ
քու խրատներդ բռնեմ, պատուի-
րանքներդ սիրով պահեմ. շնորհքով
հոս քենէ չիբաժնվիմ որ՝ արքայու-
թեան մէջնալ միշտ քեզի հետ մնամ
յաւիտեան. Ամէն։

Աւ աղօթք։

Թագաւոր թագաւորաց տէր իմ
Յիսուս, այսօր է քու թագաւորու-
թեանդ օրը. ասանկ փառաւոր հան-
գիսաւոր օրը՝ երկնաւոր թագաւոր-
ները պատուապանները կընէրեն,
բանտարկեալները կազատեն, ազքատ-
ներուն պարգև կրբաշխեն։ Քանի՞ ա-
ւելի պիտոր ըլլայ քու շնորհացդ չա-
փը ով թագաւոր երկնաւոր. նայէ իմ
խեղճութեանս վրայ. մի թողուր իս
այսօր առանց շնորհացդ. որչափ ան-
արժան ըլլամ՝ թողութիւն տուր,
պատռէ այսօր իմ մեղքերուս մեղքե-
րուս պատռեաց թուղթը. ազատէ իս
սատանայի կապանքներէն, մեղաց
բանտէն, և մեկ ողորմութիւն ալ՝ մեկ

ընտրէք մը տուր ինծի, որ ասկէց ետքը սիրտս միաքս բոլորովին աշխարհէն կտրեմ, երկինքը առ Աստուած համ բառնամ։

Եւ երբոր սատանան իւ յուսահատ ընէ, հաւատքս խաւարեցնէ, որ քեզ չեմ տեսնար, աղօթքէ համ չեմ առնէր, աղօթքիս մէջը ամենեւին ջերմեռանդութիւն չեմ խմնար, քուս սուրբ պատկերդ մոռցա առջեւն աներևոյթ կըլլայ, սուրբ ձանդ կըհերքնայ, անոր տեղը սա աշխարհիս պղտոր ու ամպոտ փորձութիւնները կերևան աչքիս։ Ան ատենը խրկէ տէր իմ՝ քուս երկու հրեշտակներդ. ինչպէս որ խրկեցիր առաքեալներուն, որ անոնք խօսելով իւ Մխիթարեն, հաւատքս զօրացնեն, թմրութիւնս ափշտութիւնս փարատեն, ցիսուս նորէն քեզի պէտոր գայ ըսելով տեսեցիս ուրախութեան տուն։ Եւալ առաքելոյ պէս պայծառ հաւատքով ջերմեռանդ աղօթքի հետ ըլլամ, միշտ քեզի ծառայելով հոգւոյն ընտրեցց արժանի ըլլամ. Ամէն։

Ի ՏՕՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵՆ

Յառաջին տասը։

Ով հուր երկնային՝ որ ամենեքեան սիրոյդ հոգւոյս եռանդ կրճգես. չունչ անմահաւոր՝ որ հիւանդացեալ հոգւոյս էրը կրոնցուցանես. ցօղ խմանալի՝ որ երկնիքէն ինչնալով երկրեցնոյ պարտիզն մէջ զարմանալի ծաղիկներ կրբուսցանես, մեղաւորները կրպրես, արդարները մարտիրոսութեան պսակին կրհասցնես, միտքը կրբանաս, կամքը կրզօրացնես։

Ո՞ր մէկը ըսեմ քու անքաւ զարմանալի արուեստներդ հոգիդ տուրը. ուրէր՝ ինծիալ այսօր մէկ նոր ընորհք մը հնչես, որ եսալ փոխիմ։ Հաւատք քիս աչքը բացի, միտքս արթննայ, ան գիտի բաները յայտնի պայծառ տեսնամ, աս աշխարհիս ունայնութիւնը խմանամ, զզուիմ անոնցմէ։ Յոյսս զօրանայ, զօրանալովը՝ սիրով

փաքիաղով պահեմ քու պատուիրանքներդ։ Սէրս վառվի, վառվելով՝ մեղքէ հեռանամ, Աստուծոյ Հասկ վան բռնեմ, աչքս սուրբ մնաքուր պահեմ, ականջս ընդունայն դատարկ խօսքերէն հեռըցնեմ, լեզուս ասատուածային օրհնութեան պարտաւորեցնեմ, և ամենէն զգայարանքներս սուրբ պահեմ։

Ինչ մեղքեր որ ըրի ընդդէմ հոգւոյդ սրբոյ 'ի մանկութենէ, կամ յուսահատութեանէ, կամ յանդգնութեանէ, և կամ արհամարհութեանէ քու նեղքին ընչանց դէմ, ամենեսնաւ զղջմանէ խոստովանիմ. խոստովանութեանս առեր՝ մեղքիս ալէկոծութիւնը որ ստանանան կը խառնէ, դուն վարատես, սուրբ հաղորդութիւնը ջերմեռանդութեամբ առնելու արժանի ընես։

Ամէն և ուրիշ զանազան ընարհքներդ խնդրեմ տուր ինձ այսօր. բայց գանձդ բաշխելու, վասն զի առանց քու ընարհացդ իմ ամենէն լրացած պարապ է, մեռեալ է. դու հոգիդ սուրբ

կենդանատարար, եւ կենդանացն վասն
արդեանց Ցիսուսի միածնի, որ քեզ
նորէն մեզի պարգեւել տրվաւ։

Ցերեւորդ առաւ։

Ո՛վ հոգիդ սուրբ տէր եւ կենդա-
նատար, կրչնչես ուր որ ուզես, կը-
պարգեւես որին որ ուզես, կուտաս
ինչ պարգեւ որ ուզես. այսօր սատանիկ
հովուանման ինչնալով վերնատան մէջ՝
ձկնորսները առաքեալ ըրիր, բան չ-
գիտցողները վարպետ քարոզիչ ըրիր,
խօսիլ չկրցողներուն՝ զանազան լե-
զուներ տրվեցուցիր։ Ո՛վ անմահա-
կան բաժակ, այսօր աստուածային
բաժակէդ մէկ գինի մը խմցուցիր՝ որ
զմայլեցան, երկրաւոր մարդիկ երկ-
նային եղան, խաչէն փախչող առա-
քեալները՝ սիրով փափագով տան-
ջանք քաշել տրվեցան։

Եւ ամենեն կարօտ եմ տէր իմ.
հոգիս անապատ գաղթեր է, զուրկ
մնացեր է ընտրեալ. վասն զի ինչ
ընտրեալ որ տրվիր սկսուրթեանէ եւ
ուրիշ խորհուրդներով սամենեալ

Digitized by Google

կորանցուցի մեղքերովս։ Այսօր ինծիսլ չնչէ մեկ շնորհք մը՝ որ ան երկնային բաժակին հատը եսալ առնեմ. հոգիս ծարաւը բժշկելի. եսալ բոլորովին փոխվիմ, երկնային բանները անուշ երևնայ, երկրաւոր բանները առելի ըլլայ։ Ամենեն աւելի՝ ինչպէս առաքեալները միշտ աղօթից հետ պարապելով արժանի եղան քու շնորհքիդ, տուր ինծի այսօր շնորհ Աղօթից, որ ուզելով փափագելով աղօթքս ընեմ. ան չորութիւնը՝ որ աղօթքիս առենը սատանան կրբերէ՝ ինծմէն հեռանայ. միտքս չցնդի, ձանձրութիւնը վայրէս երթայ. երբոր սատանան աշխարհային հոգը մը տածմունքը աղօթքիս մէջը միտքս կրբերէ իբր հարկաւոր մտածմունք, անանկով աղօթքս բոլոր պարապ հանեալ կուտայ, անպտուղ կրնէ, ան առենը տուր ինծի քուկին անմահական բաժակին հոգևոր զմայլումը՝ որ աս մտածմունքները փարատէ, երկնային մտածմունքները իս զմայլեցնէ, ինչպէս որ ոտվիր քուկին սուր-

բերուդ։ Ամենեցուն եկալ անունց հետ մեկտեղ յաւիտեան փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր, և զՈրդի, և զՀոգիդ սուրբ. Ամէն։

Յեբրուար ամսոյ։

Ի՞նչ շնորհ լեզուաց էր՝ Հոգիդ սուրբ, որ այսօր պարգևեցիր առաքեալներուն. և ի՞նչ շնորհ լսողութեան էր, որ այսօր պարգևեցիր լսողներուն։ Ցիսուս միածին երկնային խրատներէն կրնայէր, մեկ քանի հոգիներն սիրտը հաղիւ կրշարժէր. Զի չէ էր Հոգի։ Իսկ այսօր քանիներ լեզուաց պարգևուիդ՝ մեկ անդամ խօսեցաւ սուրբն Պետրոս, անով իրենք հազար հոգիի սրտերնին կակղցուցիր, հաւատք մտի ալեւ ըրիր, հաւատքի բերիր, որ զղջումով ապաշխարեցին, մեղայ գոչեցին։ Ա՛խ, տէր իմ, իմ սիրտս քարի պէս պինդցեր է, մեղքի մէջ կորեր է, ապշարի հոգևոր խրատներէ կրնէ՝ չիկակընար. ապշարի հոգևոր խորհուրդներէ կառնէ՝

մանաւանդ խորհուրդ սուրբ հաղորդութեան, մէկ շահ մը չիգտնար։

Դու՝ տէր, այսօր գանձդ շնորհաց բացեր ես, կրաշխես քուկին սիրելիներուդ. մի նայիր իմ անարժանութեանս վրայ. տուր ինծի լաւագոյնս շնորհք այսօրուան դարձուցանելուն պէս, որ տեսնամ իմ անօրէնութիւնս, զղջիմ անոնցմէ, զղջամ ապաշխարեմ քու շնորհքովդ. և քու ծառադ ըլլամ, քեզ փառաւորեմ հոս և արքայութեան մէջ յաւիտեան. Ամէն։

Ի ՏՕՆԻ ՊԱՐԴԱՎՈՐԻՆ

Յառաջին աղօթք։

Անքաւ իմաստութիւն Յիսուսի տեսառնդ իմոյ, առաջ խաչ քաշել քարոզեցիր, տեսար որ՝ ծանր երևցաւ խաչին նեղութիւնը, իմանան որ՝ եաթը ինչ փառաց պիտոր հասնին խաչ քաշողները, ցրցուցիր այսօր քուկին փառքդ։ Ի՜նչ երջանիկ ժամ, յորոմայ սուրբ առաքեալքը աս մարմ-

նոյա մէջը ըլլալով արժանի եղան Աստուածուն փառքդ տեսնելու. ինչ զմայլումն, ինչ ուրախութիւն, որ իրենք զիրենք կորսնցուցին, մոռցան մարմինը, մոռցան ամենն աշխարհի ծանրութիւնը՝ մեկ քիչ մը Աստուածութեան փառքդ տեսնելուն համար։ Հապա ինչ մայրել պիտոր ըլլայ ինծի, երբոր բոլոր Աստուածութեան փառքդ պիտոր տեսնամ ազգայութեան մէջ։

Գիտեմ որ մինակ ան սաղմոսերգուն ցրցուցեր քու փառքդ, որմէ որ մարդիկներն՝ քաղքին մէջէն՝ դուրս հեռացուցեր, բարձր լեռը հանեցեր։ Եթէ կարելի եղեր մեր խմ, որ սակէց եղբը արտոյա մոքոյա դուրս եկլամ մարդկային դէշ վարմունքներէ. երկրաւոր պարապ զբաղմունքները՝ մարմնաւոր աւելորդ մտմտուքները մեզի ձգեմ, վերին լեռը ելլամ, վերին երկնային բանէրը մտմտամ, աստուածային պատուիրանքներդ բռնելամ սիրտս սուրբ պահեմ, որ քու խօսք տրված երանիին հասնիմ. Եթէ նի տյնոցեկ՝ ոչք սուրբ են տոմ՝ ք, դի

նոքա զԱստուած տեսցեն։ Դու

քուկին չարչարվելդ կքիչէին, կբիւ-
րաթէին ։

Ան ատենը իմ բանականութիւնսալ
սրբոյն Պետրոսի պէս զմայլելովՄաղ-
զակէ . Տէր, բարուք է մեզ աստ լի-
նել . և արասցուք երիս տաղաւարս ։
Տէր, աղէկ է մեզի սասանկ մինակու-
թեան մէջ կենալնիս . չքիչէնք թա-
գաւորական անէրը, չքիչէնք աշխարը-
հիս զուարճութիւնը, հապա մինակ
աս սուրբ մեռածմանց լեռը նստինք,
թէև տաղաւարի (չատրվի) տակ բէ-
լանք . վասն զի ուր դուն ես, հոն տաղ-
ղաւարնալ դրախտ կըլլայ, ապրայու-
թիւն կրգտնայ ։ Հոս կենանք տէր
իմ, մէկտեղ կենանք քեզի հետ՝ որ
ես ճշմարտութիւն և կեանք . մէկմէ-
կէ չիբաժնվինք յաւիտեան ։ Թող
մի տար ինձ Որդի Աստուծոյ, որ իմ
առջի չար սովորութիւններս մեղքերս
իս քենէ բաժնեն . հապա հոս միշտ
հոգևոր կենաք քեզի հետ կենամ, որ
անեղինալ երանական ձայնը լսելու
արժանի ըլլամ . Դա է որդի իմ սիրե-
լի . և զարմը Աստուածութեան փառքդ

գէմ յանդիման սեմնամ, որ է երա-
նելութիւն յաւիտենական ։

Ի ՅՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Յառաջին առար ։

Այսօր է օր գերազանց մեծութեան քեզի հանար ով փառաւորեալ տի-
ղուհի, և բոլոր աշխարհիս օր ուրա-
խութեան ։ Այսօր հրեշտակաց բաղ-
մութեամբ վերափոխեցար, բարձ-
ցեալ, կուսանաց՝ մարտիրոսաց՝ ա-
ռաքելոց գասերէն վեր ելելով ընդ
աջմէ Քրիստոսի նստար ։ Ամենասուրբ
Երրորդութիւնը եօթներորդեան շնոր-
հաք քեզ զարդարեց, թագուհի երկ-
նի և երկրի քեզ պատկեց, գանձապետ
ամենեն շնորհաց Հոգւոյն սրբոյ քեզ
դրաւ ։ Ամենեքեան քեզ երանի տա-
լին երկինքը, մենք ալ քեզ երանի
կուտանք երկրիս վրայ ։

Ասանկ ուրախալի օրդ ով հրաշա-

փառ Թագուհի, իսալ յիշէ, իսալ մի զլկեր քու շնորհքէդ. իրաւի չեմ արժանի առջեդ երևնալու՝ իմ ծանր ու ոսկալի մեղքերուս համար, բայց ահա այսօր է օր Թողութեան, այսօր է օր իմ փայ նայելու, ինծիսալ մեկ շնորհք մը բաժնելու։ Թէ որ երկրաւոր Թագաւորք ու Թագուհիք իրենց պսակված օրը մեծ մեծ պարգևներ կրբաշխեն, առատապարութիւն կը նեն, ծանցաւորաց մեղքերը կրնեբեն, բանտէն կրխալաստնեն, ողորմութիւն կրբաժնեն, դու երկնաւոր Թագուհիդ քանի՛ աւելի քու Թագաւորութեանդ օրը իմ մեղքերս պիտոր չնչիշես, իս մեղաց գերութենէ ազատես։ Թէ որ Յիսուս իր ոտնեքուն շնորհքներ կրբաժնէ, որ Թագաւոր ողորմութեան է, նաև արդարութեան, որչափ աւելի դու ողորմութեան, և մայր գթութեան. քու գուռդ՝ մեկը չեպատժրվիր չեդատապարտրվիր։

Աղաչեմ ով Թագուհի երկնի և երկրի, որչափ աւելի բարձրրցար՝ ան-

չափ աւելի շատցաւ. զորութիւնդ
օգնելու հաւատացեալներս ամէն հաստատ-
ցելոց վասն. ինչպէս որ արևը ոչչափ
աւելի բարձրնայ, այնչափ աւելի կը-
տաքցնէ աշխարհս։ Եսալ մէն եմ
ան հաւատացեալներին. իրաւ իմ
անուններուն մեղքերս մոռնալով կարու-
սահատիմ, բայց քուկին այսօրվան
փառքդ՝ Թագաւորութիւնդ մոռնալ-
լով սիրտս կառնեմ կը քաջալերիմ. ես
ինծմէն խոստովանելով քահանային
առջին մեղայ կրսեմ, որոնց կը-
ցաւիմ։

Աւ զղջմանս վասն նայելով քուկին
հզօր բարեխօսութեամբդ՝ և մայրա-
կան գթութեամբդ՝ կատարեալ թող-
ութիւն առնես այսօր իմ մեղաց.
հաշտեցնես իս Աստուծոյ հետ,
շնորհք տաս ասկէց ետև Աստուծոյ
ծառայելու, որ արժանի ըլլամ քու-
կին փառքդ սեռնալու Քրիստոսի
Թագաւորին հետ, և միշտ օրհնելու
յաւիտեան. Ամէն։

Digitized by Google

Յերեր՝ որ ասաւ։

Օրհնեալ փառաւորեալ ըլլայ ամենասուրբ Երրորդութիւնը՝ որ քեզ միայն ընտրեց իր ստեղծուածոց մէջ, մարդ հոգեղէն՝ մայր Աստուծոյ ըրաւ. մեր երկրէն զքեզ առաւ երկինքը հանեց, հարսն հոգւոյն սրբոյ և Թագուհի ամենայն սրբոց, տիրուհի երկնի և երկրի պատկեց։ Քու Թագաւորութեամբդ սուրբք կուրախանան, հրեշտակներդ կրզմայլին, երկրաւոր մարդիկ կրցնծան կաստնեն, մեղաւորներդ կրմխիթարին։ Քանի՞ քանի՞ մեղաւորներ փրկուեր են քու ձեռքովդ սուրբ Աստուածածին, որ առանց քեզ՝ հասնելու չէին փրկութեան. անով քու փառքդ մեծցաւ, Որդւոյդ Թագաւորութիւնը ընդարձակուեցաւ, ամենասուրբ Երրորդութեան պատիւը բարձրացաւ։

Հիմա ինծի ալէս մեղաւորը՝ որ ամէնէն յուսահատուած ոտքդ ինկեր կուլայ կաղաչէ, Թէ որ փրկես՝ ուրչափ աւելի քու փառքդ կրմեծնայ,

Digitized by Google

ամենասուրբ Երրորդութիւնը կրփա-
ռաւորվի, թշնամին ամոտանայ ամե-
թով կրմնայ։ Ինանկ էնէ ով մայր ո-
ղորմութեան, ով թագուհի դանձա-
պետ շնորհաց, խաչ փրկէ այսօր, ա-
զատէ մեղքերէ, մի ձգեր երեսէ։ Ող-
դին Աստուծոյ ասոր հսամար քեզ աս
փառքս հաստցուց. ինչպէս որ սատա-
նան Եւայի ձեռքով մարդիկ կորստն-
ցուց, Յիսուսալ ուզեց քու ձեռքովդ
մարդիկ խաչացնել, մեղաւորները
փրկել, որոնց դլուխը ես եմ՝ իմ մեղ-
քերուս ծանրութեանը համար։

Այլ մեծ է քու փառքդ, քու բա-
րեխօսութիւնդ, քան թէ իմ մեղքերս-
իս փրկելու համար Աստուած քեզ
ասչափ փառաք փառաւորեց, աս բա-
նիս համար թագուհի պսակեց այսօր։
Քուկին ձեռքդ է Աստուծոյ անհուն
շնորհքները, անհուն ողորմութիւնը,
որ մեծ է՝ քան թէ իմ մեղքերուս մե-
ծութիւնը ով տիրամայր. այսօր մեկ
խօսքով թողութիւն կրնաս առնել, և
զՔրիստոն շնորհք, որ ես ալ բոլորովին
փոխվիմ, առ Աստուած դառնամ,

Digitized by Google

ՀԱՍՏԱՏԱԾ ԱՍՏՈՒՆՍ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆՔ ԱՆՍՊԱՆԵՄ. ՔՈՒ ՔՈՎԴ ԳԱԼՈՒ, ՔԵԶԵՎ ՑԻՍՈՒՍ ՓԱՌԱՒՈՐԵԼՈՒ ԱՐԺԱՆԻՆ ԸԼԼԱՄ. ԱՄԷՆ ։

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ԼՍՏՂ առաւօտեան սուրբ Աստուածածնին, որ մեռեալ գիշերվան մէջ միսիթարութիւն կուտայ, ու առտուվան մեռելի ըլլալը կիմացնէ։ Աշխարհս աւետաւոր՝ որ արևուն գալը կիմացնէ, ամէն աշխարհ կուրախացնէ։ Այսօր մեզի եղար սուրբ Աստուածածնին արշալոյս և առաւօտ ուրախարար. քուին ծննդեանդ անմիսիթար որդիք Ադամայ տեսան մեկ լոյս մը խաւարած գիշերվան մէջ, ի մեռցան գալուստդ արեգական արդարութեան Քրիստոսի, և ուրախացան։

Հիմա եասալ մեկն եմ անմիսիթար

մնացողներէն. մեղքերու մէջ կորսը-
ված ըլլալով, ուրիշ բան չունիմ, բայց
եթէ մեղքերէս զղջալով քու առջիդ
կենալ խեղճ ողորմելի, զղջված ամ-
մէն չնորհքէ։ Դու որ ասանկ ուրա-
խութիւն եկար աշխարհի այսօր մայր
սուրբ, ասանկ փարատեցիր մեղաւո-
րաց ու արդարոց տրտմութիւնը, ա-
սանկ ուրախութեան օրդ՝ մի թողուր
զիս իմ խեղճութեանս մէջ, մի յիշեր
իմ անօրէնութիւնս, տուր ինծի պէտք
եղած չնորհքները։ Ան հոգևոր ը-
րախութիւնը որ աշխարհ բերիր, ին-
ծիալ պարգևէ այսօր, որ է ազատու-
թիւն 'ի մեղաց, անմեղութիւն, և
խղճմտանքը մաքուր պահել։ Տուր
ինծի նորէն սուրբ աւազանին անմե-
ղութիւնը՝ որ ես կորսնցուցի. տուր
ինծի անկէց ետքը առանց մեղաց կե-
նալ, խղճմտանքս անարատ մաքուր
պահել. անանկ անմեղ ապրելով միշտ
Աստուծոյ հետ հաշտ ըլլամ, հոգե-
ւորապէս ուրախ ըլլամ, որ մեռնելէս
ալ չվախնամ՝ յոյսս մաքուր ըլլալով։

Ո՛վ Տիրամայր սուրբ Աստուածա-

ծին, ամենն իշխանները իրենց ծնող-
դեանց օրը՝ պարգևներ կրբաժնեն, յան-
ցաւորներուն թողութիւն կուտան,
իրենց ինօղներուն ինդիրքին կրկա-
տարեն։ Դուռնալ շատ հրաշքներ ըրած
ունիս քու սիրելիներուդ այսօր, որ
է օր քու սուրբ ծննդեանդ. շատ վեր-
տացեալներ այսօր գտեր են քենէ ո-
ղորմութիւն և միխիթարութիւն։ Հի-
մա եասալ որ դուռդ եկեր, քու սուրբ
ծնունդդ բարեխօս բռնելով կաղա-
չեմ, իս պարտապ մի հաներ, ետ մի
դարձներ, իմ ըրած անօրէնութիւն-
ներս մի յիշեր ասանկ ուրախութեան
օրդ։ Խստացեալ մեղաւոր մինեմ,
տուր ինծի շնորհք կատարեալ զղջ-
ման. չունիմ յարատեւութիւն դի-
տեմ, նորէնոր կրմեղանչեմ. տուր ին-
ծի շնորհք յարատեւութեան՝ որ միշտ
հեռու կենամ մեղքերէ, աղէկ մը խոս-
տովանելով զղջման մէջ պահեմ իմ
սիրտս։

Թէ որ միածին որդիդ պարտապ ետ
ջղարձուց քանանայի կուապաշտ
կնիկը իր շատ աղաչանքին համար,

Digitized by Google

գու մայր գթութեան, գանձապահ աստուածային շնորհաց, թնչպէս պարապ դարձընես իս ասանկ ուրախութեան օրդ։ Այլ նայէ երկնքէն իմ վրայ, որ բոլորովին ողորմելի եմ մնացած. այսօր իմ խնդիրքս կատարէ, որ մնացած կեանքիս մէջ բարի գործքէր ընելով զՔրիստոս փառաւորեմ. յաւուր արդար դատաստանին քովինն բարեխօսութեամբդ փրկեալ կրնամ քու մեծութեանդ առաջի ամենայն տրոց. Ամէն։

Ի ՏՕՆԻ ԽՈՅՍԻՆ

Յառաջին առաւ։

Փառք անհուն մարդասիրութեդ տէր իմ Յիսուս Քրիստոս. հերիք չէ՞ զաւ որ ինծի հասար մարդացար, աշխարհ եկար, այլ նաև չարչարվեցար և խաչվեցար իմ սիրոյս համար. ես ապի-

տոր քաշէին սատանայի ձեռքէն տան-
ջանք յաւիտենական, դու Ովդիդ միա-
ծին անչափ սիրեցիր իսկ՝ որ յանձն
առիր քաւ խաչվէլովդ արդարութիւն
հօրն երկնաւորի լեցնել, իսկ դժոխոց
տանջանքէն խալսցնել, արքայու-
թեան որդի ընել։ Ի՞նչ փոխարէն կըր-
նամ ես հատուցանել, բայց եթէ
միշտ յիշելով գոհանալ և շնորհակալ
ըլլալ։ վասն զի թէ որ մէկ հաստատակ
մարդ մը ընէր ասս բարերարութիւնս,
ընծաներ տանելով շնորհակալութիւն
ընելու պարտական կըլլայի։ որչափ
առաւել քեզ տեառնդ իմոյ, որ ես ա-
րարիչ իմ, Աստուած իմ, այսօր խա-
չուդ եզար նաև փրկիչ իմ։ Եւ նոյն
սուրբ խաչը ինծի դէ՝ զօրութիւն՝ և
ապաւէն տրվէր, որ ինչպէս Իսրայէ-
լացիներքը երբոր պղնձէ անկած օձին
վրայ կընայէին, օձին խայթոցէն կը-
բժշկէին, ասալ սուրբ խաչին վրայ
նայածիս՝ պէտ՝ ամէն սատանային հին
օձին փորձութիւններքը կրփարատին,
հոգւոյս հիւանդութիւնը կրբժշկվի,
տկարութիւնս կրզօրանայ, համբե-

րութիւն կրսորվի։ Անոր հաճար ցն-
ծութեամբ կերգեմ ըսելով, Փառք
սուրբ խաչիդ քո սէրը, որ սասնակ զ-
ըսաւոր գեղ հաստատեցիր ինծի հա-
մար։

Ցերեկորդ ա-որ։

Երկրպագելով այսօր սուրբ խաչիդ
սէր իմ Ցիսուս, երկու հնորհ խնդրեմ
պարգևել. մէյմը որ՝ քու սուրբ վա-
րուց օրինակը տպաւորվի իմ վրայ.
ինչպէս որ առած մարմինդ՝ Աղամայ
մեղաւոր մարմնոյ նմանն ըլլալուն հա-
մար՝ բոլորովին խաչին վրայ գամեցիր
մեռուցիր, եսալ իմ մարմինս կրթու-
թեամբ և Ճգնութեամբ խաչին վրայ
գամեմ, Ճնշեմ, ադամային չար կիր-
քերս խաչին վրայ մեռցնեմ։ Եւ ինչ-
պէս որ ադամային մարմնովդ մեռ-
նելով, նոր մարմին մը առիր գերեզ-
մանէն յարութիւն առնելով, որ բո-
լորովին անկիր էր, եսալ ես մեղաւոր
մարմինս մահացընելէն ետև, յարու-
թիւն առնեմ իմ մեղքէրսս, և նոր
մարմին հոգևոր առանց կրից, հնա-

Digitized by Google

զանդ աստուածային պատուիրա-
նաց ։

Երկրորդ շնորհք տաս ինձի, որ
ուրչափ խաչ խրիչ իմ վրաս աստուա-
ծային կարգաւորութիւնը, ամենիւն-
ալ սիրով համբերելով քաշեմ. քու
սուրբ խաչդ մեկ նեղքին զորութիւն
և ուժ մը առնեմ. վասն զի թէ որ
դուն արդար անմեղ էիր, և իմ սիրոյս
համար ասչափ խաչ քաշեցիր, քանի
աւելի պէտք է որ ես մեղաւորս քա-
շեմ ։ Բայց քու սուրբ խաչդ զորու-
թեանը կարօտ եմ, քու բաժակդ ըմ-
պելու՝ քուկին շնորհդ պէտք է.
ինչպէս որ երկու սիրելի առաքեալ-
ներուդ շնորհեցիր բաներով, Զ բաժանին
իմ ըմպիսկէք. անով զօրացան, այնչափ
չարչարանք քաշեցին, անանկալ շնորհք
ինձի այսօր ան սուրբ խաչդ մեկ նոր
զորութիւն մը, որ հոս քաշեմ, ան-
դին չքաշեմ. սիրով քաշեմ մեղքէ-
րուս համար՝ աստուածային կամքը
կատարելու համար, և քու սիրոյդ
համար, որ եղանալ երկնաւոր հօրմէդ
արժանի ըլլամ մեկաեղ քեզի հետ
նստելու 'ի յարքայութեան. Ամէն ։

Ի ՏՕՆԻ ԸՆԾԱՑՄԱՆ

Ես՝ Վ. ամենօրհնեալ կոյս Մարիամ, սիրելի հարսն Հոգւոյն սրբոյ, ի հնոր հօր. երբեմն կրմոտածեմ ասօրվան ը ընծայ՝ կրզարհուրիմ կրգոլամ իմ վրայ նայելով։ Դու բոլորովին սուրբ ըլլալով աւելի սրբութեանմէ Աստուծոյ ծառայելուզեցիր, անոր համար պզտիկուց գունքեզ բոլորովին Աստուծոյ ընծայեցիր. եղբնալ ամենն օր՝ ամենն ժամ Աստուած օրհնելու հետ եղար, ու իրեն ծառայելու։

Եա պզտիկուց մեղաւոր ըլլալով ծանր անօրէնութեանմէ լեցուած ըլլալով, ես իս ոչ Աստուծոյ կընծայեմ, և ոչ իր սուրբ պատուիրանքները պահելու հոգ կունենամ. Աստուծոյ ծառայելու չեմ նայիր, հապա իմ կամքս կատարելու. առջի բրած մեղքերսալ չեմ ապաշխարեր, մանաւանդ թէ նոր մեղքեր կրգործեմ. ասան

Digitized by Google

կով բոլորովին ներհակ վարք կրվա-
րեմ քու սուրբ վարուցդ գէմ։ Դու-
պզտիկուց Աստուծոյ ծառայող, ես
պզտիկուց Աստուած արհամարհող.
դու պզտիկուց Աստուած փառաբա-
նող, հրեշտակաց դասակից, ես պզ-
տիկուց Աստուած անարգող իմ չար
գործքերովս, և գործակից բերկրայ-
հիանալ չունիմ արիութիւն զքեզ-ամ
ընելու, ծուլութեան սատանան իս
գերի է ըրեր։

Այլ այսօրվան ասնին ինորհացը
համար ըլլայ, մէյմը վերէն երկնքէն
նայէ մայր սուրբ իմ խեղճութեանս
վրայ, ինծի օգնութիւն հասիր. տուր
մէկ շնորհք մը որ՝ աս օրէս ետև ես իս
Աստուծոյ ընծայեմ, սիրտս միտքս
բոլորովին Աստուծոյ նուիրեմ. աս-
օրվան քու ընծայումդ ինծի օրինակ
առնելով, փոխանակ որ ինչվան հիմա
աշխարհի՝ մարմնոյս՝ ու սատանայի
ծառայեցի, աս օրէս ետև իմին մնա-
ցած օրերս Աստուծոյ ծառայութիւնը
մեջը անցուցնեմ։ Ան աղօթքերը՝ որ
քեզ ընծայելու ատենը Աստուծոյ

Digitized by Google

ըրիր , ան վառված սէրն աստուա-
ծային՝ որ այսօր ցրցուցիր , ան խոս-
քերը որ Աստուծոյ հետ խօսեցիր
քեզ նուիրեալուդ ասենք, եւսալ անոնք
կընուիրեմ Աստուծոյ , խմին աղօթ-
քիս հետ խառնելով Աստուծոյ կը-
մատուցանեմ՝ որ քու բարեխօսու-
թեամբդ իսալ նորէն ընդունի , նա-
ւրէն սրբէ, ազբայութեան երկնից ար-
ժանի ընէ. Ամէն ։

Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԱՏ ՅԱՂՈՒԹԵԱՆ

Ո՛վ երկնաւոր Թագուհի , ով
հարսն անարատ հոգւոյն սրբոյ , ար-
քայի սիրելի եղար Աստուծոյ որ ջիր-
նած՝ սկսար սիրել ։ Ո՛րչափ հաճոյ
էիր Աստուծոյ աչքին՝ որ Ադամայ
զաւակ էիր, բայց Ադամայ մեղքը չու-
նեցար , ազատ եղար սկզբնական մեղ-
քէն ։ Մարդ էիր՝ բայց յղացած առե-
նէդ մարդու մեղքէն խաւրսեցար ; մեկ
արատ մը վրադ չիգտնրվեցաւ , մեկ
անուն մը մեղքի վրադ չիփակաւ . ա-

Digitized by Google

նոր տեղը բոլորովին հոգւոյն տրեալ շնորհքներովը զարդարվեցար։

Այսպիսի շնորհքին համար՝ որ ամենասուրբ Երրորդութիւնը քեզ ստանկ անարատ պահեց ամենեն մեղքէ ու վամենասրբուհի, կաղաչեմ՝ իս որ բոլորովին մեղք եմ կորեր պզտիկուց, տրբես տրդարացնես առջի մեղքերես։ Արինդրեմ որ՝ մէյմը երկրնքէն նայես իմ վրայ, իս յիշես որ՝ ամենևին մեղքերու մէջ կորսվեր եմ 'ի մանկութենէ. երկու յատուկ շնորհք պարգևեցուցինծի այսօր, մէյմը՝ ապաշխարութեան զղջման շնորհք, մէյմիսալ՝ անմեղութեան՝, որով առջի ըրած մեղքերս ապաշխարութեամբ լալով ջնջեմ, ասկից ետքնալ մէկ մեղք մը չի գործեմ. անանկով Աստուծոյ և քու ամենապայծառ տեսութեանդ արժանի ըլլամ։ Ամէն։

Աւ աղօթք։

Մայր սուրբ, ասանկ ուրախալի օրդ Անարատ յղութեան իս պատպ մի հաներ, իմ ապաշանքս մի մեր-

ժեր, այլ զարթուցեան աթոռեդ մէջ մը իմ վրայալ նայելով. զարմանք, որ անօրէնութեամբ ծանրացած՝ չարաչար մեղքերով լեցուած՝ կրդողամ, կրյուսահատիմ, չկրնամ ուր ալիսոր երթամ, ինչպէս ալիսոր երևնամ արդար դատաստանին առջեւն։ Միայն քու մայրական աթոռիդ առջեւն իս կրձգեմ, դէտինը ինալով կաղալակեմ. սասրվան շնորհքէն ինծիալ մէկ փշրանք մը շնորհաց պարգևէ։ Դու որ յարդանդի մեր անարատ յղացար, իս անօրէնութեամբ մեծցածս այսօր արքէ. ինչպէս որ ամենասուրբ Երրորդութեան անունը փառաւորվեցաւ զքեզ սկզբնական մեղքէ պահելով արքելով, անանկալ քու և Յիսուսի միածնի անունը կրփառաւորվի, թէ որ այսօր իմ ամենեքեանի մեղքերուս կատարեալ թողութիւն առնես, արքես, որ Աստուծոյ հետ հաշտվելով, բարեգործութեամբք զարքայութիւնն ժառանգելով, զԱստուած և զքեզ յաւիտեան փառաբանել արժանի ըլլամ. Ամէն։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ԱՌ ՍՈՒՐԲՍ

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՑՈՀԵԱՆՆՈՒ ԿԵՐԱԳՆՏԻ

Ի՞ՐԱՀԱՅԻ Եղաւ ով սուրբդ Աստուծոյ քու ամենեն գործողութիւնդ յղութենէդ սկսեալ, աւետեաց Գաբրիել հրեշտակին աւետարանեալ։ Մեծ եղաւ քու արքութիւնդ. յարդանդի մօրդ տրբրվելով ամենեն մեղքէ անարատ գտար առաջի Աստուծոյ։ Փառաւոր եղաւ քու ծնունդդ՝ սուրբ Աստուածածնայ և Յիսուսի այց ելանելովը. ան օրը Յիսուսին մսակինալովը շնորհքով լեցվեցար, չխոնարհ ըլլալով։ յարդանդի Հանչցար հաւատով, և ուրախութեամբ երկրպագութիւն տալիր։ Տուր ինծիալ ով

Digitized by Google

սուրբդ Աստուծոյ, որ երբոր աղօթք կընեմ, ժամն Աստուծոյ առջին կելլամ, մանաւանդ երբոր պատարագ կըտես նամ, Յիսուս տեսածի պէս ըլլալով հաւատքիս աչքովը՝ ուրախութեամբ աղօթքս ընեմ. պատարագին մէջնալ Յիսուս դէմ յանդիման տեսածի պէս ըլլալով պատարագը զմայլելով տես նամ, երկրպագութիւն ընեմ:

Զարմանալի է՛լաւ քու մանկութիւնդաւ՝ որ միշտ Յիսուսին հետ տեսնելիցար, Յիսուսի հետ ընկերակից՝ ու խօսակից ըլլալով անցուցիր ժամանակդ. տուր ինծի՝ լաւ ան շնորհքը՝ որ իմ սիրտս միտքս միշտ Յիսուսին տալով Յիսուսի հետ խօսակից ըլլամ աղօթքով: Երբոր չափահաս եղար մեծցար՝ տունդ ազգականներդ թողուցիր, լեռը փախար, որ մեզ քերդ հեռնաս. տուր ինծի՝ որ՝ պատուա աշխարհային բաներէն հեռնամ, մեզ քերդ փախչիմ: Երբոր Յիսուս Յորդանան եկաւ, դուն եղար վկայ և քարոզիչ, ամէնուն՝ քարոզելով որ սա է դուն Աստուծոյ, որ բաս-

նայ զմեղս աշխարհի. տուր ինձիալ որ՝ խօսքովս և վարքովս զՅիսուս քարոզեմ. ինչ որ Աստուծոյ կամացը դէմ բան մը ըլլայ՝ չամչնամ, վկայեմ։

Սեղք չունէիր՝ մեղաւորի պէս ապաշխարեցիր, ազքատութիւն քաշեցիր, չոր ուտելով կաչի հագնելով ճգնեցար. տուր ինձիալ որ՝ ես գլուխս մեղաւորաց՝ իմ ծուլութիւնս, իմ ձանձրութիւնս մէկդի ձգեմ, ճգնութիւն ապաշխարութիւն յանձն առնեմ, կամքս և իմ չար ցանկութիւնս մահացնեմ։ Երբոր Հերովդէս պիտոր մեղանչէր, մարգարէ ահը մէկդի ձգեցիր, թագաւորին չվախցար, մեռնիլը յանձն առիր՝ քան թէ մեղանչելը, անանկով յայտնի դէմ ելլար, յանդիմանեցիր. տուր ինձիալ որ՝ երբոր իմ չար կամքս, և կամ չար ընկերս մը Հերովդէսի պէս ‘կուզէ իս մեղք խօթել, յայտնի դէմ ելլամ, Աստուծոյ պատուիրանքները պահեմ, քու վարուցդ նմանելով քեզի հետ մեկտեղ զՅիսուս փառաւորելու արժանի ըլլամ. Ամէն։

Digitized by Google

Յայտնամ գծեի նորին

Ո՛վ Երանելիդ՝ ի մէջ սրբոց, որ Յիսուսին բերանովը գովեցար, թէ քեզի նման մէկ սուրբ մը չէ գտնուած աշխարհիս վրայ, որ եղար Յիսուսի կարապետ ու մկրտիչ, մարգարէ, Հրեշտակաբար, քարոզիչ, ետքնալ մարտիրոս եղար՝ արիւնդ թափելով Աստուծոյ պատուիրանացը համար, անանկով սուրբերուն առջեն դասին մէջ ընկերակից եղար, ամէն դասերուն առնուանի ըլլալով։ Հիմա ան երկնային փառքիդ մէջէն նայէ այսօր իմ վայ ո՛վ սուրբդ Աստուծոյ, ու մէկ զօրաւոր շնորհք մը ընդունէ քու վարքիդ հետևելու, մանաւանդ շնորհք երկիւղին Աստուծոյ, շնորհք Հզնութեան և ապաշխարութեան։

Դո՛ւ էիր՝ որ խօսքովալ վարքովդ ալ ապաշխարութիւն քարոզեցիր, մեղքերին խոստովանիլ սորվեցուցիր, փրկութեան Հաստատան առջեն ուղղեսաւորուելու՝ ինչպէս զինուորուելու նալ ցոյցուցիր։ Ե՛ս որ՝ այսօր քու

տուրք տանք կատանեմ, եկեր տալիք ընկերեմ յուսահատված, թնչ պատասխան պիտոր տամ Աստուծոյ։ Եա որ մեղքի պատճառներէ չեմ փախչիր, աչքս՝ ականջս՝ բերանս չեմ զգուշացնէր, առչի ըրած մեղքերուս համարալ մեծ մեղաւոր ըլլալով ան հոգ եմ կեցեր ապաչխարելու, խոստովանելու, ճգնութիւն քաշելու, հիմա յոյս միայն քեզի դնելով կաղաչեմ որ շնորհք առնելով փրկութեան ճամփան իս բերես։

Ի՞նչ չփոթութիւն կրբերէ ինծի պատանան, թնչ որ ապօրինքիս ճանաչութիւն բերել կուտայ, խոստովանութիւնը՝ ծանրը բան մը կրբրցնէ ատանք ամմէնը գուն փարատէ, լուսաւորէ, փորձութիւններէ իս պահէ քու արդեանցդ և փառացդ միշնորդութեամբ։ Վասն զի գիտեմ որ՝ քանի մեծ է փառքդ, անչափալ մեծ է քու բարեխօսութիւնդ։ Նաև սրբոյն Գրիգորի լուսաւորչին ապաչանացը համար՝ որ քեզ մեր ազգին պաշտպան բռնելով տալով աղաչեց որ բարեխօս

Digitized by Google

բլլաս ամմէնուս։ Եսալ ան սրբոյն աչկերան եմ, անպտուղ չըլլայ կաղաչեմ անոր արդիւնքը, այլ իմ փրկութեամբս՝ անոր և քու պաշտպանութիւնդ՝ ի փառս ամենասուրբ Երրորդութեան փառաւորվի միշտ և յաւիտեան. Ամէն։

Ի ՅՕՆԻ ՍՐԲՈՅՆ

ՅՈՎՍԵՓԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐ

Ով երկնային պաշտպան, հզօր պահապան, ինչ երջանիկ մահ էր քու սուրբ մահդ, երբոր մէկդին Յիսուս, մէկալդին Աստուածածին քովդ կենալով, անոնց հոգևորական մխիթարութիւնները կըլսէիր, և դէռ ալքայութիւն չիգացած՝ իբր թէ ալքայութեան մէջ կըվայելէիր, սեմնելով զՅիսուս, և զԱստուածածին, և անոնցմէ քաջալերութիւն առնելով։ Աստանկ երջանիկ մահուամբ մեռնելով ով սուրբդ Աստուծոյ գիտեմ

որ՝ գունալ կուզես ամենեսուն հանիլ
իրենց մահուանը առեղը, սվ որ քեզ
պաշտպան բռնելուն՝ որ բարի մա-
հուամբ աս աշխարքքես ելլան ։

Հիմա ես 'ի խորոց սրտես կաղաչեմ, ան իմ նեղութեան գէշ օրս՝ որ
է մեռնելուս առեղը՝ գուշ իբրև հայր
և պաշտպան մեծապէս ինծի հասիր ։
երբոր մարմնոյս գիացին տեսնամ պի-
տոր շունչս դժվարցած, աչվընէրս
մթնցած, ձեռվընէրս անշարժ, իմին
մտիկնէրս գուրս փախած ։ Հոգիս
գիացնալ տեսնամ պիտոր՝ որ մէկ
ջուռանրված օտար աշխարհ մը պիտոր
երթամ, ահեղ դատաստանին առջին
պիտոր ելլամ։ իմ ամենն գործքերուս
վրայ անաչառ դատաւորին համար
պիտոր տամ։ Ահ, սուրբդ Աստու-
ծոյ, երբոր կըտեսնաս իս աս նեղութեան առեղը, հասիր ինծի վերէն
երկնքէն իբրև մէկ գթած հայր մը ։
քովս գտնըվէ ինչման որ հոգիս աստանգեմ, որով փարատի յուսահատութիւնս, լուսաւորվի հաւատքս, հաստատվի յոյսս, զօրանայ սէրս ։ որ քու-

կին հզօր բարեխօսութեամբդ մեղքէ-
րուս թողութիւն առնելով արքայու-
թեան երկնից արժանի ըլլամ։

Ա՛ աղօթքս որ հիմա կընեմ ո՛վ
սուրբդ Աստուածոյ, կազաչեմ որ եա-
քի մահուանս օրը ըրածի պէս ընդու-
նիս, որովհետև չեմ կրրնար ան ատե-
նը ընել։ Եւ այսօրուայ որ քուկին սուրբ
օրդ է՝ կրնդրեմ մէկ զօրաւոր հնորհք
մը ինծի առնուս դղջման, որ առչի ը-
րած մեղքերս լամ, և աղէկ մը առա-
ջադրելով եան կենամ՝ մանաւանդ ա-
վորական մեղքերէս, բարի քրիստո-
նէի կեանք ունենամ ինչվան իմին
մահս։

Աւ աղօթք։

Ո՛վ երանեալ սուրբդ Աստուածոյ,
դու միայն այնչափ փառաք պատուե-
ցար, որ Աստուածահայր ըսվիլ ար-
ժանացար. վասն այնչափ փառացդ
կաղաչեմ ընդունէ ինծի հնորհք արթ-
նութեան, որ իմ մահս վայ չեկած,
արթուն կենալով արժանապէս պատ-

բաստարվիմ՝ ինչպէս որ կըպատուիրէ տէրն իմ, չըլայ թէ մահը իս մեղքի մէջ գտնայ։

Եւ ամէն բանէն վերը աս իրէք բանը կրինդրեմ որ ընես։ Ա՛էյմը՝ յանկարծակի մահուանէ իս ազատես. չըլայ թէ անպատրաստ ելլամ աշխարքէս, այլ ժամանակ ունենամ զղջում ընելու, սուրբ Աստուածածնայ և քուկին հզոր պաշտպանութիւնդ խնդրելու։ Երկրորդ՝ կրիսնդրեմ որ ան եղբի հիւանդութեանս մէջ՝ խեղքս մեկէն չկորնցրնեմ, հապա գտնէ քանի մը օր մեռնելէս առաջ խեղքս գլուխս եղած ըլլայ, որ հոգեւոր պատրաստութիւնս կարենամ տեսնայ՝ զղջալով, իս բոլորովին Աստուածոյ նուիրելով։ Երրորդ՝ ասէն ունենամ քահանայ գտնալու, բերանս բաց ըլլայ խոստովանելու, որ եղբի խոստովանանքս զղջացեալ սրտով ընելով ամէն Քրիստոնէական պատրաստութեամբ և սուրբ հաղորդութեամբ քու պաշտպանութիւնդ և հզոր բարեխօսութիւնդ գտնամ։

Digitized by Google

Անանկով Աստուծոյ առջին եկեալով, արժանի ըլլամ Յիսուսի բերնէն լսելու. Աղնիւ ծառայ, մուտ յուրախութիւն տեառն քո. Ամէն ։

Ի ՅՕՆԻ ՍՐԲՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ո՛վ սուրբ Գրիգոր լուսաւորիչդ առաջ անտանելի չարչարանքներովդ՝ եղբը տասնրչորս տարի խոր վիրապին մէջը անդադար աղօթելովդ՝ իս շահեցար, հայր հաւատոյ ինծի եղար. քու քարոզութեամբդ գոյայ ես աստուծոյ հաւատքս. որով սուրբ աւազանին մկրտութեան շնորհքին հասայ։ Բայց ես անիկայ շատոնց կորսնցուցի, հոգիս մեղքերով վիրաւորեցի, հաւատացեալոյ անուն ունեցայ, անհաւատի գործքեր ընող եղայ ։

Կաղաչեմ այսօր քու բարեխօսութեամբդ ընդունիս ինծի մեկ շնորհք

մը՝ որ հաւատքիս կէօրէալ գործք ու-
նէնամ. վասն զի իմ մոլութիւններս՝
իմ չար կիրքերս՝ տիրերեն նման կուա-
պաշտ թագաւորի իմ պրտիս վրայ.
ինչպէս որ գուն Տրդատայ անհաւա-
տութեան՝ բռնութեան՝ հպարտու-
թեան՝ աշխարհասիրութեան՝ յաղ-
թեցիր չարչարանքներդ քաջելով ու
աղօթքով, ընդունէ ինծի՛ չնորհք
որ՝ եսալ հոգևորապէս պատերազմե-
լով և աղօթքէ չփանձրանալով իմ
չար ունակութիւններուս յաղթեմ։

Եւ ինչպէս որ՝ Տրդատ շահեցար,
շտկեցիր՝ հաւատացեալ՝ խոնարհ՝
աստուածասէր ըլլիր, եսալ Տրդատայ
պէս իս շտկեմ՝ առաքինի ըլլամ։
Խոզ եմ գարձեր իմ գարշելի մեղքե-
րովս, դուն հայր սուրբ՝ մկրտութեան
չնորհքը նորէն ինծի գարձնելով
Տրդատայ պէս իմ գարշելի մեղաւոր
կերպարանքս փոխես, չնորհքով զարդ-
դարես։

Եւ ինչպէս որ սատանանէրը թող
չէին իսար կռատուն քակելու, դուն
խաչակնքելով մը մեկէն քակեցիր, ե-

Digitized by Google

կեղեցի չինեցիր, ասանկալ այսօր երբ կրնքէն վրաս խաչ հանելով օրհնէ իմ սիրտս որ՝ աստանանելը բռնէր նստելրեն, կռատուն են գարձուցեր մարդուԹեամբ ու մեղքերով, Թող չէն խոսար գանունալ ու ապաշխարել, աս քարտցեալ սիրտս այսօր քուկին օրհնելովվիսիկի, հոգւոյն սրբոյ տաճար ու եկեղեցի ըլլայ։

Յայտնամ պտի նորին։

Ո՛վ Հշմարիտ հոգիս հոգւոց, նայէ մէյմի երկնքէն իմ խեղճութեանս ու ողորմելութեանս վրայ. լսէ այսօր իմ ձայնիս, չեմ արժանի քու ողորմութեանդ, ինչու որ՝ կամաւորապէս մեղանչեցի։ Բայց քու բարեխօսութիւնդ այսօր քու տնեիդ օրը զորաւոր է առաջի Աստուծոյ, մի բարկանար վրաս՝ այլ ողորմէ. մի զլկեր զիս այսօր քու հնարքերդ. վասն զի քու անունդ վրաս կոչված է, քու որդիդ եմ, արտուղ եմ քոց հարչարանաց և ազաթից. իմ կորսըվելուվս սատանան չու-

րախանայ, չըսէ որ՝ քու զաւակէդ մեկը կորսնցուցի։

Ինչպէս որ Ճշմարիտ հաւատքիդ խաժառանգ ըլլիր, անանկալ այսօր քու կին վաղքիդ հետեւող ըլլէ, որ հարազատ որդւոյ պէս վաղքովսալ քեզի նմանիմ։ Դու ամէն պատուղ քարոզուԹեանդ ընելէն ետու՝ բիւրաւոր հոգիներ շահելէն ետու՝ ամէն բան Թողուցիր, սեպուհ լեռը քաշվեցար, հոն ճգնուԹեամբ ու աղօԹքով անցուցիր մնացած կեանքդ, օրինակ տալով ինծի որ՝ ամէն բանէն վեր Թէև ուրիշներուն հոգւոր շահը ըլլայ, իմ հոգիս պէտք է առաջ հոգալ, ուրիշներուն հոգը մէկդի Թողուլ։

Պէտք համար եւալ այսօր ամէն բանէն աւելի աս կրթնդրեմ, ինծի համար զօրաւոր շնորհք մը առնես, որ Թողում ուրիշ հոգերը՝ միայն ես իմ հոգիս հոգամ, սովորական մեղքերէս ետ կենամ, ալէկ մը խոստովանելով իմ առաջադրուԹեանս վրայ հաստատուն մնամ։ Վասն անուան քո ով Հայր երանեալ, առ ինծի այս

Digitized by Google

օր աս հնարքը, որ ասկէց ետքը բարե-
գործութեանց հետ ըլլալով աղքայու-
թեան ժառանգ ըլլամ. երկինքը քովդ-
նստելով Աստուծոյ երեսը տեսնալու-
ու քեզի հետ մեկտեղ Աստուած փա-
ռաւորելու արժանի ըլլամ. ան ատե-
նը երանամ քու հարազատ որդիդ,
քու արդեամքդ և բարեխօսութիւ-
փրկութիւն գտնալով ՅԱստուծոյ ։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ

ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ո՛ՐՉԱՓ որ կրվախնանք ատուա-
ծային բարկութենէ՝ որ մեր մեղքէ-
րը կրպատժէ զարհուրելի ժանտախ-
տին պատժովը, այնչափալ աւելի ա-
ղաչանքով քեզի կրդիմենք մեր հրաշա-
գործ սուրբդ Աստուծոյ, որ ամենն
ցաւէ՝ բայց մանաւանդ աւելի ժանտախտէ
կրպահես մեր որ քեզի կրդիմէ ։ Իրա-
ւի՝ իմ մեղքերուս համար քիչ է առ

Digitized by Google

պատիժս, բայց ես աւելի կրվախնամ
իմ հոգւոյս համար քան թէ իմ մարմնոյս, չըլլայ որ՝ ասանկ ժանտախտով
բռնըված ըլլալով զգկրվիմ սուրբ խորհուրդնէրէն, կամ թէ չիկրնամ աղէկ
պատրաստութիւն տեսնալ, անանկով հոգիս կորսրվի։

Հիմա ով սուրբդ Աստուծոյ, քու
կին համարձակութիւնդ որ մեծ է Աստուծոյ առջին, մանաւանդ ասանկ
ժանտախտակ խալըսելու համար, ընդունէ իմ ապաշխարանքս չինայելով իմ ա
նարժանութեանս վրայ. պահէ իս երբոր Ճամփուն կերթամ, երբոր գուրս
ներս կրմտնամ կենալամ. վասն զի միշտ
վտանգի մէջ կրքալեմ, ապաւէն մը
չունիմ բայց 'ի քու հզոր պաշտպանութենդ։ Չէ թէ միանակ ինծի հա
մար կաղաչեմ, այլ նաև իմ ամենէն ազգականներուս ու մօտիկներուս համար, որը միաբան քու ոտքդ կինանք, ապաստանելով կաղօթենք որ փրկես
խալըսես ասանկ ուս ահաւոր պատուհասէն Աստուծոյ։

Թէ որ Դաւիթ մարգարէին աղա

Digitized by Google

չանքին ջիդիմացաւ պատուհասազ հրեշտակն Աստուծոյ, այլ անգամն ա-նաստանելիրուն պատարագով բարկու-թիւնը անցուց, սուրը ձգեց, հաշտը-վեցաւ, հիմա քանի աւելի, որ մենք ամենիս միաբան անմեղ գառն անա-ղատ զՅիսուս միածին պատարագ հանելով սուրբ սեղանին վրայ՝ անանկ կապաչենք քեզմով զամենասուրբ Եր-բորդութիւնը, ինչպէս ասուածային բարկութեան սուրը ետ չիգառնայ։ Ո՛վ սուրբդ Աստուծոյ, քու հայրու-թիւնդ այսօր է որ պիտոր ցրքունես մեր վրայ, քուկին պաշտպանութեամբդ այսօր մեզ պաշտպանէ, որով և Ա-ստուծոյ անհնուն ողորմութիւնը և գը-թութիւնը փառաւորվի քուկին բա-րեխօսութեամբդ։ Մենքալ ցնծու-թեամբ ասենք քու սուրբ յիշա-տակդ, և միշտ երախտագէտ ըլլալով գոհանանք Աստուծոյ բարեբարու-թեանը վրայ հոս և՝ հանդերձեալն արքայութեան մէջ. Ամէն։

Digitized by Google

Ի ՅՕՆԻ ՍՐԲՈՅՆ ԱՆՏՈՆԻ

ԱՆԱՑ ԱՑԱԿԱՆԻ

Ո՛վ սուրբ հայր Անտոն, գլուխ Ճգնաւոր անապատականաց, առաջնորդ հոգևոր վարուց. դուն սորվեցուցիր ինչպէս պէտք էր ծառայել Աստուծոյ՝ մարդիկներէ փախչելով, երկրաւոր մտմտուքները թողլով, երկնային խորհուրդները մտածելով. դուն սորվեցուցիր մարմինը Ճգնութեամբ զսպել, աղօթքով մտածականով զմայլել, սատանայի փորձութիւններու դէմ դնել, Աստուծոյ միայն ծառայել, անանկով գժոխքի կրակէն նաև մարմնաւոր կրակէն պահպանող ու պաշտպան եղար մեզի։

Այսօր որ քու սուրբ ոտնիդ օրն է, յիշէ՛ զմեզ սուրբդ Աստուծոյ, ինչ քաջեցիր ինչպէս որ աս շնորհքները առիր, իմ քաշածներսալ տես հիմա յիշէ. մեկ զօրաւոր շնորհք մը հոգւոյն

Digitized by Google

սրբոյ սո. ինծի համար, որ Եսայի մարգարէն վարքս բոլորովին փոխեմ, քու վարուցդ հետևիմ։ Ցիշէ հիմա ինչ փառքի մէջ կրզմայլիս, քաշածներուդ վարձքը կրվայելես, իսկ Ես սասանկ ողորմելութեան մէջ կրստուգուիմ, աշխարհքիս՝ մարմնոյ՝ և սատանայի փորձութիւնները կրքաշեմ. դու որ ան փորձութիւնները քաշելով վայելելոյ, յաղթեցիր, վերջն երկնքէն վրաս նայելով փորձ եղողն պէս ողորմէ։

Հոգևոր կրակը մեղքերնուս մէջ գիտցէն մեզ կրտանջէ, մարմնաւոր կրակը մեկալ գիտցէն մեզ կրպատժէ։ Դու ով հզօր պաշտպան և բարեխօս, ան հոգևոր կրակէն մեղքէն մեզ պահէ, մարմնաւոր կրակնալ մարքէ. Աստուծոյ բարկութիւնը վրաներնէս հեռացնէ, վասն զի տունէրնիս տեղերնիս քու հզօր պաշտպանութեանդ յանձներնք, քեզի ենք ապաւիներ հաւատով։ Քուկին բարեխօսութեդով սուրբդ Աստուծոյ, արժանի ըլլէ քրիստոնէական հանդստութեանդ

աս աշխարքիս մէջ տընէրնիս խաղաղ անփորձ նստիլ, որ բարի գործքերու հետ ըլլալով անգինալ աղքայութեան մէջ զքեզ տեսնել, և քեզի հետ մէկտեղ զամենասուրբ Երրորդութիւնը միշտ փառաւորելու արժանի ըլլանք. Ամէն:

Ի ՅՕՆԻ ՍՐԲՈՑ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ

ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ

Ո՛վ լոյս հաւատոյ, ովսէր աստուածային, որ այսօրվան սուրբ կուսանաց մոլորեալն լուսաւորեցիր, արբտէրնին բորբոքեցիր: Ի՞նչ հաստատութիւն չնորհաց՝ որ աշխարհքիս թագաւորութիւնը մէյմը ձգեցին, մէյմնալ երբեր ուսոլնին եկաւ, չիգալձան, չուսլեցին, քաջութեամբ մէկդի նետեցին: Ի՞նչ սէր Յիսուսի, որ թագաւորութիւնը մերժելէն ետսալ՝ չարչարար տանջանք յանձն առին, Յիսու-

Digitized by Google

ամն համար կեանքէրնին տրվին։

Երբոր ես ատոնք կըմտածեմ, իմ վարքիս վրայ նայելով կըզարհուրիմ, ուրչափ հեռու եմ եղեր ատոնց ճամփէն, որ աշխարհիս մեծութիւնը, փառքը, հանգստութիւնը ազէկ կըսեպեմ, իսկ Աստուծոյ տրված խաչը՝ նեղութիւնը՝ գժալ կըսեպեմ, կըճշդոհամ։ Հիմա այսօրվան սուրբ կուսանաց արդիւնքովը ով հոգիդ սուրբ առջևդ կիյնամ կաղաչեմ, անոնց հաւատքին՝ անոնց սիրոյն՝ մէկ շնորհքը տուր ինծիս, որ եսալ ատոնց ճշմարիտ քրիստոնէութեանը նմանիմ։ Մի նայիր իմ անարժանութեանս վրայ, այլ յիշէ ան օրը՝ երբոր աս սուրբ կուսանքը մէկդիացէն տանջանք կրքաշէին, մեկալ դիացէն բորբոքեալ սրախաքեզի ալօթք կընէին։

Եսալ հիմա անոնց ալօթքը քեզ կըմատուցանեմ, և կրխնդրեմ որ ատս ինծի անոնց շնորհքը մաքրութեան և յարատևութեան. ասկից եղբը լեղի էրնայ ինծի աշխարհիս հանգստութիւնն ու փառքը, և սիրելի ըլլայ ցեր-

սուտին խաչը և բաժակը՝ որ իրեն սի-
ղուն հանեալ ինչվան արիւնս թափելու-
յանձն առնեմ։ Այս սուրբ կուսանաց
արիւնը պատճառ եղան մեր հաւատ-
քին լուսաւորութեանը, սատոց բա-
ղեխօսութեանցնալ լսէ իմ աղաչան-
քիս, հաւատքս լուսաւորէ որ հա-
ւատքս գործքով կատարող ըլլամ.
յոյսս հաստատուն ըրէ, որ ամենով
ճշդամ, սէրն Աստուծոյ արտիս մէջը
վառէ, որով զգայարանքներս սուրբ
մաքուր պահեմ, աշխարհի մարմնոյ՝
սատանայի յաղթող ըլլամ սրբոց
հետ մէկտեղ զամենասուրբ Երրոր-
դութիւնդ փառաւորելու արժանի
ըլլամ. Ամէն։

ԱՂՕԹՔ ԱՌ ՊԱՐՏՅՊԱՆ ՍՈՒՐԲ

ՍԱՌԱՆՁԵԼԱԳՈՐԾ

Ո՛վ սուրբդ Աստուծոյ ընտրեալդ՝ի հոգւոյն սրբոյ, ես անարժանս թէպէտ լքեալ եմ մեղօք, բայց համարձակեցեալ՝ի հզօր բարեխօսութիւն քո՝ կընտրեմ քեզ պաշտպան, և կաղաչեմ որ քուկին բարեխօսութիւնդ անպակաս ընես ինծի համար, հանեսիս ինծի երկնային զօրութեամբդ՝ որչափ որ հոգւոյս ու մարմնաւոր վտանգներուս մէջ ենամ, և որչափ որ քեզ օգնութիւն կանչեմ ինծի։

Ցիշէ՛ ով սուրբդ Աստուծոյ՝ որ աստուածային անհուն զօրութիւնը քեզ խալսպնեալով աս աշխարհիս փորձութենէ՝ անանկով ժառանգ եղար երկնային աքքայութեան, կրվայելես, կրզմայլիս հիմա աստուածային տեսութեամբ, իսկ ես դեռ աշխարհքիս մէջը ըլլալով, խռովութեան ու աղէ-

կոծուելեան մէջ եմ. հոգիսալ մար-
մինսալ միշտ կոչարչարվի, մեղքի մէջ
ալ լցված ըլլալով չեմ կրնար համար-
ձակիլ չիտակ գիմել առ Աստուած՝ որ
մեղքերովս բարկացուցի։ Քեզի կը-
համարձակիմ իմ պակասութիւններս
ցանալ. դունալ վերջին երկրնքէն
շուտ մը ձայնս լսելով միջնորդ ըլլաս
Աստուծոյ, ամենեին առաջ մեղքե-
րուս թողութիւն առնես. իս հաշ-
տեցնես Աստուծոյ հետ. հոգւոյն
ապրելոյ զօրութիւնը ինծի պարգևել
տուաս, որ քանի փորձութիւն բերուն
ինծի սատանան, մարմինս, ու աշ-
խարհ, մեղքի մէջ չինամ, վրայ եկ-
լամ։

Անկէց ետքը ինչ որ մարմնաւոր
կարօտութիւն ունենամ, քեզի գի-
մեմ, դունալ հասնիս հոգաս որ՝ իմ
հոգիսալ կարիքնայ անզգալ Աստու-
ծոյ ծառայել։ Հիւանդութեանս ա-
տենը հասիր բժշկէ, տուտուտրիս
մէջ ինորհք առ ինծի առանց մեղաց
ապրելութեանս ընելու, և յաջողու-
թիւն տուր չարիաւորապես վասալ-

կելու, որչափ որ պէտք է որով ապրինք Աստուծոյ ծառայելու համար։ Շատ ձախորդութիւն, շատ կարօտութիւն չունենանք, ջղլայ թէ մեր միտքը սիրտը աւելի դրաղեցնենք անով աշխարհային հոգերու մէջ, որով հոգինէնուս ալեաս ըլլայ։ Զանազան փորձանքներէն, կրակէն, մահ տարաժամէն, գոնա մեր տունը պահես, յանկարծական մահուանէ փրկեսս, քաղաքական չար պատահմունքներէն որ կրնան հանդիպիլ նասիլ ելլանիսի, ծովու վայ, ցամաքի վայ, Ճամբորդութեան մէջ, տանը մէջ, մեզ ամենքս ամենն ժամ պահեսս պահպանեսս։

Ամենն բանէն աւելի կրնդրեմ, մեռնելուս առաջին քովս գտնըվիս որ հոգևոր պատրաստութիւնս լմնցնեսնալով ինչպէս որ պէտք է, անանկով քեզի հետ մեկտեղ զամենասուրբ Երրորդութիւնը փառաւորելու արժանի ըլլամ երկինքը։ Եթալ կատաղագրեմ որ՝ միշտ քեզի ծառայեմ սուրբ Աստուծոյ, քու անունդ պա-

տուեմ ու քարոզեմ՝ ի փառս ամ-
նակալին Աստուծոյ։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Հիւանդոսնեան մէջ, կամ ուրիշ վանք-
նէրու մէջ, աս հեքեաթս աղօթքս։

ՂՈՒԿԱՍ։

Որ բուժեցեր զանբուժելիս,
զմոլոյս բուժեա ըզցաւս անձինս,
Ի գառնութեան ժամանակիս,
հան՝ ի թիկունս, անսա ձայնիս։
Որ զանարժանս, և զարժանիս,
միօրինակ յիշես, հայիս։
Զիմոյս յիշեա զանձին կարիս,
զթած աչքդ յիս հայեացիս։
Երաւալհաս քոյին շնորհիւդ,
Հարատար մատամնքդ յիս մերձես-
ցիս։
Բարեխօսող հրոյր բանիւդ,
փարատեացես զվիշտ վանդիս։ Ա-
մէն։

ԱՂՕԹՔ

ԱՌ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Ո՛վ պահապան հրեշտակ, դուն
ես որ յատուկ պահապան դրված ես
Աստուծոյ իմ անձինս վրայ, քեզի
յանձնված է իմ հոգիս իմ մարմինս
որ պահես։ Կաղաչեմ ջըլայ որ իմ
անարժանութեանս համար իս Թո-
ղուս, տեսանելով իս մեծամեծ մեղքե-
րու մէջ ջարաջար Թապլըշուկված,
որ գանել կրբերեն քու հրեշտակային
բնութեանդ, ջըլայ որ իս երեսէ
ձգես, այլ օրինակ առնելով Ցիսուս-
սէն, որ մեղաւորներուն քովը կեր-
Թար շահելու համար, դունալ նայէ
որ իս շահիս։ Անոր համար ուրջաբ
մեծ մեղաւոր ըլլամ՝ իս մի Թողուր,
քու պաշտօնդ լման կատարէ իս պա-
հելով ամէն հոգւոր և մարմնաւոր
վտանգներէ. անոր տեղը ջար ստատ-
նան հալածէ քովէս, իրեն բերած

փորձութիւնքը խափանէ, տանս մէջ խաղաղութեամբ պահէ, ամէն խռովութիւն և մեղք դուրս հանէ, ճամբու մէջ առուտուրի մէջ խօսքս, գործքս, և կամքս, դուն շտկէ 'ի բարին, որ ամէնօրվան իմ գործքս 'ի փառս Աստուծոյ ընեմ, Աստուծոյ կամքը կատարեմ:

Քեզ յանձն ըրաւ իս Աստուած, դուն հոգա ով հրեշտակդ Աստուծոյ բարեկամ ազգի մարդկան, որ հաւատքս լուսաւոր մնայ, գործքով կատարեմ հաւատքս, յոյսս զօրանայ, սէրս շատնայ, քաց յԱստուծոյ չխնբեմ ուրիշ բան: Երբոր աղօթքի նստիմ, սատանան որ խիստ հակառակ է աղօթքի, ձանձրութիւն կրքերէ, միտքս կրցրուէ, դուն ան ատենը սատանան հալածէ, միտքս վրաս ժողվելու օգնութիւն ըրէ, և իմ ըրած աղօթքս Աստուծոյ առջին հանելտուր, Աստուծոյ հաճոյական ընդունելի ընելտուր: Ամէնէն աւելի կպաշտեմ որ՝ մեռնելուս ատենը քովս գտնվելով քովիկն պահպանութեամբդ չար

Digitized by Google

սատանաներդ վռնտելով, Հանապազ հոգեկիր ըլլաս մեկ տեղ տանելու խաստուքը լեռը երկնային Քրիստոսի առջին, և ահաւոր դատաստանին ատենը իմ գիացէն խօսելով և բարեխօսելով քունկին օգնականութեամբդ արժանի ըլլամ զԱստուած տեսնել, և զքրիստոց հրեշտակաց հետ զԱստուած օրհնել յաւիտեան. Ամէն։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ

Եւ զոմանս էգնէրուն պարբասպի. զի յորոմ ժամու ուլ ամն ունիցի, գայ որդի մարդոյ։ Աբեղան կայնէ, զի ուլ գիրքն զբրն, և ուլ ղնամն։ Մատթ. իգ. իե։

Մարդս ամենն օր պէտք է քրիստոնէին աղօթքով և զղջումով պատրաստ կենալ մեռնելու, բայց սա հետևեալ աղօթքն էրս կրնայ շաբաթը անդամ մը, կամ ամիսը անդամ մը զուրցել. ասով երկու հոգւոր շահ կրնայ շահիլ։ Մէյմի՝ մահուան յիշատակը միշտ սրտին մէջը կրպահուի, որ է ընդհանուր հարկաւոր խրատ ասուրբ գրոց։ Երկրորդ՝ մահուան ատենը չիկրնալով ընել, հիմակուան ըրածները ընդունելի կըլլան Աստուծոյ։ Ակէց զատ՝ ասոնք անանկ ա-

Digitized by Google

ղօթքնէր են, որ կրնան նաև զղջման աղօթքի տեղ անցնիլ ամէն խոստովանանքէն առաջ կամ ետև։

Աղօթք պատրաստութեան մահուան։

Երբոր կը հանիմ տէր իմ ան օրը որ պիտոր ձգեմ աս մարմնոյս բանտը, ելլամ երանամ Աստուծոյ առջեւը, ըզգայարանքներս կապված կը լլայ, չեմ կրնար ան ատենը իմ պատրաստութիւնս տեսնալ, հիմա իմ ողջութեանս ատենը կրնեմ խնդրուածքս ետքի օրվանս համար։

Դուն տէր իմ, հիմակվան ըրած աղօթքս ընդունիս՝ իբր թէ ան ատենը ընէի, և ողորմիս ինծի ան թշուառութեան օրը երբոր աչքերս չեն տեսնար, ականջներս չեն լսեր, միտքս խաւարած կը լլայ, սիրտս և ամէն մարմնս ալեկոծութեան մէջ կենայ վասն զի բոլոր շնչը մարմնոյս պիտոր քակվի, ապրվի, ան ատենը յիշէ տէր իմ քուկին ստեղծուածդ զիս զծառայ քո, որ կեանքը ընծացուցած՝ որ-

չափ տարի որ ապրիլ դրեր էիր յաւիտենից, կը թողու հիմա աս մարմինը գերեզմանի մէջ հողին տակը, իսկ հոգիս կենալ գատաստանի առջին իր վճիռը լսելու։

Ան զոր՝ որ մէկ մարդ մը չիկրնար ինծի օգնութիւն հասնիլ, ան ժամն որ՝ սուրբ և արդարք կը դողան, դուն ալ ահեղ գատաւորդ արդարութեան աթոռը նստած, անաչառ պիտոր դատես իմ ամէն գործքս պզտիկ ու մեծ, հոգևոր ու մարմնաւոր, և եղբի վճիռը պիտոր տաս կամ կորուստ յաւիտենից, և կամ կեանք յաւիտենական։

Ա՛խ, յիշես ան ատենը Տէր իմ աղաչեմ, որ թէպէտ ծանրացեալ եմ մեղքերս՝ բայց դուն ստեղծեցիր զիս, դուն ազատեցր զիս յաւիտենական մահուանէ։ Ցիշէ Տէր իմ, թէպէտ անթիւ են իմ մեղքերս՝ որ ամէն զգայարանքներս գործեցի պզտիկուց սկսեալ, բայց դուն ըրիր աս փրաս՝ ապ միտք՝ աս աչքս՝ բերանս՝ և ամէն զգայա-

ղանքնէրս, հիմա ինչպէս թողուս որ՝ աս քու ձեռագործդ դատապարտը-վի, ինչպէս թողուս որ աս քու ստեղ-ծուածդ՝ թշնամւոյդ սատանային ձեռքը անցնի։ Աղաչեմ Տէր իմ, վասն արարչագործութեան սիրոյդ՝ որով կրսիրես ամէն քու արարածդ, և չես ուզեր որ ստեղծուածներդ մէկ պզտիկմունալ կորսրվի, ան սիրոյդ հա-մար մի թողուր որ կորսրվիմ, վասն զի քու պատկերդ եմ։

Սաղմոս։

Մի մոռաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ ա-ռաջի քո ամենայն կենդանի։

Օգնեա՛ մեզ Աստուած փրկիչ մեր, վասն մեծի փառաց անուան քո։ հՇ։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի, ցոյց ինձ տեր զկատարած իմ, և զթիւ աւուրց իմոց քանիսն է, զի գիտացից թէ որչափ պակասեալ է յինէն։

Ահա չափով եդիր զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է

առաջի իմ, սակայն ամենևին ընդունայն է ամենայն մարդ մեղի։

Ապաքէն որպէս 'ի պատկերի աջի մարդ, սակայն 'ի զուր խռովի, գանձէ, և ոչ գիտէ ո՞ւմ ժողովէ։

Իսկ ապրդ՝ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ոչ դու տէր, կամ կար զբրութեան իմոյ՝ թէ ոչ 'ի քէն։ Ը։

Ասայի դու ես Աստուած իմ, և 'ի ձեռս քո է ժառանգութիւն իմ։

Փրկեա զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց, և 'ի հալածչաց իմոց։

Երևեցո զերեսս քո 'ի ծառայս քո, ապրեցո զիս տէր ըստ ողորմութեան քում. տէր մի յամօթ եղէց, զի կարդացի առ քեզ։

Ո՛րպէս զի բազում է ողորմութիւն քաղցրութեան քո տէր, զոր պահեցեր երկիւղածաց քոց։ Ը։

Այլ աղօթք։

Երբոր իմ ըրածներս կքննիմ, իմ վարքս մտքս կբբերեմ, կդուստահատիմ բոլորովին, վասն զի գուն ստեղ-

ծեցիր որ քեզ ծառայեմ, քեզ սիրեմ յամենայն սրտէ, յամենայն զօրութենէ մտաց, ես չէ թէ ամենեն պատուս չեմ սիրած, հապա ամենեին չեմ սիրած, մանաւանդ քու թշնամիդդ՝ աշխարհի՝ մարմնոյ՝ ատանելի եմ ծառայեր. դուն ապստրեցիր որ եղ բայրասալ սիրեմ, ես չէ թէ չեմ սիրած, հապա թշնամութիւններէ ըսերեմ՝ առելով, զզուելով, ոխ պահելով, բամբասելով։ Երբոր ասունք իմ դիմացս բերէ սատանան գաստասանեին առջին, երբոր մէկիկ մէկիկ յիշեցնէ քու արդարութեանդ առջին, աս հոգին իմն է, ինծի ծառայեց ըսելով ուզէ իս իր հէտը տանելու, ես ինչ պիտոր ընեմ ան սարսափելի առէնը. ուրիշ ճար չունենալով հիմակուցմէ կրվազեմ կրփաթիրվիմ սուրբ խաչին ոտքը, և կաղաղակեմ. Ո՛վ արդարութիւն Աստուծոյ՝ ես մահապարտ եմ, դատապարտրված եմ, բայց նայէ ինչ տեղ եմ ապաւիներ. աս է սուրբ խաչը որ Մարիամ մագդալենացւոյն մեղքը լվաց, աւազակը արքացուց, Բարաբ-

բան խաչացուց, հեթանոս հաթիւրա-
պետը փրկեց, եւ որ աս սուրբ խաչին
պոյլըվեր կեցեր եմ, մեկը իս չիկրնար
քաշեր առներ, մեկը իս չիկրնար դա-
տապարտեր։

Եւ դու ով բարի Յիսուս, յիշէ որ
եղբի օրդ ինչ նեղութիւններ քաշե-
ցիր, խաչին վայ թեւերդ բացիր իս
մեղաւորս գրկելու համար, հինդ վի-
րաք վիրաւորվեցար, սուրբ արիւնդ
գետի պէս վազցուցիր, որ իմ մեղքերս
իմ աղտոտութիւնս լուանաս. ահա
հասաւ ան օրը՝ ան ժամը՝ որ իս սրբես,
իս գրկելով ազատես թշնամիներուն
ձեռքէն՝ որ կուզեն իս տանելու։

Ամենն բարեկամներէն՝ նաեւ երկ-
նաւոր հօրէն թողվեցար, բայց ինչպէս
որ դու մեղաւորները չեթողուցիր,
քու կողդ բացիր, տեղի ապաստանի
ցոցուցիր. եղբնալ մեղաւորաց հա-
մար գլուխդ խոնարհեցընելով սուրբ
հոգիդ երկնաւոր հօրդ ձեռքը աւան-
գեցիր, պահէ անանկէնէ զիս զմեղա-
ւորս քուկին խաչիդ զօրութեամբը։
Վասն զի իմ հոգիսալ ամենն ստեղ-

ծուածներէն թողված՝ ապաւինելու տեղ կրնենալուէ. քուկին խաչելեալ գիրկդ կրդիմէ, բացված կողիդ մէջը կապաւինի, ընկալ՝ դիս, թող տուր որ քեզի գամ։ Ահա կը թողում աշխարհ, քուկին ձեռքդ կանդնում իմ հոգիս, ներսէ իմ մեղքերուս, մի ձդեր երեսէդ, վասն զի դու ես Աստուած փրկիչ իմ. առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, առ քեզ փափագի հոգի իմ։

Աղաչեմ Յիսուս փրկիչ իմ. վասն փրկագործութեան սիրոյդ՝ որով իս սիրեցիր, և իմ փրկութեանս համար այսչափ չարչարանք քաշեցիր, աս ժամէս իս փրկէ, աստուածային արդարութենէ իս ազատէ։

Սաղմոս։

Տէր, փրկեա՛ զմեզ, և քաւեա՛ ըզմեղս մեր վասն անուան քո։ Հշ։

Փրկեա՛ զիս՝ի թշնամեաց իմոց, տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Պանդուխտ եմ ես առաջի քո,

Digitized by Google

նժդեհ և անցաւոր որպէս ամենայն հարք իմ։

Թոյլ տար ինձ զի հանգեայց, մինչ չև երթեալ իցեմ, ուստի ոչ ևս դարձ նիւցիմ։ ԸԸ։

Հանեա զոգի 'ի նոցանէ, պակասին և 'ի հող դառնան։

Առաքեա զոգի քո և ստանաս զնոսա, և նորոգեա զերեսս երկրի։ ՃԳ։

Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ, հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց։ ՃԺԳ։

Լէր իմ Աստուած պաշտպան, և տուն ապաւինի ապրեցուցանել զիս, զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։

Վասն անուան քո տէր առաջնորդեցեր ինձ, և սնուցեր զիս, և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ որ թագուցաւ ինձ։

Դու ես պաշտպան իմ տէր, և 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։ Ը։

Digitized by Google

Այլ աղօթք։

Յոյս մեր Բանդ Աստուած, և միջնորդ փրկութեան մերոյ Յիսուս Քրիստոս, երբոր հոգեվարութեանս ատենը կը հասնիմ, երբոր ես վերջին թոշակս առած սուրբ հաղորդութեամբ կը պատրաստվիմ քու դատաստանիդ առջին երլալու, ուրիշ նէրը կը պատրաստվին հողին տակը իս թաղելու, սատանանէրը այլք չարութեան՝ օդոյն մէջը կը լեցվին հոգիս արգելելու որ Աստուած չիտես նամ, իրենց պէս արտաքին խաւարը մնամ. բանասարկուն իր նախանձէնլեցված, արքանեակնէրով վրաս պիտոր վազէ, դատաստանիդ առջին պիտոր քաշէ, արդարութեամբ պիտոր ուզէ իս դատապարտել տալ, իմ մեղքերուս տէֆթէրնէրը առջիդ թափելով մահացու և ներելի մեծ ու պզտիկ մեղքերս յիշեցնելով։

Դուռ արդար անաչառ դատաւորդ՝ թէ որ ան ատենը արդարութիւնդ

Digitized by Google

մինակ նայելու ըլլաս, ես պարտաւոր կեցլամ, կրգատասարտութիւն յաւիտենից կորուստը. բայց մեկալ դիպացէն՝ յիշէ՛ ան ատենը քուկին գթութիւնդ, մանաւանդ ամենէն աւելի՝ յիշէ՛ քուկին ըսածներդ: Դուն ըսիր Տէր իմ անտուտ բերնովդ. Որ ոտ ոտ փոխէ՝ ի սանդ՝ մի՛ մոռանիցի: Երբ ոտ ոտ փոխէ՝ ի հաղ յայսանդ՝ կեցցե՛ ի յաւիտեան: Հիմա ես եմ որ ճաշակերեմ քու սուրբ հացդ, որ է քու սուրբ անմահական մարմինդ, մեկ մարմին և արիւն եղեր եմ քու հետդ, ինչպէս պիտոր դատապարտես մեռցնես յաւիտենական մահուամբ, ինչպէս կրնաս մոռնար քու խօսքդ իմ չարութեանս համար: Դուն ըսիր որ. Ես կենդանի եմ վասն հօր, և որ ոտքն դիս, և նա կեցցէ՝ վասն իմ: Ե՛ս չէ թէ մինակ մեկ անգամ, հապա շատ անգամ ճաշակերեմ զքեզ ոմվ անմահ հաց. և խմեր եմ սուրբ արիւնդ անմահ բաժակէն, ան անգին արիւնը՝ որուն մեկ կաթիլը հերիք է ամէն աշխարհ փրկելու:

Իրաւի որ՝ Էս ապժանի եմ բիւրգաս-
տապարտութեան, վասն զի ուրիշ ան-
թիւ մեղքերէս զատ՝ քու սուրբ մայր
մինդալ անապժանութեամբ ու սրբ-
բապղծութեամբ առեր եմ շատ ան-
գամ, բայց տես Ցէր, որ քու սուրբ
արիւնդ իմ սիրտս ընդուներ եմ, ինչ-
պէս գաստապարտելի ասանկ քրիստո-
նէն. ինչպէս խաղալիկ ըլլայ ստատ-
նային իմ մարմինս՝ որ քու սուրբ մայր
ձիսվդ է կերակրված։

Ամենկէնէ մինակ ասոր համար որ՝
չըլլայ թէ սատանան ծաղր ընէ աւե-
տարանին խօսքը, կաղաչեմ իմ մեղ-
քերս քովինն սուրբ արեանդ համար
լուանայս, քաւէս, գոցէս, և քու
սուրբ մարմնովդ անմահացընէս յաւի-
տենական կենաց։ Մի ատացէ Թշնա-
մին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք
իմ ցնծացեն, թէ ես սատանեցայց։
Ես յողորմութիւն քո տեր յուսա-
ցայ, ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկու-
թեան քում, օրհնեցից զտէր զաս-
տերարդ իմ։ Լուր մեզ Աստուած փրկ-
կիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկ-

րեւ։ Եւ ով է մեր յոյսը և փրկիչը, եթէ ոչ գոնէ Յիսուս. ով է մեր բարեխօսը, եթէ ոչ գոնէ Նորոց կամակատարաց միջնորդ Յիսուս, որոյ հեղումն արեան առաւել խօսի քան զՀաբելինն։

Տէր, տա՞ ոչ Երկիւղոտ, բանս ինչաց յաւիտենականաց ունիս, և մեզ հաւատացուցեր և ծանեար։ Տէր, որոնք երթանք, որոնք ինչանք ասանկ թշուառութեան օրը, ուր մեկ բարեկամ մը չկրնար օգնել. քեզի կրգիմենք, որուն քովը անանկ խօսք կայ որ յաւիտենական կեանքը կրբերէ։ Ասանկ ընաւ Պետրոս առաքեալը, երբոր լսեց որ քուկին սուրբ մարմնիդ պիտոր բլայ մեզի հաց կենդանարար։ Քուկին խօսքդ բռնելով թէ ով որ սուրբ մարմնիդ և արիւնդ Հաշակէ, յաւիտենական կեանք կունենայ, ասնուտ խօսքիդ բոլորով արտիւ հաւատալով, քուկին սուրբ մարմնովդ կերակրվեցայ, ինծի թոշակ Հանապարհի առի։ Թէ որ գործք մը չունիմ, գոնէ հաւատքիս համար հասիր ինծի, ազատէ զիս արգար բարկութենէդ, վասն զի հա-

ապաստանք թէ Դու ես որդի Աստու-
ծոյ կենդանւոյ։ Մատիցուք այսու-
հետև հաստատակամութեամբ առաջի ա-
թոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք
զողորմութիւն, և գտցուք շնորհս 'ի
դէպ ժամանակի օգնականութեան։

Սաղմոս։

Կերիցեն տնանկք և յագեսցին, օրհ-
նեսցեն զտէր, որ խնդրեն զնա։

Կերան և երկիր պագին նմա ամե-
նայն պարարտք երկրի, առաջի նորա
անկցին ամենեքեան որ ի չանեն 'ի հող։

Անձն իմ նովաւ կեայ, և զաւակ
իմ ծառայեսցէ նմա։

Պատմեսցի տեառն ազգ որ գալոցն
է։ ամէն։

Որպէս գթայ հայր 'ի վերայ որդ-
ւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յեր-
կիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր,
և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք
իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս
ծաղկէ։

Digitized by Google

Ընչէ՞ի նմա հողմ, և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից՝ ի վերայ երկիւղածաց իւրոց։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։ Ճգ։

Այլ նա ինքն գթած էր, քաւէր զմեղս նոցա, և ոչ ապականէր։

Յաճախէր դարձուցանել զբարկութիւն իւր։

Յիշեաց թէ մարմին են նոքա, հոգի որ երանէ՝ այլ ոչ ևս դառնայ։ Հէ։

Աղ աղօթ։

Տէր, առանց քեզ ես մեկ ոչինչ մնեմ, առանց քեզ թշուառութիւն եմ, նոյն ինքն մեղք եմ, ամենեն աշխարհիս բարիք՝ չարիք են, առանց քու օգնութեանդ կքայնիմ, կոչընչանամ։ Մի թողուր զիս երեսէ։ Տէր իմ, քու ստեղծուածդ եմ, քուկին արեամբդ փրկրված, մի թողուր ա-

բարի՛ է իմ , թագաւոր , լոյս , կեանք , և ամենայն ինչ իմ : Եւ զքեզ ուրա-ցայ գործքերովս , ես քեզի թշնա-մութիւն ցրցուցի , դու ինձի գթու-թիւն ցրցուցիր : Իմ բնութիւնս մեկ որդ մը , հող և ապականութիւն մընէ , դու ինքդ Աստուածութիւն , լոյս , կեանք , բարերարութիւն , գթութիւն , որ չես կրնար ուրիշի չարիք հատուց-ցանել : Միշտ ներող , միշտ գթած , գթա՛ , ներեա՛ ի վերայ իմ ով մարդասէր տէր Եղբի ատենս , երբոր սիր-տոր լինիամ , երբոր պիտոր երթամ մեկ աշխարհ մը որ չկայաեմ : Առաջ-նորդ , ուղեկից լեր տէր մարդասէր աս ճամբուս մէջ՝ որ ըսիր . Ե՛ս եմ ճանապարհ , և ճշմարտութիւն , և կեանք :

Սաղմոս :

Դարձոյց զանձն իմ առ խս , և ա-ռաջնորդեաց ինձ ի՛ ճանապարհս աղ-գարութեան վասն քոնուն իւրոյ :

Թէպէտ և գնացիցես ի՛ մէջ ստուեր-

բաց մահու , ոչ երկեայց 'ի չարէ՝ զի դու տէր ընդ իս ես ։

Ողորմութիւն քո տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց , ընակեալ ինձ 'ի տան տեառն ընդ երկայն աւուրս ։ ԻԲ ։

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչև յազգ ։

Հազար ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի անց , որպէս պահ մի գիշերոյ ։

Ամենայն աւուրք մեր նուաղեցան , և 'ի բարկութենէ քումմէ խռովեցաք։

Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի , և թիւ աւուրց մերոց 'ի նոսա հօթանասուն ամ ։

Ապա թէ առաւել հաւութսուն ամ , որ ինչ աւելի քան զայն՝ ցաւք և հեծութեամբ ։

Դարձ տէր , մինչև յերբ . վասնիցես քեզ 'ի ծառայս քո ։

Հայեաց տէր 'ի ծառայս քո , և 'ի գործս ձեռաց քոց , առաջնորդեա որդւոց նոցա . և եղիցի լոյս տեառն Աստուծոյ 'ի վերայ մեր ։ ԺԳ ։

Digitized by Google

Աղօթք։

Ո՛վ որ վասն իմ երկինքը թողուցիր, երկիրս եկար, մարմնաւոր մարդ եղար, ողորմեա՛ ինձ։

Ո՛վ որ վասն իմոյ փրկութեան երսունվերեք տարի աշխարհիս վրայ աշխատեցար, 'ի հասակալ ժամուս ողորմեա՛ ինձ։

Ո՛վ որ վասն իմ արժանի համարեցար սուրբ արիւնդ թափելու, 'ի ցաւագին ժամուս ողորմեա՛ ինձ։

Դո՛ւ այն տէրն ես, որ իս աղաստելու համար այնչափ խորհուրդներ սահմանեցիր։

Դու այն Աստուածն ես, որ իմ փրկութեանս համար բանալու համար՝ այնչափ գանձ շնորհաց բացիր բաժնեցիր։

Հիմա ես հասեր եմ իմ վերջին ատենս, կրմեռնիմ, քեզի կուգամ, մի դարձներեր երեսդ. մի պարսաւ հաներ քու անչափ աշխատանքդ ով տեր ողորմութեանց։ Ցիսուսիդ անուանը պ-

պատվիներեմ բոլորով պատիւ, անուն
որ 'ի վեր է քան զամենայն անուն,
յորոյ անուն ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորացն և երկրաւորացն, և սանդ-
դարամետականաց։ Զարթո՛ Ցիսուս զզօրութիւնս քո, և եկ 'ի կեցուցանել զմեզ։ Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ և կեցցուք։

Ցիշէ՛ քու խօսքերդ որ ըսիր. Ածմի դարձարան է ալեաբրհիս այսորիկ, այծմի իվան ալեաբրհիս այսորիկ ընէնայի արարա։ Դուրս ելէ՛ հալածէ սատանան, որ իշխան եղերկ աշխարհիս, զո՛ւ որ լիմպոսին գծոիքը քակեցիր, արդարոց հոգիքը սատանային ձեռքէն խալըցուցիր։

Ցիշէ՛ քու խօսքդ որ ըսիր. Ես է յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ցգնեցից առ ինս։ Եսալ ան հաւատացեալներուն համանքին մէջէն եմ, զո՛ւն որ բարձրացար փայտին վրայ, ձեռվընէրդ տարածեցիր խաչին վրայ մեղաւորները գրկելու՝ խալ դրկէ, խալ քեզի ձգէ ամենակալ ձեռքովդ,

ջելայ թէ յարիշտակէ իս ասիւծը։ Նայեցց յիս աչքք ողորմութեան քո։ Իսկ արդ՝ յիշեա և ա՛ռ թէ ո՞վ է իմ հանգիստ, միթէ՝ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան։ Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ. կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց գժոխոց։ Ո՞ւր են ողորմութիւնք քո տէր առաջինք, զոր երդուարդաւթի ճշմարտութեամբ քով։ Սաղմոս։ ՃԼԷ։

Ո՛վ խաչ փրկութեան, ապաւէն յաւուր մահուան։ Ո՛վ խաչ աղբիւր բարութեան, մեղաւորաց ապաստան։ Ահա տեսանեմ զտէրն իմ Քրիստոս բազկատարած խաչէն կախված, որ գլուխբ խոնարհեցընելով, թևերը բանալով, պատրաստ կեցեր է իս գրկելու, քաղցր ձայնիւ իս կրկնէէ երկինքը։ Եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Այս ձանով կանչելով, քու սուրբ արիւնդ յիշելով ներէ՛ Տէր իմ, ներէ՛ իմ ծանր մեղքերս։ Թող որ պարզերես եղայ քու առջիդ առ իմ հոգիս, ու քու սուր-

բէրուդ հետ քեզ փառաւորէ յաւիտեան։ Բարի Ցիսուս լուր ինձ, առաջնորդ լեր։

Սաղմոս։

Հոգի՛ քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ՝ի յերկիր ուղղոյ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես՝ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։ Հիմա։

Տէր լուր աղօթից իմոց, և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Ցաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ զառ իս զունկն քո։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոտ չորացան։

Հարայ ես որպէս խոտ, և ցամաքեցաւ սիրտ իմ։ կցեցաւ ոսկր իմ՝ի մարմին իմ։

Digitized by Google

Աստուած իմ ոչ էս հովանի անցին, և ես ոչ էս խոտ ցամաքեցայ : Հեր :

Աղօթ։ Ցիսուսի 'ի Վերջին կոչի իւրոյմ, 'ի ծառա մահուան վասն ամենայն քրիստոնէից : Ցոհ. ԺԹ :

Ցիշէ տէր իմ Ցիսուս, որ երբոր ցաւագին օրդ հասաւ, մեռանելու ապատրաստութիւն կրսեմնայիր իմ փրկութեանս համար, ան օրը աշխարհանէրուդ կոսակ ընելէն ետև՝ երբոր ցաւագին պտիւ աղօթք ընելու երկնաւոր հօրդ ամմէն քրիստոնէից փրկութեան համար՝ որոնց մէկնալ ես եմ : Ես հիմա իմ հոգեվարութեանս առեղը ան քու աղօթքդ քեզի կրմատուցանեմ, քու աղօթքովդ քեզի կապաչեմ, որ զհայր Աստուած փառաւորելով, եղբը իրեն ազատանք ընելով քրիստոնէից համար, ասանկ ըսիր :

Ես վան նոցա ազաչէմ, զոր Եպոն ինչ, զի ես են :

Հիմա եսալ ծառայ քո հօրն երկնաւորի որդիեմ սուրբ միտութեամբ,

անանկ է նէ ինծի համարալ աղաչելիր ան ատենը, հիմա ալ աղաչէ խնդրէ քաւութիւն, թողութիւն, և փրկութիւն։

Պահէ՛ գնոցա յանուն։ Սուրբ աւրա գնոցա ճշմարտութիւն։ Ըսիր։

Անանկ է նէ պահէլ տուր իս հիմա ատանային յարձակմանէն, պահէլ տուր աստուածային արդար դատաստանէն՝ որ հիմա բացվի պիտոր իմ վրայ, և սրբէ մաքրէ իմ ամէն մեղքերուս աղտոտութիւնը։

Ո՛է վան նոցա միայն աղաչիմ, այլ և վան ամենայն հաւատացելոց բանին նոցա յիս։

Ահա աս խօսքդ որ զուրցեցիր, յոյս փրկութեան է ինծի, խօսք մխիթարութեան, և քաջալերութեան իմ աս ցաւագին ատենս. ցրցուցիր որ՝ չէ թէ միայն առաքելոց համար ըրիր աս աղաչանքը, այլ նաև ամենայն հաւատացեալ քրիստոնէից համար որ աշխարհ պիտոր գան, որոնց մէջը ես ալ կամ։ Մեղաւոր եմ՝ բայց հաւատացեալ, չարագործ՝ բայց զղջա-

Digitized by Google

ցեալ, բոլորովին յուսացեալ 'ի քեզ Քրիստոս, յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ, յոյս իմ 'ի ժամանակի ծերութեան իմոյ, և այսօր յոյս իմ յաւուր մահուան իմոյ։

Եւ պէտքն զոր էիր ինչ, էիր նոցա, զի իցեն մի որպէս Ն մէտ մի էիր։

Հայր երկնաւոր՝ ըսիր, կաղաչէմ որ մէկ ըլլան մեզի հետ, միանան մեր Աստուածութեան փառքը տեսնալով, ինչպէս որ մենքալ մէկ ենք։ Օրհնեալ լիցի այն բերան Յիսուսի, գովեսցի և փառաւորեսցի այն լեզուն Քրիստոսի, որ ինծի համար ասանկ զօրաւոր բարեխօսութիւն կընէ։

Հայր, զոր էիր ինչ, կամիմ զի ուր էն էմ, և նոքա իցեն ընդ իս, զի պէսանիցեն զքէտն իմ։

Փառք մարդասիրութեան քո Յիսուս, որ ան ցաւագին օրդ, քուկին ցաւէրուդ տանջանքներուդ մասնակցը մէկ դի թողլում իմ փրկութիւնս կրհոգայիր, իս մեղաւորս հօրդ հետ հաշտեցընել կաշխատէիր. ինծի համար միջնորդութիւն կընէիր որ՝ գուն ուր-

Digitized by Google

ես, ետալ հոն ըլլամ, քու փառքդ տեսնամ. անանկէնէ ես ասկէց ետքը ինչու համար տրտմիմ տարակուսիմ իմ փրկութեանս համար։

Ցիշէ տէր իմ Յիսուս, աս ետքի աղօթքդ որ ըրիր ինծի համար, վասն զի խիստ ցաւագին սրտիս ըրիր. իմ ցաւագին ատենսալ հասեր է, իս քովդ եմ. հիմա իշխան աշխարհիս այսորիկ պիտոր գայ իմ վրայ մեղք գինորութեան դատաստան քաշելու, իս կորսընցնելու. գուն անիկայ կորսնցու, գատապարտե, գուն որ չես ուզեր քու կինիներդդ մէկը կորսնցնել։ Աստուածային արդարութեան դատաստանը ինչ որ զուրցէ իմ վրայ դատաստանին մէջ, ես միշտ աս քու աղօթքդ քեզի կրկնեցնեմ, քու աղօթքովդ քեզի կաղաղակեմ, ուրիշ ըսելիք չունիմ. և կը հաւատամ որ սանկ ալաչանքովդ Ցիսուսի չեմ կորսրվիր, այլ յուսալով սպասելով քեզի կուգամ տէր գթութեան, և Աստուած ամենայն ողորմութեան։

Digitized by Google

Սաղմոս։

Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովեա զիս, յուսայ առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Եւ օրհնեցից զօրհնութիւնս տեառն, և ցնծացայց առաւօտուց յողորմութեան քումմ։

Զի եղեր իմ պաշտպան, և տուն ապաւինեի յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ։

Քեզ սաղմոս ասացից Աստուած ապաւէն իմ, Աստուած ողորմութեան իմոյ։

Ոչ թագեաս ոսկր իմ 'ի քէն զոր արարեր 'ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի։

Զանգործս իմ տեսին աչք քո, և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան։

Փորձեա զիս Աստուած, և ծանիր զսիրտս իմ. քննեա զիս և ծանիր զշաւիղս իմ, և տես թէ իցէն անօրէնութիւնք 'ի ճանապարհս իմ. և առաջ

նորդեւ ինձ 'ի Ճանապարհս քո յա-
ւիտենից ։

Դու յարուցեալ գթասցիս 'ի վե-
րայ սիոնի , ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ ։

Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ , և
ամք իմ յոգւոց ելանելոյ ։

Աղօթք առ սուրբ Աստուածածնին ։

Ո՛վ տիրուհի փաստաբան մեր , ե-
կաւ հաստատ ան առեանը՝ որ ինծի հա-
մար խօսիս բարեխօսես ահաւոր ա-
տեանին մէջ Քրիստոսի առջին ։

Ո՛վ պաշտպան մեր , եկաւ ատեանը
իս պաշտպանելու սատանային ձեռ-
քէն . ցուցո՛ քուկին պաշտպանու-
թիւնդ , քուկին մայրական զօրու-
թիւնդ ։

Ո՛վ հարսն ընծայեալ յերկրէ յեր-
կինս , մեք երկրաւորքս քեզ հարս խընդ-
կեցինք երկինքը ամենասուրբ Երրոր-
դութեան , որ սանակ սուսկալի օրըս՝
մեր ողորմելութեան հանիս ։

Դու՝ այն Նսթեր տիկինն ես , որ

Digitized by Google

մեկ խօսքով զՀամանն Թշնամին՝ սա-
տանան՝ կորստնցուցիր, ամենէն հաւա-
տացեալներդ մահուանէ ազատեցիր.
ազատէ իս յաւիտենական մահուանէ.
կորստնցուս հիմա բանտարկուն սատա-
նան, որ իմ եռեւէս կըպրտուի կոր-
ստնցնելու։

Դուս այն օրինակեալն Յուդիթ տի-
կինն ես, որ զՀոլոփերնէս սագայէ-
լը սպանեցիր, խեղճ քաղաքը Բե-
տիղուա՝ սուրբ եկեղեցին մահուան
պաշարմանէ խալըսեցիր. ահա եկեր-
է Թշնամին սատանայ, իմ մեղ-
քերովս իս պաշարեր է, ելլիր ցրցու-
քու ղօրութիւնդ, և իմ հոգիս խալը-
ցու աս տագնապէս, աս պաշարմա-
նէս։

Սիայն քու բարեխօսութիւնդ իս
պիտոր փրկէ. թէ որ գուն այսօր
քու վիրտինութեան իշխանութիւնդ
չբանեցնես, մայրական պաշտպա-
նութիւնդ չցրցնես, չբարեխօսես,
ես կորտրված եմ. իմ աղօթքներս ան-
արժան են, պիղծ են Աստուծոյ առ-
ջին. իմ ճգնութիւններս ապաշխարու-

թիւններս ոչինչ են, սիրոս միտքս չի-
տակ չեն, Աստուծոյ հաճոյ չեն։ Դուն
ես միայն մայր ճշմարիտ, որ իմ ալ-
ատուութիւնս կրնաս գոցել, իմ գէ-
շութիւնս ծածկել. վասն զի մեկ խօս-
քիդ՝ երկուք չըլլար Քրիստոսի առ-
ջին։

Թէ որ երկրաւոր թագուհիներս մա-
հապարտ մարդը չնորհք ինգրելով կա-
զատեն մահուանէ, որչափ փառք պի-
տոր ըլլայ Տիրամայր, երբոր դատաս-
տանին օրը ամենեսնալ յայտնի ըլլայ՝
որ իմ փրկութիւնս յուսահատված
էր, միայն քուէրդովդ եղաւ փրկը-
վիլս, միայն քու բարեխօսութիւնդ
պահեց զնստարգար դատաստանէն Աս-
տուծոյ։ Ան ատենը ուրախութեամբ
կարենամ ասալ. քեզի հետերդել. քու
երկնային երգդ. Մեծացուցէ անձն
իմ զտէր, և ցնծացէ հոգի իմ Աստու-
ծով փրկչաւ իմով։ Ողորմութիւն ա-
ստար յաղագս յաղգս երկիւղածաց իւ-
րոց, և արար զզօրութիւն բազկաւ
իւրով։

Եւ դու տէր իմ Յիսուս նախա-

Digitized by Google

խնամող ամենայնիմնծի պէս մենծ մեղաւորը մարդ բարեխօսութեամբը փրկելով, փառաւորէ մարդ անունը. ինծի պէս ողորմութեան անարժանը՝ արժանաւոր ըրէ առէր իմ, նայելով քու մարդասիրութեանը. աս ընելով մարդ ատունը բարձրցնայ ամենեսուն առջին։ Դուն պատուէր տուիր պատուելոյ զծնօղս. գուն իս մեղաւորս և անարժանս թէ որ ներելով փրկես, ամենեսին աւելի կրպատուես զմայրդ թագուհին հրեշտակաց, որ է պարծանք աշխարհի, անգին գանձ եկեղեցւոյ, ապաստան մեղաւորաց, փրկութիւն յուսահատելոց 'ի ժամու մահուան։

Աս աղօթքներէս զատ՝ թէ որ կուզես, կրնաս Օխտը խոցին աղօթքները ընել։ Աւագ շաբթվան աղօթքները, ու մեծպարքին Վերջերորդ շաբթվան աղօթքները։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Տէր Յիսուս Քրիստոս, արարիչ և փրկիչ ամենայն աշխարհի, որ յաղթութեամբդ ամենեն աշխարհ ուրախացուցիր. յիշէ այսօր քու արարչական սիրովդ մեր ննջեցեալց հոգիքները, ողորմէ, ազատէ իրենց տանջանքէն՝ որ ունին քաշելու. մանաւանդ մեր ծնողաց հոգիքը, ու որոնց համար աւելի պարտական ենք աղօթելու։ Յիշէ նոյնպէս անյիշատակ հոգիները, քու սուրբ ծննդեանդ ու մարդանալուդ համար կաղաչենք՝ թողութիւն տուր այսօր անոնց յանցանացը։

Յիշէ քու սուրբ չարչարանքներդ, հինգ վէրքդ, քու սուրբ անգին արիւնդ՝ որ մեզի համար թափեցիր. և

Digitized by Google

քու արեամբդ բարեխօսելով ինչեցուս աստուածային արդար դատաստանին բարկութիւնը: Տուր ամենամեծ թարութիւն, թեթևութիւն, մանաւանդ աղատութիւն իրենց տանջանքներէն, որ հրեշտակաց և արքոց մէջ խառնելով, անոնց հետ մեկտեղ օրհնեն զքեզ յաւիտեան. Ամէն:

Այլ աղօթք:

Ողորմէ՛ տէր իմ ողորմէ՛. դու որ երկնքէն ինչպէս,մեզի համար մարմնացար, դուն որ խաչին վրայ ամենակարող ձեռվընկերդ տարածեցիր, գամ վեցար, ու մեզի համար սուրբ արիւնդ թափեցիր, դուն որ անմահքնութիւն ըլլալով մեզի համար մեռար գերեզման մտար. դուն որ նորէն ոգիջընալով,յարութիւն առնելով, մեռած բնութիւննիս կենդանացուցիր. ամենուս,յոյս յարութեան տվիր, աշխարհ նորէն փրկեցիր, ու հանգստանալով երկինքը նստար ընդ աջմէ հօր:

Այս ամենն բանն որ քաշեցիր տէր

իմ մեղքի համար՝ լիշէ, այնչափ ննջէ-
ցեալքը քուկին անդամներդ միտքդ
բերը, քու արդիւնքներդ պարապ մի
հաներ. ցրցուր քու հզօր կարողու-
թիւնդ աչէր իմ առաջի սրբոց և հր-
ելշտակաց. ողորմէ մեր ննջեցելոց,
օրհնեցդ հետ մեկտեղ այսօր արժանի
ըրէ բնակակից ըլլալ քեզ օրհնեալ յա-
վիտեանս յաւիտենից. Ամէն:

Սաղմոս ԼԷ:

Տէր, յերկինս է ողորմութիւն քո,
ճշմարտութիւն քո մինչև յամպս:

Որպէս զի բազում արարեր զողոր-
մութիւն քո Աստուած, այլ որդիք
մարդկան 'ի հովանի թևոց քոց յու-
սասցին:

Արբեսցին նոքա 'ի պարարտութի-
ւնէ տանն քո, և զուխս փափկութեան քո
տացես ըմպել նոցա:

Ի քէն է աղբիւր կենաց,
և լուսով երևասցուք քոց տեսանելիք
զլոյս:

Ծագեա զողորմութիւնս քո ոյք

Digitized by Google

Ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիղ են սրտիւք։

Այլ աղօթք։

Ո՛վ Յիսուս, որ պարտիզին մէջ այնչափ տրտմեցար, որ ինչպէս արիւն քրտնեցար մեր փրկութեանը համար, ազատէ այսօր մեր մարմնաւոր ծնողաց հոգիները։

Ո՛վ Յիսուս, որ մեր փրկութեանը համար ձեռվընկերդ ոտվընկերդ ծակելով խաչին վրայ քաշկրտրվելով գամ վեցար, յիշէ, ազատէ այսօր ան հոգիները, որ հոգևորապէս մեզի ծնող եղան։

Ո՛վ Յիսուս, որ խաչին վրայ ծարվեցար մարդկային փրկութեանը համար, ժամանակ ծարաւը մեր հնչեցնելոց, որ կը ծարաւին կրկին ի՛ սատուածայլին տեսնելեանդ, ցոյց՛ այսօր արքայութեան մէջ քու փառքդ մեր ազգականաց հոգիներուն։

Ո՛վ Յիսուս քաղցրագութ, որ մեր փրկութեանը համար քացախ ու լե-

զի Ճաշակելով համբերեցիր, փրկէ այսօր ան հոգիները՝ որոնց սաւելի պարտականութիւն ունինք աղօթելու։

Ո՛վ Ցիսուս մխիթարութիւն վշտացեալց, յիշէ ան տրտմութիւնը՝ երբոր երկնաւոր Հօրէն թողուեցար մեր մեղքին համար. թող մի տար սա հոգիները, մխիթարէ այսօր քու սեսութեամբդ ան հոգիները՝ որոնցմէ մինք քարերարութիւն մը սեսանք աս աշխարհիս մէջ։

Ո՛վ սուրբ արիւն խաչելեալ Միածնի, ով անհուն արդիւնք զենման պատարագի, որ խորանին վրայ անմեղ դառնան պէս զոհվելով կրպատարագվիս։ Ա՛ս պատարագիդ անհուն արդեանցը համար կազաչենք, յիշէ ան սուրբ հոգիները՝ որ քեզ սիրական են, բայց իրենց պակասութեանց պատիժը վճարելու համար կրպատժըվին սատուածային արդարութեամբ։ Ցիշէ սէր քու առջև ողորմութիւններդ. թէ որ հին սատնը անբան անսանոց պատրագի մը համար իրենց պատիժը կը դադրեցնէիր, քանի աւելի պէտք է

ողորմիս քու անմահ գառնդ պատա-
րագին համար, զոր մեզի և մեր
ննջեցելոց համար կրպատարագվիս։
Ցիշէ տէր իմ Յիսուս, ինչ տրտմու-
թիւն որ քաշեցիր չարչարանաց առե-
նը, երբոր քու բարեկամներդ, ծա-
նօթներդ, ամմենեան քեզ թողուցին,
չիկար մէկը որ քեզ միսիթարէր։ Ան
տրտմութեանդ համար միսիթարէ այս-
օր տրտմեալ հոգիքը մեր բարեկամ-
ներուն և ծանօթներուն։ Ո՛վ Յիսուս
ամենակարող, որ մեզի համար անանկ
ցաւ քաշեցիր որ՝ ամենեն կարողու-
թիւնդ պակսեցաւ, ուժէ ընկելով,
բոլոր արիւնդ թափելով գլուխդ խո-
նարհելով անանկ հոգիդ աւանդեցիր,
մարդկային փրկութեանը համար մե-
ռաւ. աղաւոէ այսօր տէր իմ ան հո-
գինեղը՝ որոնց մենք պատճառ եղանք
մեղաց. փրկէ տէր իմ ամենեն հոգի-
ները, և արքայութեան քո ժառանգ-
ըրէ որ քեզ փառաւորեն յաւիտեան.
Ամեն։

Ի խորոց կարդացի առ քեզ. ԼԾ։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ԱՌ ԵՕԹՆ ԽՆԴՈՒԹԻՒՆՍ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Ա՝ առաջին խնդութիւն։

ԽՆԴԱ, և ուրախ լեր ով ընդունարան հնարքիս Աստուծոյ. ինչէ այն ուրախութիւնը երբոր Գաբրիէլ հրեշտակ ուրախութեան աւետիսը միայն քեզ ասելու. այնչափ կանանց մէջ գուն միայն ընտրուելեցար առաջի Հօրն երկնաւորի՝ մարմնարան ըլլալ բանին Աստուծոյ, տեղի և բնակարան անգաւ Աստուածութեան, և անոր հետ մէկ տեղ գործակից ըլլալ փրկագործութեան մարդկային ազգի։ Ցիշելով աս մեծ հնարքդ և անճառելի ուրախու-

թիւնդ սուրբ Աստուածածին, յիշէ այսօր իմ ողորմելութիւնս, որ զանազան թշուառութեանց մէջ ընկած, անբաւ փորձութեանց մէջ ձգած, աշխարհիս ծովուն մէջը կքաստուպիմ կընեղիմ մարմնաւոր և հոգւոր տապանոք, և մինակ յոյս իմ դուն ըլլալով քեզի ապաւիներ եմ բոլորով արտիւ։ Յիշելով սա իմ թշուառութիւնս, և քուկին առջի ինդութիւնդ, տուր ինծի այսօր մէկ շնորհք մը հոգւոր ուրախութեան, փարատելով ինծմէն ան ամէն տրտմութիւնները, յուսահատութիւնները, որ իմ մեղքերս ինծի կրբերեն։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ Երէքշաբթի Խնդասիրեան։

Խնդա՛, և ուրախ լեր ընտրեալդ 'ի մէջ ամենայն կանանց. յիշէ այն ուրախութիւնդ երբոր մայր Աստուածոյ եղար, կուսութեամբ ծնար զՔրիստոն Աստուած, ուսկից՝ որ՝ սերոբէները քերուբէները կրդողան, դուն

անիկայ զաւակ ունեցար, գերկդ տա-
նելով, ձեռքովդ շօշափելով համար-
ձակ վայելեցիր, մայր եղար անոր՝ որ
աշխարհիս յոյսն էր և փրկութիւն, և
ամմենուն ուրախութիւն։ Ցիշէ ով
սուրբ կոյս այն ուրախութեան ժամը,
և յիշելով տուր ինծիալ այսօր մէկ ու-
րախութիւն մը, յոյս տալով իմ մե-
զայս Թողութեան, որ Թողութիւն
առնելով մեղքերուս՝ եսալ Ցիսուսի
բնակարան ըլլամ հնորհաք։ և յոյս առ-
նեմ զինքը տեսնալու արքայութեան
մէջ իրեն սրբոցը հետ։ Ամէն։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ ԵՐԳՈՒԴ ԽՆԴՈՒԹԻՒՆ։

Խնդա, և ուրախ լեր սուրբ Աս-
տուածածին։ պաշտպան, յոյս և քա-
ջութիւս ամենայն քրիստոնէից։ յիշէ այն
ուրախութիւնը՝ երբոր տեսար միա-
ծին որդիդ երկնքէն ՝ինջած քովդ ե-
կաւ մահուանդ առեն, երկինքը տա-
նելու համար։ սերոբէներ քերոբէ-
ներ՝ դասք դասք հրեշտակաց՝ և ա-

մենայն սուրբք ընկերանալով, օրհ-
նելով, ուրախանալով աստին երկին-
քը տարին։ Յիշէ ան ժամը ուրա-
խութեան, և անանկ անպատմելի
խնդութեանդ համար՝ որ Յիսուս մի-
ածին քեզի պարգևեց, պարգևէ ին-
ծիսալ այսօր յոյս ապաւինութեան,
տուր ինծի քուկին հզօր պաշտպա-
նութիւնդ։ որչափ փորձանք գայ վրաս
մարմնաւոր, որչափ փորձութիւն գայ
հոգևոր, սատանայէ՝ աշխարհէ ու իմ
մարմինէս, քուկին հզօր աներևոյթ
պաշտպանութեանդդ համար, պա-
հես, պաշտպանես։ Այս պաշտպա-
նութիւնդ ցոյցներես ինծի մանաւանդ
մեռնելուս ատենը. երբոր ամենեսին
իս կրթողուն կրձգին, ան ատենը քու-
կին մայրական պաշտպանութիւնդ
տեսնալով վախիթարիմ։

Ողջոյն քեզ մարիամ։

Digitized by Google

Ա՝ լրրորդ խնդրանքն։

Խնդամ, և ուրախ լեր կոյս անա-
ստան, յիշէ այն ուրախութիւնը որ ու-
նեցար, երբոր տեսար որ երկինքը ամ-
մէն սրբոց մէջ այնչափ հաճեցաւ
քու վրադ ամենասուրբ Երրորդու-
թիւնը, որ քովը առաւ, ընդ աջմէ մարդ-
ացեալ Յիսուսին նստեցուց, և ա-
նանկ անհաւասել փառաց լեցուց որ՝
մէկին խելքը չի հասնիր, միայն ամենա-
սուրբ Երրորդութիւնը գիտէ, և գուն
վայելելով կը զմայլիս յաւիտեան։ Ա՝
խնդութիւնդ յիշելով մի ձգեր իս ա-
սանկ թշուառութեան խեղճութեան
մէջ, ինծի՝ալ մէկ քիչ մը ան փառքէն
ալատրաստե։ Եւ որպէս զի եսալ հաս-
նիմ ան փառքին, տուր որ վարքս շրջ-
կեմ, զՔրիստմանու բարեգործութեամբ
աշխատիմ, անանկով տուր որ յոյս
ունենամ արքայութեան և երանու-
թեան, յոյս զԱստուած տեսնալու,
և զքեզ մայրդ Աստուծոյ ան փառա-
ցը մէջ։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ հինգերորդ խնդրութիւն։

Խնդա՛, և ուրախ լեր դուստր լուսոյ հօրն երկնաւորի. յիշէ այն ուրախութիւնը որ ունեցար երբոր հայրն երկնաւոր տեսնալով քու ծայրագոյն խոնարհութիւդ՝ զքեզ դրաւ թագուհի երկնի և երկրի, մայրական հովանաւորութեամբ պաշտպանել ըզսուրբս, դթութեամբ դարձուցանել զմեղաւորս։ Քուկին փառքովդ զարդարվեցաւ լեցվեցաւ այն երկնային դրախտը, երկինքը եղած ամէն սուրբք և ամէն դասք հրեշտակաց յատուկ ուրախութիւն ունեցան՝ տեսնալով կոյսդ ամենախոնարհ ան փառքը բարձրացած. և բոլոր եկեղեցին Քրիստոսի մեծ ուրախութիւն կիմանայ յիշելով քուկին փառքդ, որ եղար պարծանք քրիստոնէից, փառք Ադամայ և Եւայի։ Ա՛ խնդութեանդ համար տուր ինձի այսօր ով թագուհի, տիրուհի երկնի և երկրի, շնորհք մը արդիւնաւորելոյ, որպէս զի չէ թէ մի-

այն մեղքերէն կորզվիմ, հեռանամ, հապա նաև արդիւնք վաստակիմ. քանի որ կեանք ունիմ, շունչս վաս է, առաջնոյս պարապ չանցընեմ, այլ իմ ամէն գործքս 'ի փառս Աստուծոյ ընելով վարձք շահիմ: Ցուրաչ որ որչափ խաչ և նեղութիւն ունենամ, ան նեղութեանս մէջ մէկ ուրախութիւն մը իմանամ Աստուծոյ համար քաշելով իրեն կամաքը ապաստան ըլլալով օրհնեմ զՀայրն երկնաւոր, որ սանակ մեծութեան քեզ բարձրացուց:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՝ Վեցերորդ Խորհրդածութիւն:

Խնդա, և ուրախ լեր մայր Բանին Աստուծոյ, յիշէ՝ ան ուրախութիւնը ան փառքը որ ունեցար, երբոր քու սիրելի որդիդ միածին՝ որպէս զի առաջի հրեշտակաց և ամենայն սրբոց պատուէ զքեզ իրեն մայր մարդկան պատուով ինչպէս որ արժանն է, զքեզ առաւ գործակից իր՝ դատաստանին: Արդարութեան

գասասատանը իրեն պահեց, գթութեան և ողորմութեան դատասատանը քեզի յանձնեց. և կատարեալ իշխանութիւն տրվաւ որ՝ ինչ շնորհք ուզես իրմէ, խնդրէ պիտոր ըլլայ, կատարվի. որով եղաւ յոյս ամենայն արդարոց քրիստոնէից, յոյս և ապաստան մեղաւորաց: Ամենիսով ան ծառանէիդ՝ որ աս աշխարհս մէջ յատուկ ջերմեռանդութեամբ մը քեզ կը ծառայեն, քեզ գովաբանեն, մէկ յատուկ շնորհք մը պիտոր առնեն աս աշխարհս, և անդին երկինքը մէկ յատուկ վարձք մը ու փառք. իսկ ան մեղաւորները որ քեզի կը դիմեն, աս աշխարհս շնորհք գարձի և ապաշխարութեան պիտոր առնեն, և անդին փառք յաւիտենական սուրբերուն հետ:

Հիմա ես որ գլուխս եմ մեղաւորաց, և աղօթքով օխտը խնդրութիւն ներդ յիշեցնելով քեզի կը դիմեմ, տուր ինծի այսօր կաղաչեմ շնորհք գարձի և ապաշխարութեան, որ ծանր մեղքերուս թողութիւն գտնամ, և շնորհքներդ ողութեան և քաւութեան

ամենին մեղքերուս պատիժներուն. վասն զի իմ չարաչար մեղքերուս համար շատ պատիժ քաշելու արժանի եղայ։ Որպէս զի քուկին գթութեամդ և միջնորդութեամդ ցնորուին անաչառ դատաստանէն խալըսելով, և պատիժէն ազատելով, արքայութեանմէջ Աստուծոյ փառացը հետ քուկին փառքդալ տեսնելու շնորհով արժանի ըլլամ, օրհնեմ ըզ Ցիսուս միածին յաւիտեան, որ ամենի փառաց քեզ հաճցուց։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ Եղնէրորդ Խնդրանքն։

Խնդամ, և ուրախ լեր Հարան անարատ Հոգւոյն արբոյ. յիշէ՛ ան ուրախութիւնը որ ունեցար, երբոր տեսար որ Հոգին սուրբ քու ամենամաքուր կուսութեանդ վրայ զմայլելով, զքեզ դրաւ դանձապետ իր ամենի շնորհաց, անանկ որ մէկ շնորհք մը չի բաժնրվիր չմտրվիր մէկի մը, ինչպան որ քու ձեռքդ չանցնի։ Ինչ մեծու-

թիւն, ինչ փառք, որ կրվայելես ով ամենօրհնեալ սուրբ Աստուածածին, որ ոչ երբէք պիտոր անցնի, այլ պիտոր մընայ յաւիտեանս յաւիտենից։ Կաղաչեմ սուրբ Աստուածածին, աս խնդութեանդ և աս փառքիդ հաւատոր տուր ինծի շնորհք ընդունելութեան, որ ընդունիմ ինչ շնորհք որ պէտք է հոգւոյս և մարմնոյս, ինծի և ամենն ազգականներուս, կենդանեաց և մեռելոց։ Ինչ շնորհք որ պէտք է փրկութեան հասնելուս, դու որ ձեռքիդ մէջը ունիս ծածային շնորհաց գանձը, և մայրական գթութեամբ խնամես ամենն հաւատացեալները, հանէ աստուածային գանձէն ան շնորհքները, և արժանի ըրէ ընդունելու իս անարժանս, որ քովին բարեխօսութեամբդ աս աշխարհիս մէջ Աստուծոյ կամքը կատարելով, անդին՝ալ արքայութեան արժանի ըլլալով, գովեմ, փառաւորեմ քեզ, և քէնով զՀոգին սուրբ, որ սատանկ սիրուհի դրաւ քեզ իր ամենն շնորհաց։

Ողջոյն քեզ մարիամ։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ԱՌ ԵՕԹՆ ՎԷՐՍ ԽՈՏՈՒԱԾՈՑ

ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

Ա՝ տաՀԼԻՆ.

Ո՛վ ցաւագին սուրբ կոյս Աստուածածին, յիշէ՛ քու տուչի խոցդ՝ երբոր Սիմէոն ծերունին քերնովը լսեցիր Թէ, ան կուսածին որդիդ որ կը գրկեա՝ կրսիրես, ատեն պիտոր գայ որ նշան հակառակութեան ըլլայ. անանկ բաներ պիտոր տեսնաս որ՝ սիրտդ խոցվի, իբր Թէ սուր խոթէին սրտիդ մէջը։ Ա՛ խօսքս լսելէն ետեւ՝ սուրը սրտէդ հերաւ, Յիսուս ջիջարջարված՝ դուն սկսար սրտիդ մէջը խոցվիլու ջարջարվիլը. քանի՛ կրնայիր մի-

Digitized by Google

ածին Յիսուսին վրայ, սիրտդ ուրա-
խանալուն տեղը կրտրորեր կրտադ-
նապէր. արգեօք ինչ նեղութիւնն էր
պիտոր քաշէ կրմոածէիր, ան մեռած-
մունքներով երսունվրէք տարի կը-
տանջվէիր։

Աստնք յիշէ տիրամայր, որ ինծի
համար քաշեցիր. որպէս զի ես փրկը-
վիմ, ես չքաշեմ տատանային ձեռքէն՝
Յիսուս միածին յանձն առաւ իմ
տեղս քաշելու, անով քեզիկ ընկաւ
քաշելու աս խոցը։ Եւ յիշելով առջի
քաշած վէրքդ, կաղաչեմ որ՝ այսօր
իմ սրտիս մէջը տպաւորես սուրբ
զոյմանն և արտասուաց, որ ինչվան 'ի
մահ ոչ երբէք պակսի իմ սրտէս ցաւն
ապաշխարութեան. Հոգւոյն պտղոյ
ընդունակ վը սկսիմ լալ իմ մեղքերս, որ
պատճառ եղան Յիսուսին չարչարա-
նաց, և քուկին տանկ խոցվելուդ։

Անանկով Յիսուս ըլլայ ինծի կանգ-
նելու պատճառ և ոչ գլորելու. Յի-
սուս ըլլայ իմ սրտիս խորհուրդը, իմ
մտքիս յայտնութիւնը, տպաւորու-
թիւնը։ Մտածմամբ ու ապաշխարու-

Թեամբ անցք եմ իմ մեացած կեանքս, որով փառաւորվի առաջի սրբոց և հրեշտակաց քուկին առջի խոցիդ արդիւնքը իմ վրայ։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ երիւրդն։

Ո՛վ ցաւագին ամենօրհնեալ կոյս Մարիամ, յիշէ քուկին երկրորդաբաշած խոցդ, երբոր Հերովդէսին ձեռքէն փախար Եգիպտոս. սրբոյն Յովսեփայ հետ երկան Ճամբորդութեան նեղութիւնը քաշեցիր, որպէս զի Յիսուս խաչըստանեա՝ Հերովդէսին կոտորածէն՝ որ կուզէր սպաննել։ Ահա ես եմ ան Հերովդէսը՝ որ առաջ կեղծաւորութեամբ երկրպագել կուզեմ Յիսուսի՝ ետքը սպաննել։ վայ ինծի, քանի անգամ անարժանութեամբ առնելով սուրբ խորհուրդը հաղորդութեան, իմ սրտիս մէջը խաչեցնէ ուզեմ սպաննել զՅիսուս։

Ալելու�ամբարձայր, այսօր յիշելով

քուվին քաշածդ, տուր ինձի մեկ շնորհք մը դառնալու։ Ինչպէս որ առաջ փախար Եգիպտոս, հեռացուցիր զՅիսուս հալածչին ձեռքէն, եղբը դադարվելով հալածումը՝ դարձար նորէն հոն եկար, Յիսուս հեռդ բերելով շնորհքնալ ալքայութիւննալ հոն բերիր, ըրէ որ՝ եսալ դադրիմ մեղանչելէս՝ որ պատճառ կըլլայ Յիսուս հալածելու, սրտէս փախցնելու։ Իմ դադրելովս՝ դունալ Յիսուս դարձնես բերես նորէն իմ սրտիս մէջը շնորհք, անանկով սիրտս նորէն Յիսուսին բնակարան ըլլայ, և քուվին երկրորդ խոցիդ արդիւնքը ինձի համար ալ շահաւոր ըլլայ, ապրեցնելով յաւիտենական կորստենէ։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ա՝ Երրորդն։

Ո՛վ մայր ցաւագին, հերիք չէզաւառջի քու քաշածներդ, հեռդ տանելով բերելով զՅիսուս տառապան-

քով աշխատանքով Եգիպտոսի երկան
Համբորդութեան մէջ, հապա երբ
որդ անգամ մեծ վէրք կրեցիր սրտիդ
մէջը՝ երբոր իրաւունք կորընցուցիր
զՑիսուս Երուսաղէմ նոր Համբոր-
դութեանդ մէջ, իրեք օր սիրտդ տրտ-
ունեցաւ պտըտելովփընտռելով թէ ուր
գտնես այն անկորուստ գանձն աշ-
խարհի Ցիսուս։ Երբոր տաճարին մէ-
ջը գտար, ցաւագնեալ սիրտդ չիդի-
մացաւ, մայրական սրտով քու քա-
շած տառապանքդ բացիր յայտնեցիր
Ցիսուսի։

Հիմա իմ սիրոս կորընցուցերէ զՑ-
իսուս, բայց ամենեին հոգ չունի
պտըտելու փընտռելու. այլ մէկ գի-
թողլով զՑիսուս, իր հանգստութիւնը՝
երջանկութիւնը արարածոց մէջ օ-
տար տեղէր կրփընտռէ, և ոչ տա-
Հարի մէջ՝ սուրբ գործքերու մէջ,
անանկով մէկ հանգստութիւն մը
չիկրնար գտնալ. Ցիսուսալ իր ե-
րեսը գարձուցած՝ ինծմէն պահվե-
րէ, չերևնար։ Ասանկ զբրկված ըլ-
լալով Ցիսուսին տեսութենէն ուխ-

տակցութեանէն, հիմա քեզի կասպասիմ մայր ցաւագնեալ, բայց այսօր քուկին քաշածներդ, զուրցէ Ցիսուսի, ՉՔՆԼ ԳՈՐԾ ԳՈՐԾԵՅԵՐ ՕՐԵՆԱԿ։ ԻՆՉՈՒ Թողուցիր աս խեղճ հոգին, որ կրպը-տրսի քեզ գանալու, և չիյտե ուր գանայ։ Աս զուրցելով, ան այսօր ինծի համար մեկ նոր յարատևութեան շնորհք մը, որ մեղքերս զղջալէն ետև, ոչ երբէք մեղանչեմ, և մեղքով չեկորսնցնեմ իմ ոտէս զՑիսուս. այլ միշտ Ցիսուսին հետ մեկ տեղ բնակակից ըլլամ. իր Հօրը տանը մէջ տաճարի մէջ միշտ փրնտռեմ զՑիսուս ուր կրգանրվի։ Եասալ միշտ հոն մնամ, հոն տեսնրվիմ իր հետը՝ որ է աղօթք և բարեգործութիւն. հետուս կենամ ստեղծուածներէն՝ ուսկից կրփախչի Ցիսուս։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ ԼՐԲՈՐԴ։

Ո՛վ մայր ցաւագին, ինչ եղաւ արգեօք սիրտդ, երբոր քեզի խնայուցին որ՝ ան սիրելի միածին որդիդ բռնեցին, չարագործի պէս գաստաւորնեցրու առջինտարին, ասելն հրէաներուն ժողովքը վրան ժողովուած քահանայապետին առջին մահապարտ վճռեցին, ապտակեցին, Պիղատոսի առաջինն մէջ ձեռվընէրը կապեցին, չարաչար ծեծեցին, գլուխը փշով պսակեցին. սուտ թագաւոր ձևացընելով ծաղր ընելով սուրբ երեսը թքին, և հիմա պիտոր տանին խաչ հանելու։

Ասոնք թէ որ հասարակ մարդու մը վրայ լսվի, մէկի մը սիրտ չիդիմանար՝ որչափ օտար մարդ ըլլայ, ուր մնաց անմեղ միածնի վրայ մայրը լսէ, սասանկ կուսածին Աստուածորդի, և սասանկ մայր Աստուծոյ կոյս անապական։ Ա՜խ, ինչ խօսքեր են, ինչ խորհուրդներ, ինչ տեսիլ անարգանաց, ինչ տեսիլ չարչարանաց խեղքեմ մոքեմ

վեր. և սակայն ասանկ մայր ըլլալով սիրտդ գիմացուցիր, ետևէն գացիր տեսնալու, որ դունալ Յիսուսին քահանայութեան խորհուրդին մասնակից ըլլաս։

Վասն զի ասչափ մեծ խորհուրդ նէրսուն ասչափ դառնակսիծ չարչարանաց պատճառ է անարդ որդս եմ, ես Բարաբաս մարդասպան աւազակս եմ. որպէս զի ես Բարաբաս փրկըվիմ, ինքն Յիսուս քահանայապետը յանձն առաւ իր չարչարանքով զինքը զոհել, պատարագ մատուցանել իմ մեղքերուս թողութիւն քաւութիւն վաստակելու համար. դունալ մայր ես, որդւոյդ հետ մէկտեղ քաշելով գործակից եղար իմ փրկութեանս, մեծ խորհուրդներուն տեղեակ ուխտելանուս ըլլալով Սիմէոն ծերունին խօսքը միտքդ բերիր. իմացար որ քովին Յիսուս միածինդ անգէջ հրէաներուն գլորումն պիտոր ըլլայ ատուածասպանութեամբ, ինծի պէս մեղաւորիս կանգնումն պիտոր ըլլայ փրկագործութեամբ, որ հեթանոս

Digitized by Google

ազգէ դարձած՝ հաւատացեալ հրէա-
նէրուն անդրանկութիւնը առի, բայց
մահացու մեղքերովս նորէն կորսն-
ցուցի անդրանկութիւնսալ, անմա-
ղութիւնսալ և Յիսուսալ, ես եղայ
պատճառ որ՝ բռնեցին, չարչարեցին,
ետքնալ խաչվիլ մեռուեցին։

Տուր ինծի այսօր մէկ յատուկ
շնորհք և օգնութիւն մը, փորձու-
թիւններէ պահվելու, աշխարհիս՝
մարմնոյ՝ սատանայի խաբեութիւննե-
րու չհաւատալու։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ա՝ հինգերորդ։

Ո՛վ մայր ցաւագնեալ, ինչ եղաւ
սիրոդ, երբոր Յիսուսին բռնվիլը
լսեցիր, ելար զինքը գտնալու և
տեսնալու, և ա՛ռջի տեսնալդ աս
եղաւ որ, Յիսուս կուսածին՝ աչ-
քովդ տեսար արիւնլըվայ եղած, խա-
չը չալկած կրսանէին խաչելու։ Ամ-
մեն իր քովի եղողները՝ դահիճներ

զինուորներ, կատաղի անգութ հրե-
ներ. մեկ հատիկ իրեն իբր օգնա-
կան՝ Սիմէոն կիւրենացի, որ խաչին
ծայրէն բռնած հեռը կերթար, վան-
զի Յիսուսին վրայ ուժ չէր մնացած
ամենեին զարնելէն՝ ծեծելէն, իր
սուրբ արիւնը վազցնելէն։ Մէյմնալ
տեսար որ՝ ան ամենակարող բանն Աս-
տուած՝ որ բոլոր աշխարհս ձեռքին
վրայ կրնանի, ուժը հատնելէն գե-
տինը ընկաւ աչքիդ առջին, անգութ
դահիճները ոտորմելուն տեղը՝ զար-
նելով կուգէին վեր վերցնել։

Ա՛խ, ինչ եղաւ արդեօք ան ատենը
մայրական սիրտդ. թէ որ օտար կա-
նայք Երուսաղէմի կուլային կողբային,
որ չէին անանկ ճանչնար իր աստուա-
ծութիւնը, ինչ եղար արդեօք ան ա-
տենը դուն որ բոլորովին կը ճանչնայ
իր իր աստուածութիւնը, իր կուսա-
ծին ըլլալը, իր սուրբ վարքը, իր ան-
մեղութիւնը։ Ի՞նչ եղաւ քու սիրտդ՝
երբոր նայեցինի՝ քու աչքդ Յիսու-
սին աչքին դպաւ, ինչպէս խորվեցաւ
ճմլեցաւ սիրտդ։

Digitized by Google

Մէկ յինալ երբոր միտքդ բերիր սի-
մէան ծերունիին խօսքը՝ և Աստուծոյ
կամքը՝ մարգարէնէրուն բերնով ա-
ռաջուցիմ զուրցուած որ աս քու մի-
ածին որդիդ սատանկ ալիտոր չարչարվի,
արիւնլրվայ ըլլայ, գէտինը ինայ, որ
բոլոր ազգ մարդկան փրկրվի, ասչափ
բազմութիւն մեղաւորաց ոտք ելլան
կանգնին, գունալ Յիսուսին հետ միա-
կամ, միաբան արտովդ Հօրն երկնաւորի
նուիրեցիր, գունալանոր հետ մէկտեղ
խորվրվեցար։ Մարդիկ առաջ Աբրա-
համ նահապետին վրայ կրզարմանայ-
ին, թէ ինչ արտով տեսաւ իր անմեղ
զաւակը խասակ իր վրայ փայտը շալ-
կած լեռը կելլար որ մորթրվի։ Հիմա
հրեշտակները կրզարմանան որ՝ բանն
Աստուած իր վրայ շալկեր է խաչա-
փայտը Գողգոթա լեռը կելլայ՝ խաչ-
վելու մեղաւորաց համար, և իրեն
կուսածին մայրը հետը կերթայ իր
աչքովը տեսնալու։

Ահա ան մեղաւորներուն գլուխ ես
եմ, իս փրկելու համար Յիսուս ան
խաչը տարաւ, գունալ իրեն հետ մէկ

Digitized by Google

տեղ խաչվեցար իմ չարաչար մեղքերս քաւելու համար մեկ տեղ խորվելվեցար։ Անանկէնէ ով մայր Աստուծոյ, ոչ իմ արժանաւորութեանս համար՝ հապա միայն Յիսուսին և քուկին քաշածներդ պարապ չելլալուն համար, այսօր մեկ զօրաւոր ընդհէքմը պարգևէ ինծի հինգերորդ խոցիդ համար, որ Յիսուսին չարչարանքները խաչվելը՝ եսալ պայծառ տեսնամ հաւատքի աչքով, իմ մեղացս գարշութիւնը իմանամ, ճշմարիտ զղջմամբ ապաշխարեմ։ Տուր ընդհաքալ որ՝ եսալ Յիսուսին նման յօժարութիւն ունենամ խաչ քաշելու. գոնէ ինչ խաչ որ Աստուած խրկէ՝ սիրով քաշեմ, ինձգոհամ։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ Վեղերդն։

Ո՛վ սուրբ կոյս ցաւագին, ինչ զարհուրելի տեսիլ եղաւ, երբոր Յիսուս խաչը շալկած հոգնած Գողգոթա լե-

ռը հասաւ, հոն աչքովդ տեսար որ՝ զինուորներդ խաչին վրայ տարածեցին, սուրբ ձեռվընեերը քաշկրտտելով երը կընծայնելով խոշոր գամերով գամեցին։ Ահ, ինչ եղաւ մայրական սիրտդ՝ երբ քոր գամվելուն ձանը լսեցիր. կիսանայիր որ՝ տախտակ չէր գամանծնին, հապա մարմին կուսածին, մեկ հատիկ միածին որդւոյդ ձեռվընեերն էր՝ որ տախտակի պէս կրգամեին։ Գամելէն ետև աչքիդ առջին տեսար որ՝ ան կուսածին Յիսուսը մեկ աւազակի մը պէս խաչին վրայ մնկեցին, բարձրը ցուցին, բոլոր աշխարհի անարգ տեսիլ մը ցրցուցին, որուն մարմինը չորս դին վիրաւորած, արիւնը գետնին վրայ կրվազէր կրլուանար։

Յիշէ սա ամէն քաշածներդ սուրբ Աստուածածին. յիշէ առջիդ եղած ողորմելի տեսիլքը, քուկին ցաւագին ժամուն ատենը, ուր թէ որ Աստուածած հրաշքով չխլահէր, հազար անդամ կրմեռնէիր։ Եւ յիշելով ատենք, բայց չնորհօք իմին հաւատքիս աչքինաը, որ ինչպէս դուն աչքիդ առջին տե-

սար, ու տեսնելով՝ որդեդ կակիծը
չիհանեցիր, Եսալ անանկ մոքովս աչ-
քիս առջին տեսնողն պէս ըլլամ սա
կակիծը, ոչ երբէք որդէս հանեմ
Յիսուսին չարչարանքները, այլ միշտ
յիշելով լամ ողբամ իմ մեղքերս,
որ պատճառ եղան սա չարչարանքնե-
րուն, որով մեկ դին Յիսուս մարմնով
խաչվեցաւ, մեկալ դինալ դուն անա-
րատդ Յիսուսին հետ պտիդ մէջը մեկ
տեղ խաչվեցար։

Եւ ես որ հիմա բոլորովին ապաւի-
ներփաթթված կեցերեմ սուրբ
խաչին տակը, այսօր կատարեալ թո-
ղութիւն առնել տուր իմ պզտիկու-
թենէ ըրած մեղքերուս, վասն զի եր-
բոր արդարութիւնն ատուածային
տեսնայ սա չարչարանքները Յիսու-
սին, ու քուկին քաշածներդ ինծի հա-
մար, գութը կըշարժի, ողորմութիւնը
կը դառնայ. և ես կարդարանամ արդ-
եամանք չարչարանացն Յիսուսի,
և միջնորդութեամբ քու վերացդ։
Անանկով սրտոց հետ ընկերանալով,
յաւիտեան կըփառաւորեմ զամ-

նասուրբ Երրորդութիւնն, և զքեզ մայր կենաց և փրկութեան կրաւեծա-թեմ։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՝ ԷՕՆԵՐՈՐԴ։

Ո՛Վ Մայր ցաւագնեալ, որ միածին որդւոյդ հետ ինչվան ետքը քաշեցիր տրտիդ մէջը՝ ինչ որ Յիսուս քաշեց իր մարմնովը ինծի համար. Յիսուս ամ-մէն բանը քաշելէն ետև՝ ամմէն չար-չարանքները լմնցուց. իր յազթանակը անկեց՝ սրբազնեալ հոգին աւանգե-լով երկնաւոր Հօրը ձեռքը։ Բայց քու-կէն խոցելդ Մայր ցաւագին՝ չիլմնը-ցաւ, այլ երբոր Յիսուս լմնցուց, դուն ամմէնէն սաստիկ խոցը ան առնող կրեցիր տրտիդ մէջը։ Երբոր աչքովդ տեսար Յիսուսին մեռնիլը, երբոր ղեկրվեցար կենդանի տեսիլքէն Յիսու-սի, կենդանի Յիսուսին տեղը՝ մե-ռեալ Յիսուսը աչքիդ առջևն խա-չէն վար առին, գիրկդ տրվին. ան

կենդանի գեղեցիկ Յիսուսը քեզնէ յաստիւանեցին. հիմա բոլորովին խոցոտված, խորտակված, արեան մէջ թաթխած՝ նորէն քեզի տրվին։

Ահա, յիշէ ան ցաւագին ժամը ով Մայր ցաւոց, արդեօք ինչ փոխված տեսար. ուր վէրքը կընայէիր, արդեօք փշեղէն պսակը, արդեօք ձեռքին ծակէրը, թէ ոտքին ու կողին պատռուածքը, և բոլոր մարմնոյն. ինչ եղաւ ան ատենը սիրագ՝ ով Մայր ծովացեալ վշտաց, յիշէ ասոնք որ ամենենալ իմ պատճառովս քաշեցիր։

Հիմա ես գլուխս մեղաւորաց, իմ մեղքերուս ծանրութենէ յուսահատված, ահա ասս սոսկալի օրը կքրիստոնեամ ով Մայր ողորմութեան։ Մեծ են Յիսուսին և քովին քաշածներդ, մի Թողուր որ իմ մեղքերս պարապ հանէ ասոնք. անտանելի են ան կրակիծները՝ որ սրտիդ մէջը կրեցիր, մի անպտուղ Թողուր իմ չարութեանս համար։ Ալ 'ի խորոց սրտէ կաղաչեմ, յիշեցու Յիսուսի դատաւորին, և յիշեցնելով իմ փրկութիւնս հո-

Digitized by Google

գա. վասն զի թէ որ ես ինծի մնամ՝ չեմ կրնար փրկուիլ, ասիկայ է մեկ հատիկ յոյս իմ։

Դու ես օրինակեալն Եսթեր տիկին. իմ փրկութեանս համար զքեզ ընտրեց Հայրն յաւիտենական, և աս փառքիս հասուց։ Այսօր է օր փրկութեան. իրաւի սատիկ է բարկութիւն Հօրն երկնաւորի իմ վրայ՝ քան Արտաշէսի բարկութիւնը հրէից վրայ, վասն զի անն ներելի են մեղքերս. բայց երբոր Եսթեր մեկ քանի խօսք մը խօսեցաւ հրէից փրկութեանը համար, փոխվեցաւ, ողորմեցաւ Արտաշէս, ինչվան թագաւորութեան կէսը անոր տրվավ. հրէանէրուն մահուան վճիռը ետ դարձուց, թուղթը պատռեց։

Ասանք քու միջնորդութեանդ օրինակ էնոմ մայր Աստուծոյ, որ եղար թագուհի երկնի և երկրի, և գանձարան շնորհացն Ցիսուսի. երբոր ցըցնես աս քուկին եղբի խոցդ մեկալ խոցէրուդ հետ մեկ տեղ, և մեկ քանի խօսքով բարեխօս ըլլաս իմ փրկութեանս համար, իրաւի կրգթայ սիրտը

Հօրն երկնաւորի, իմ դատապարտու-
թեան վճռունալ կրպատուէ, իս որդի
արքայութեան կընէ քուկին անուանդ
համար։ Ան ատենը աս քաշածներդ
պարապ չեն ըլլար ինծի համար. ան
ատենը ես ողորմելի մեղաւորս կըլլամ
փառք պարծանք քու անուանդ. ամ-
մենունալ կիմանան որ՝ ինծի պէս մե-
ղաւորը պիտոր դատապարտվէր, մի-
այն քու օխտը խոցեդ միջնորդու-
թիւնն իս փրկեց։

Անոր համար կաղաչեմ որ իմ կեն-
դանութեանս ատենը աս իրեր շնոր-
քը ընես ինծի։ Մէյմը՝ երբոր սա-
տանան իս փորձութեան մէջ ձգէ,
եսալ ինչ ատեն որ ըլլայ՝ երբոր քու-
կին օխտը խոցդ բարեխօս բռնեմ,
օգնութիւն կանչեմ, ան ատենը մե-
կէն երկնքէն հաստիր ինծի, քու երկ-
նային զօրութիւնդ իրկէ. իս մեղքե-
րէն պահէ. թող մի տար որ՝ ան փոր-
ձութեան մէջը ինամ։ Երկրորդ՝ մեռ-
նելէս առաջ կատարեալ զղջմամբ
սուրբ հաղորդութեան խորհրդոյն
արժանի ըրէ։ Եւ երրորդ՝ ինչպէս որ

Յիսուսին մեռնելու ատենը քովը գտնըվեցար, արժանի ըրէ ով մայր Աստուծոյ իմ մեռնելուս ատեննալ որ՝ սուրբ հաղորդութեամբի մարմին՝ մի անգամ եմ եղած Յիսուսի, հնորհ-քով երկնքէն քուկին պաշտպանու-թեամբդ հանիս իս մխիթարելու, և հոգւոյս թշնամիներէն ազատելու։

Ա՛ հիմակվան ըրած աղաչանքս՝ միածնիդ մեռած օրվանը համար, կը-խընդրեմ ով մայր գթութեան, ըն-դունէ, լսէ, թէ որ մեռնելու ցաւա-գին օրս չկրնամ աղաչել։ Եւ մեռ-նելէս ետևալ քուկին բարեխօսու-թեամբդ իս պարգևրես հանէ՛ Յիսուսի դատաստանին առջին, որ փրկութիւն գտնալով քեզ և քու զՅիսուս միածին յաւիտեան փառաւորվելամ իր արքայութեան մէջ։ Ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Թէ որ աս աղօթքները ամէն օր չես կրնար ըսել, սովորութիւն ըրէ գոնէ միայն օրաը ողջոյն ամէն օր մտադիրութեամբ զուրցելու։ Ի՞նչ

մարմնաւոր փորձանքաւ գայ. ու թէ չ
մոքի փորձութիւն ելէկ սատանան,
միշտ սովորութիւն ըրէ սուրբ Աստ-
ուածածնին օխտը խոցը բարեխօս
կանչելու հաւատքով, վասն զի օխտը
խոցին Ջերմեռանդութեամբը շատ
հրաշքներ սեռնրված են։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

ԱՌ ԵՕԹՆ ԲԱՆՍ

ԶՈՐ ԱՍԱՑ ՔՐԻՍՏՈՍ Ի ԽՈՏՈՒՆ

Հայր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։
Ղուկ. ԻԳ. 34։

Հ՛ԱՑՐ երկնաւոր՝ աս ձայնս ուրիշի չէ, սիրելի որդւոյդ ձայնն է, որուն դուն վկայեցիր, եթէ Դո՛ւ ես Որդի իմ՝ սիրելի, ընդ որ հաճեցայ։ Հիմա աս հաճոյական Որդին թողերէ իր ցաւերը, իս կը հոգայ, աս մեղաւորին մեղքերը մի յիշեր կրսէ, որ զինքն ցիստուս մեղքերովս խաչ հանեցի, քամահրեցի, և աւելի նախատինք տրվի սրբապղծութիւն ընելով։

Ո՛վ արդարութիւն Աստուծոյ, իս

կուզես պատժել անհուն յանցանքն պատժով, վասն զի անհուն Աստուածդ անարգեցի. բայց ահա անհուն բանն Աստուծոյ է՝ որ ինձի համար կաղաղակէ. Հայր Ի՛ն դոցա։ Ինձի համար ինքը կրպատժուի, կը-պատարագուի, իրեն սուրբ արիւնը իմ վրայ կը քամի. աս հերիք չէ՝ ցաւագին սրտովալ կաղաչէ քեզի որ Թողուս իմ մեղքս։ Հայր, Ի՛ն դոցա։ Իրա՝ արդարութիւն քո որպէս սուրբ սրեալ է, շիտակ դատաստան պիտոր տեսնայ, վասն զի իմ չար գործքերս կեցած են, պատիժ կուզեն, և ոչ ողորմութիւն, բայց իս զարնելը՝ է նորէն զարնել նորէն պատժել բանն Աստուած յաւիտենական, որ ինձի համար մարմին առած, խաչին վրայ դատապարտուած կրմրթիւի, մրթիւելու ատեննալ կողկողալով նորէն կրմիջնորդէ։ Հայր, Ի՛ն դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։ Պատճառնալ տալով անանկ Թողութիւն կրխնդրէ ինձի համար. վասնզի իրաւի չիգիտցայ որ մեղքը ինչ դէշ բան է եղեր,

զԱստուած անարգել մեղքով ուրչափ սոսկալի բան է եղեր. ինծի սատնք ջուրի ձան կուգային։ Բայց հիմա որ Ճանչցեր եմ մեղքս, խաչին եմ պլըվեր բոլոր սրրտովս, իս մեկը չիկրնար անկէց հանել. որդին Աստուծոյ է որ կրվկայէ իմ տգիտութեանս, կրբաղեխօսէ սասանկ ուժգին բարեխօսութեամբ։

Ո՛վ անհաւն ողորմութիւնաստուածային, ելիր, խօսէ ինծի համար, խալըսէ իս աստուածային արդարութեան ձեռքէն ըսելով. իրաւի՝ արժանի է աս մեղաւորս բիւր դատապարտութեան, բայց որովհետև բոլորով սրտիս ապաւիներ է հիմա աս պատարագիս տեղը, կընդունիս կրնթողում իր մեղքերը։ Եթալ լսելով աս աւետեաց ձայնը՝ օրհնեմ փառաւորեմ զՑիսուս միածին, օրհնեմ զՀայրն երկնաւոր և զՀոգին սուրբ, որ Ցիսուսի ձայնին լսելով ողորմեցաւ ինծի։

Digitized by Google

Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։
(Ղ-ԻԷ. 43։)

Ո՛վ երջանիկ բարբառ՝ որ եկաւ հասաւ Յիսուսին բերնէն աւազակին ականջը, թէ դատապարտուելու տեղը՝ մեղքերուդ թողութիւն դտար, դժոխքին տեղը՝ դրախտը վաստակեցար։ Ո՛վ երջանիկ ժամ, երբոր մէկ մեղաւոր մը իր մահուան ատենը լսէ Յիսուսին բերնէն այս խօսքս։

Ա՛խ, մարդասէր Տէր իմ Յիսուս, որովհետև աւազակը քեզի խաչակից եղաւ, քեզ խղճաց, ընորհք մը տուիր որ՝ իրեն հաւատքը լուսաւորուեցաւ, քու աստուածութիւնդ ճանչցաւ, ճանչնալովը՝ իր մեղքը խոստովանեցաւ, և խոստովանելովը՝ ազատութիւն եկաւ սրտովը քեզի դիմելով։ Յիշէ՞ս դի՞ Տէր, յիշեցիր գայցես արքայութիւնդ։ Ասանկալ խոստովանելուն և աղաչելուն համար՝ երկրորդ անգամ ընորհք տուիր, որ է ընորհք ընորհաց, արքայութեան հաստատելով, երկնաւոր դրախտը մուտքնելով։

Digitized by Google

Հիմա իմ հոգիսալ խաչին տակը քեզի կաղաղակէ. Ցիշեա զիս Տէր, յորժամ գայցես արքայութեանդ քով։ Ա՛ հոգիս որ զանազան մեղքերով լեցուած է, աւազակէն աւելի չարութիւններ արքապղծութիւններ գործեր է, իր մահը մտիկցած տեսնելով քեզ փրկչիդ կրգիմէ։ Ցի՛ր աւաջ աւազակին պէս քեզի նման խաչակից ըլլալ, բայց տո՛ւր ալ ինորհք որ՝ աւազակին պէս համբերելով քաշեմ իմ խաչս, բիւր պատիժ էրուս իսարժանի սեպելով։ Լուսաւորէ իմ հաւատքս՝ որ քու աստուածութիւնդ պայծառ տեսնամ և հաւատամ, և հաւատքովս սրտանց զգալով խոստովանիմ իմ մեղքերս. միշտ քու արքայութեանդ բաղձանքով աւազակին պէս՝ իմ չարութիւններս ձգեմ, խաչին վրայ գամեմ թիւր և չար կամքս մեռցնելով. անանկով արժանի ըլլամ եռաքի օրս քաղցր ձայնով քու բերնէդ լսելու։ Որովհետև մեղքդ Ճանչցար, քեզ պատժոյ արժանի սեպեցիր, իմ խրկած խաչ

սալ համբերելով քաշեցիր, հաստատ-
քովդ՝ գործքովդ՝ իս գաւանեցար,
եւսալ այսօր երանութեան ձայնը կու-
տամ քեզի. Աստուծոյ քնդ իս էջեռ ի դէ-
րախին։

Կին դու, ահա որդի քո։
Յհ. ԺԹ. 26։

Ինչ ցաւագին ձայն քեզի համար
սուրբ Աստուածածնին, երբոր կու-
սածին Յիսուսը արիւնլուվայ տեսնե-
լէն ետև, աս խօսքս լսեցիր, որ է երբ
Յիսուսին եռքի բարև տալը՝ ըսելով։
Ես կրմեռնիմ կերթամ, իս՝ ալ չէս
տեսնար մարմնով. իմ տեղս քեզի
որդի ահա Յոհաննէս աւետարանիչը
ըլլայ։ Աս լսելով ինչ եղաւ սիրտդ,
Յիսուս Թողուլ, Յիսուսին տեղը
իր աշկերտը որդի առնել։ Բայց ինչ
ուրախալի ձայն ինծի մեկուտրիս հա-
մար. վասն զի Յոհաննէս աշակերտին
անուշտվերու օրինակովը՝ սանձէն քրիս-
տոնէնալ քեզի որդի ըրաւ Յիսուս,
որոնց մէջը եւսալ կամ։

Digitized by Google

Մեր նախամայրն Եւա մեզի մահ բերաւ, ան մահը քու Որդիդ միածին վրան առաւ այսօր մեզի համար փայ- ատ կախված կրմեռնի, որ Եւային կերած ծառին մահը մեր վայելն վերջնի. իսկ մեզի մայր կենաց՝ զքեզ դրաւ դուստր Եւայի, դուստր հօրն լուսոյ յաւիտենականի, որ մենք մեղաւորքս քեզի դիմելով կենաց փրկութեան դանենք, յաւիտենից մահը- նէ խալըսինք հաշակելով զանմահ պտուղն որովայնի քոյ։ Դու ես ա- նանկէնէ ապէց եռաքը մայր մեր կե- նաց և փրկութեան, և ոչ նախամայրն Եւա, որ Յիսուսին մեռնելն առաջ դուն մեռաւ. իրմէ բաժնվեցար աս խօսքով. և մեզ ասչափ ցաւով ու կսկիծով որդի վասորկեցար, որդի վշտաց քոց, ինչպէս եղաւ Բեթլեհէմին քրեն մորը Հրաքէլի, որդի անուանելի ցաւոց, որ Յիսուսին հետ մեկ տեղ խաչին քով խաչակից ըլլալով, արտիդ մեջը մեռնելով մեզ ծնաւ 'ի կենաց յաւիտենից։

Հիմա հնարկակալ կըլլանք Յիսու-

սին այնչափ՝ սիրոյն՝ որ այնչափ չար-
չարանաց մէջ իր քաշածը մեկ դի-
ձելով, մեզ մեղաւորքս հոգաց. ու-
սանիկ մայր փրկութեան մեզի դրաւ,
որ է յոյս մեր ամենեցուն։ Շնորհա-
կալ կըլլանք քեզի ովնախամայր փրը-
կութեան մերոյ, ով մայր Հշմարիտ,
որ Յիսուսին հետ մեկ տեղ գործակից
ըլլալովմեր փրկագործութեանը հա-
մար՝ միատեղ քաշեցիր անոր հետ։
Անիկայ մարմնովը կրքաշէր, դու սրբ-
տիդ մէջը կրքաշէիր, ետքնալ իր մա-
հուան ատենը քովէն չկրաժնըվեցար,
սիրոդ դիմացուցիր, խաչին տակը կե-
ցար. անով Աստուածաւորեցար մեկ որ-
դիի տեղ՝ բիւրաւոր որդիքներ ունե-
նալ հայր Աբրահամու պէս. արդիւ-
նաւորեցար մեզ մեղաւորացս ապաս-
տան ըլլալ։

Հիմա կաղաչենք մենք ամենքս՝ որ
ոչ միայն քու ծառադ ենք, այլև որ-
դիք շնորհաց. խնամէ, պահէ, մայ-
րական հովանաւորութիւնդ մեր վրայ
ցոյց՝ ու, որ չըլլայ թէ չար գազանը սա-
տանան մեզ յափշտակէ, չըլլայ թէ

Digitized by Google

պարտապ եղլայ այաչափ կսկիծը՝ ցաւը՝ որ Յիսուսին հետ մեկ տեղ քաշեցիր։ Տո՛ւր համարձակութիւն որ՝ քանի՞ փորձութիւն դայ մեր վրայ աս աշխարհս հիս մէջ, քեզ ունենանք մեզ ապաւէն՝ մեր սիրտը մեր միտքը բանալու։ Մինչ քալ եկեղեցնայ որդիքս պարծինք աք քայլութեան մէջքու անունովդ՝ որ աւաջ Բեթղեհէմի մէջ հասուցիր հացն անմահութեան պտուղ որովանի քո, իսկ այսօր նոյն պտուղը Գողգոթա լեռան վրայ խորվեցրով դառնակսկիծ չարչարանքով բաժնեցիր 'ի փրկութիւն աշխարհի մեզ մեղաւորաց։ անանկով գործ փրկութեան մերոյ այսօր քուկին մայրութեանդ խաչին տակը սահմանեցաւ։

Անոր համար ելօրհնենք, երանի կուտանք քեզ մենք ամենքս աղգք և ազգինք ով մայր Աստուծոյ, և մայր փրկութեան մեզ մեղաւորաց, և կաղաչենք որ՝ չենայիս մեր անարժանութեանդ վրայ, այլ քու մայրութիւնդ ցոցու մեր վրայ, հիմա մեղքերէ ապահովով սատանայի զօրութիւնը խոր-

տակելով. եղբը մեր մահուան տեսնելով հնարքով քովերնիս գտնելվելով, որ չար սատանան հալածվի։ Ըրէ ով մայր կենաց և փրկութեան, որ քեզով ազբայութեան հանելով աս երանութիւնս երկինքնալ կարենանք տալ քեզի, և քեզով մեծացուցանենք զանգաւ մարգասիրութիւնն Ցիսուսի յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս։
Մարկ. ԻԷ. 46։

Տէր իմ Ցիսուս Քրիստոս, երբոր աս քու ողորմութիւդ ձայնդ կառնեմ, սիրտս կըտրտրայ, կըխորվի։ Քու սատանիկ սէրդ ըրաւ որ՝ ես պիտոր քաշէի, իմ չքաշելուս համար՝ դուն իմ մեղաւոր կերպարանքս առիր, իմ տեղս դուն քաշեցիր։ Հայրն երկնաւոր վերէն տեսաւ որ իմ մեղաւոր կերպարանքս մնաներես, ինչ բարկութիւն որ ունէր իմ վրայ, քու վրադ թափեց, երես դարձուց։ Ա՜ բանս քեզի ամ-

մէն տանջանքէն մեծ եկաւ. ալ չիդի-
մանալով իբրև գանկտեալով մի աղա-
ղակեցիր. Աստուած իմ, Աստուած իմ
ընդէ՞ր թողեր զիս։ Պատճառը կրկին-
տրուեաւ որ՝ ինչու Հայրն Աստուած
քեզ ձգեց, վասն զի գուն չունէիր
մէկ խիղճ մը, չունէիր մէկ արատ մը։
Ա՛խ, պատճառը իմ մեղքերս էին,
աս ինչ մենծ են եղեր իմ մեղքերս,
որ միայն իմ մեղքերուս պատիժը քա-
շել ուզելուդ համար, քեզ ալ ձգեց
Թողուց Աստուած, թէպէտ էիր նոյն
ինքն անմեղութիւն, և սրբութիւն
սրբոց։

Ա՛խ, Տէր իմ, ես այսօր ճանչնա-
լով իմ մեղքերուս ծանրութիւնը,
կրսուսկամ, մեղայ դոչեմ. ան ատեն-
վան ողորմելի ձայնդ՝ ալէկրտուր
սիրտդ միտքդ բէր, գունալ քու ե-
բեսդ մի դարձըներ ինծմէն, մի թողուր
զիս Տէր իմ Յիսուս, Աստուած իմ։
Վասն զի կրտեսնամ որ իմ մեղքերուս
ծանրութեանը համար՝ և իմ անեն-
բերի ապերախտութեանցս համար՝
թողերես իս բոլորովին. չես խօսիր

ինծի հետ շնորհքով և ներշնչմամբ, ինչպէսորքուկին սիրելիներուդ հետ կրխօսիս. չէս բանար իմ միտքս, չէս լուսաւորեր հաւատքս, չէս տաքցներ իմ սիրասքեղ սիրելու, աշխարքէս հեռընալու։

Ասանկէորցամաքմնալով իմ սիրասա՛ հիմա քու խօսքովդ քեզի կաղաղակէ. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր Թողեր զիս, ընդէր անարգես զիս, ընդէր դարձուցանես զերեսս քո յինէն վասն մեղաց իմոց։ Ի՞նչ կրեալ աս խեղճ ստեղծուածը՝ երբոր դուն արարիչդ երես դարձընես, երբոր դուն փրկիչդ իս չիճանչնալ ըզնես։

Ո՛վ Տէր իմ, չեմ կրնար եսալ աս բանիս գիմանալ, կաղաղակեմ, դուն Յիսուս ողորմեա՛ ինձ. ան Ժամուն համար որ ասանկ Թողուած եղար երկնաւոր Հօրէն իմ սիրուս համար, դուն հիմա՞ Թողուր իս, այլ գԹուԹեան աչքովնայէ, պահէ, պահպանէ մեղքերէ, ու հոգւոր մարմնաւոր փորձանքներէ, ինչվան որ քու սուրբ

երեսդ տեսցնենք, արժանի ընես աղքայութեան մէջ։ Ամէն։

Ծարաւի եմ։
Յովհ. Գ. 28։

Քրիստոս Տէր իմ, ան քառասուն օրվան պաքը որ ինծի համար բռնեցիր, հիմա ծարաւութիւնաց կրքաշէս։ Մենծ սեպվեցաս Դաւթի մարգարէին ծարաւելը՝ ու Բեթղէհէմին ջուրը չիխմելը. հիմա դուն Բեթղեհէմեցիդ ջուրդ կենդանութեան՝ որ ամէն ջուրը ստեղծեցիր, չիկրցար կաթիլ մը ջուր դանալ ծարաւդ բժշկելու համար ո՛վ Տէր զորութեանց։

Փառք երկայնմտութեանդ Տէրիմ, որ իմ փրկութեանս համար այսչափ հազարապատիկ քաշեցիր. արարիչդ Ովկիանոս ծովու՝ ինչպէս եղավ որ՝ դուն կարօտ ըլլաս ջուրի, ծարաւիս՝ և ջուր չիդտնաս։ Բայց քու ծարաւիդ իմ փրկութեանս համար էր. և իմ հոգիս խալասցնելու։ Տեսնալով որ՝ դրախտին մէջը ծառին քովը կրգանը.

Digitized by Google

վիմ, աչխարհ եկաղ՝ ծառին վրայ ճ-
լար, իս կլինտրուելիր խաչին ծառին
վրայ։ Բայց ես քուկին սիրած խա-
չիգ ծառին քով չեմ գտնըվիր, այլ
արդելեալ մեղայ ծառերու քով կը-
գտնըվիմ։

Երբոր իս չիգտար խաչին վրայ,
ողորմելի ձայնով կանչեցիր. ախ, Ա-
գամ ուր ես, ծարաւի եմ քու փրր-
կութեանդ. ինչպէս որ սամարացի
կընոջէն ջուր ուզեցիր, անանկայ ինձ-
մէն ջուր ապաշխարու-
թեան ուզեցիր, որ ես գտնէ շարժիմ,
գամ կամքդ կատարելու հիմա է ըսիր
ժամանակ ապաշխարութեան. քու
ջուրդ ապրասուց ապաշխարութեան
տուր ինձի. որ իմ արեանս հետ
խառնեմ, հօրն երկնաւորի ընծայեմ,
որ մեղքերուդ քաւութիւն թողու-
թիւն գտնաս։ Բայց ես նանանեցայ
այն անողորմ դահիճներու, որ ջուր
ապրասուց տալուն տեղը՝ իմ սիրաս
քար դարձուցի, լեզի ջուր տալի ա-
պերախտութեան, քացախ ծանր մա-
հուշափ մեղայ խմցուցի. իմ տեղը

քարերը լացին, երկինք գնացին ողբա-
ցին, իսկ՝ ես անշարժ կեցայ, մա-
նաւանդ թէ նորէնորոր մեղքէր գոր-
ծեցի։

Այլ դու ողորմութեան Աստուած.
թնչպէս որ նոյն խաչ հանողները եղբը
ապաշխարութիւն դարձուցիր. ասան-
կալ իմ սիրոս այսօր ապաշխարու-
թիւն շարժէ, որ ըրած մեղքերուս
վրայ լալով քու ծարութեանդ ջուր
հաստցնեմ. անով փրկութեան հաս-
նելով քուկին ծարաւդ բժշկեմ,
կամքդ կատարեմ՝ յաւիտենական
երանութեան արժանի ըլլալով։

Ամենայն ինչ կատարեալ է։
Յհ. ԺԹ. 30։

Ամէն բան կատարեալ է. թնչ որ
Աստուած ապաստրրերէն ուզեցէք.
նէ Յիսուս միածին, ամէն բան լը-
մընցուցիր. թնչ սորվեցնել պէտք էր
մարդկան՝ սորվեցուցիր, թնչ օրինակ
տալ պէտք էր՝ գործով տուիր, թնչ
չարչարանք ու խաչ պէտք էր քաշել

Digitized by Google

մարդկային փրկութեանը համար՝ քա-
շեցիր, ամենեն Աստուծոյ հրամանքը
կատարեցիր, անոր համար հիմա հա-
մարձակութեամբ աղաղակեցիր առ
Հայր երկնաւոր. Ամենայն ինչ կոփ-
ուեալ է։ Ամենեն Աստուծոյ հրամանքը
լմնցած է։

Ահա Յիսուս, եսալ աս կրփակա-
գիմ, և կրխընդրեմ քենէ որ տաս
ինծի աս իրեք ընորհքը։ Ուրիշներուն
տրվեցրնեմ քու կամքդ կատարելու.
ուրիշներուն բարի վարքով աղէկ օրի-
նակ տամ, և ոչ չար օրինակ. և ինչ
խաչ որ խրկէ ինծի աստուածային
նախախնամութիւնը՝ սիրով քաշեմ,
քեզի նման ըլլամ։ Անանկով եսալ
կարենամ մահուանս առեւնը ըսելու.
ամենայն ինչ կատարեալ է. ամենեն
Աստուծոյ կամքը կատարեցի. հիմա-
ալ բարի մահուամբ կատարեմ իմ
կեանքս։ Ինչպէս որ Պօղոս առաքելոյդ
ուրբ հոգին համարձակութեամբ կը-
սեր առ Աստուած. Զքարտուղ պա-
տերազմն պատերազմեցայ, զընթաց-
սն կատարեցի, զհաւատսն պահեցի,

Digitized by Google

այսուհետև կայ և մնայ ինձ արդարու-
թեան պսակն։

Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։
Ղ-ԻԳ. 46։

Հայր Աստուած, քու ձեռքդ կը-
յանձնեմ իմ մարմնաւոր և հոգևոր
հոգս, որ եղբի օրսալ հոգիս քու
ձեռքդ աւանդեմ։ Աստնկ սորվեցանք
քու միածնէդ, և աստանկ սեռանք։

Հիմա դուն՝ Հայր ողորմութեան,
որ լսեցիր աս ողորմագին ձայնը քու
միածին Որդւոյդ, որ իրեն հոգին քեզի
առիր, այն ժամը Ցիսուսին՝ այն խո-
նարհութիւնը՝ և չարչարանքը յիշելով
ողորմէ, իսալ արժանի ըրէ որ Ցիսու-
սին վարքին հետևելով հնազանդու-
թեամբ ու ջերմեռանդութեամբ
մեռնելով կարենամ ըսել եղբի օրս.
Հայր Աստուած, որ զիս ստեղծե-
ցիր, պզտիկուցմէ ինչվան հիմա մար-
մնաւոր և հոգևոր բարեաց լցուցիր,
հիմնալ քու կամքովդ իմ օրերս լցն-
ցուցի, քու ձեռքդ և ոչ օտարի կա-

անդեմ զան հոգին, որ դուն ստեղծեցիր. ան, և քու երեսդ ցնցնելու արժանի արա. Հայր, 'ի յեռս քո անդեմ զհոգի ի՛մ. ինչպէս որ Յիսուսին հոգին առիր, ետալ անդամ եմ անոր մարմնոյն, իմ հոգիսալ մի բաժներ անոր քովէն, այլ գոնէ առ, պահէ յաւիտեան, որ է քովինգ։

Digitized by Google

ԱՂՕԹՔ Ի ՍԱՂՄՈՍԷՆ

Ի ԳԷՍԳԷՍ ԳԻՊՈՒԱԾՍ

ՍԱՂՄՈՍԸ սուրբ հայրը կրլմանցը նեն դեղաձախի կամ էզաձիի մը խանութի. ինչպէս որ հոն սանձն ցաւէ ըսու մարմնաւոր դեղը կրդմնաս, ասանկայ ինչ հոգեւոր կամ մարմնաւոր ցաւ ունենաս, անոր բարոյական դեղը սաղմոսին մէջը կրդմնաս, որ միտքդ կրբանայ, հոգիդ կրմխիթարէ, սիրտդ կրքաջալերէ։ Եւ որովհետև մէկ բանաստեղծութիւն մինէ հոգւոյն պէտոյ խօսքերով զարդարված, իր խօսքերուն մէջը մէկ գաղտնի զօրութիւն մը ունի խորունկ, որ մարդուն ներսի դէն մէկ յատուկ տպաւորութիւն մը կրնէ, ոմն որ հաւատքով ինչպէս որ պէտք է զարդեցէ։ Այսոր հասնար սուրբ հայրց

աղօթքը սաղմոսն էր. և ինչվան հիմա եկեղեցնայ ժամերգութիւնը մեծ մասը սաղմոսէն է։

Հոսալ մէկ քանի դիպուածներու աղօթքներ կրգտնաս սաղմոսէն, մեկնելով, խորհուրդները բացատրելով, հոգիին վայելչաբարձնելով. որուն ներգործութիւնը կրգտնաս թէ որ հաւատքով զուրցես։

Աղօթք 'ի սաղմոսէ 'ի ծանանցի հիւանդասենեան։

Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդեմ եւ, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ ՁԼ։

Ողորմէ՛ ինձի տէր իմ, ողորմէ՛, վասն զի հիւանդեմ, բժշկէ՛ իս տէր իմ, վասն զի ամենն ոսկորունքս կը-ցաւին։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ։ ՁԼ։

Բոլոր իմ անձս խիստ խռովութեան մէջ է հիւանդութենէս, դուսալ տէր իմ ինչվան ե՞րբ չես լսեր իմ աղօթքիս, չես ընդունիր իմ խնդիրքս

Digitized by Google

իս բժշկելով։

Դարձ տեր, և փրկեա զանձն իմ, կեցո՛ զիս տեր ըստ ողորմութեան քում։ Ը։

Տէր Աստուած, մեյմը ինծի դարձիր նայէ, իս փրկէ, իս ըրնացու քուկին ողորմութեամբդ։

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ։ կամ 'ի դժոխս խոստովան առնի առ քեզ։ Ը։

Եա ողջ ըլլալով քեզի կրծառայեմ, բերնովս պտտվս քու անունդ կրփառաւորեմ, բայց մեյմը որ մեռնիմ, ա՛լ չեմ կրնար քեզ փառաւորել, և ոչ յիշել։ մեյմը որ գերեզման երթամ, ինչնար բերան, ինչնար սիրտ որ քեզ պաշտե, քեզ օրհնե։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Ը։

Քանի՞ որ աս ցաւիս մէջն եմ, հեծալէն հառաչելէն յոգնեցայ, իմ մահիճս արցունք թափելէն լալէն լուացի, որ ինծի ողորմիս։

Digitized by Google

Ողորմեա՛ ինձ տէր, զի նեղեալ եմ ես, խռովեցաւ ի սրտմտութենէ աչն իմ, անձն իմ և փոր իմ։ Ը։

Դունալ տէր իմ ողորմէ, վասն զի խիստ նեղած եմ, չորս գիս խռովութեան մէջ, աչքասալ, փորասալ, բոլոր իմ անձասալ։

Պակասեցան ի ցաւոց կեանքդ իմ և ամէ իմ յոգւոց ելանելոյ։ Ը։

Ցաւին խստութենէն իմ կեանքս պակասեցաւ, հառաչելէն իմ տարինէրս հատան։

Աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան։ Ը։

Ուժս տկարացաւ վատուժնալէն, ոսկորունէրս անհանգիստ եղան։

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։ Ը։

Տէր Աստուած իմ մեղքէրուս հանմար սրգողելով մի՛ յանդիմաներ, բարկանալով մի՛ խրատեր, հապա հօր պէս խրատէ։

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ

յերեսաց բարկութեան քոյ։ լէ։

Ահա կրտեսնաստոր՝ քաւիչն ատանկ բարկանալէդ հիւանցեր պատուէր եմ խին մարմնոյս չիկայ մէկ բժշկութիւն մը։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց։ լէ։

Իմ մեղքերս հասար ենչլան իմ ոսկորներս սաղ հանգստութիւն չիմնաց։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ, զարհանապազ տրտում գնայի, զի անէն իմ լի եղև ջարջարանաք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։ լէ։

Շատ ջարջարեցայ, շատ տառապեցայ, տառապելէս հիմա խիստ խոնարհ եղայ, իմացայ որ քեզի դէմ մեղանչելս՝ քու պատուիրանքերդ չիպահելս՝ իմ հպարտութենէս կուգայ եղեր, անոր համար ամէն օր սիրտս տրտում է, վասն զի կրտեսնամ որ բոլոր անձս լեցվեցաւ ջարջարանքով, մէկ բժշկութիւն մը չիկայ իմ մարմնոյս։

Ջարջարեցայ և խոնարհ եղէ մինչև

յոյժ, մանչէի առ հեծութեան սրտի խմոյ։ լէ։

Անանկալ չարչարվեցայ, անանկալ խոնարհ եղայ որ՝ սրտիս հեծալէն ձայն կրհանեմ, կրմռնչամ։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ Մի Թողուր զիս տէր Աստուած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ։ լէ։

Ա՛խ, ՏԷՐ իմ, Թէպէտև պատրաստ եմ տանջանք քաշելու քովին կամքդ կատարելու համար, և ցաւերս ամէն ժամ իմ դիմացս են, սակայն դու տէր Աստուած, մի Թողուր իս տանկ, մի՛ալ ինծմէն հեռանար, նայէ որ ինծի օգնես, իս փրկես։

Ի բաց արա յինէն զտանջանս իմ, զի 'ի զորութենէ ձեռին քո ես պակասեցայ։ լէ։

Ա՛խ տանջանքս հեռացու ինծմէն. վասն զի քովին ձեռքիդ ուժը պակասեցաւ ինծմէն։

Կշտամբութեամբ վասն մեղայ խրա-

Digitized by Google

տեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա, սակայն ընդունայն է ամենայն մարդ։ ՀԷ։

Մեղքերու համար սատաներով յանգիմանելով իս խրատեցիր առ հիւանդութիւնը ինծի խրկելով, որ էօրիւմ ճէկի մը պէս իս բոլորովին մաշեցուց, բայց դուն գիտես որ՝ ամէն մարդ մէկ ունայնութիւն մընէ, չկրտէ ինչ կրնէ։

Դատ արա՛ ինձ տէր, զի ես յամբոյծութեան իմում գնացի, 'ի տէր յուսացայ՝ զի մի՛ եղէց հիւանդ։ ԻԵ։

Դուն խրատունք ըրէ՛, դատաստան կարէ՛ տէր իմ, վասն զի ես հիմա շնչակ արտով՝ քեզի եմ յուսացեր քեզի եմ ապաւիներ, որ չի հիւրնտանամ։

Փորձեա՛ զիս տէր և քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամունս իմ և զսիրտ իմ։ ԻԵ։

Թէ որ դուն կուզես իմ համբերութիւնս իմ հնազանդութիւնս փորձելու՝ փորձէ՛, չարչարէ՛, եղկցին կամքդ. Թէ որ կուզես իմ մեղքերուս համար պատժել՝ պատժէ՛ առ սիրտս,

աս մարմինս։

Եւ ասացի տէր ողորմեա՛ ինձ. բժիշկ կեա՛ զանձն իմ, եւ մեղայ քեզ։ Եւ։

Բայց եւսալ աս կրսեմ, Տէր, ողորմի՛ ինձ, բժշկէ՛ իս. մեղա՛յ, քաւեա՛, ներեա՛։

Տէր օգնականն է նոմա 'ի մահիճս ցաւոց իւրոց, և զամենայն անկողինս նոցա դարձուցանէ 'ի հիւանդութենէ նոցա։ Եւ։

Թէ որ մէկը ցաւէն պառկի, մահճի մէջ ինայ, դուն ես անոր օգնականը որ կրուընտցընես, և իրեն մահճէն հիւանդութիւնը կրփարատես։

Համբերելով համբերի տեսան, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։ Եհան զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Լիթ։

Շատ համբերելէս ետև՝ վերջապէս նայեցաւ Աստուած իմ վրայ, լսեց իմ աղօթքս աղաչանքս, մահճէս իս վեր հանեց, որ ինծի մէկ գուբ մընէր տառապանքի, մէկ գուբ մընէր չամուռի պէս կաւի պէս կպած։

Տէր Աստուած իմ կարդացի առ-

քեզ՝ և բժշկեցեր զնս, տէր հաներ 'ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր զնս յայնցանէ՝ որ ի ջանեն 'ի գուբ։ ԻԹ։

Դարձայ ընդ Տէր Աստուած քեզ աղաղակողնէրուն սիրտդ չի գիմանար, երբոր ես քեզ՝ գիմեցի, գունալ ես բժշկեցիր, գերեզմանէն ես խալսցուցիր, փրկեցիր ես անոնց մէջէն՝ որ մեռնելով գերեզմանին գուբը կիյնան։

Ընդ երեկոյս հանդիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։ ԻԹ։

Ա՛ս իրիկուն լալերը կը դադրին, առաւուն կուրախանանք։

Ա՛ռ քեզ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաչեցի, զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ ի ջանեմ ես յապականութիւն։ ԻԹ։

Ցաւիս ատենը աս կրսէի Աստուծոյ, և ասանկ կաղաչէի. Տէր Աստուած թէ որ հիմա մեղքերուս համար ես պատժես, արիւնս քամես մեռցընես, տէր ես, կրնաս ընել, բայց ես ապականելէս կորսըվելէս ետև՝ ինչ օգուտ կըլլայ քեզի։

Մինթէ հող խոստովան առնիցի՞ առ

քեզ, կամ պատմեսցէ զՀշմարտու-
թիւն քո։ իմ։

Մեռածիս պէս հող պիտոր կորիս,
միթէ մէկ հող մը կրնայ քեզ պաշ-
տել, կրնա՞յ պատմել քուկին Հշմար-
տութիւնդ, մեծութիւնդ։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և
տէր եղև ինձ օգնական։ Դարձոյց
զսուգ իմ յուրախութիւն, զերծ յի-
նէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրա-
խութիւն։ իմ։

Այս խօսքերդս լսելով Աստուած,
ողորմեցաւ ինծի ու օգնեց, ինչ որա-
մութիւն որ ունէի՝ ուրախութիւն
դարձուց, սուգի լաթէրս վերցուց,
ուրախութեան լաթէր հագցուց։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լու-
աւ տէր աղաչիլ իմոյ, և տէր զի�-
դրուածս իմ ընկալաւ։ ՀՇ։

Այսանկ լսեց Աստուած իմ ձայնս,
իմ լացս, ու խնդիրքս կատարեց։

Digitized by Google

Աղօթք 'ի սաղմոսէ, 'ի Նեղիլն կամ 'ի Ը-ը նամեաց մարմնոյ, Ե կամ հոգւոյ, որ է Ն սապանայ, աշխարհ, Ե մարմն։

Աստ քեզ տէր համբարձի զանձն իմ, Աստուած իմ 'ի քեզ յուսացայ, մի ամաչեցից, և մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ։ խգ։

Ցէր Աստուած քեզի դիմեմ, քեզի կրկուսամ, չըլլայ որ ամօթով մնամ, իմ թշնամիներս չիխնտան իմ վրաս։

Լուր Աստուած աղօթից իմոց յաղաչէլ ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն փրկեա զանձն իմ։ կգ։

Ցէր Աստուած լսէ իմ աղօթքիս որ պիտոր ընեմ. թշնամին վախը պատեր է իս, փրկէ ազատէ իս անոր ձեռքէն։

Աստուած յանուանն քում կեցո՛ զիս, և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ։ Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։ ծգ։

Digitized by Google

Տէր Աստուած քու անունիդ հա-
մար իս ապրեցուս, քուկին զօրու-
թեամբդ իրաւունք ըրէ ինծի, վասն
զի օտարներ՝ զօրաւորներ Թշնամիներ իմ
վրայ եկան, իս կուզեն կորնչցնել,
քեզ Աստուծոյ տեղ՝ բանի տեղ չեն
տար։

Աստուած յօգնել ինձ նայեցաց, և
տէր ընկերս է ինձ փուրթ։ Ամաչեսա-
ցեն և յամօթ ելցին որ ինդրուին զանձն
իմ, դարձցին յետս և ամաչեսացեն,
ոչք խորհին ինձ չար։ կեր։

Տէր Աստուած նայէ որ ինծի օգ-
նես, ինծի շուտով ընկերանաս, որ
ամրչնան իմ Թշնամիներս. ամօթով
ետ դառնան անոնք որ՝ ինծի մեկ
վնաս մը կուզեին հասցնել։

Զարթիր և հայեցաց տէր յիրաւու-
նս իմ, Աստուած իմ և տէր իմ՝ ի
դատաստանս իմ. և իրաւ արա ինձ
ըստ արդարութեան քում տէր Ա-
ստուած իմ։ Մի ուրախ եղցին յիս
Թշնամիք իմ, և մի ասասցեն՝ ի սիրտս
իւրեանց, Թէ վաշ վաշ անձանց մերոց
զի ընկլուզաք զնա։ լԵ։

Աբեթընդիր տէր իմ, նայէ, ի

ծառը կընէին։

Եղլաք մեք նախատինք գրացիաց մերոց, ծառը և այսն կատականաց այնոցիկ՝ որ շուրջ էին զմեզ։ ՀՃ։

Անանկ եղաւ որ մեր գրացիներուն նախատինքն մէջ եղանք, որ մեր քովինները ծառը ու ատենթ եղանք։

Մինչև յերդ Աստուած, նախատէ Թշնամին, բարկացուցանէ հակառակ կողմն զանուն սուրբ քո։ ՀՃ։

Ինչվան երբ ասանկ քամահրվի ալիսորը Թշնամին տէր իմ, իսա քամահրելով քէզ կրգարկայանէ։

Մինչև ցերդ բարձրանայ Թշնամին 'ի վերայ իմ, Նայեա՛ և լուր ինձ տէր Աստուած իմ։ ԺԷ։

Ինչվան երբ ալիսորը բարձրանայ գոռոզնայ Թշնամին իմ վրայ, Նայէ, լսէ ինձի տէր Աստուած իմ։

Ազի տէր, ժամանեա՛ նոցա, և խափանեա՛ զնոսա, փրկեա՛ զանձն իմ յամպարշտաց, 'ի սրոյ և 'ի ձեռաց Թշնամւոյն։ ԺԸ։

Եկէք տէր Աստուած, հասէք անոնց վրայ ու խափանէ։ ամբարիշտներէն

իմ Թշնամիներուս ձեռքէն փրկէ իս։

Մինչև յաւիտեան և 'ի ծերանալ Աստուած իմ մի թողուր զիս։ Ի։

Ինչվան որ ես ծերանամ, մի թողուր իս ձեռքդ տէր Աստուած իմ։

Մի ընկնիներ զիս տէր 'ի ժամանակս ծերութեան, 'ի պակասել զորութեան իմոյ մի թողուր զիս։ Ասացին Թշնամիք իմ ինձ, և որ պահարեցին զանձն իմ։ խորհեցան 'ի միասին և ասացին։ Աստուած եթող զնա, հալածեացուք և հասցուք նմա, զի ոչ ոք է որ փրկէ զնա։ Աստուած իմ մի հեռի առնիր քենէն, և Աստուած յօգնել ինձ նայեաց։ Ի։

Երբեորայ ծերանամ, երբոր իմ ուժս կրպակսի, անառեննալ մի ձգեր, մի թողուր զիս տէր իմ։ Վասն զի իմ Թշնամիներս անանկ առեանի կրպասին ըսելով։ Աստուած ձեռքէ թողուց զս հոգին. հիմա է առեանը, հասանիք. հալածեանք, վասն զի չիկայ մէկը որ փրկէ։ Ա՛խ, տէր Աստուած, դուն զս ըսելով մի հեռանար ինձմէն, հապա ինձի օգնութիւն հաս։

նեղու նայէ։

Ընդ-էր տէր կացեր 'ի հեռաստանէ, անտես արարեր 'ի գէպ նեղութեան ժամանակի։ Թ։

Ինչո՞ւ համար հեռացիար կեցեր ես իմ մեղքէրուս համար, լսան իմ նեղութեանս առաջը չես նայիր իմ երեսս։

Աչի տէր, և մի զրաստի մարդ. գառնացին հեթանոսք առաջի քո։ Թ։

Եկիր տէր Աստուած, որ մարդ չի զրանայ իմ վրայ, հեթանոսներուն գառաստանը գուն տես։

Ամաչեցան և խռովեցան յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեցան յոյժ վաղվաղակի և խռովեցան։ Ղ։

Ամենակով ատեցին թշնամիներս ատելիս, շուտով եղա գառնան իմ հոգիս փորձելէն։

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յուսամ՝ ի՞ երկեայց, տէր ապատէն կենաց է՝ մոց ես յուսամ՝ գողացայց։ Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկա-

թացան և անկան։ Թէ պատրաստուեցաք 'ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. Թէ յարիցէ 'ի վերայ իմ Հակառամարտս, սակայն և այսուհիկ 'ի քեզ տէր յուսացայ։ Վասն Թշնամեաց իմոց մի մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։ Խէ։

Տէր Աստուած, զուն ես իմ լոյս ու կեանքս, ալ ես ուրկից պիտոյ վախնամ, զուն ես իմ ապաւէնս, ես ուրկից պիտոյ դողամ։ Ինչ Թշնամի որ ինծի մտերմնայ ինչս մը հասցնել։ Թէ որ իմ վրայ պատերազմ եղլան ծեծկլլին իմ Թշնամիներս, ատոնք նայ, մարմին, ու աչիարհ, յոյս քու վրադ դնելէն ետև՝ սիրտս ամենևին չվախնար։ Անոր համար ջղլայ որ Թշնամիներս ուրախանան, մի մատնէր իս իմ նեղչիներուս ձեռքը։

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկիւղ։ Ի՞նչ ապրանք ինձ մարդ։ Տէր է իմ օգնական, և ես տեսից 'ի Թշնամիս իմ։ Բարի է յուսալ 'ի տէր, քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի

տէր, քան յուսալ յիշխանս։ ԺԺԷ։

Իմ օգնականս Աստուած է, որոր հաստատ չեմ վախենար ինչ պիտոյ ընէ ինծի մարդը. մինաւանդ թէ իմ թշնամիներուս պատիժ կը հասցնէ։ Ա. նոր հաստատ շատ ապէկ է Աստուծոյ վրայ դնել, յոյսը, քան թէ մարդու կամ իշխաններու վրայ։

Ամենայն ազգեր շրջեցան զինև, և անուանմբ տեառն յաղթեցի նոցա։ Զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր, և եղև ինձ ի փրկութիւն։ Ալ տեառն ապար զօրութիւն, ալ տեառն բարձր ապար զիս, և ալ տեառն ապար զօրութիւն։ ԺԺԷ։

Ամենն կերպ փորձութիւն բերին ինծի թշնամիներս, Աստուծոյ անունը տալով անոնց վրայ երբոյ. վասն զի իմ զօրութիւնս ու օգնութիւնս Աստուած է. անիկայ իս վրայ հանեց, զրպացուց։

Զի ահա թշնամիք քո տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն, ցրուեսցին ամենեքեան ոչք գործեն զանօրենութիւն։ Եռես ամն իմ ի թշնա-

միս իմ. ոչք յարուցեալ են 'ի վերայ իմ չարութեամբ, 'ի նոսա լուիցէ ունկն իմ։ զն։

Վասն զի իմ հոգւոյս թշնամիներդ տէր իմ, քուկին թշնամիներդ են, որ անօրէնութիւն կընեն, ու ինծի դոր ծել կուտան. զրուէ տէր իմ աս ամէն թշնամիներդ, որ իմ վրայ երդերն չարութեամբ։

Խոստովանեցէց քեզ տէր, զի լաւ ինձ և եղեր ինձ 'ի փրկութիւն։ ՀԺԷ։

Հիմա կրխոստովանիմ, շնորհակալ կըլլամ տէր իմ որ ինծի լսեցիր, ու իս փրկեցիր։

Աղօթ 'ի սաղմոսէ, 'ի խնդրելն ինչ 'ի գէտանէ։

Ժողով 'ի տեառնէ, և նա տացէ քեզ զինդրուածս սրտի քո. յոյսն նեան առաջի տեառն զՀանապարհս քո, և յուսա 'ի նա։ ԼԷ։

Ուրէմ Աստուծմէ, որ անակ քու սրտիդ խնդիրքը տայ. Աստուծոյ

առջին հանէ, բայց քու ճանաչողդ, և անոր յուսայ։

Նա արտասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զիրաւունս քո որպէս զօր հասարակ։ լԺ։

Աստուած քու արդարութիւնդ դուրս կը հանէ լուսոյ մը պէս, և քու կիրն իրաւունքդ յայտնի կրնէ՝ օհարաշկեան ատենի պէս։

Լռեցէ քեզ տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակոբայ։ ԺԹ։

Անանկ նեղութեան օրը՝ որ մէկ բան մը կուզես, Աստուծոյ դիմէ, քեզի կրլսէ, քեզի օգնական ալիսոր ըլլայ Աստուծոյ անունը։

Առաքեսցէ քեզ տէր օգնութիւն 'ի սրբութենէ իւրմէ, և 'ի սիոնէ ընկալցի զքեզ։ ԺԹ։

Աստուած քեզի իր սրբութենէն օգնէ ալիսոր, ու սիոնէն որ է արքայութիւնը՝ քեզ ընդունի ալիսոր։

Յիշեսցէ տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ։ ԺԹ։

Որչափ պատարագ ու աղուրպան ըրեր, ամենենալ յիշէ Աստուած, ու քու ուխտդ ընդունելի ընէ։

Ցայտ քեզ տէր ըստ սրտի քումմ, և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ։ ԺԹ։

Քաւիցին սրտիդ կերօրէ տայ քեզի Աստուած, ու քաւիցին ամենեն խորհուրդքդ՝ մեղքիդ երաժշտելը անիկայ կատարէ։

Ցնծասցուք մեք 'ի փրկութեան քումմ, յանուն Աստուծոյ մերոյ մեք մեծ եղեցուք։ ԺԹ։

Աստուած մեր խնդիրքը ասանիկ կատարելով, մենքալ ցնծանք ուրախանանք, Աստուծոյ անունովը մենքալ մեծնանք։

Լցուսցէ տէր զամենայն խնդրուածս քո, այժմ ծանեալք զի կեցոյց տէր զօծեալ իւր։ ԺԹ։

Քու ամենեն խնդիրքդ Աստուած լեցնէ. հիմա անով իմացանք որ Աստուած իր օծեալը Քրիստոս կեցուց, անով ամենեն խնդիրքնիս կատարեց։

Հնազանդ լեր տեառն, և ծառայ

Digitized by Google

եւ նմա , և մի նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առաքեալ իցեն Հանուն վարձք իւրեանց , ընդ մարդոյ որ գործէն զանօրէնութիւն : ՁԺ :

Դուռնալ հնազանդ եղիր Աստուծոյ , ու իրեն ծառայէ , մի նայիր , օրինակ մառնիր ան մարդիկներէն՝ որոնց Հանիանին ավրված է , ան մարդէն որ անօրէնութիւն կրնէ :

Զի չարը վաղվաղակի սատակեսցին , բայց ոչք Հանիերին տեսան , նոքա ժառանգեսցեն զերկիր : ՁԹ :

Վասն զի չարերը շուտով պիտոր սատակին , բայց անոնք որ կը Հանիերին Աստուծոյ , բոլոր աշխարհ ժառանգեն պիտոր :

Աղօթք ի սաղմոսէ Լան ապաւինեալ ,
Աստուած :

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն , օգնական ի վերայ նեղութիւնց՝ որոք գտին զմեզ յոյժ : Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ի խռովել երկրի : խե :

Digitized by Google

Մեր ապաւէնը և զօրութիւնը Աստուած է, որչափ նեղութիւններ որ մեր վրայ եկան, ան է մեր օգնականը։ Անոր համար ամ աշխարհիս մէջ որչափ խռովութիւն ըլլայ հոգւոյ ու մարմնոյ, չվախնանք, չշփոթինք։

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, և ես յուսամ 'ի նա։ Զխնդ։

Իմ ողորմութիւնս՝ իմ ապաւէնս՝ օգնականս՝ փրկիչս Աստուած է. իմ յոյսս բոլոր Աստուծոյ վրայ դրեր եմ։

Ուր քնանալուն է յօգնութիւն բարձ ընելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանդիպեալ։ Ղ։

Գիտեմ որ՝ ոմանք Աստուծոյ օգնութեանը ապաւինելով կեցերէ, Աստուծոյ հովանաւորութեան տակը ան մարդը կը հանդչի։

Զարարքերուն տարբեր քեզ ապաւէն, ոչ հասցնենս քեզ 'ի չարը, և տանի Չանք մի մերձենայցեն 'ի յարկս քո։

Երբոր Աստուած քեզի ապաւէն ես ըլլար, ապահով կեցիր՝ որ քեզի և քու տանդ չարը մը ինչպես մը չըլլար,

ոչ հոգւոյ և. ոչ մարմնոյ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Աստուած իր հրեշտակներուն պատուիրեր է քեզի համար որ քու ամենն ճանփուդ մէջը քեզ պահեն։

Ի թիկունսն ինչ իւր ընկալցի զքեզ, 'ի հովանի թևոց նորա յուսասցիս։ Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ ճշմարտութիւն նորա։

Վասն զի Աստուած անանկ մարդը՝ որ իր թևերուն հովանատորութիւնը կրցու

փառ։ Զարմանալի զգօրութիւնս քո, և եկ ի կեցուցանել զմեզ։ Աստուած զօրութեամբդ զարմանալի զմեզ լերանցդ զբարեսս քո ի մեզ և կեցցուք։ Հմբ։

Աստանի յոյսս զնեալով քեզի կոչաս զակեմ տէր իմ, գուն որ խարսէլին ազգը կրհովուես կառաջնորդես, նայէ ինծի, քու կին զօրութիւնդ սառեկ իս ապրեցնելու։ Տէր Աստուած զարմանալի մեր մեղրութեան Ճանիկէն, քու կին երեսդ ցոյց որ մենքալ ապրինք։

Եղև տէր ապաւէն իմ. Աստուած օգնական յուսոյ իմոյ։ զԴ։

Այս ըսելով իմ ապաւէնս, իմ օգնականս ասկէց ետքը Աստուած եղաւ։

Ցառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ, զի մի սասանիցայց։ ԺԵ։

Եւ առաջուցմէալ կրտեսնայի որ Աստուած ամենայն ատեն իմ առաջիս էր, իմ աջ գիս կեցեր էր որ չըլլայ թէ ցնիմ։

Ո՛րպէս զի մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո։ Այլ

անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու 'ի միտ։ զնա։

Ինչպէս մեծ են քու գործքերդ տէր Աստուած. ինչպէս խորունկ են քու խորհուրդներդ. քու մտածմունքներդ, որ մէկ անզգամ մարդ մը չի կրնար իմանալ, իր խելքը չի հասանիր։

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ փրկութիւն։ Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ զի մի սասանեցայց։ Աստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ, Աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ է առ Աստուած։ զնա։

Միայն թէ դու անձն իմ, Աստուծոյ հնազանդ եղիր, վասն զի անկէց է իմ փրկութիւնս։ Անիկայ է իմ Աստուածս, իմ փրկիչս, ապաւէնս, որ բան մը չը լլլամ։ Իմ զօրութիւնս և փառքս Աստուծմէ է, յոյսս Աստուծոյ վրայ է։

Ի տուէ ես ոչ երկիւղայց՝ զի 'ի տէր յուսացայ։ Աստուծոյ դոմէ՝ցից զանս իմ, յԱստուած յուսացայ և ոչ երկիւղայց, զի՞ արասցէ ինձ մարդ։ ծէ։

Digitized by Google

Յորեկնալ ելեմ վախնալ, վասն զի Աստուծոյ վրայ է յոյս. Աստուած կրդովեմ, Աստուծոյ վրայ կրդուսամ, ելեմ վախնալ մինչ ախտոր ընեն մարդը։

Սիրեցիցդ քեզ տէր զօրութիւն իմ, տէր հաստատութիւն իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։ Աստուած օգնականն իմ, և ես յուսամ ի նա, ապաւէն իմ, եղջիւր փրկութեանն իմոյ ընդունելի իմ է։ Ժէ։

Անկեալ եղան քեզ կրսիրեմ տէր իմ, վասն զի իմ զօրութիւնս ես, ապաւէնս ես ու փրկիչ։ Դու ես տէր Աստուած՝ իմ օգնականս և իմ ապաւէնս, որ ինձի խիստ հաճոյ է, իմ փրկութեանս ուժն է։

Օգնականն իմ լեր տէր, և մի անարգեր զիս, և մի թողուր զիս Աստուած փրկիչ իմ։ Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր իմ ընկալաւ զիս։ Իբ։

Ինձի օգնութիւն ըլլէ Աստուած, մի քաջամարտեր իս իմ մեղքերուս համար, մի թողուր իս իմ փրկիչս։ Եա

ան սատիճանը հասայ որ՝ սամենն մար-
դիկ Թողուցին իս, ինչվան հայրասալ
մայրասալ Թողուց, բայց Աստուած զիս
ընդունեց։

Պահեա՛ զիս որպէս բիբ ական, ընդ
հովանեաւ Թևոց քոց ծածկեսցես
զիս յերեսաց ամբարշտաց որք տա-
ռապեցուցին զիս։ Ժէ։

Հիմամբ կապաւեմ՝ տէր իմ, սա-
հեա՛ իս ինչպէս կըպահվի աչքին ա-
պէ-պէքը, Թևերուդ հովանաւորու-
Թեանը տակը պահէ իս չար մարդիկ
նէրուն ձեռքէն, որ ինծի նեղուԹիւն
տըվին։

Տէր Աստուած զօրուԹեանց, ե՛
նման է քեզ, հզօր ես դու տէր, և
ՃշմարտուԹիւն քո շուրջ է զքեզ։
Քո են երկինք և քո է երկիր, զաշ-
խարհս լցիս իւրով դու հաստատե-
ցեր։ Պարծանք զօրուԹեանց մերոց
դու ես տէր, և՝ ի կամս քո բարձր ե-
սցին եղջիւր մեր։

Դուն ես տէր զօրուԹեանց, ո՛վ կարչ
մանի՝ քեզի, քունկինք է երկինքը ու
երկիր, բոլոր աշխարհս դուն ստեղ-

Digitized by Google

ծեցիր, մեր պարծանքը դուն ես, քու-
կին կամքովդ բարձրացո՛ մեր եղ-
ջիւրը։

Օրհնեալ է տէր, զի լուաւ ձայնի
աղօթից իմոց, տէր օգնական իմ և
պաշտպան իմ։ Ի նա յուսացաւ սիրտ
իմ. օգտեցաւ և զուարթացաւ մարմին
իմ, և ես կամաւք իմովք խոստովանեցից
նմա։ Տէր զօրութիւն ժողովրդեան ի-
րոյ, ապաւէն փրկութեան օծելոյ ի-
րոյ։ Փրկեա՛ զժողովուրդ քո, և օրհ-
նեա՛ զժառանգութիւն քո. հո-
վուեա՛ և բարձրացո՛ զնոսա մինչև յա-
ւիտեան։ Ամէն։

Օրհնեալ ըլլայ Աստուած, որ իմ
աղօթքս լսեց, իմ օգնականս ու պաշտ-
պանս եղաւ, իմ սիրտս անոր վրայ
յուսացաւ, յուսալովը օգուտը տե-
սաւ, մարմինս ալ ուրախացաւ, ես ալ
խոստովանելով շնորհակալ կըլլամ։
Տէր Աստուած՝ որ ես զօրութիւն
ու ապաւէն ժողովրդեան, փրկէ՛
քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժա-
ռանգութիւնդ, հովուէ՛ ու բարձրը-
ցո՛ մինչև յաւիտեան։

Digitized by Google

Աղօթք 'ի սաղմոսէ 'ի ժամանակի նեղութեան։

Ի նեղութեան խնամեալ եմ առ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։ Ժէ։

Երբոր ես նեղութեան մէջ ընկայ, սիրտս ուրիշի մը չէրացի, հապա միայնակ Աստուծոյ բացի։

Կեցո՛ զիս Աստուած, զի հասին ջուրքը յանձն իմ. ընկայ ես 'ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանդիստ։ կԸ։

Քեզի կաղաղակեմ տէր Աստուած, փրկէ՛ իս. վասն զի ինչպէս ջուրքը մէկի մը վրայ վազէ, անանկ նեղութիւններքը իմ վրայ վազելով եկան հասան. իբր թէ մէկ խորունկ ծովու մը մէջ ընկած ըլլայի, անանկ չեմ կրնար ճար մը հանգստութիւն մը գտնալ։

Նեղութիւնքը սրտի խոց բռնեցեր են յոյժ, և 'ի վշտաց խոց հան զիս։ խԸ։

Իմ սրտիս նեղութիւնքը խիստ շատ-

Digitized by Google

ցան, ասելով նեղութիւնէ հանէ իս կա-
ղաչեմ։

Ընդէր մերժեցեր Աստուած խա-
սան, բարկացաս սրտմտութիւն քո
'ի վերայ խաչին աստուն քո։ Ցիշեա՛
զժողովուրդ քո զոր ստացար 'ի սկզբա-
նէ, փրկեցեր զմիհակ ժառանգու-
թեան քո։ հդ։

Ինչո՛ւ ասանկ բոլորովին ձգեցեր իս
Աստուած, քուկին բարկութիւնդ
վրաս է եղեր իմ մեղքերուս համար.
բայց յիշէ որ ես քուկին թառայ-
նդ ոչխարնէրն եմ. յիշէ որ քուկին
ժողովրդէդ քուկին ժառանգու-
թիւնէդ եմ, որոնց շատ աշխատանք
քով առաջուցմէ 'ի վեր վասակեցար
ու փրկեցիր։

Ընդէր դարձուցանես զձեռն քո,
և զաջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ իս-
պառ։ հդ։

Ասանկ ըլլալով հիմա ինչո՛ւ համար
քուկին ձեռքդ ինծմէն բոլորովին կը-
դարձնես։

Խաչեցայ 'ի գիշերի ընդ սրտի ի-
մում, հոգայի և ստուգապէր յիս հոգի

իմ։ Մինչեւ յաւիտենից մերժեսցէ զիս տէր, և ոչ ևս յաւելուցու 'ի հաշտել և ևս։ Կամ իսպառ արգելցէ զողորմութիւն իւր յինէն։ Կամ մոռացէ գթալ Աստուած իմ և ևս. կամ արգելցէ զգթութիւն իւր բարկութեամբ իւրով։ Հէջ։

Այս հոգը իս անչափ առաւ որ՝ գիշերը արեւս մէջը ես ինծի կրճատեցուցայի կրտաւատէի, արդեօք Աստուած իս բոլորովին մերժեց, երբեմն ձգէ՞ց, մէյմնալ ամենեին երեսս չինայի չողորմի՞ պիտոր, չըլլայ որ կրտէի անանկ բարկացած ըլլայ որ ալ քնաւ ալիտոր մոռնայ իս, իր գթութիւնը կարէ վրայէս։

Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի ձեռաք իմովք. 'ի գիշերի առաջի նորա ոչ խաբեցայ։ Ոչ կամեր մխիթարել զանձն իմ, յիշեցի զԱստուած և ուրախ եղէ. հոգայի՝ և նուազեր յիս հոգի իմ։ Հզ։

Սանկ նեղութեան գէշ օրսալ՝ ես նորէն ձեռամբնէրս վեր վերցնելով Աստուծոյ կաղաչէի, շատ նեղութիւն

քաշեցի, հասկրցայ աշխարհիս ոչնչութիւնը, զգուեցայ աշխարհիս փառքէն, մեծութենէն, մարդիկներէն, վասն զի սուտ են. ես անոնցմէ մէկ միսիթարութիւն մը չիգտայ, յիշեցի ան ատենը Աստուած, հասկրցայ որ Ճշմարիտ բարեկամ ինծի Աստուած է միայն, Աստուած յիշելովս չիխաբեցայ, վասն զի մինակ յիշելը Աստուած իմ սրտիս մէջը մեկ ուրախութիւն մը կրբերէր, իսկ երբոր հոգմոմուք կընէի, իմ հոգիս մարելու պէս կրլլար։

Ո՛վ է Աստուած մեծ որպէս զԱստուած մեր. դու ես Աստուած որ առնես զարքունչելիս։ Ցուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո, փրկեցեր բազկաւքով զժողովուրդսէզ։

Վասն զի կրմտածէի, ինչ կայ մեծ ինչպէս է մեր Աստուածը, գոնե ես ըսի ան Աստուածը որ հրաշքներ կրգործես, գոնե ես՝ որ քունկին ուժգրցուցիր քու ժողովրդեանդ փայ, ու իրենց ներգութեան մէջ հաստատ, փրկեցիր։

Digitized by Google

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ ապաստակեցի, զօրհանապազ ուրախա-
լու զանձն ծառայի քո, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։ Զի դու
տէր քաղցր և ուրախ ես, բազումողորմ
առ ամենեսեան, որք կարդան առ քեզ։
Յաւուր նեղութեան իմոյ կարդացի
առ քեզ, և լուար ինձ։ Այլ դու տէր
Աստուած իմ, գթած ես և ողորմած,
երկայնամիտ, բազումողորմ և ճշմա-
րիտ։ Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ։ Ամէն։

Ողորմէ՛ ինծի, վասն զի օտարի չի-
գիմեցի, այլ քեզի միայն, ուրախացու
ես միշտ քու ծառագ, վասն զի քեզի
վերուցի սիրտս՝ որ քաղցր ես ու չի-
տակ, ամենեսուն վայ կրդրթատ՝ որոնք
որ քեզի կրդիմեն, քեզ կրկանչեն,
եսալ երդարդիմ նեղութեանս օրը քեզ
կանչեցի, լսեցիր ինձ։ Ամենի ողոր-
մած ըլլալովդ՝ հիմնալ իմ վայ նայէ
ու ողորմէ։

Յաւուր նեղութեան իմոյ խնդալ-
հեցայ առ քա զուանին քո, յորում առ-
ուր կարդամ առ քեզ, վաղվաղակի
լուր ինձ։ Ամէն։

Digitized by Google

Այ իմ նեղութեանս օրը լսէ ինձի ան օրը որ քեզի կապաղակեմ, շուտով մտիկ դիր ինձի։

Ցաւը մեզ օգնութիւն ի նեղութեան, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։ Աստուծով արասցուք զօրութիւն, և նա արհամարհեսցէ զայնոսիկ որ նեղեն զմեզ։ ԺԹ։

Օգնէ մեզի մեր նեղութեանը մէջ, զիսն զի պարապ է մարդու օգնութիւնն ու փրկութիւնը, հապա միայն մեր Աստուծովը մենք պիտոր զօրութիւն ընենք, ինքը մեր նեղիչները պիտոր քամահրէ։

Խնդրեցի ի տէրէն և լուաւ ինձ, և յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։ ԼԴ։

Սանկ խնդրեցի, Աստուածայ լսեց ինձի, ու ամենն նեղութենէ փրկեց իս։

Հայեցաւ տէրը ի նեղութիւնս նոցա, ի լսել ձայնի աղօթից նոցա։ Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ ըստ բազմութեան ողորմութեան իւրում։ Եւ զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն գերչայց նոցա։ ՃԵ։

Digitized by Google

Աստուած լսելով իրենց աղօթքնե-
րուն, նայեցաւ իրենց քաշած նեղու-
թիւններուն վրայ, յիշեց իրեն ուխ-
տը իրեն խօսք տրուածնէրը, մեղքին-
ցաւ իրեն անհուն ողորմութիւնովը,
և յիշելովը անանկ ըրաւ որ, որոնք
որ գերի ըրեր էին, նեղութիւն կու-
տային, անոնք գութ շարժեցան վրա-
նին։

Ի նեղութեան իմումի ես առ ասէր
կարդացի, և լուաւ ինձ ասէր, փրը-
կեաց զանձն իմ 'ի շրթանց նենգա-
ւորաց, և 'ի լեզուէ չարէ։ ՃԺԹ։

Շնորհակալ կըլլամ որ՝ իմ նեղու-
թեանս առեներ Աստուծոյ դիմեցի,
անաչ լսեց, փրկեց զիս չար լեզուներ-
էն, նենգաւորներէն։

Աղօթ 'ի սաղմոսէ, 'ի նեղութեան ազ-
գատութեան մարմնոյ ես հոգւոյ։

Ես ազգատ և անանկ եմ Աստու-
ծոյ, օգնեալ ինձ, օգնական և փրկիչ
իմ ես գոս ասէր իմ, մի յապաղեսցես։
ԿԹ։

Digitized by Google

Եւ մինչ մարդ մենեմ հոգւով և մարմնով աղքատ, տէր Աստուած օգնէ ինձի, մուշանար, վասն զի դուն ես ինձի օգնական ու փրկիչ։

Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ. զի միամօր և աղքատ եմ ես։ Թէ։

Նայէ ինձի ու ողորմէ, վասն զի ես մինակուկ և աղքատ մարդ մի եմ։

Ամենեքեան քեզ ապաստան, և դուռաս կերրակուր նոցա՝ Ի ժամուն։ Յատս դուռ նոցա և կերրակրեն, բանասա զՀոգն քո, կերրակրեսս զամենեսեան կամաց քովք։ Ճգ։

Ո՛րչափ որ աշխարհիս մէջ մարդ ու կենդանի կայ, ամենքը քեզի կրսպասեն. դուն ալ ամենուն կերրակուրը իրենց ատենին երկասպնես կուտաս։

Աղքատ և ցաւած եմ ես. փրկու Թիւն քո ընկալցի զիս։ Կը։

Հիմա ինձի՝ ես իսաւր իմ կերրասկուրս հոգւոյ և մարմնոյ, որ մինչ աղքատ ու ցաւագար մենեմ հոգւով ու մարմնով, ու կրսպասեմ քեզի տէր իմ, որ քու կիրն փրկութիւնդ ինձի հասնի։

Digitized by Google

Տէր Աստուած զօրութեանց, մինչև յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։ Զամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով։ Աստուած զօրութեանց դարձ, հայեաց յերկնից և տես, այց զայս այգեւոյս այսմիկ, և դարման տար սմա զոր տնկեաց աջ քո։ Հմմ։

Ա՛խ, տէր Աստուած, գիտեմ որ մեղաւոր եմ, բայց ինչվա՞ն երբ ապիտոր բարկանաս իմ մեղքերուս համար, ազօթքս չլսես ախտոր. քու տրված հացդ՝ ինծի մէկ ալրունքի հաց մը եղավ, մեղքերուս ծանրութենէն՝ նեղութիւնները վրաս շատնալէն՝ լալով կուտեմ, լալով կը խմեմ։ Տէր Աստուած զօրութեանց, մէյմը դարձիր, նայէ վերէն երկնքէն, տես հոգա, վասն զի իմ հոգիս՝ իմ տունս՝ մէկ էգիպտոնէ, որ դուն տնկեցիր, ես բան մը չունիմ, անանկէնէ գ

հոգա տսկայ որ քուկինն ձեռքդ տնկեց։

Մի յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութ-

Digitized by Google

թիւն քո, զի աղքատացաք յոյժ։ հՀ։

Գիտեմ որ իմ մեղքերս գեռ կը-յիշես, անկէց ասանկ իս ձգիրես։ կա-զաչեմ տէր իմ ամէն մի յիշեր իմ առջի ըրած մեղքերս, շուտով հասցուս ինծի մէկ ոգորմութիւն մը հոգւոյս և մեր-մնոյս, վասն զի աղքատութիւնը խիստ տիրեց վրաս։

Մէ գործցի անանկն ամաչեցեալ, այլ աղքատն և անանկ օրհնեացեն զա-նուն տուրբ քո։ հՁ։

Ես մեկ անանկ աղքատ մնեմ, ա-ռաջ ինչ չնորհքնէր ունէի՝ բոլորը կորանցուցի, հիմա սա խեղճ անանկ աղքատս ամենով մի գործներ, այլ անանկ ըրէ որ՝ աս աղքատնալ ու անանկնալ քուկինն անունդ օրհնէ։

Մէ մասներ գազանաց զանձն՝ որ խաստովանն առնի առ քեզ։ և զան-ձինս անանկաց քոց մի մոռանար իս-ապատ։ հՁ։

Անգութ գազաններուն ձեռքը մի մասներ իս տէր իմ որ քեզ կըպաշ-տեմ, իմ կիրքերուս ձեռքը մի թող-ուր իս տէր իմ, քեզի կըդիմեմ, մե-

զի պէս տնանկներդ մի մոռնար ինչ-
վան եղբը ։

Յամարտաւանել ամբարշտի այրի
աղքատն . արդեւլին 'ի խորհուրդս
իւրեանց՝ զոր և խորհեցան ։ Աչք նո-
ցա (ամբարշտին) 'ի տնանկս հային ։
Դարանի յափշտակել զաղքատն։ Զի
ասաց (ամբարիշտն) 'ի սրտի իւրում
թէ մոռացաւ Աստուած (զաղքատն),
դարձոյց զերեսս իւր, զի մի տեսցէ
իսպառ։ Արի տէր Աստուած իմ,
բարձր եղիցի ձեռն քո. և մի մոռա-
նար զտնանկս։ Տեսանես դու զնա
'ի ցաւս, և 'ի սրտմտութիւնս հային.
'ի քեզ թողեալ է աղքատն, և որբոյն
դու ես օգնական ։ Թ ։

Երբոր ամբարիշտ մարդը ամբար-
տաւանել դոռոզնալ կրսկրսի, ան ա-
տենը աղքատը կերթի . ըրէ տէր իմ՝, որ
իրենց խորհուրդը ինչ որ մտածեցին՝
խափանվի. վասն զի ամբարշտին աչքը
տնանկներուն վրայ կընայի . ծածուկ
Ճամփաներ կրբանեցընէ որ իրեն յա-
փշտակէ՝ իրեն բանեցընէ աղքատը ,
որովհետև դուն խաբողորովին ձգեցիր։

Digitized by Google

Ամբարիշտնալ՝ սատանանալ՝ անանկ կրսէ սրտին մէջը որ՝ Աստուած մոռցեր է աս աղքատը. իր երեսը անանկ դարձուցեր է իր մեղքերուն համար որ բնաւ չուզեր տեսնալ։ Ա՛խ, արի ելիր տեր Աստուած իմ, բարձրացո՛ւ քու ձեռքդ, մի մոռնար իս անանկս, կրտեսնաս ահա իս ցաւերուս մէջ, սրտմտութեան մէջ, մեկը չիկայ օգնական, միանակ քեզի է թողված աս աղքատս. որը մարդուն դուն ես օգնական։

Զարթիր, ընդէր ննջես տէր. արի՛, և մի մերժեր զմեզ իսպառ։ Զմի՞ դարձուցանես զերեսս քո՝ ի մէնջ, մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր։ խդ։

Արթնցիր, ինչո՞ւ կրքնանաս, ելիր, մի բալորովին մերժեր զմեզ։ Ինչո՞ւ կրդարձընես մէնէ քուկին երեսդ, կրմոռնաս ինչ աղքատութիւն՝ ինչ նեղութիւն որ կրքաշենք։

Ոչ իսպառ մոռանայ տէր զաղքատն, համբերութիւն տնանկաց մի կորիցէ իսպառ։ Թ։

Աստուած ինչվան եղբը չիմոռանար աղքատը. անանկիներուն համբերութիւնը ինչվան եղբը չիկորսրվիր։

Վասն ստուգապանաց աղքատին և հեծութեան անանկին՝ այժմ յայտնեայց ասէ տէր. եթէց զիրկութիւն իմ, և համարձակեցայց 'ի նոսա։ Ժ։

Կրկին ահա Աստուծոյ ձայնը ելկսէ, որովհետև աղքատը շատ ստուգապանք քաշեց, շատ հեծութիւն հատաւանք ըրաւ, հիմա ես կելլամ կրփրկեմ, համարձակութիւնս կրջցընեմ։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա, զքանչելեացն նորա որդեաց մարդկան։ Զի յագեցոյց զանձինս քաղցեալս և զանձինս կարօտեալս լի ալար բարութեամբ։ Ոչ եթէ նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթս։ Աղազակեցին առ տէր 'ի նեղութեան իւրեանց. 'ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա։ Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ. և անասունք

Digitized by Google

նոցա ոչ նուազեցան։ Օգնեաց անան-
կին յաղթութեան, առաքնորդեաց
որպէս խաչին ազգի նոցա։ ՃԾ։

Մարդիկաւ Թող խոստովանեալով,
շնորհակաւ ըլլան Աստուծոյ ըլուած
ողորմութիւններուն ու հրաշքներուն
վրայ. վասն զի անօթիները կշտացուց,
կարօտ մարդիկները բարեաց լեցուց։
Անոնք որ աղքատութեանմէջ իբր թէ
երկաթը զարնված կապված կային։
և իբր թէ խաւարի մէջ նստած մա-
հուն գուռը հասեր էին, որովհետև
Աստուծոյ ազաղակեցին իրենց նե-
ղութեան առեն, Աստուածաւ ա-
նոնք խայլեցուց, մանաւանդ թէ օրհ-
նեց, որով իրենքաւ և իրենց անա-
ստուածներնաւ՝ որ իրենց ապրանքներն էին
շատցան։ Ցնանկին՝ իր ազգաքաղաքեան
մէջը օգնութիւն ըլլա., ու իբր ոչխար-
ի մը առաջնորդ եղաւ. Ճամփայ ել-
ցուց։

Կերակրեաց զնոսա 'ի պարարտու-
թենէ ցորենոյ, և 'ի վիմէ մեղր յա-
գեցոյց 'ի նոսա։ Հ։

Ցորենին պարարտութեանմէն՝ ա-

Digitized by Google

ղէկ հացով անունք կերակրեց, ու մեղ-
րով կշտացուց, անանկ մեղրով որ՝
մէկ վիմէ մը, քարէն բխած էր. (և
վէմն էր ինքն Քրիստոս) ։

Խնդրեցին, և եկն ըրամարգի, և
հացիւ երկնից լցոյց զնոսա ։ ՃԳ։

Սկսա ուղեցին, պլտրՃին խրկեց
անոնց, ու երկնային հացով լեցուց ։

Ցիշատակ արար զքանչելեաց իւրոց
ուղղոյ. ողորմած գթած է տէր. կե-
րակուր տայ երկիւղածացիւրոց։ ՃԺ։

Իր հրաշքներուն յիշատակ ըրաւ.
տանակ ողորմած գթած է Աստուած.
իր երկիւղածներուն կերակուր կու-
տայ ։

Զ. ցանկութիւն անանկաց լուսա-
տէր, 'ի պատրաստութիւն սրտից նո-
ցա հայեցաւ ունկն քո։ Դատ առնել
որբոյն և անանկին՝ զի մի ևս յաւե-
լուցու մարդ 'ի մեծաբանել իւրում
'ի վերայ երեսաց երկրի ։ Թ։

Ցնանկներուն փափաքը ցանկու-
թիւնը լսեց Աստուած. անոնց սրտին
պատրաստութիւնը նայեցաւ, որբոյն
ու անանկին դատաստանը տեսաւ, որ

ամ մարդիկ մեծ մեծ չխոսին առ աշ-
խարհս վրայ։

Տրոնջեցին զԱստուծոյ և ասացին
միթէ կարօղ իցէ Աստուած պատրաս-
տել սեղան յանապատի։ Հրաման եւ
ամպոց 'ի վերուստ, և զդրունս երկ-
նից եբաց, և տեղեաց 'ի նոսա մանա-
նայ 'ի կերակուր։ հէ։

Վասն զի ճշդահացին Աստուծմէ ու-
րսին, արդեօք կարօղ է Աստուած ա-
նապատի մէջ՝ որ որ հաց չիգտնըվիր
հոն սեղան պատրաստել։ Աստուած-
ալ ասանկ ըսողներուն աչվընին
խօթելու համար, երկինքին դուռ-
ները բացաւ, վերէն ամպերէն մանա-
նայ ինջեցուց իրենց կերակուր։

Ցեսցեն ուղիղ, և ուրախ եղիցին,
և ամենայն անօրէն խցցէ զբերանս իւր։
Ո՛վ է խմաստուն, որ պահեսցէ զայս,
և 'ի միտ առցէ զողորմութիւնս
տեառն։ ՃՂ։

Հիմա թող տեսնան շիտակ սրտով
եղողները, և ուրախ ըլլան. իսկ անօ-
րէնները բերանները գոցեն. ո՞վ որ ի-
մաստուն խելացի է, Աստուծոյ ողոր-

Digitized by Google

մուԹիւնը Ԥողխմանայ։

Ա՛յլդու տէր ասայ ընդ իս ըստ ա-
նուան քում, զի քաղցր է ողորմու-
 Թիւն քո, և փրկեա զիս, զի աղքատ
և տնանկ եմ ես։ ՀԸ։

Հիմա գու տէր Աստուած, քումին
անուանիդ կեօրէ ըրէ. վասն զի քաղցր
է քումին ողորմուԹիւնդ. իս փրկէ,
վասն զի աղքատ ու տնանկ եմ։

Ծանեայ զի առնես տէր դատաստ-
ան աղքատի, և իրաւունս տնանկի։
ՀԼԹ։

Խմացայ որ՝ վերջապէս աղքատին
դատաստանը կրկատրես, և տնանկին իր
բաւունքը կընես։

Սուրբ հանին մեղաւորը, և լարեցին
զաղեղունս իւրեանց, հարկանել զաղ-
քատն և զտնանկն, սպանանել զայն
որ խոնարհն է սրտիւ։ Սուրը նոցա
մտցին 'ի սիրտս նոցա, և աղեղունք
նոցա փշրեսցին։ Լաւ է սակաւիկ ինչ
արդարոյ քան զբազում մեծուԹիւն
մեղաւորաց, և բազուկք ամբարշտաց
խորտակեսցին։ Հաստատէ տէր զար-
դարս։ Մի ամաչեսցեն նոքա 'ի ժա-

Digitized by Google

մանակս չարութեան, այլ յաւուրս սովոյ յագեսցին։ ԺԷ։

Վասն զի մեղաւորմնելոցս սուր հանեցին, իրենց երակը բացին որ՝ աղքատն ու անմանկը զարնեն, ու ով որ խոնարհ է սպանեն, բայց քուկին արդար դատաստանդ ընել կուտայ որ՝ ան մեղաւորներուն սուրերը իրենց սիրտերնին կըմտնան, ու երակներնին կըկոտրին, իսկ արդարներդը կըհանաստանին։ Երբոր մէկ չարիք մը մէկ փորձանք մը կուգայ, արդարներդը չեն ամչնար, այլ խրթըլխին օրերը կըկրչանան։

Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորա թէ մուրանայ հաց։ Զօր հանապազ ողորմի և տայ փոխ. զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։ ԺԸ

Ես տղայ էի՝ հիմա ծերացայ, դեռ չիտեսայ որ արդար մարդը արհամարհի, իր զաւակը հաց մուրանայ, այլ ինքը ամէն օր ողորմութիւն ու փոխ կուտայ. անանկին զաւակը յաւիտեան օրհնեալ պիտոր ըլլայ։

Մեծամեծք աղքատացան և քաղ-

ցեան, բայց ոչ քանզի խնդրեն զտէր, մի պակասեսցէ 'ի նոցանէ ամենայն բարութիւն։ ԼԶ։

Ցեսայոր հարուստնէրը աղքատացան անօթիութիւն քաշեցին. բայց ովքոր Աստուծոյ կրդիմէ, ամենն բարիք անոնցմէ չպակսի պիտոր։

Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինիցի փառք տան նորա։ Զի ոչ թէ 'ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն, և ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա։ խբ։

Անոր հասնար մի վախնար երբոր մարդս կրմեծնայ, երբոր իր տանը փառքը փարթամութիւնը կրշատնայ, վասն զի իր մեռնելու օրը չիկրնար իր հետը տանել իր ամենն բանը. իր փառքը թանութիւններնալ չեն կրնար իրեն հետ գերեզմանը իջնալ։

Երկիցէ 'ի սեռառնէ ամենայն զաւանն Իսրայէլի. զի ոչ ատհասանիցէ, և ոչ անարդեսցէ տէր զարօթս աղքատիս, և ոչ դարձուցէ զերեսս իւր յինէն, այլ 'ի կարդալ իմում առնս՝ լուսաւ-

ինձ։ ԻԹ։

Դուք Իսրայէլի ամմէն զաւկունէր, (եկեղեցնայ որդիքներ,) վախցէք Աստուծմէ, տեսնալով որ աղքատիս աղօթքը ձիքամահրեց, իր երեսը ինծմէն չիդարձուց, այլ երբոր իրեն դիմեցի կանչեցի, լսեց։

Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ, զաղքատն և զոնանկն՝ որոյ ոչ է իւր օգնական։ Անխայեսցէ նա յաղքատն և 'ի ոնանկն, և զանձինս ոնանկացն կեցուսցէ։ ՀԸ։

Աղքատը զօրաւորին ձեռքէն փրկեց Աստուած, անանկ աղքատը ու ոնանկը՝ որուն մէկ օգնական մը չիկար, անոնց վայ խղճայ պիտոր ու ապրեցնէ։

Ցարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտատապեալս յաղբեւաց։ ՀԺԹ։

Գետինը ընկած ըլլայ աղքատը, Աստուած կը յարուցանէ. չամուռի ֆիշէրի մէջ նստած ըլլայ, վեր կը վերցնէ։

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին,

Digitized by Google

խնդրեցէք զԱստուած , և կեցցեն անձինք ձեր ։ Զի լուաւ տէր անանկաց , և զկապեալս իւր ոչ արհամարհեաց ։ կԸ ։

Այս բանիս Թող տեսանն աղքատներէն և ուրախ ըլլան , դուքա՛ անանկէնէ ապաւէցէք Աստուծոյ որ ապրիք . վասն զի Աստուած լսեց անանկ Նէրուն ազօթքը , և իրեն կապված է զանձնէրը չեքամահրեց ։

Ընկեա՛ի տէր զհոգս քո . և նա կեր ակրէ զքեզ , և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ ։ ծԷ ։

Աստուծոյ վասն ձգէ քուկին հոգդ , անիկայ քեզ կրկերակրէ , ու յաւիտեան Թող չխտար որ արդարը սասանի ։

Այս աղքատ կարգաց առ տէր . և տէր լուաւ սմա , յամենայն նեղութենէ տորա փրկեաց զսա ։ ԸԷ ։

Աղքատ մը Աստուծոյ գիմաց ազաղակեց , Աստուածալ իրեն լսեց , իր ամենն նեղութենէն փրկեց ։

Պատուական արարեր քաղցրութեամբ քով աղքատակ Աստուած ։ կԷ ։

Digitized by Google

Տէր Աստուած քուկին քաղցրութեամբդ ու անուշութեամբդ կերպա կուր պատրաստեցիր աղքատի ։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած Աստուած մեր ։ Աստուած մեր օրհնեացէ զմեզ, և 'ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի ։ կէ ։

Անանկով երկիրը իր պտուղը տրվավ և մեր Աստուածը մեզ օրհնեց ։ Մեր Աստուածը թող մեզ օրհնէ, և մինքալ՝ ամենն աշխարհաւ վախնանք Աստուծմէ ։

Աղօթ 'ի սաղմոսէ յորժամ հոգին է 'ի յոսատհոգոմէան ։ Սաղմ. ԺԷ ։

Տէր զէ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան 'ի վերայ իմ ։

Տէր Աստուած շատ դիացէն նեղութիւն ունիմ . շատ սատանաներ փորձութիւններ իմ վրաս եկան վազելով . հիմնալ եկեր են իս կիրուսա հատարնեն ըսելով ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ՝ թէ

Digitized by Google

ջէք փրկութիւն տրա առ Աստուած իւր։

Շատ բաներ միտքս կուգայ որ՝ թա կպատահատցնեն, մէյմը կպիշեմ իմ մեղքերուս ծանրութիւնը, մէյմիսալ կպիշեմ որ մէկ բարիք մը ըրած չունիմ, մէկալ դիտցէնալ կպիշեմ քուարդարութիւնդ, մանր փնտրտօղ դատաստանդ. աս բաներէն երբոր կպիշեմ, կպատահատիմ. ստատանանէր նալ ինծի կրսեն որ՝ քեզի փրկութիւն չկայ, պարտալ կաշխատիս, չես կրնար փրկուիլ։

Զի լաւ չարչարանօք անձն իմ և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք ի Քանեն 'ի գուբ։

Ա մոմոքներով իմ բոլոր կեանքս ըեցվեցաւ չարչարանքներով, իբր թէ դժոխքին գերեզմանին մօտիկցայ, և անանկ եմ եղեր որ՝ իբր թէ գերեզմանին գուբին մէջ նստած մարդալ մը դարձեր եմ, քանի որ կրնքատածեմ թէ դժոխքին արժանի եմ, և ոչ քու տեսոյդ, մէկ հանգստու-

թիւն մը չունիմ։

Եկին զիս 'ի գրի ներքնումն 'ի խաւարի և 'ի ստուերս մահու։

Ա՛ մոմոնուքներդ օրէօր իս տագնապելով, իբր թէ մէկ մութ խորունկ փոսի մը մէջ իս խօթեր են, մեռածի մը պէս եղեր եմ։

Մ՛ասնեցայ, և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Ա՛ մոմոնուքներուս մատնրվեր եմ, չեմ կրնար ելլալ խալըսիլ, մութ խաւարը յուսահատութեան աչքս փակթեր է, իմ հաւատքիս ուրյուսալուս աչքնալ տկարացեր աղքատցեր են, զրկրված ըլլալով քուլուտյդ ինորհաց, ու կրսեն։

Մ՛ութ մեռելոց առնիցես զաքանչելիս քո, կամ բժիշկք յարուցանիցեն և խոստովան առնիցեն առ քեզ։

Ա՛ իմ մեռած հուլիս ա՛ր դեօք Աստուած հրաշք պիտոր ընէ, կամ բժիշկներդը ա՛ր դեօք պիտոր ողջունցնեն, որ Աստուծոյ ծառայէ, զԱստուած պաշտէ։

Մ՛ութ՝ Ճանաչիցին 'ի խաւարի զքան

չերնք քո, կամ ապդարութիւն քո յերկիր մոռացեալ։

ԱՀրդեաք սասանկ մութ խաւար հոգեի մէջ քու հրաշքդ. Ճանչցուի ապիտոր, կամ քուվին ապդարութիւնդ մոռցուած հոգիի մէջ տեսնուի ապիտոր։ Սասանկ կրսեն ինծի իմ խորհուրդներս. եսալ ջիգիմանալով կապղալեմ։

Ընդէր տէր։ մերժես զանձն իմ կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Ինչու՞ համար սասանկ ձգեր ես տէր իմ, ինչու՞ սասանկ երեսդ դարձուցեր ես ինծմէն, ու չես լսեր։

Ես առ քեզ տէր աղաղակեցի, ողորմութիւն աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ա՛խ, տէր իմ, ես քեզի կաղաղակեմ, սա առաջվան աղօթքս քու ականջդ հասնի։

Արի տէր, և փրկեա՛ զիս Աստուած իմ։

Եկիր տէր իմ, եկիր, ու փրկէ՛ զիս Աստուած իմ սա նեղութիւններէն։

Digitized by Google

Այլ դու տէր օգնական իմ ես, փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Դուն ես ինծի օգնողը, ուրիշ մարդ չունիմ, դուն ես իմ փառքս, կընաս իմ ընկած շփոթած գլուխս վեր վերցընել, քաջալերել։

Ցեռանդ է փրկութիւն 'ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո։

Քուկին դրածդ է տէր իմ փրկել քու ժողովուրդդ. ետալ քու ժողովրդէդ մեկն եմ. իսալ փրկէ, որ իմ հոգիսալ քեզ օրհնէ ըսելով։

Օրհնեա անձն իմ զտէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա։

Օրհնէ ով հոգի ան Աստուածը, մի մոռնար անոր բարիքները, որպէս առաջուցմէ 'ի վեր քեզի ըրաւ։

Ո քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։ Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։ Ո ընդ 'ի բարութենէ զքանկութիւն քո, նորոգեսցէ որպէս արծուոյ մանկութիւն քո։

Digitized by Google

Օրհնեան Աստուածը՝ որ քու մեղ քերուդ քաւութիւն թողութիւն կուտայ. ինչ հիւրընտութիւն որ ունիս սրտիդ մտքիդ մէջը՝ ամենենալ կը ընդունցնէ, քուկին կեանքդ կրխաղ ըսցնէ ավրվելէն ապականվելէն, կողորմի քեզ ու կրպահէ. քուկին ցանկութիւնդ որ ունիս Աստուծոյ բարեացը շնորհացը վրայ, ամենն բարեաց կրկատարէ կրլեցնէ. մարտութեան շնորհքն որ կորսընցուցիր, նորանց քեզի կրդարձնէ ինչպէս որ ունէիր մանկութեան ատենդ. անանկով արծիւ պէս կրնորոգվի քուկին մանկութիւնդ։ Ան ատենը դունալ կրդառնաս կրսես։

Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։ Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ՝ այնպէս զբարացոյց տէր զողորմութիւն իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց։

Աստուած մեր մեղքին կեօրէ չըրաւ, մեր անօրէնութեանը կեօրէ չի հատուց, հապա որչափ որ բարձր է

Digitized by Google

երկինք գնոնէ, անչափ շատցուց իր ողորմութիւնը անոնց վրայ՝ որ երմէ կրնային :

Աղօթք յորդամ հոգին Հայ 'ի փոքրոնեան :

Հովիւ քաջ, հովիւ յաւիտենական, որ իմ մոլորեալ ոչխարդ գտանալու համար լեռնէ լեռ պրտըտեցար երկան ճամբորդութիւն ընելով, երկինքէն երկիրս իջար մարդ ըլլալով, մեկ ողորմուկ ձան մը ձգելով կանչեցիր, որ ես լսելով ան ձայնիդ ետևէն գամ : Եկայք ըսիր առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանդուցից զձեզ : Իսկ ես որ անտառնէ բու մէջ մոլորեալ ոչխարի մը պէս պրտըտելով մոտիկ էի գայլին բերանը ընելու, լսեցի սա ողորմութեան ձայնդ, Ճանչցայ տիրոջս ձայնը, քեզի եկայ մկրտութեան և խոստովանութեան խորհուրդներով : Բայց հիմա աշխարհ, մարմին, և սատանայ, սա իրեքը մեկ եղած նորէն կուզեն իս քեզ

նէ բաժնել, եւ սալ անոնց հետեւելով նորէն կուգեմ ես իւ գայլին բերանը ձգել։

Դուռ հիմա ով հոգիս քաջ, ցոյց ու քու զօրութիւնդ, հանէ քու անուշ ձայնդ հնորհաց, կանչէ իւ հնորհքով որ գիմոլորիմ, չեմ արժանի քու հնորհաց դ, բայց գին արեան քո եմ, քու կին սուրբ արիւնդ և անչափ աշխատանքդ պարապ չերթայ, չիկորսուի։ Ո՛վ տէր գթութեանց, հասիր ինծի օգնութիւն, մի ձգեր իւ երեսէդ. ուր է քու անուշ ձայնդ՝ որ լսիր։ Եթէ ոք ծարաւի լցէ, եկեսցէ առ իս և արբցէ։ Ո՞ւր է քու առաջնորդութիւնդ որ լսիր։ Ե՛ս եմ Ճանապարհ, և Ճշմարտութիւն, և կեանք։ Ո՞ւր է քու յորդորանքդ որ լսիր։ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես Ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանսն յաւիտեանական, և մի կորիցեն յաւիտեան։ և մի ոք յափշտակեսցէ զնոսա ՝ի ձեռաց իմոց։ Ա՛խ, ուր են սա ձայնէրդ, սառնք զուրցէ որ գայլերք փախչին,

Digitized by Google

սիրտս շարժի, աչքս բացվի, իմ ծա-
ղաւս բժշկվի, գեղջ պղտոր ջուրերը
չիխրվեմ, այլ քէնէ կէնդանի աղբեր-
ներդ խմեմ, որ սակեց ետքը ոչ երբեք
ծարուիմ, մեկի մը ձայն մոթիկ չիդնեմ,
այլ միայն քեզի տէր իմ Յիսուս։

Սաղմոս։

Դուլցուսաւոր առնեա զՀրաշ իմ.
տէր Աստուած իմ, լոյս ասա ինձ 'ի
խաւարի։

Քեւ փրկեցայց 'ի փորձութենէ.
Աստուծով իմով անցից ընդ պա-
ղիսպս։

Վասն զի ո՞վ է Աստուած բաց 'ի
տեառնէ, կամ ո՞վ է Աստուած բաց
յԱստուծոյ մերմէ։

Ուսուցեր զձեռս իմ 'ի պատե-
րազմ, և ազատեր զբազուկ իմ որպէս
զպղէնն Հասա. և ետուր ինձ զպաշտ-
պանութիւն։ ԺԷ։

Բազում անգամ մարտեան ընդ
իս 'ի մանկութենէ իմմէ. և ինձ ոչ
յաղթեցին։ ՀԸ։

Ի՛ջուցեր զմեզ յորոգայթ, եդեր նեղութիւն 'ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ 'ի վերայ գլխոց մերոց։

Փորձեցեր զմեզ Աստուած և քննեցեր, որպէս և քննի արծաթ։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հաներ զմեզ 'ի հանգիստ։ կն։

Աղօթք յորդամ հոգին Նայ 'ի Լուսոփի մեղայ։

Դուն ըսիր տէր իմ. Խնդրեցէք և առնուցուք։ Զոր ինչ խնդրիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Սանք քու խօսք տվածնէրդ էն, քու խօսքերդ քեզի յիշեցնել կուտանք, դուն որ չես մոռնար, և խօսքեդ չես դառնար. ինչ պտով զուրցեցիր անատենը յիշէ, ան պտով իմ աղօթքս ընդունէ. ինծի հիմա օգնութիւն հասիր, ես որ բոլորովին անարժան եմ, ուրիշ բանով չեմ կրնար ազատել քեզ ատիպել, բայց եթէ քուկին խօսքերովդ՝ և քուկին սուրբ արիւնովդ։

Digitized by Google

Ասունք յիշելով տէր Յիսուս, մի թող՝ ուր որ ես կորսուիմ. վասն զի թէ որ ես կորսուիմ, քու արիւնով փրկեալ հոգիդ պիտոր կորսուի։

Ա՛խ, տէր իմ, քու դառնակսկիծ չարչարանքներդ սիրոս կրչարժէ, ալ դար դասատանիդ. ձայնը իս կրդոզացնէ, յուսիսոնական պատիժը իս կրսարսափեցնէ. բայց այսչափ ահն ու դողը հերիք չեն կրնար ըլլալ իս մեղքերիս դուրս հանելու, վրաս իշխեր են չեմ կրնար խալըսիլ միշտ մեղքի մէջ կեցնամ, մինակ քուկին հրաշքդ պիտոր ըլլայ որ իս խալըսցնէ, իմ մեռած հոգիս վեր վերցնէ, ինչպէս որ վերուցիր դիւահար տղան։

Ամմէնքնալ յուսահատեր էին, առաքեալներնալ բան մը չկրցան ընել, տղին հայրնալ անչափ հաւատք չունէր, բայց մինակ առջևդ գալովը՝ քենէ խընդրելովը պարապ չիհանեցիր, չիթողուցիր հիւանդութիւնը բրժըշկեցիր։ Հիմա ընծիալ հրամէ, իս առջևդ կանչէ ըսելով Աթէ՝ պա՝ առ։ Մարկ. Թ. 18։ Ան առեանը կրտես

նաս իմ հոգիս որ՝ ան գիւաղաղին ալէս գէտինը կանչ, մեղքերու մէջ միշտ կը թաղարլուրկի, մեղքերով կրծիրիրայ, քանի հեղ որ՝ քու աշխերտներդ քահանաներուն գնայ խոստովանելու, զինքը ցրցուց, աս մեղքերուս սատանան չկրցան իրմէն հանելու։ Թէ որ իմ վարքս հարցնես, կրբսես որ ի՛մանկութենէ ալտիկուցասանկ եմ եղեր. իմ մեղքիս սատանան ալտիկուցմէ ներսի գիւէս կապեր է իս չարտոլորութեամբ։ Բաղամ անգամ ի՛ հոս աբիանէ ղա՝ ի՛ ջոր. դի ի՛ որոշոչ։ Երբեմն մէկ մեղք մը, երբեմն մէկալ մեղքը կրճգէ. մէկ մէկու ներհական մեղքերը ընել կուտայ. սանկ հոգիս իրեն խաղալիկ է ըրեր կը՝ջարչարէ, բայց իր միտքը իս կորսընցընել է յաւիտենական հուրը։

Թէ որ ինծմէն հաւատք կուզես ըսելու, Ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն, ես հաւատք չունիմ. վասն զի սատանիկ է սատանային պատերազմը, մտրիկ է վտանգը մարմինս, իս միշտ մեղքի կը քաշէ, անոր համար

երկրայութեան մէջ եմ, տարակուսելով կրսեմ. Եթէ կարող էին, օգնէա՛ մեզ փէր, գինոցեալ'ի վերայ մեր։ Դուռ Ճարտար բժիշկ հոգւոյ և մարմնոյ, տուր ինձի լոյս հաւատոյ, ինչպէս որ մէկ խօսելովդ ան գիւահարին հօրը հաւատքը լուսաւորեցիր, որ աղաղակեց՝ Հաւատամ, օգնէա՛ անհաւատութեան իմոմ։

Ան ատենը ես հաւատքովս առջեւդ կուգամ, դուն նալ զօրութեամբդ կըսատես սատանային. Համրդ ե՛ւ խօսուն Աստ, ես փամ դէպ հրման, Էլ'ի դմանդ ե՛ այլ ես մի մարդիցէս 'ի դա։ Արդեօք պիտոր ըլլայ որ՝ իմ հոգիսալ աս խօսքրս լսէ, քուկին հրամանովդ քովէս հեռընայ փորձութիւնը, մէյմալ չիդառնայ չեզայ, իս մեղքի վտանգի մէջ չիձգէ։ Մի թողուր իս տէր իմ Յիսուս, մի թողուր ասանկ. այլ քուկին ձեռքդ երկընցու, ոտքի վրայ կանգնէլ տուր, ինչպէս որ կանգնեցիր ան դիւահարը. անով ամենին տեսնողներդ զարմանան որ՝ աս հոգին որ մեռած մը կերևար, քուկին զօրու-

Թեամբդ կենդանացաւ, իր մեղքերը թողուց, Հնորհաց մէջ մնաց։

Աղօթք 'ի սաղմոսէ, 'ի խնդրել օգնութիւն։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Երբոր ես նեղն ընկայ, պէտք է զավ ինծի մէկ օգնութիւն մը գտնալու, իմ աչքունէրս լեռներու վրայ վերուցի, անանկ իշխաններու՝ անանկ մեծէրու՝ որ մէյ մէկ լեռ կրնմանէին, որոնցմէ կրնար ինծի մէկ օգնութիւն մը հասնիլ։

Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Բայց իմացայ տեսայ որ՝ ան լեռներու պէս կեցած մարդիկները իշխանները չէին կրնար ինծի մէկ օգնութիւն մը ընել, հապա իմ օգնութիւնս Աստուծմէ միայն պիտոր ըլլայ, որ չէթէ մինակ ան լեռները ան իշխանները, հապա բոլոր երկինք ու երկիր ստեղծեց, այնչափ է իր կարող

զութիւնը։

Մի տար՝ի սասանութիւն զոտն քո, և մի ննջեսցէ պահապան քո։

Միայն թէ դուն մի սասանիր, մինչ-ևրարար հաւատքովդ, ոտքդ տմուր պէտք է որ բռնես, որ է քու հաւատքդ. թէ որ դուն սասանկ հաւատքէդ չի-սասանիս չերերաս, Աստուծոյ դէմ չիմեղանչես, իրաւ գիտցիր որ՝ Աստուածալ որ քուկին պահապանդ է, չիքնանար, արթուն կրնայ քեզ պահելու։

Որպէս ոչ ննջէ և ոչ՝ ի քունեարթայ պահապանն Իսրայէլի։

Ինչպէս յայտնի կրտեսնաս որ՝ Իսրայէլացւոց ազգին պահապանը որ է Աստուած, ոչ երբէք քուն եղավ. իր գործքերը յայտնի կրքարոզեն որ՝ միշտ կրպահէր Աստուած հրեանէրը հոգևոր ու մարմնաւոր թշնամիներէն։

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալ-ցի աջոյ ձեռամբն իւրով։

Անանկալ քեզ Աստուած կրպահէ, ու իր աջ ձեռքովը կրբռնէ։

Digitized by Google

Արեգակն 'ի տուէ քեզ մի մեղեցէ, և մի լուսին 'ի գիշերի ։

Ինչպէս խորհրդեացուց ըրաւ որ՝ ցորեկը արևը չինեղելու համար՝ արեւուն տուջին ամպ կրհանէր , սասանկ ալ անանկ բան մը կրնէ քեզի Աստուած որ՝ ոչ ցորեկվան թշնամիները քեզ կրնեղեն , և ոչ գիշերվան , թէ մարմնաւոր և թէ հոգևոր թշնամիներդ սասանանէլը , որ գիշեր ցորեկ կրպատրտին քեզ մեղք խօթելու ։

Տէր պահեացէ զքեզ յամենայն չարէ, պահեացէ տէր զանձն քո ։

Աստուած քեզ ամենայն չարիքներէ ազատներէ պահէ պիտոր , քու հոգիդ պահպանէ ։

Տէր պահեացէ զմուտս և զել քո յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Ամէն ։

Աչքիս ըսեմ որ՝ որովհետև դուն Աստուծոյ ընկար , հաստատուն անոր գիմեցիր , մեղքէ զգուշացար , ասկէց ետքը Աստուածալ քեզ ամէն բանի մէջ , ելլելուդ մնալուդ ատենները՝ պահէ պահպանէ պիտոր ինչպէս յաւիտեան ։

Digitized by Google

Օգնութիւն է մեզ յանուանէ տեառ-
ուն որ արար զերկինս և զերկիր։ Հիշ։

Մեր օգնութիւնը Աստուծոյ ա-
նունովն է, ան Աստուծոյ՝ որ երկինք
գետին ստեղծեց։

Ա՛ռ քեզ տէր համարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես յերկինս։ Որպէս
աչք ծառայի 'ի ձեռն տեառն իւրոյ,
որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկ-
նոջ իւրոյ։ Այնպէս են աչք մեր առ-
քեզ տէր Աստուած մեր, մինչև ողոր-
մեսցիս 'ի վերայ մեր։ Հիշ։

Քեզի կրվերջնեմ աչվներս տէր
Աստուած, որ երկինքը կընստիս։
Ինչպէս որ ծառային աչքը իր տիրոջը
վրայ է, և աղախինին աչքը իր խա-
թունին վրայ, անանկալ մեր աչքը քու
վրադ է տէր Աստուած, ինչվան որ
մեզի ողորմիս։

Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ
ես, և թէ իջանեմ՝ 'ի դժոխս՝ և անդր
ես։ Թէ առիցս զթևս իմ ընդ ա-
ռաւօտս, և բնակեցայց յեղերս ծո-
վու։ Սակայն և անդ ձեռն քո առաջ-
նորդեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս։

Digitized by Google

Ինչ մեծ ես տէր Աստուած, թէ որ երկինքը ելլամ, դու հոն ես. թէ որ դժոխքը գերեզմանը ինկնամ, հոնալ քեզ մեռելիկ կրգտնամ. թէ որ ինծի թևէր առնեմ առաւօտեանց, ծովուն քէնարը նստիմ, հոնալ քու ինկին ձեռքդ ինծի առաջնորդ կրլլայ, և քու ինկին աջ ձեռքդ իս կրբռնէ:

Աղօթք յորդամ հոգին է 'ի փրփռուելեան:

Աբդ ընդէր փրփռամ ես անչ իմ, կամ ընդէր խռովիս ինս: Ինչորու հաստատ կրտրտմիս ողորմելի հոգիս, մեղքերդ ծանր են, զոյնամ աղեկ չունիս, քու ինկին խոստովանելդ քեզ չիհանդարտեցրնէր, չկրտեսալ որ ինչպէս խոստովանիս, որ մեկը զուրցես, զուրցելէն ետեսալ չես հանդչիր: Ցասամ առ Աստուած, խոսքովանեմ նմա: Մէյմը միտքդ վեր վերցու առ Աստուած. յոյսդ զօրացուցներդործուԹիւն յուսոյ ըրէ: Աստուած մեր ողորմուԹեան Աստուած է. ան Աստուածն է որ ըսաւ, Թէ որ մեկ օրվան մեջ եօԹանասուն

հեղ եօթը մարդս մեղանչէ, բայց նո-
րէն սրտանց դառնայ, ան մարդը թող-
ութիւն մեղաց կը գտնայ։ Ան Աստուածն է, որ Եայլեայ մարգարէին
բերանովը կը զուրցէ. ինչպէս որ մայր
մը իր զաւակը կը սիրէ, ինչ պակուութիւն ունի՝ կը դոցէ կը սրբէ, չուզեր
որ ուրիշները վրան զուրցեն, նախատեն, ետաքաշեն եւ մ՚ կրսէ
Աստուած։ Ան տէրն է, որ մեղաւոր
կնիկը սրբոտանց խոստովանելով իր
մեղքերը՝ երբոր եկաւ տարը ընկաւ,
լալով արցունքով լվաց, անուշ ե-
ղով որ իր աղօթքին օրինակն էր՝ օ-
ծեց զՅիսուս, Յիսուսին սիրտը վրան
խորվեցաւ, ոչ մեղքը իր երեսին տվավ
և ոչ ըսաւ որ՝ դուն ինծի ինչ արժա-
նի ես մտիկնալու. սէր տեսաւ իրմէ,
ինքնալ սէր ցոցուց ըսելով. Թողէաւ
Լոյն սա մեղ իւր բաղսամ։ Շատ մեղ-
քեր ունի, բայց ամենենալ թողվի
ըսաւ։ Դունալ անանկէնէ յուսամ Աստուծոյ, խոստովանէ, պաշտէ, սէր
ցոցու. ան ատենը կը ընես մեղքերուդ
թողութիւն, հոգւոյդ փրկութիւն.

Digitized by Google

վասն զի փրկիչ մեր նոյն Յիսուսն է, փրկիչ երեսաց մերոց Աստուած է։

Սաղմոս։

Եթէ ասէի թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ։

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ։ զԳ։

Եկայք ցնծացուք 'ի տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։

Աստուած մեծ է տէր, թագաւոր մեծ 'ի վերոյ ամենայն երկրի։ զԴ։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։ զԹ։

Ո յուսայ 'ի տէր, որպէս լեառն սիոնն, մի սասանեսցի յաւիտեան, որ բնակեալն է յԵրուսաղէմ։ ՃԻԳ։

Ի տէր յուսացայ, որպէս ասիցէք ցանձն իմ, փոփոխեսց 'ի լերինս որպէս ճնճղուկ։ ՃԴ։

Digitized by Google

Իսկ Ն քաքաք առ արքայութիւն երկ-
նից 'ի սաղմոսք ։

Աստուած Աստուած իմ, ես առ-
քեզ առաւօտ առնեմ, ծարաւեաց առ-
քեզ հոգի իմ, քանիպատիկ ևս
և մարմին իմ ։ կգ ։

Աստուած Աստուած իմ, ես առ-
տրվանց քեզի կրդիմեմ. վասն զի իմ
հոգիս քեզի ծարաւեր է, որչափ որ
մարմինսաս ։

Վայ ինձ զի ընդ երկար եղև պան-
դրիստութիւն իմ, զի բնակեցայ ես 'ի
վրանս Կեդարու ։ ՃԺԹ ։

Բայց ես ինծի վայ կուտամ, որ
շատ ուշացաւիմ զուրպէթութիւնս,
շատ ատեն է որ՝ մնացի օտար երկիր
չատրրի տակ աս աշխարհիս մէջ ։

Առ գետս բաբելացւոց անդ նստէ-
աք և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ
զՍիոնն ։ ՃԼԷ ։

Այս Բաբելոնի գետին քով նստե-
ցինք, որ է բաբիլոն խառնակութեան
աս աշխարհս, ու կուլանք, յիշելով

մենք սիոնը՝ որ է երկնային խաղաղութիւնը։

Ուրախ եղէ ես ոյք ատէին ցիս, 'ի տունս տեառն երթիցուք մեք։ Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։ Հարցէք զողջունեն զԵրուսաղէմի և զշինութենէ՝ ոյք սիրէք զնա։ Ճիւ։

Անոնք որ ինծի կըսէին թէ Աստուծոյ տունը երթանք, խիստ կուրախանայի։ Ա՛խ, երկնային Երուսաղէմ, մեր ոտքը քեզի է հասեր, դուք ամենքնիդ որ կըսիրէք երկնային Երուսաղէմի ողջոյնը, հարցուցէք, փնտռեցէք անոր շէնքը, անոր եղջանկութիւնը։

Ո՞ւրախ սիրելի են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո։ Ճգ։

Ինչպէս սիրելի է ինծի քուկին տունդ տէր Աստուած, իմ անձս հոգիս խիստ կը փափաքի որ գոնէ բակին մէջը բնակիմ։

Երանի՝ ամենեցուն՝ որ բնակեալ են 'ի տան տեառն, յաւիտեանս յա-

վիտենից օրհնեսցեն զքեզ։ ՀԵ։

Երկնէկ անոնց ամենեսուն, որ Աստուծոյ տանը մէջ բնակված են, յաւիտեանս յաւիտենից թող քեզ օրհնեն։

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր ի քէն է, ելս եդ ի մտի իւրում՝ ի հովտէս տրտմութեան ի տեղւոջ յորում ուխտեաց։ ՀԵ։

Երջանիկ է ան մարդը՝ որուն օգնութիւնը քէնէ է Աստուած. աս տրտմութեան տէրէն կուզէ ելլալ երթալ ան տեղն որ ցանկացաւ, ուխտերաւ երթալու։

Զօրհնութիւն ստացի որ զօրէնս դնէ, գնացէք նա ի զօրութենէ ի զօրութիւն, և երևեսցի Աստուած հրեշտակաց ի Սիոնի։ ՀԵ։

Ո՛վ որ անանկ օրէնք և ուխտ կրդնէ իր տրտին մէջը, օրհնեցէք կրվաստակի Աստուածմէ, օրէ օր կրզօրանայ շընորհքներով ու Աստուած անոր երևնայ պիտոր իրեն հրեշտակներով երկնային Սիոնին մէջ որ է արքայութիւնը։

Տէր Աստուած զօրութեանց՝ լուր աղօթից իմոց։ Վասն զի լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո քան զհազարս։ ՀԴ։

Տէր Աստուած ամենեն բանի կարող, իմ աղօթքիսալ լսէ, խալ ան տեղին արժանի ըրէ. վասն զի աղէկ է ինծի մէկ օր մը քու բակիդ մէջը նստիլ, քան թէ հազար օր աս աշխարհս։

Զմի խնդրեցի 'ի տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։ Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն, և հրաման տալ 'ի տաճարի նորա։ ԻԷ։

Մէկ բան մը կը խնդրեմ Աստուծմէ, ու անի կաղաչեմ, որ քանի որ ապրիմ, ամենեն օր Աստուծոյ տանը մէջ բնակիմ, Աստուծոյ գեղեցկութիւնը տեսնամ, և իր տաճարին մէջը հրամանեմ։

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զբեռն յարկի փառաց քոց։ ԻԵ։

Տէր Աստուած քուկին տանդ գեղեցկութիւնը սիրեցի, և քուկին փառքիդ տեղը՝ որ է արքայութիւնը։

Digitized by Google

Զինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէնալինչ ես խնդրեցիս յերկրի։ ԿԲ։

Ինչ ունիմ ես երկինքը, բայց միայն քեզ Աստուած. երկրիս վրայալ ինչ կունամ քէնէ խընդրել, բայց եթէ քեզ Աստուած։

Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։ ԿԳ։

Իմ սիրտս մարմինս կըհալի կըմարի ով Աստուած. դու ես իմ սրտիս Աստուածը, դու ես իմ բաժինս Աստուած յաւիտեան։

Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց, յագեցայց յերևելիս առաց քոց։ ԺԵ։

Եղբոր ես արդարութեան երեսիդ երևնամ, քու երեսդ տեսնամ, անատեղը ես կըրնամ հշտանալ քուկին փառքդ տեսնալով։

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած։ խա։

Ինչպէս որ կէրնիկը կըփափաքի աղբիւրի ջուրերուն, անանկալ իմ հոգիս

քեզի կրփափաքի տէր Աստուած։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած, հոգոյ և կենդանի, երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ։ խա։

Իմ հոգիս քեզի կրծարաւի Աստուած, դուն ես Աստուած կարօղ ու կենդանի, երբ պիտոր գամ, քու երեսիդ երևնամ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ, Թէ ուր է Աստուած քո։ խա։

Այ բանիս համար իմ արցունքս ինձի կերակուրի տեղ եղեր էին գիշեր ցորեկ. մանաւանդ երբոր ամէն օր ինձի կրսէին Թէ ուր է քուվին Աստուածդ, դուն անիկայ կորսնցուցիր մեղքերովդ։

Զայս որպէս յիշէի, ուռապէր յիս անձն իմ, քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ։ խա։

Երբոր ասիկայ կրյիշէի, բոլոր անձս կրտառապէր տակնուվրայ կրլլար, բայց ես ինձի սիրտ կուտայի, որ մեյ-

մը սա հրաշալի Աստուածոյաստունը մըտ-
նամ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր,
զի նուաղեաց յինէն հոգի իմ։ Ճիշ։

Իմ անձս մէկ ցամաք գետնի մը
պէս ծարուած է քեզի Աստուած.
շուտով լսէ կաղաչեմ, վասն զի իմ
հոգիս կըմարի, կըհալի կըմաշի։

Digitized by Google

Digitized by Google

ՑՈՒՑԱԿ

ԱՂՕԹԱԳՐՈՑ

Յարիւսորութեան աղօթից . 1
Աղօթ 'ի յառնելն յանկողնոյ . 7
Աղօթ առաւօտեան . 8
Երեկոյեան աղօթ . 16
Աղօթ վասն խրատանքիւր առար եօթնեկի . 23
Պատրաստութեան խոստովանութեան . 57
Աղօթ պղման և առաջադրութեան . 64
Պատրաստութեան առ սուրբ խորհուրդ հաղորդութեան , և ընդհակ ալութեան . 76
Աղօթ պնի հաղորդութեան . 86
Աղօթ պնի հաղորդութեան առ սուրբ կոյսն . 93

Digitized by Google

Խօսակցութիւն Քրիստոսի ընդ հոգւոյ՝ զնի հաղորդութեան . 97
Աղօթք 'ի ժամ պատարագի . 143
Մատնութիւնք 'ի խորհուրդ պատարագին . 146
Աղօթք փերուանական տօնից, նա և մեծի պահոց .
Ի տօնի ծննդեան Քրիստոսի . 185
Ի տօնի անուանադրութեան Յիսուսի. 188
Ի տօնի յայտնութեան . 190
Ի տօնի մրգոութեան . 192
Ի տօնի փեսան ընդ առաջին . 196
Կրկնութիւն աղօթից 'ի մեծ պահս . 199
Աղօթք վասն առաջին շաբաթուս պահոց . 202
Աղօթք վասն երիրորդ շաբաթուն. 212
Աղօթք վասն երրորդ շաբաթուն . 222
Աղօթք վասն չորրորդ շաբաթուն . 234
Աղօթք վասն հինգերորդ շաբաթուն . 255
Աղօթք վասն վեցերորդ շաբաթուն. 271
Աղօթք վասն ամենագ շաբաթուն . 289
Ի տօնի զատիկին . 313
Յերիրորդ առաւր . 317
Յերրորդ առաւր . 318

Digitized by Google

Ի փոնի աւէտման . 322
Ի փոնի համբարձման . 327
Ի փոնի հոգեգալստեան . 331
Ցերեր որդ աւուր . 333
Ցերրորդ աւուր . 335
Ի փոնի վարդավառին . 336
Ցերեր որդ աւուր . 338
Ի փոնի վերափոխման . 340
Ցերեր որդ աւուր . 343
Ի փոնի ծննդեան սուրբ Աստուածածնի . 345
Ի փոնի խաչին . 348
Ցերեր որդ աւուր . 350
Ի փոնի ընծայման . 352
Ի փոնի անարատ յղութեան . 354
Ի փոնի ծննդեան Յովհաննու խաչապէսին . 357
Ցայլսմ փոնի նորին . 360
Ի փոնի սրբոյն Յովսէփայ Աստուածահօր . 362
Ի փոնի սրբոյն Գրիգորի լուսաւորչի . 366
Ցայլսմ փոնի նորին . 368
Ի փոնի սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի . 370

Digitized by Google

Ի փոքի սրբոյն Անտոնի անապատականի . 373
Ի փոքի սրբոց Հոռիպսիմեանց և Գայիանեանց . 375
Աղօթք առ պաշտպան սուրբ սփանքելագործ . 378
Աղօթք առ պատարագան հրեշտակ . 382
Աղօթք պարարտարանքեան մահուան . 385
Աղօթք Յիսուսի 'ի Վերջին ելեալ ի խրատ , 'ի ժամս մահուան վասն ամենայն դրիսանէից . 406
Աղօթք առ սուրբ Ասպուածածինն . 411
Աղօթք վասն ննջեցելոց . 415
Աղօթք առ Տօնն խնդրելիս սուրբ Ասպուածածինին . 421
Աղօթք առ Տօնն վերս խոցուածոց էութեան Մարիամայ . 431
Աղօթք առ Տօնն բանս զոր ասաց Գրիգորս 'ի խաչին . 451
Աղօթք 'ի սաղմոսէ 'ի պէսպէս դիպուածս . 469
Ի ժամանակի հիւանդութեան . 470
Ի նեղելն 'ի ընդամենոյ մարմնոյ և հոգւոյ . 449

Digitized by Google

Ի խնդրելն ինչ 'ի փեսանէ . 487
Վասն ապաշնելոյ Աստուածոյ . 490
Ի ժամանակի նեղութեան . 498
Ի նեղութեան աղաչութեան մարմնոյ և հոգւոյ . 504
Յորժամ հոգին է 'ի յուսահատութեան . 519
Յորժամ հոգին կայ 'ի քրիստոնէութեան . 525
Յորժամ հոգին կայ 'ի վանգի մեղայ . 528
Ի խնդրել օգնութեան Աստուածոյ. 532
Յորժամ հոգին է 'ի փրկութեան . 536
Իշխ և քաջագ առ արքայութեան երկնից 'ի սաղմոս . 539

Digitized by Google

Digitized by Google

Österreichische Nationalbibliothek
+Z159324407

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Google

nsteiner
uchbinder
in
EN
dt, am Glacis,
N.° 197 im rothen Hause.